Բրոնխային ասթմա. բուժումը. ընդհանուր դրույթներ: Նոպայի բուժումը (ճնշումը): Ասթմատիկ վիճակի (ստատուսի) բուժումը: Սրացումների բուժումը: Բազիսային բուժումը՝ ըստ ընթացքի: Բրոնխիալ ասթմայի հատուկ կլինիկական ձևերը: Պաթոգենեզը: Կլինիկական պատկերը: Բրոնխիալ ասթմայի հատուկ ձևերի բուժումը: Ասթմատիկ վիճակ: Կլինիկական պատկերը ըստ շրջանների: Բուժումը:

Թոքային սիրտ. Սահմանումը, սուրի և խրոնիկականի տարբերությունները: Սուր թոքային սիրտ: Էթիոպաթոգենեզը: Կլինիկան: Ախտորոշումը: Բուժումը: Խրոնիկական թոքային սիրտ. պատճառները, ախտածագումը. դասակարգումը. ախտորոշումը. բուժումը, կանխարգելումը: Թոքային զարկերակի թրոմբոէմբոլիա. պատճառները. ախտածագումը. Դասակարգումը. Ախտորոշումը. բուժումը, կանխարգելումը:

Սուր շնչառական դիսթրես համախտանիշ. Էթիոպաթոգենեզը: Կլինիկան: Ախտորոշումը: Տարբերակիչ ախտորոշումը: Բուժումը:

Շնչառական անբավարարություն. Սուր շնչառական անբավարարություն. պատճառները, ախտածագումը. դասակարգումը. ախտորոշումը. բուժումը, կանխարգելումը: Խրոնիկական շնչառական անբավարարություն. պատճառները, ախտածագումը. դասակարգումը. ախտորոշումը. բուժումը և կանխարգելումը: **Թոքերի տարածուն ներսփռանքով արտահայտվող հիվանդությունների տարբերակիչ ախտորոշումը.** Էկզոգեն ալերգիկ ալվերոլիտ. պատճառները, ախտածագումը, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Գուդպասչերի համախտանիշ. Պատճառները, ախտածագումը, դասակարգումը. Ախտորոշումը. Բուժումը. Կանխարգելումը: Թոքերի իդիոպաթիկ հեմոսիդերոզ. պատճառները, ախտածագումը, դասակարգումը. Ախտորոշումը. Բուժումը. կանխարգելումը: Շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդությունների դեպքում դիտվող թոքերի ախտահարումները. ախտածագումը, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Բժշկածին սերմնացրումներ

(յաթրոգեն դիսսեմինացիաներ). պատճառները. ախտաձագումը. Դասակարգումը. ախտորոշումը. բուժումը. կանխարգելումը: Իդիոպաթիկ ֆիբրոզացնող ալվեոլիտ (Համան-Ռիչի հիվանդություն). պատճառները. Ախտաձագումը. դասակարգումը. ախտորոշումը. բուժումը. կանխարգելումը: Հիստիոցիտոզ X և թոքային ալվեոլյար պրոտեինոզ. պատճառները. ախտաձագումը. դասակարգումը. Ախտորոշումը. բուժումը. կանխարգելումը: Սարկոիդոզ: Էթիոպաթոգենեզ (սարկոիդային գրանուլեմաների առանձնահատկությունները): Սարկոիդոզ. դասակարգումը. կլինիկան. ախտորոշումը. բուժումը:

Թոքային ալվեոլյար միկրոլիթիազ և թոքերի լեյոմիոմատոզ. պատճառները, ախտաձագումը, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: **Թոքի քաղցկեղ.** պատճառները, ախտաձագումը: Դասակարգումն ըստ փուլերի: Կենտրոնական և ծայրամասային քաղցկեղ: Կլինիկա: Մետաստազները և տեղակայումը: Ատելեկտազները: Ախտորոշման մեթոդները: Վիրաբուժական բուժման հնարավորությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գ.Ե. Ռոյտբերգ և Ա.Վ. Ստրուտինսկի, Ուսումնական ձեռնարկ, Թոքաբանություն, Ա.Մ. Մինասյանի և այլոց խմբ., Ե. 2012, 350էջ:
2. Огороков А.Н., Диагностика болезней внутренних органов: Том 3. Диагностика болезней органов дыхания 2000 г.
3. Ройтберг Г. Е. Внутренние болезни. Система органов дыхания (руководство для врачей, с А. В. Струтынским). М.: Бином, 2005. 472 с.
4. Чучалин А.Г., Рациональная фармакотерапия заболеваний органов дыхания. 2004 г.
5. Чучалин А.Г., Стандарты по диагностике и лечению больных хронической обструктивной болезнью легких. 2005 г.
6. Чучалин А.Г.. Клинические рекомендации. Пульмонология. 2007 г.

3. ԳԱՍՏՐՈՆՆԵՐՈՒՈՒԿԱ

Կերակրափողի հիվանդություններ. Գաստրոէզոֆագեալ ռեֆլյուքսային հիվանդություն: Պատճառները, ախտաձագումը: Դասակարգումը: Կլինիկական նշաններ: Ախտորոշումը: Բուժումը: Որկորի պեպտիկ խոց: Պատճառները, ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Որկորի ախալազիա: Պատճառները, ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Ստոմանու որկորային ացքի ճողվածք: Պատճառները, ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Որկորի քաղցկեղ: Պատճառները, ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը:

Ստամոքսի և 12-մատնյա աղու հիվանդություններ. Խրոնիկական գաստրիտ. սահմանումը, դասակարգումը, պատճառները (արտածին և ընդերածին գործոնները, HP), ախտաձագումը: Խրոնիկական գաստրիտ. Ախտորոշումը (ներդիտում, կենսազննում). ստամոքսի սեկրետոր ֆունկցիայի որոշումը: Անբավարար և պահպանված կամ բարձր հյութազատությամբ խրոնիկական գաստրիտներ. կլինիկական առանձնահատկությունները: Անբավարար և պահպանված կամ բարձր հյութազատությամբ խրոնիկական գաստրիտներ. բուժումը (սննդակարգը, դեղորայքային բուժումը, ուղեկցող հիվանդությունների բուժումը): Խոցային հիվանդություն. Պատճառները, ախտաձագումը (հիմնական և նպաստող գործոնները). Կլինիկական կախված խոցի տեղակայումից. ախտորոշումը. Անամնեզի, ֆիզիկալ, գործիքային, լաբորատոր հետազոտությունների նշանակությունը. ստամոքսի և ՏՄԱ խոցերի ընթացքի առանձնահատկությունները. Բարդությունները. թափածակում (պերֆորացիա), արնահոսություն, թափանցում (պենետրացիա), ստամոքսաելքի կամ ՏՄԱ նեղացում, պերիգաստրիտ, պերիդուոդենիտ: Խոցային հիվանդության հատուկ ձևերը. պիլորիկ անցքի խոց, հետկոճղեզային խոցեր, բազմակի, հսկա, յուվենիլ և ծերունական տարիքի խոցեր: Խոցային հիվանդություն. տարբերակիչ ախտորոշումը: Ստամոքսի քաղցկեղի առաջնային խոցային

ձևը: Սիմպտոմատիկ խոցեր. տարատեսակները, բուժման առանձնահատկությունները: Խոցային հիվանդություն. Սննդակարգը: Խոցային հիվանդություն. Դեղորայքային բուժումը (HP-ի էոզոֆիլացիա, պրոտոնա-յին պոմպի ինհիբիտորներ). դեղորայքային բուժումը (հիստամինային ընկալիչների պաշարիչներ, անմիջական թթվամարիչներ, լորձաթաղանթի ռեգեներացիայի խթանիչներ). վիրաբուժական բուժման ցուցումները. բուժման մարտավարությունը կախված տեղակայումից, տարատեսակից, տարիքից, բարդությունների առկայությունից:

Ստամոքսի քաղցկեղ: Տարածվածությունը, նպաստող գործոնները: Նախաքաղցկեղային վիճակները: Կլինիկական պատկերը: “Փոքր նշանների համախտանիշը”: Կլինիկական արտահայտությունների կապը լոկալիզացիայի, աճի տարատեսակի, ախտընթացի տարածվածության, բարդությունների առկայության հետ: Ստամոքսի քաղցկեղ. ընթացքի տարբերակները. հիվանդության փուլերը. ախտորոշումը. բուժումը. վիրաբուժական բուժման և քիմիաթերապիայի հնարավորությունները. կանխատեսումը:

Աղիների հիվանդություններ. Գրգռված աղու համախտանիշ. Պատճառները, ախտաձագումը. դասակարգումը. ախտորոշումը. բուժումը: Բարակ աղիներում մանրէային հավելյալ աճի սինդրոմ (դիսբակտերիոզ). ախտորոշումը. բուժումը: Մալաբսորբցիայի և մալդիգեսցիայի համախտանիշեր: Պատճառները, ախտաձագումը, բուժումը: Էնտերոպաթիաներ (ցելիակիա, դիսալսարիդազային անբավարարություն, իմունոդեֆիցիտներ և այլն). կլինիկական, տարբերակիչ ախտորոշումը: Ոչ սպեցիֆիկ խոցային կոլիտ. պատճառները. ախտաձագումը. դասակարգումը. Կլինիկական նշանները. ախտորոշումը. տարբերակիչ ախտորոշումը. բուժումը: Կրոնի հիվանդություն. Պատճառները. ախտաձագումը, դասակարգումը. ախտորոշումը. տարբերակիչ ախտորոշումը. բուժումը: Կեղծ թաղանթային կոլիտ. պատճառը, ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը:

Հելմինտոզները. Հիմնական կլինիկական համախտանիշները. ավերգիկ փուլի համախտանիշ, հելմինտի միգրացիայի հետ կապված համախտանիշ, ինտոքսիկացիոն փուլի համախտանիշ:

Լյարդի, թոքերի և այլ օրգանների էխինոկոկոզ. կլինիկական պատկերը. ախտորոշումը. բուժումը. կանխարգելումը: Ասկարիդոզ. կլինիկական պատկերը, ախտորոշումը: Դիֆիլոբոտրիոզ. կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Օպիստորիսոզ. կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Տրիխինիլոզ. կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Տենիոզ. կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Տենիարինիոզ. կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Ֆասցիոլոզ. կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը:

Տարբերակիչ ախտորոշման հարցեր. Հեմոռագիկ սինդրոմով ուղեկցվող աղեստամոքսային հիվանդությունների տարբերակիչ ախտորոշումը և բուժումը: Տարբերակիչ ախտորոշումը և բուժումը այն հիվանդությունների, որոնք հանդես են գալիս լուծով կամ փորկապությամբ: Սրտխառնոցի և փսխման տարբերակիչ ախտորոշումը: Տարբերակիչ ախտորոշումը և բուժումը այն հիվանդությունների, որոնք հանդես են գալիս հեպատոմեգալիայով և հեպատոլիենալ համախտանիշով:

Ենթաստամոքսային գեղձի հիվանդություններ. Սուր պանկրեատիտ: Պատճառները, ախտածագումը: Կլինիկական պատկերը: Բուժումը: Խրոնիկական պանկրեատիտ – պատճառները. ախտածագումը. առաջնային և երկրորդային պանկրեատիտները. Կլինիկական պատկերը: Ենթաստամոքսային գեղձի ֆունկցիայի որոշման և հետազոտման գործիքային մեթոդների դերը ախտորոշման հարցում: Խրոնիկական պանկրեատիտ – տարբերակիչ ախտորոշումը ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի հետ.

աննդակարգը. տարբերակված բուժումը՝ կախված հիվանդության ձևից և փուլից: Վիրաբուժական բուժման ցուցումները:

Լեղապարկի և լեղուղիների հիվանդություններ. Լեղաքարային հիվանդություն - պատճառները և ախտաձագումը: Նախատրամադրող գործոնները: Տեղային գործոնները: Լեղաքարերի տեսակները: Կլինիկական պատկերը: Հիմնական կլինիկական համախտանիշները: Լեղային խիթ: Ախտորոշումը: Բարդությունները: Վիրաբուժական բուժման ցուցումները և հակացուցումները: Կոնսերվատիվ բուժման հնարավորությունները: Լեղային խիթի նոպայի ճնշումը: Պերորալ լուծիչներով բուժումը: Խրոնիկական ոչ քարային խոլեցիստիտ: Պատճառները և ախտաձագումը: Կլինիկական պատկերը: Խրոնիկական ոչ քարային խոլեցիստիտ: Ախտորոշման չափանիշները: Գործիքային ախտորոշման հնարավորությունները: Բարդությունները: Բուժումը (աննդակարգը, դեղորայքային բուժումը սրացումների դեպքում, ֆիզիոթերապիա, սանատոր-կուրորտային բուժումը): Կանխատեսումը:

Բիլիար համակարգի դիսկինեզիաներ: Ախտորոշումը և բուժումը:

Առաջնային սկլերոզացնող խոլանգիտ: Ախտորոշումը և բուժումը:

Հետխոլեցիստէկտոմիկ համախտանիշ: Ախտորոշումը և բուժումը:

Լյարդի հիվանդություններ. Խրոնիկական հեպատիտներ - Պատճառները (վիրուսներ, ալկոհոլ, արտադրական վնասակար գործոններ, դեղորայքներ): Ախտաձագումը: Վիրուսի պահպանման և իմունաբանական խանգարումների դերը: Կազմաբանությունը: Դասակարգումը: Տարբեր ձևերի ընթացքի առանձնահատկությունները: Կլինիկալաբորատոր համախտանիշները (բորբոքման, ցիտոլիզի, խոլեստազի, բջջային անբավարարության): Ախտորոշումը: Պունկցիոն կենսազննման, գերծայնային, ռեդիոլոգիական և իմունաբանական մեթոդների դերը: Տարբերակիչ ախտորոշումը լյարդի ճարպային հեպատոզի և բարորակ հիպերբիլիրուբինեմիաների հետ: Սուր լյարդային անբավարարություն: Բուժումը, կախված ակտիվու-

թյունից: Ստերոիդների և իմունոդեպրեսանտների նշանակման ցուցումները: Հեպատոպրոտեկտորների հնարավորությունները:

Աուտոիմուն հեպատիտ: Պատճառները, ախտաձագումը: Ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Լյարդի դեղորայքային ախտահարումներ: Ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Վիլսոնի հիվանդություն: Ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Ոչ ալկոհոլային ճարպային հեպատոզ: Ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Ալկոհոլային լյարդ: Ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Լյարդի ցիռոզներ – սահմանումը. Պատճառները. ախտաձագումը. դասակարգումը. կլինիկակազմաբանական համախտանիշները. ընթացքը. Կլինիկական ախտորոշման հնարավորությունները. գործիքային և լաբորատոր ախտորոշման հնարավորությունները: Լյարդի ցիռոզի բարդությունները - Տիռոզ-քաղցկեղ, լյարդային էնցեֆալոպաթիա և կոմա. արնահոսություններ, անեմիա, հիպերսպլենիզմ. այտուցային և ասցիտային համախտանիշներ. լյարդաբջջային և լյարդաշունտային անբավարարություն: Լյարդի ցիռոզի բուժումը - սննդակարգը. Դեղորայքային բուժումը. բարդությունների կանխարգելումը և բուժումը: Լյարդի քաղցկեղ - տարածվածությունը. նպաստող գործոնները. դասակարգումը. կլինիկական պատկերը. ախտորոշման հնարավորությունները: Գործիքային հետազոտման մեթոդները. Գերձայնային հետազոտություն, սկենավորում, լապարոսկոպիա: Կանխատեսումը: Բուժումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Harrison's Gastroenterology and Hepatology, Derived from Harrison's Principles of Internal Medicine, 17th Edition. 2010.
2. Ивашкин В.Т., Болезни печени и желчевыводящих путей. 2002 г.

3. Комаров Ф.И., Гребенев А.Л.Руководство по гастроэнтерологии. Том 3. 720 стр., 1996 г.
4. Ройтберг Г. Е. Внутренние болезни. Система органов пищеварения (с А. В. Струтынским). 2-е изд. 574 с. М.: МЕДпресс-информ, 2011.
5. Ройтберг Г. Е. Внутренние болезни. Внутренние болезни. Печень, желчевыводящие пути, поджелудочная железа. МЕДпресс-информ 2013. 648 стр.
6. Хазанов, Калинин, Логинов: Гастроэнтерология и гепатология. Диагностика и лечение. Руководство для врачей. 848 стр., 2013 г.
7. Шерлок Ш., Дули Дж. Заболевания печени и жёлчных путей. 864 стр., 1999 г.

4. ՆԵՖՐՈԼՈԳԻԱ

Երիկամի ֆունկցիայի գնահատման թեստեր. Մեզի կլինիկական հետազոտում: Երիկամների հետազոտման գործիքային մեթոդներ: Երիկամի բիոպսիա: Ցուցումները: բարդությունները: Համախտանիշները նեֆրոլոգիայում: Պրոտեինուրիա: Հեմատուրիա: Լեյկոցիտուրիա: Նեֆրոտիկ համախտանիշ: Նեֆրիտիկ համախտանիշ :

Երիկամային հիպերտենզիա. Երիկամային հիպերտենզիա: Դասակարգում: Չարկերակային հիպերտենզիա երիկամի պարենքիմայի ախտահարման դեպքում: Երիկամի ախտահարման դեպքում զարկերակային հիպերտենզիայի ընթացքը: բարդությունները: Բուժական մոտեցումները:

Գլոմերուլոնեֆրիտներ. Սուր գլոմերուլոնեֆրիտ. պատճառները, ախտածագումը, դասակարգումը. կլինիկական պատկերը, հիմնական կլինիկական համախտանիշները. կլինիկական ձևերը և ընթացքի տարբերակները. պարակլինիկական հետազոտությունների նշանակությունը, ախտորոշման չափանիշները. ընթացքը. ելքը. կանխատեսումը. բուժումը. կենսակերպը, սննդակարգը, իմունաճնշիչ և այլ դեղորայքների կիրառումը. կանխարգելումը: Սուր նեֆրիտ տարած հիվանդների վարումը:

Խրոնիկական գլոմերուլոնեֆրիտ. պատճառները, ախտաճագումը. կազմաբանությունը. կլինիկական դասակարգումը. կազմաբանական դասակարգումը. հետազոտման լաբորատոր և գործիքային մեթոդների նշանակությունը, ախտորոշման ճշտումը. ընթացքը, ելքերը տարբեր ձևերի դեպքում. բուժումը (կենսակերպը, սննդակարգը, ստերոիդային, իմունասուպրեսիվ, հակաազդեգանտային, հակամակարդիչ և այլն). նեֆրոպրոտեկտիվ պատրաստուկները. սանատոր-կուրորտային բուժումը, հիվանդների վարումը (դիսպանսերիզացիա), երկրորդային կանխարգելումը:

Պիելոնեֆրիտ. Խրոնիկական պիելոնեֆրիտ. պատճառները. ախտաճագումը, ախտաճագումը, օջախային վարակի դերը, դասակարգումը. կլինիկան. հիմնական ախտանիշների պատճառները, հետազոտման մեթոդները. ախտորոշումը, բուժումը. վիրաբուժական բուժման ցուցումները, կանխարգելումը:

Երիկամների ամիլոիդոզ. պատճառները, դասակարգումը: Ախտաճագումը և մորֆոգենեզը. կլինիկական պատկերը, փուլերը. հետազոտման լաբորատոր մեթոդները, երիկամի, լնդի և ուղիղ աղու լորձաթաղանթի, ինչպես նաև ենթամաշկային բջջանքի պունկցիոն կենսազննման նշանակությունը. ընթացքը, ելքերը. բուժումը ըստ փուլերի, ընթացքի դանդաղեցման կամ հետզարգացման հնարավորությունները, հիվանդների վարումը (դիսպանսերիզացիա), կանխարգելումը:

Տուբուլոինտերստիցիալ նեֆրոպաթիա. պատճառները, ախտաճագումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը:

Երիկամների դեղորայքային ախտահարում. ախտաճագումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: **Դիաբետիկ նեֆրոպաթիա.** Ախտաճագումը, ախտորոշումը. բուժումը, կանխարգելումը:

Երիկամների ախտահարումը համակարգային հիվանդությունների դեպքում. Երիկամների ախտահարումը հոդատապի (պոդագրայի) դեպքում: Ախտաճագումը, ախտորոշումը: Բուժումը, կանխարգելումը: Երի-

կամների ախտահարումը համակարգային հիվանդությունների դեպքում: Ախտաձագումը, ախտորոշումը. տարբերակիչ ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Երիկամների ախտահարումը համակարգային վասկուլիտների դեպքում: Գուդպասչերի համախտանիշ: Կլինիկա: Ախտորոշում: Բուժում: Հակաֆոսֆոլիպիդային համախտանիշ: Հեմոլիտիկ-ուրեմիկ սինդրոմ: **Երիկամների պոլիկիստոզ.** Դասակարգում: **Երիկամների տուբերկուլոզ.** Ախտաձագումը: Կլինիկա: **Երիկամների ախտահարումը հղիության ընթացքում.** Ախտաձագումը: Ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը: Երիկամների ախտահարումը հղիության ընթացքում: Բուժումը, կանխարգելումը:

Նեֆրոտիկ համախտանիշ. պատճառները, ախտաձագումը, կլինիկական պատկերը. լաբորատոր ախտորոշումը. բուժումը, ուլտրաֆիլտրացիայի ցուցումները: Տարբերակիչ ախտորոշումը և բուժումը նեֆրոտիկ սինդրոմով հանդես եկող հիվանդությունների դեպքում:

Երիկամային անբավարավորություն. Սուր երիկամային անբավարարություն. պատճառները, ախտաձագումը. կլինիկական պատկերը, փուլերը. բուժումը՝ ըստ փուլերի, հեմոդիալիզի ցուցումները, ելքերը, կանխատեսումը, կանխարգելումը: Խրոնիկական երիկամային անբավարարություն. պատճառները, ախտաձագումը. հիմնական կլինիկական համախտանիշները. փուլային ընթացքը. պատճառ հանդիսացած հիվանդության ախտորոշումը. բուժումը. կենսակերպը, սննդակարգը: Ջրաէլեկտրոլիտային հավասարակշռության շտկումը: Խրոնիկական երիկամային անբավարարության բուժումը. ախտանիշային բուժման հնարավորությունները. բուժումը. հեմոդիալիզի ցուցումները և նրա հնարավորությունները. երիկամի փոխպատվաստման ցուցումները: Խրոնիկական երիկամային անբավարարության բուժումը. կանխատեսումը հիմքում ընկած տարբեր հիվանդությունների և տարբեր բուժման դեպքերում:

Երիկամների ուռուցքային հիվանդությունները թերապևտի պրակտիկայում. Տարբերակիչ ախտորոշումը միզասեռական օրգանների այլ հիվանդություններից: **Երիկամների իշեմիկ հիվանդություն.** Ախտաձագում: Ախտորոշում: Կլինիկա: Բուժում:

Ալկոհոլային նեֆրոպաթիա. Ախտաձագում: պաթոգենեզ: Կլինիկա:

Երիկամների քրոնիկ հիվանդություն. Ախտաձագում: Դասակարգում: Ախտորոշում: Բուժման ընդհանուր մոտեցումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նեֆրոլոգիա, Ա.Մ. Մինասյան, Տ.Գ. Ալավերդյան, Ուս. ձեռն. Ե. 2014.
2. Harrison's Principles of Internal Medicine. 18th edition, 2005. Vol.1 and 2.
3. Мухин Н.А., Тареева И.Е. Диагностика и лечение болезней почек. 2011.
4. Тареева И.Е. Нефрология. 2000.
5. Шилов Е. М. Нефрология. Учебное пособие для послевузовского образования 2007.

5. ՌԵՎԻԿՆԵԶԻՏ

Հոդային համախտանիշ. Սեռոնեգատիվ և սեռոպոզիտիվ արթրիտներ: Ախտորոշման մեթոդներ: Տարբերակիչ ախտորոշում:

Համակարգային կարմիր գալլախտ – պատճառները. ախտաձագումը. դասակարգումը. կլինիկական պատկերը. օրգանների և համակարգերի ախտահարումները. լաբորատոր փոփոխությունները. ախտընթացի ակտիվության աստիճանները. ախտորոշման չափանիշները. բուժումը, կանխարգելումը: Գալլախտային նեֆրիտ: Դասակարգումը:

Համակարգային կարծրամաշկություն (սկլերոդերմիա). Սկլերոդերմիա, պատճառները, ախտաձագումը:

Համակարգային կարծրամաշկություն (սկլերոդերմիա). դասակարգումը, կլինիկական պատկերը, օրգանների և համակարգերի ախտահարում-

ները, լաբորատոր փոփոխությունները: Ընթացքը, ախտորոշման չափանիշները. բուժումը, կանխարգելումը, կանխատեսումը:

Դերմատոմիոզիտ/պոլիմիոզիտ. Պատճառները, ախտաձագումը, կլինիկական պատկերը (մաշկի, մկանների, ներքին օրգանների և համակարգերի ախտահարումները). լաբորատոր փոփոխությունները. Ընթացքը, ախտորոշման չափանիշները. բուժումը, կանխարգելումը:

Շյոգրենի հիվանդություն և համախտանիշ. Պատճառները, ախտաձագումը, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը:

Ռևմատոիդ արթրիտ. Սահմանումը. տարածվածությունը. պատճառները. Ախտաձագումը. դասակարգումը: Կլինիկական պատկերը՝ ըստ ընթացքի փուլերի, ակտիվության և ներքին օրգանների և համակարգերի ներգրավմանը ախտընթացում: Լաբորատոր փոփոխությունները: Ախտորոշման չափանիշները: Ընթացքը: Բուժումը: Կանխատեսումը:

Յուվենիլ արթրիտներ. Պատճառները, ախտաձագումը, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը:

Անկիլոզացնող սպոնդիլոարթրիտ. Պատճառները, ախտաձագումը, դասակարգումը: Կլինիկական նշաններ, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: **Ռեակտիվ հոդաբորբեր.** Պատճառները, ախտաձագումը, դասակարգումը: Կլինիկա, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը:

Համակարգային վասկուլիտներ. Պատճառները, ախտաձագումը, դասակարգումը: Ախտորոշման, բուժման և կանխարգելման ընդհանուր սկզբունքները: **Հանգուցային պերիարտերիիտ.** Պատճառները, ախտաձագումը, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը:

Վեգեների գրանուլեմատոզ. Պատճառները, ախտաձագումը, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: **Հսկա բջջային արտերիիտ.** Պատճառները, ախտաձագումը, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: **Գոդպասչերի համախտանիշ.** Պատճառները, ախտաձագումը, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը:

Օրլիտերացնող թրոմբանզիիտ. Պատճառները, ախտածագումը, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը:

Բեհչետի հիվանդություն. պատճառները, ախտածագումը, դասակարգումը, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը:

Օսթեոարթրիտ (դեֆորմացնող օսթեոարթրոզ). Սահմանումը: Տարածվածությունը: Պատճառները, ախտածագումը: Կլինիկական պատկերը, տարատեսակները և ընթացքի փուլերը: Ախտորոշման չափանիշները: Բուժման սկզբունքները: Օրթոպեդիկ բուժման ցուցումները: Կանխատեսումը: Կանխարգելումը: **Հոդատապ (պոդագրա).** Սահմանումը: Տարածվածությունը: Պատճառները, ախտածագումը: Կլինիկական պատկերը. սուր նոպան, խրոնիկական ընթացքը: Ախտորոշման չափանիշները: Կանխատեսումը: Բուժումը: Կանխարգելումը:

Պարբերական հիվանդություն. Պատճառը, ախտածագումը: Դասակարգումը, ախտորոշումը, բուժումը, բարդությունները և նրանց կանխարգելումը: **Ռևմատիզմ.** Պատճառները: բետա-հեմոլիտիկ ստրեպտոկոկի դերը. կլինիկական, շճաբանական և համաճարակաբանական հիմնավորումը: Ախտածաումը: Տարբեր փուլերի կազմաբանությունը: Դասակարգումը: Հիմնական արտահայտությունների կլինիկական պատկերը. Բազմահոդաբորբ, առաջնային և հետադարձ ումեկորդիտ, պերիկարդիտ, խորեա, մաշկային արտահայտությունները, երիկամների ախտահարումը: Ակտիվության կլինիկալաբորատոր չափանիշները: Ընթացքի տարբերակները: Ախտորոշումը, չափանիշները: Բուժումը, պենիցիլինային թերապիան, ոչ ստերոիդային հակառևմատիկ միջոցները: Ստերոիդային բուժման ցուցումները: Կանխարգելումը: Օջախային վարակի սանացիա: Հակառեցիդիվային բուժում:

Մաշկի ախտահարումները տարբեր համակարգային հիվանդությունների դեպքում: Երիկամների ախտահարումը համակարգային հիվանդությունների դեպքում: Սրտի ախտահարումը տարբեր համակար-

գային հիվանդությունների դեպքում: Ֆիբրոմիալգիա. Դասակարգում: Ախտորոշման չափանիշներ: **Կլինիկական նշաններ.** Բուժում:

Միոֆասցիալ ցավ. Կլինիկա: Ախտորոշում: **Ռեյնոյի համախտանիշ.** Պատճառները: **Ռեյնոյի համախտանիշ.** Կլինիկա: Բուժում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Harrison's Principles of Internal Medicine. 18th edition, 2005. Vol.1 and 2.
2. Насонов Е.Л.Ревматология. Клинические рекомендации. 288с., 2008
3. Сигидин Я. А., Гусева Н. Г., Иванова М. М. Диффузные болезни соединительной ткани. 640стр., 2004г.

6. ԱԼԵՐԳՈԼՈԳԻԱ ԵՎ ԿԼԻՆԻԱԿԱՆ ԻՄՈՒՆՈԼՈԳԻԱ

Իմունային համակարգ: Իմուն համակարգի վերաբերյալ ընդհանուր դրույթներ: Իմուն համակարգի բջիջները, հյուսվածքներ և օրգաններ:

Իմուն պատասխանի տեսակներ՝ բնածին և ձեռք բերովի իմունիտետ: Բնածին իմունիտետի մեխանիզմներ: Բնական ռեգիստենտության բջջային և հումորալ գործոններ:

Իմունոգլոբուլիններ, դասեր, կառուցվածք, հակաձնի կապում, իմունոգլոբուլինների սինթեզի գենետիկական վերահսկում

T- բջիջներ, ենթապոպուլյացիաներ, սելեկցիան թիմուսում, T- բջիջների ընկալիչներ: B-լիմֆոցիտներ, դիֆերենցում, B-բջջային ընկալիչ, սուբպոպուլյացիաներ: Թիմուսանկախ հակաձնիներ: Սուպերանտիգեններ: Հիստոհամատեղելիության գլխավոր համալիր: Առաջին, երկրորդ և երրորդ դասի HLA-գեները և նրանց արգասիքները: HLA-համակարգի կենսաբանական դերը: Հակաձնի ներկայացումը: Հակաձնի ներկայացնող բջիջներ: Ցիտոկիններ: Ցիտոկինային ցանց: Բորբոքային և հակաբորբոքային ցիտոկիններ: Հիվանդությունների բուժման ցիտոկինային և հակացիտոկինային ռազմավարություն:

Իմուն պատասխանի էֆեկտոր մեխանիզմներ: Հումորալ պատասխանում բջիջների փոխազդեցություն: Բջջային ցիտոտոքսիկություն: Իմուն պատասխանի կարգավորիչ մեխանիզմներ: Իմունային պատասխան հյուսվածքներում: Իմունոգենետիկ կարգավորում: Ռեգուլյատոր բջիջներ: Աղետամոքսային ուղու իմունային համակարգ: Շնչառական ուղիների իմունային համակարգ: Միզասեռական ուղիների իմունային համակարգ: Ուղեղի իմունային համակարգ: Իմունաբանական տղերանտություն: Պերորալ տղերանտության երևույթ: Առաջնային իմունային անբավարարություններ: B-բջիջների և T-բջջային իմունային անբավարարություններ: Բնածին իմունիտետի առաջնային անբավարարություններ: Երկրորդային իմունային անբավարարություններ: ՁԻԱՀ: Իմունաթերապիա: Իմունախթանիչներ. էկզոգեն, էնդոգեն և սինթետիկ ծագման իմունախթանիչներ: Իմունասուպրեսիվ բուժում: Վակցինացիա: Աուտոիմունիտետ: Աուտոիմունային հիվանդություններ: Օրգան-սպեցիֆիկ և օրգան ոչ սպեցիֆիկ աուտոիմուն հիվանդություններ: Բուժումը: Աուտոիմունային հիվանդություններ: Աուտոիմունային հիվանդությունների բուժման ժամանակակից մոտեցումները: Առաջնային համակարգային վասկուլիտներ/Վեգեների գրանուլեմատոզ, հանգուցավոր պերիարտերիտ, ռևմատիկ պոլիմիալգիա, հսկա բջջային արտերիտ, Կավասակիի, Տակայասուի հիվանդություններ, Շեգրենի համախտանիշ, Շենլեյն-Հենոխի պուրպուրա, չերջ-Ստոռուսի համախտանիշ/: Ռևմատոիդ արթրիտ, էթիոլոգիա, իմունոպաթոգենետ, կլինիկա, ախտորոշում, թերապիայի սկզբունքներ: Շճաբացասական սպոնդիլոարթրոպատիա /Բեխտերևի հիվանդություն, Ռեյտերի համախտանիշ, Բեխչետի համախտանիշ, Յուվենիլ իդիոպատիկ արթրիտ/: Համակարգային կարմիր գայլախտ, էթիոլոգիա, պաթոգենետ, կլինիկա, բուժում:

Աղետսամոքսային ուղու հիվանդություններ /ատրոֆիկ գաստրիտ, ցելիակիա, աղետսամոքսային բորբոքային հիվանդություններ/:

Վիրուսային հեպատիտներ, լյարդի աուտոիմուն հիվանդություններ:

Էնդոկրին համակարգի աուտոիմուն հիվանդություններ /վահանագեղձի աուտոիմուն հիվանդություններ, շաքարային դիաբետ, անպտղության իմունոպաթոլոգիական ասպեկտներ, աուտոիմուն պոլիէնդոկրինոպաթիաներ/:

Նյարդային համակարգի աուտոիմուն հիվանդություններ /տարածուն սկլերոզ, Գիեն-Բարեյի համախտանիշ, միասթենիա, Լամբերտ Իտոնի համախտանիշ/:

Արյան համակարգի հիվանդություններ /աուտոիմուն հեմոլիտիկ անեմիաներ, աուտոիմուն թրոմբոցիտոպենիաներ, աուտոիմուն նեյտրոպենիաներ, նորածինների հեմոլիտիկ հիվանդություն/:

Երիկամային հիվանդություններ/սուր իմունոկոմպլեքսային գլոմերուլոնեֆրիտ, քրոնիկ իմունոկոմպլեքսային գլոմերուլոնեֆրիտ, որը պայմանավորված է կծիկների բազալ մեմբրանի հանդեպ հակամարմիններով, Գուդպասչերի համախտանիշ, ANCA-գլոմերուլոնեֆրիտ/:

Նյարդաէնդոկրին և իմուն համակարգի փոխազդեցությունը և նրա կլինիկական ասպեկտները:

Գերզգայունության տիպերը և նրանց կլինիկական նշանակությունը: Հակամարմիններով միջնորդված ռեակցիաներ. անհապաղ տիպի գերզգայունություն՝ I-տիպ: IgE-ի դերը: Անհապաղ տիպի գերզգայունության մեդիատորներ: Գերզգայունության II և III տիպեր: Դանդաղեցված տիպի գերզգայունություն:

Ալերգեններ, ալերգիկ հիվանդությունների ախտորոշման սկզբունքներ, ալերգաբանական անամնեզի հավաքում, առանձնահատկություններ, մաշկային թեստեր, պրովոկացիոն թեստեր, լաբորատոր ախտորոշում:

Ալերգիկ հիվանդությունների բուժման ընդհանուր սկզբունքներ, ալերգենների էլիմինացիա, ալերգիկ հիվանդությունների ֆարմակոթերապիա,

հակահիստամինային դեղորայք, պարարտ բջիջների մեմբրանների ստաբիլիզատորներ, գլուկոկորտիկոիդներ:

Ատոպիկ հիվանդությունների ժամանակ գերզգայունացման ձևեր և գործոններ: Ատոպիկ հիվանդություններ, պատճառական գործոն հանդիսացող ալերգեններ: Անհապաղ գերզգայունության ռեակցիաների ախտորոշում: Անաֆիլաքսիա. ախտածնություն, տեսակներ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Ատոպիկ դերմատիտ, համաճարակաբանություն, պաթոմորֆոլոգիա, պաթոգենեզ, իմունոախտաբանական բնութագիր, կլինիկական բնութագիր, ախտորոշում, բուժում:

Կոնտակտային դերմատիտ, համաճարակաբանություն, էթիոլոգիա, պաթոգենեզ, դասակարգում, կլինիկական պատկեր, ախտորոշում, բուժում:

Ինսեկտային ալերգիա, էթիոլոգիա, պաթոգենեզ, ախտորոշում և բուժում: Ալերգիկ ռինիտ, էթիոլոգիա, պաթոգենեզ, դասակարգում, ախտորոշում, բուժում: Ալերգիկ շաղկապենաբորբ (կոնյունկտիվիտ), դասակարգում, բուժում: Սպեցիֆիկ իմունոթերապիա:

Սննդային ալերգիա, էթիոլոգիա, պաթոգենեզ, դասակարգում, կլինիկական դրսևորումներ, ախտորոշում, կանխարգելում, բուժում: Եղնջացան, Կվինկեյի այտուց, տեսակներ, էթիոլոգիա, պաթոգենեզ, բուժում:

Բրոնխիալ ասթմա: Պաթոգենեզ, կլինիկա, դասակարգում, ախտորոշում, բուժում: Ասպիրին ինդուկցված ռեսպիրատոր հիվանդություն: Ֆիզիկական ծանրաբեռնվածության ասթմա:

Դեղորայքային ալերգիա: Դեղորայքային ալերգիայի իմունաքիմիական հիմունքներ, առանձնահատկություններ, էթիոլոգիա, իմունապաթոգենեզ, կլինիկական դրսևորումներ, կանխարգելում, ախտորոշում և բուժում: Դեղորայքային ալերգիայով հիվանդների հետազոտման և վարման սկզբունքներ: Բազմաձև էքստրատիվ էրիթեմա: Սուր տոքսիկոալերգիկ ռեակցիաներ. Ստիվենս-Ջոնսոնի և Լայելի համախտանիշ:

Ալերգիա լատեքսից: Առանձնահատկություններ, էթիոլոգիա, պաթոգենեզ, դասակարգում, ախտորոշում, բուժում: Ալերգիա և հղիություն:
Ալերգիկ բրոնխաթոքային ասպերգիլոզ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Наглядная аллергология- М. Рекен, Г. Гревверс, В. Бургдорф, 2008
2. Доказательная аллергология-иммунология - Колхир П.В., 2010
3. Иммунология- А. Ройт, Дж. Бростофф, Д. Мейл., 2007
4. Основы иммунологии - Цинкернагель Р., 2008
5. Иммунология - Хаитов Р.М., 2016
6. Паттерсон Р., Грэммер Л.К., Гринбергер П.А., Аллергические болезни. 2000
7. Стенли М. Нагуа, М. Эрик Гершвин, Секреты аллергологии и иммунологии, 2004
8. Хаитов М.Р., Ильина Н.И., Латышева Т.В., Рациональная фармакотерапия аллергических заболеваний - Лусс Л.В, 2007
9. Клиническая иммунология и аллергология - Дранник Г.Н., 2006

7. ՄԱՇԿԱՅԻՆ ԵՎ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաշկի և հավելումների անատոմիան և հյուսվածաբանությունը. Էպիդերմիս (վերնամաշկ): Դերմոէպիդերմալ միավորում: Դերմա (բուն մաշկ): **Մաշկի ֆիզիոլոգիան: Մաշկի հիմնական գործառույթները.** Մաշկի արյունաստեղծ գործառույթը (ներարգանդային կյանքում): Մաշկի հաղորդակցական գործառույթը (վաղ մանկական հասակում): Մաշկի պատնեշային-պաշտպանական գործառույթը: Մաշկի ընկալիչային գործառույթը: Մաշկի ջերմակարգավորիչ գործառույթը: Մաշկի շնչառական գործառույթը (տրանսկուտան ռեսպիրացիա): Մաշկի ներծծման գործառույթը (տրանսկուտան ռեգորբցիա): Մաշկի արտադրական-արտազատական գործառույթը: Մաշկի նյութափոխանակային գործառույթը: Մաշ-

կի ներգատական գործառույթը: Մաշկի բնապահպանական գործառույթը: Մաշկի գեղագիտական գործառույթը:

Վերնամաշկի ախտահյուսվածաբանությունը. Բջջային կինետիկայի խախտում: Կերատինոցիտների պրոլիֆերացիայի, դիֆերենցիացիայի և էքսֆոլիացիայի միջև փոխհարաբերության խախտում: Կերատինոցիտների պրոլիֆերացիայի, դիֆերենցիացիայի և ապոպտոզի միջև փոխհարաբերության խախտում: Կերատինոցիտների տարբերակման գործընթացների խախտում: Կերատինոցիտների միջբջջային կապերի խախտում: Դերմո-էպիդերմալ կապերի խախտում. Սուբէպիդերմալ բշտի ձևավորում: **Բուն մաշկի ախտահյուսվածաբանությունը.** Շարակցահյուսվածքային թելերի ախտաբանական փոփոխություններ:

Իմուն պաշտպանության կառուցվածքագործառույթային հիմունքները. Կենտրոնական իմունաստեղծ օրգաններ: Ծայրամասային իմունաստեղծ օրգաններ: Հակաձիններ և նրանց ճանաչումը իմուն համակարգում: Բնածին իմունիտետ (օրգանիզմի առաջնային պաշտպանություն): Ձեռքբերովի իմունիտետ (օրգանիզմի երկրորդային պաշտպանություն): Հակաձիններին ճանաչող և ներկայացնող բջիջներ:

Ալերգիա, ալերգիկ ռեակցիաներ. Գերազանցապես հումորալ բնույթի իմունաախտաբանական ռեակցիաներ (հակամարմիններով միջնորդավորված ալերգիկ ռեակցիաներ): Գերազանցապես բջջային բնույթի իմունաախտաբանական ռեակցիաներ (հակամարմիններով չմիջնորդավորված ալերգիկ ռեակցիաներ): Ալերգիան մաշկաբանական պրակտիկայում:

Մաշկախտերի ախտորոշման սկզբունքները կլինիկական-ձեվաբանական ախտորոշում (ախտորոշման կլինիկական-ձեվաբանական սկզբունքը). Հիվանդի և հիվանդության վերաբերյալ ընդհանուր տեղեկատվության հավաքագրում. anamnesis morbi, status praesens subjectivus, locus morbi, հիվանդության սկիզբը, ընթացքը, նախորդող բուժումը և այլն: Առաջնային ձևաբանական տարրեր, նրանց կլինիկական գնահա-

տականը: Երկրորդային ձևաբանական տարրեր, նրանց կլինիկական գնահատականը:

Մաշկախտերի բուժման սկզբունքները. Մաշկախտերի ընդհանուր բուժումը: Մաշկախտերի ֆիզիոթերապևտիկ բուժումը: Ֆոտոթերապիա (լուսաբուժում), ֆոտոթերապիայի մեթոդները: Մաշկախտերի արտաքին բուժումը (տեղային բուժման հիմնական օրենքները, տեղային կիրառման հիմնական դեղաձևերը, տեղային կիրառման հիմնական դեղախմբերը):

Ստաֆիլոդերմիաներ. Մեծահասակների ստաֆիլոդերմիաներ. Մակերեսային ստաֆիլոդերմիաներ. Խոր ստաֆիլոդերմիաներ:

Մանկական տարիքի ստաֆիլոդերմիաներ. Մակերեսային ստաֆիլոդերմիաներ. Խոր ստաֆիլոդերմիաներ: **Ստրեպտոդերմիաներ.** Մակերեսային ստրեպտոդերմիաներ. Խոր ստրեպտոդերմիաներ:

Ստրեպտոստաֆիլոդերմիաներ. Մակերեսային ստրեպտոստաֆիլոդերմիաներ: Խոր ստրեպտոստաֆիլոդերմիաներ

Դերմատոֆիտիաներ. Գլխի մազածածկ մասի, մորուքի և բեղերի միկոզներ (*tinea capitis et barbae*, տրիխոֆիտիա և միկոոսպորիա): Եղունգների միկոզներ կամ օնիխոմիկոզներ (*tinea unguium*, դերմատոֆիտային օնիխոմիկոզ): Ափերի միկոզներ (*tinea manuum*, ափերի ռուբրոֆիտիա): Ներբանների միկոզներ (*tinea pedis*, ներբանների էպիդերմոֆիտիա և ռուբրոֆիտիա): Իրանի միկոզ (*tinea corporis s. circinata s. cutis*, հարթ մաշկի դերմատոֆիտիա): **Կանդիդոզ.** *Candida* սեռի սնկերի բնորոշ առանձնահատկությունները. ձևաբանությունը, բազմացումը, աճի պայմանները: Կանդիդոզի տեղային ձևերը: Մաշկի, հավելումների և լորձաթաղանթների կանդիդոզ: Ներքին օրգանների կանդիդոզ:

Մաշկի մալասեզիոզներ. Մաշկի *Malassezia*-վարակներ. *Malassezia*-զուգորդված մաշկախտեր: Խրոնիկական մաշկախտեր, որոնց ժամանակ *Malassezia*-վարակը կատարում է սադրիչ գործոնի դեր:

Հերպեսվիրուսային դերմատոզներ. Հասարակ հերպես կամ հասարակ բշտիկային որքին: Առաջնային հասարակ հերպես (Herpes simplex primaria): Երկրորդային (կրկնվող) հերպես (Herpes simplex secundaria) : Հերպեսային էկզեմա. Գոտևորող որքին:

Պոքսվիրուսային դերմատոզներ: Պապիլոմավիրուսային դերմատոզներ: Ենթադրաբար վիրուսային ծագման մաշկախտեր. Վարդագույն որքին Հարուցիչները՝ ենթադրաբար՝ Enterovirus coxsackie A, HSV-7: Բեխտեյտի համախտանիշ Հարուցիչները՝ հայտնաբերված չեն:

Մաշկի իսկական տուբերկուլոզ. Մաշկի տուբերկուլոզի տեղային ձևերը. Մաշկի տուբերկուլոզի տարածուն ձևերը:

Բոր. Լեպրոմատոզ, տուբերկուլոզիային, չտարբերակված և դիմորֆ տիպեր: **Պրոտոզոոնոզներ.** Բորովսկու հիվանդություն (լեյշմանիոզ) Քաղաքային (անտրոպոնոզ, ուշ խոցոտվող) և գյուղական (զոոնոզ, սուր նեկրոտիզացվող) տեսակները (տես նաև՝ միաբջիջների և մտրակավորների կողմից հարուցվող մաշկախտեր, լեյշմանիոզ):

Սարկոիդոզ. Սարկոիդոզ (Բենյե-Բեկ-Շաումանի հիվանդություն):

Վարակական էրիթեմաներ. Հեբրայի բազմաձև էքսուդատիվ էրիթեմա (erythema exudativum multiforme Hebrae) վարակական-ալերգիկ և թունաալերգիկ ձևերը; կլինիկական ձևերն ըստ ընթացքի. թեթև, ծանր (Ստիվենս-Ջոնսոնի համախտանիշ) և ծայրահեղ ծանր (Լայելի տոքսիկ էպիդերմոլիզ), Ռոուելլի համախտանիշ (բազմաձև էքսուդատիվ էրիթեմա և սկավառակաձև կարմիր գայլախտ): Դարիեի օղակաձև կենտրոնախույս էրիթեմա: Ժիբերի վարդագույն որքին:

Ոչ վարակական էրիթեմաներ. Ժառանգական բնույթի ոչ վարակական էրիթեմաներ: Ոչ ժառանգական բնույթի ոչ վարակական էրիթեմաներ:

Անհանդուրժելիության վերնամաշկային ռեակցիաներ. Մաշկաբորբեր, պայմանական և անվերապահ գրգռիչներ: Ալերգատոքսիդերմիաներ (դեղորայքային, ալիմենտար, աուտոտոքսիկ և այլն): Էկզեմա (դասա-

կարգումը, պատճառագիտությունը, ավտաձագումը, ավտորոշումը, բուժման սկզբունքները): Ատոպիկ հիվանդություն (ատոպիկ քայլերգ, ատոպիկ մաշկաբորբ, ատոպիկ ռինիտ, բրոնխային ասթմա և այլն):

Եղնջայտուց. Սովորական եղնջայտուց. Խրոնիկական եղնջայտուց. Ֆիզիկական եղնջայտուց. Կոնտակտային եղնջայտուց. Ժառանգական եղնջայտուց. Պսիխոգեն եղնջայտուց. Գունակային եղնջայտուց (մաստոցիտոզ): **Նեյրոդերմատոզներ (նյարդային մաշկախտեր).** Նեյրոդերմիտ. Մաշկի քոր. Քորպտիկ (պրուրիգո):

Բշտային մաշկախտեր. Ձեռքբերովի աուտոիմուն ներվերնամաշկային բշտախտեր: Ձեռքբերովի աուտոիմուն ենթավերնամաշկային բշտախտեր. Ժառանգական ենթավերնամաշկային բշտախտեր:

Պսորիազ (թեփատու որքին). Հասարակ պսորիազ. Պսորիատիկ արթրոպաթիա. Պսորիատիկ էրիթրոդերմիա:

Պարապսորիազ. Վահանակային պարապսորիազ (մանր և խոշոր վահանիկային): Լիխենոիդ (որքինանման) պարապսորիազների խումբ:

Պսորիազիֆորմ պուստուլոզ մաշկախտեր. Գեներալիզացված պսորիազիֆորմ պուստուլոզ: Հալոպայոյի կայուն թարախային ակրոդերմատիտ: Էնդրյուսի պուստուլոզ բակտերիդ: **Մաշկի անգիոնեվրոզներ.** Մաշկի սիմետրիկ էրիթրոցիանոզ. Էրիթրոմելալգիա. Լիվեդո. Ռոզացեա:

Վասկուլիտներ կամ անգիիտներ. Դերմալ անգիիտներ (բազմաձև դերմալ անգիիտ, մաշկի խոր ալերգիկ վասկուլիտներ). Դերմոհիպոդերմալ անգիիտներ. Հիպոդերմալ անգիիտներ (հանգուցանման անգիիտ, հանգուցանման-խոցային անգիիտ): **Կարմիր գայլախտ.** Խրոնիկական կարմիր գայլախտ (ինտեգումենտ կամ մաշկային կարմիր գայլախտ): Սուր կարմիր գայլախտ (համակարգային կարմիր գայլախտ):

Սկլերոդերմիա. Ինտեգումենտ (մաշկային) ձևը (սահմանափակ սկլերոդերմիա): Համակարգային սկլերոդերմիա (սահմանափակ և տարածուն ձևերը, CREST-համախտանիշ և այլն):

Դերմատոմիոզիտ. Դերմատոմիոզիտ (պոլիմիոզիտ, դերմատոպոլիմիոզիտ, Վագների հիվանդություն): Առաջնային (իդիոպաթիկ) և երկրորդային (պարանեոպլաստիկ) ձևերը:

Մաշկի առաձգականության ձեռքբերովի գեղարարական ախտաբանություն. Ծերունական ատրոֆիաներ եվ դիստրոֆիաներ: Բորբոքային (հետբորբոքային), ոչ բորբոքային և տրոֆոնկրոտիկ ատրոֆիաներ: Արիտրոֆիկ մաշկախտեր: **Մաշկի գունակագոյացման ձեռքբերովի գեղարարական ախտաբանություն.** Առաջնային հիպոմելանոզներ: Երկրորդային հիպոմելանոզներ (հետվարակական և հետբորբոքային հիպոմելանոզներ). Ձեռքբերովի հիպերքրոմիաներ: Սեռական խախտումների ժամանակ զարգացող դիսպիգմենտացիաներ: Արտասեռական խախտումների ժամանակ զարգացող դիսպիգմենտացիաներ: Տոքսիկ հիպերմելանոզներ. Երկրորդային հիպերմելանոզներ (հետվարակական և հետբորբոքային հիպերմելանոզներ):

Ձեռքբերովի հիպոտրիխոզներ. Օջախային (բունցային) ալոպեցիա (alopecia areata Celsi). Սպիական ալոպեցիաներ. Հորմոնալ (անդրոգենային) ալոպեցիա. Տրավմատիկ ալոպեցիաներ. Տարածուն ալոպեցիա. Տոքսիկ ալոպեցիա. Նյարդածին ալոպեցիա. Վարակական ալոպեցիա:

Ձեռքբերովի հիպերտրիխոզներ. Ձեռքբերովի կամ երկրորդային հիպերտրիխոզ:

Կորյակային հիվանդություն (կի, հասարակ պզուկներ, պատանեկան պզուկներ, կորյակներ, acne vulgaris). Կորյակային հիվանդության ոչ բորբոքային ձևեր. Կորյակային հիվանդության բորբոքային ձևեր:

Ակնէանման մաշկախտեր. Ռոզացեա (վարդագույն պզուկներ): Դեմոդեկոզ. Պերիորալ դերմատիտ:

Մաշկի բարորակ էպիդերմալ ուռուցքներ և ուռուցքանման ախտահարումներ. Էպիդերմալ նևուսներ. Սեբորեային կերատոմա կամ սեբորեային կերատոզ (ծերունական գորտնուկ):

Մաշկի չարորակ էպիդերմալ ախտահարումներ. Բազալ-բջջային քաղցկեղ (բազալիոմա, բազոցեյուլար քաղցկեղ, մաշկի կարցինոիդ). Ներսիռոդ տափակ-բջջային քաղցկեղ (սպինոցեյուլար քաղցկեղ, էպիդերմոիդ քաղցկեղ, սպինալիոմա, cancer planocellulare): Ներէպիդերմալ տափակ բջջային քաղցկեղ (in situ քաղցկեղ). Պեջետի հիվանդություն:

Մաշկի անոթային բարորակ ուռուցքներ. Հեմանգիոմաներ. Անգիոմաներ. Անոթային մալֆորմացիաներ. Անոթային հիպերպլազիաներ:

Նյութափոխանակության խախտման արդյունքում զարգացող մաշկի ուռուցքներ և ուռուցքանման ախտահարումներ. Քսանթոմաներ. Մաշկի կալցինոզ. Պողպարիկ հանգույց. Մաշկի ամիլոիդոզ:

Գենոդերմատոզներ (ժառանգական մաշկախտեր). Եղջերացման ժառանգական հիվանդություններ. Ոչ բնածին իխթիոզներ. Բնածին իխթիոզներ: **Ֆոլիկուլային կերատոզներ.** Ֆոլիկուլային հանգուցիկային կերատոզներ. Ֆոլիկուլային ատրոֆիկ կերատոզներ. Ֆոլիկուլային աճական կերատոզներ. Գորտնուկային կերատոզներ (պորոկերատոզներ):

Բազմաձեւ կերատոզներ. Տուրենի կոնգենիտալ պոլիկերատոզ:

Նեյրոկուտան ժառանգական հիվանդություններ. Նեյրոֆիբրոմատոզ (Ռեկլինգհաուզենի հիվանդություն). Ճարպագեղձերի սիմետրիկ աղետնոմա կամ Պրինզլ-Բուրնեվիլլի հիվանդություն կամ տուբերոզային սկլերոզ. Ստերջ-Վեբերի հիվանդություն (Կրաբբեի համախտանիշ կամ էնցեֆալոֆացիալ նեյրոանգիոմատոզ):

Սիֆիլիս. Առաջնային սիֆիլիս. Երկրորդային սիֆիլիս. Երրորդային սիֆիլիս. Գաղտնի սիֆիլիս (վաղաժամ, ուշացած և չճշտված). Կենսաբանական կեղծ դրական շիճուկաբանական ռեակցիաներ (սուր, խրոնիկ). Շճակայունություն (իսկական, հարաբերական, կեղծ). Շճակայուն և շճասեռուն սիֆիլիս. Լորձաթաղանթների ախտահարումը սիֆիլիսի ժամանակ. Նյարդասիֆիլիս. Բնածին սիֆիլիս. Ընդերային սիֆիլիս:

Գոնորեա. Գոնորեայի պատճառագիտությունը, ախտաձագումը.

Գոնորեայի կլինիկան տղամարդկանց մոտ և տեղային բարդությունները. Գոնորեայի կլինիկան կանանց և աղջիկների մոտ, գոնորեա և հղիություն. Արտասեռական գոնորեա (ֆարինգիտ, ստոմատիտ, պրոկտիտ, կոնյունկտիվիտ, դիսեմինացված գոնորեա և այլն):

Տեղաճարակային արեվադարձային սեռավարակներ. Փափուկ շանկր (շանկրոիդ). Վեներական լիմֆոգրանուլեմա (4-րդ վեներական կամ Durand-Nicolas-Favre-ի հիվանդություն). Դոնովանոզ (5-րդ վեներական հիվանդություն կամ վեներական գրանուլեմա):

Մակաբուժային սեռավարակներ. Տրիխոմոնիազ. Ամեոբիազ. Ջիարդիազ: **Նոր սերնդի սեռավարակներ.** Միզասեռական խլամիդիոզ. Ռեյթերի հիվանդություն. Միզասեռական միկոպլազմոզ. Նոր սերնդի սեռավարակների դերն անպտղության զարգացման գործում (կանանց անպտղություն, տղամարդկանց անպտղություն): Նոր սերնդի սեռավարակների բուժման ընդհանուր սկզբունքները

Մանրէային վագինոզ. Մանրէային վագինոզ, ախտաճագումը, կլինիկան, լաբորատոր ախտորոշումը, բուժման ընդհանուր սկզբունքները:

Վիրուսային սեռավարակներ. ՁԻԱՀ-ի պատճառագիտությունը. ՄԻՎ-ի զարգացման կենսական ցիկլը և ռեպլիկացիաների հերթագայությունը. ՁԻԱՀ-ի մաշկաբանական առանձնահատկությունները. ՁԻԱՀ-ի սնկաբանական առանձնահատկությունները. ՁԻԱՀ-ի վիրուսաբանական առանձնահատկությունները. ՁԻԱՀ-ի վեներաբանական առանձնահատկությունները. ՁԻԱՀ, մաշկի ոչ վարակական ախտահարումները. Հերպես-վիրուսային վարակներ. Պապիլոմավիրուսային վարակներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խ.Մ. Խաչիկյան: Արտաքին բուժման գլխավոր սկզբունքները դերմատոփեներոլոգիայում և դերմատոկոսմետոլոգիայում: Ե., 2012 թ.

2. Խ.Մ. Խաչիկյան: Ժամանակակից վեներոլոգիա: Դասական վեներական հիվանդություններ: Դասախոս. շարք: 1 հ. Ե., 2008 թ.
3. Խ.Մ. Խաչիկյան: Ժամանակակից վեներոլոգիա: Դասական վեներական հիվանդություններ: Դասախոս. շարք: 2 հ. Ե., 2010 թ.
4. Խաչիկյան Խ.Մ. Իմունամաշկաբանություն: Երևան, 2015 թ.:
5. Խաչիկյան Խ.Մ. Ձեռքբերովի բշտային մաշկախտերի տարբերակիչ ախտորոշումը, Երևան, 2014 թ.:
6. Մ.Ե. Միրաքյան: Բոր: Երևան, 1996 թ.
7. А.Н. Родионов. Грибковые заболевания кожи. Санкт-Петербург 2000
8. А.Н. Родионов. Кожные и венерические заболевания. Полное руководство для врачей. Москва 2012 г.
9. Адаскевич В.П. Кожный зуд. Москва 2014 г.
10. В.А. Аковбян и др. Инфекции, передаваемые половым путем.М. 2007
11. В.П. Адаскевич. Диагностические индексы в дерматологии. М. 2004
- Г.А. Дмитриев, И.И. Глазко. Диагностика инфекций, передаваемых половым путем. Москва 2007 г.
12. Дерматовенерология. Национальное руководство. Под ред. акад. Ю. К. Скрипкина, проф. Ю.С. Бутова и проф. О.Л. Иванова. М. 2011 г.
13. Дерматология в клинической практике. Под ред. Э. Финлея и М. Чаудхэри. Москва 2011 г.
14. Клиническая дерматовенерология. В 2-х т. Под. ред. Ю.К. Скрипкина, проф. Ю.С. Бутова. Руководство для врачей. Москва 2009 г.
15. Методические рекомендации по ведению регистра больных хроническими заболеваниями кожи. Москва 2008 г.
16. О.Д. Мяделец, В.П. Адаскевич. Морфофункциональная дерматология. Москва 2006 г.
17. Рациональная фармакотерапия в гепатологии. Под ред. В.Т. Ивашкина и А.О. Буеверова. Москва 2009 г.
18. Робин Грехем Браун, Дж. Бурк, Тим Канлифф. Практическая дерматология. Москва 2011 г.
19. Фототерапия – современный метод восстановления больной кожи. Москва 2008 г.
20. Хачикян Х.М. Дифференциальная диагностика буллезных дерматозов. Ереван 2014 г.

8. ՖԹԻԶԻԱՏՐԻԱ

Տուբերկուլոզի համաճարակաբանությունը: Տուբերկուլոզի պատճառագիտությունը: Տուբերկուլոզի հարուցիչը, ձևերը և նրանց համաճարակաբանական նշանակությունը: Տուբերկուլոզի ախտածնությունը և ախտաբանական անատոմիան: Տուբերկուլոզի ախտորոշման եղանակները: Տուբերկուլոզի հիմնական ախտանիշները: Տուբերկուլինային ախտորոշում: Տուբերկուլինային փորձեր, կատարման տեխնիկան և արդյունքների գնահատումը: Թոքերի տուբերկուլոզի կլինիկական ձևերը: Առաջնային տուբերկուլոզ: Տուբերկուլոզային թունավորում, ներկրծքային ավշահանգույցների տուբերկուլոզ, առաջնային տուբերկուլոզային համալիր: Ախտածնությունը, կլինիկական ընթացքը, ախտորոշումը:

Թոքերի սերմնացրված տուբերկուլոզ՝ սուր, ենթասուր և քրոնիկական: Ախտածնությունը, կլինիկական, ախտորոշումը: Թոքերի օջախային տուբերկուլոզ: Ախտածնությունը, կլինիկական, ախտորոշումը:

Թոքերի ներսփռանքային տուբերկուլոզ: Սահմանափակ և տարածուն ներսփռանքներ: Ախտածնությունը, կլինիկական, ախտորոշումը:

Լոռանման թոքաբորբ: Կլինիկական, ընթացքը, հնարավոր ելքերը:

Թոքերի տուբերկուլոմաներ: Ախտածնությունը, կլինիկական, ախտորոշումը:

Թոքերի խոռոչային տուբերկուլոզ: Ախտածնությունը, կլինիկական, ախտորոշումը: Թոքերի թելքախոռոչային տուբերկուլոզ: Ախտածնությունը, կլինիկական, ախտորոշումը: Թոքերի ցիռոզային տուբերկուլոզ: Ախտածնությունը, կլինիկական ընթացքը: Արտաթոքային տուբերկուլոզ:

Տուբերկուլոզային մենինգիտ, ընթացքի առանձնահատկությունները, կլինիկական ընթացքը, ախտորոշումը: Ողնուղեղային պունկցիայի նշանակությունը ախտորոշման գործում: Տուբերկուլոզային պլերիտ:

Ֆիբրինային և արտաքիրտային պլերիտներ: Ախտածնությունը, կլինիկական, ախտորոշումը:

Ծայրամասային ավշահանգույցների տուբերկուլոզ: Ախտաճնությունը, կլինիկական ընթացքը, ախտորոշումը: Տուբերկուլոզային մեզադենիտ: Ախտաճնությունը, կլինիկական ընթացքը, ախտորոշումը: Տուբերկուլոզային պոլիսերոզիտ: Ախտաճնությունը, կլինիկական ընթացքը, ախտորոշումը: Հենաշարժական համակարգի տուբերկուլոզ: Ախտաճնությունը, կլինիկական ընթացքը, ախտորոշումը:

Միզուղիների և սեռական օրգանների տուբերկուլոզ: Ախտաճնությունը, կլինիկական ընթացքը, ախտորոշումը:

Թոքերի տուբերկուլոզի տարբերակիչ ախտորոշումը: Առաջնային տուբերկուլոզի տարբերակիչ ախտորոշումը: Ներկրծքային ավշահանգույցների տուբերկուլոզը /բրոնխոադենիտի/ տարբերակումը ոչ յուրահատուկ գեղձախտերից (ադենոպաթիաներ), լիմֆոգրանուլեմատոզից, լիմֆոսարկոմայից, սարկոիդոզից, թիմուսի գերաճից, թիմոմաներից: Առաջնային տուբերկուլոզային համալիրի տարբերակումը ոչ յուրահատուկ թոքաբորբից, ստաֆիլակոկային թոքաբորբից, ձգձգված վիրուսային թոքաբորբից:

Թոքերի սերմնացված տուբերկուլոզի տարբերակիչ ախտորոշումը այլ թոքային ախտահարումներից՝ սարկոիդոզի II փուլից, կարցինոմատոզից, երկկողմանի ոչ ինքնատիպ օջախային թոքաբորբից, փոշեգարությունից /սիլիկոզ/, իդիոպաթիկ ֆիբրոզացնող ավելուլիտից, հիստիոցիտոզ X-ից, հեմոսիդերոզից, սրտային հիվանդությունների հետևանքով թոքերում առաջացած կանգից, համակարգային հիվանդություններից:

Թոքերի օջախային և ներսփռանքային տուբերկուլոզի տարբերակիչ ախտորոշումը այլ թոքային ախտահարումներից՝ ոչ ինքնատիպ թոքաբորբից, ծայրամասային քաղցկեղից, էոզինոֆիլային ներսփռանքից, թոքերի սնկային ախտահարումներից /պնևմոնիկոզից/, թոքի ինֆարկտից:

Թոքերի գնդաձև գոյացությունների՝ տուբերկուլոմայի, թարախակույտի, չարորակ ծայրամասային քաղցկեղի, վարատական քաղցկեղի, բարորակ

(գամարտոմա, օստեոխոնդրոմա) նորագոյացությունների, տարբեր ծագում ունեցող լցված թոքաբշտերի, միկոզների տարբերակիչ ախտորոշումը: Թոքերի քայքայիչ ձևերի տարբերակիչ ախտորոշումը այլ թոքային ախտահարումներից՝ օդային բշտերից, ասպերգիլլոմայից, մակաբուժային ախտահարումներից, բացված թարախակույտից, թոքերի չարորակ նորագոյացություններից՝ քայքայման փուլում: Տուբերկուլոզային թոքամզաբորբի տարբերակիչ ախտորոշումը թոքաբորբերի ժամանակ զարգացող պլևրիտից, ուռուցքի ժամանակ զարգացող պլևրիտից, մեզոթելիոմայից: Տուբերկուլոզի բարդությունները: Առաջնային տուբերկուլոզի բարդությունները. բրոնխների տուբերկուլոզ, ատելեկտազ, ավշածին, արյունածին սերմնացրում, թոքամզի բորբոքում, առաջնային խոռոչ, լոռանման թոքաբորբ: Տուբերկուլոզի բարդությունները. թոք-սրտային անբավարություն, ներքին օրգանների ամիլոիդոզ: Անհետաձգելի վիճակները տուբերկուլոզի ժամանակ: Թոքային արյունահոսություն: Թոքային արյունահոսությունների ախտաձագումը, կլինիկան, ախտորոշումը և բուժումը: Ինքնաբուխ պնևմոթորաքսի ախտաձագումը, կլինիկան, ախտորոշումը և բուժումը: Տուբերկուլոզի զուգորդումը այլ հիվանդությունների հետ: Տուբերկուլոզի կլինիկական ընթացքի, ախտորոշման և բուժման առանձնահատկությունները ՄԻԱՎ-ի զուգորդման ժամանակ: Տուբերկուլոզի առանձնահատկությունները փոշեգարության, թոքերի քաղցկեղի, սիրտանոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի, լյարդի հիվանդությունները և ԹՔՕՀ-ի հետ զուգորդման ժամանակ: Տուբերկուլոզը և հոգեկան հիվանդությունները: Տուբերկուլոզը և հարբեցողությունը: Տուբերկուլոզը և մայրությունը: Հակատուբերկուլոզային ծառայության կազմակերպումը արդի պայմաններում: Հիվանդների հայտնաբերումը արդի պայմաններում: Տուբերկուլոզի զարգացման ռիսկի գործոնները: Տուբերկուլոզի սանիտարական, քիմիական, սոցիալական կանխարգելում: Հակատուբերկուլոզային յուրահատուկ կանխարգելումը՝ հակատուբերկու-

լրգային ԲՅԺ պատվաստումը: Տուբերկուլոզի բուժման հիմնական եղանակները: Հակատուբերկուլոզային քիմիաթերապիան: Տուբերկուլոզի բուժումը DOTS ծրագրով: Հակատուբերկուլոզային պատրաստուկները: Տուբերկուլոզի ախտաճանական, ախտանշական բուժումը: Վիրահատական բուժման եղանակները և ցուցումները: Կոլապսաթերապիա՝ արհեստական պնևմոթորաքս, պնևմոպերիտոնեում: Տուբերկուլոզի հարուցչի դեղորայքակայունության զարգացման պատճառները և ձևերը և կանխման ուղիները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սաֆարյան Մ. Դ. և համահեղ., Ֆթիզիատրիա, Ե., 2002, 192 էջ
2. Սաֆարյան Մ.Դ., Նիկոլայան Լ.Թ., Գևորգյան Ա.Պ., Ֆթիզիատրիայի հիմունքները, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2010թ., 140 էջ
3. Սաֆարյան Մ.Դ., Գևորգյան Ա.Պ., Մինասյան Գ.Ռ., Ֆթիզիատրիայի մասնավոր հարցեր, ուս. ձեռնարկ, Երևան-2015թ., 185 էջ
4. Дэвидсон. Внутренние болезни. Пульмонология. Редакторы: Николас А.Бун, Ники Р.Колледж, Брайан Р. Уолкер, Джон А.А. Хантер. Пер.с англ. под ред. С.И.Овчаренко. М.: Изд. “ГЭОТАР-Медиа”, 2009, 138
5. Кошечкин В.А., Иванова З.А. Туберкулез. Учебное пособие. М.: Изд. группа “ГЭОТАР-Медиа”, 2007 - 304 с.
6. Крофтон Дж., Хорн Н., Миллер Ф. Клиника туберкулеза. Перевод с англ. М.Медицина, 2001г.- 186с
7. Полли Э. Парсонз, Джон Э. Хеффкер. Секреты пульмоннологии. Перевод с англ. под ред. к.м.н. О.Ф. Колодкиной, М.. 2004 , 647с.
8. Рабухин А.Е. Туберкулез органов дыхания у взрослых, М. 1963 -342 с.
9. Туберкулез органов дыхания. Под ред. чл.- корр. АМН СССР Хоменко А.Г.- М.Медицина,1963 - 1988.-576 с.

9. ԷՆԴՈԿՐԻՆՈԼՈԳԻԱ

Էնդոկրինոլոգիայի պատմություն: Էնդոկրին համակարգ, հորմոնները և նրանց ազդեցության մեխանիզմը: Նյութափոխանակության հորմոնալ կարգավորումը: Հիպոֆիզ. անատոմիա և ֆիզիոլոգիա, հետազոտման

եղանակները: Հիպոֆիզի ադենոմաներ, դասակարգում, Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Գլխուղեղի և հիպոֆիզի հորմոնալ ոչ ակտիվ ուռուցքները: Տեսողական, նյարդային և սեռական խանգարումները: Ախտորոշման սկզբունքները և բուժումը: Ակրոմեգալիա, Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Գիգանտիզմ Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Հիպոֆիզար նանիզմ, Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Կարճահասակության տարբերակիչ ախտորոշումը: Իդիոպաթիկ կարճահասակություն՝ դասակարգում, բուժում: Հիպերպրոլակտինեմիայի համախտանիշ, Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Ոչ շաքարային դիաբետ, Դասակարգում, Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Պարխոնի համախտանիշ էթիոպաթոգենեզը, կլինիկական դրսևորումները, ախտորոշումը և բուժումը: Պանհիպոպիտուիտարիզմ: Դասակարգում, Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Նյարդային անոռեքսիա՝ էնդոկրին դրսևորումները: Դատարկ թրքական թամբի համախտանիշ՝ Էթիոլոգիա, կլինիկական դրսևորումները, ախտորոշման լաբորատոր-գործիքային մեթոդները, վարման տակտիկան:

Ենթաստամոքսային գեղձ. անատոմիա և ֆիզիոլոգիա, հետազոտման եղանակները: Շաքարային դիաբետ: Էպիդեմիոլոգիա: Դասակարգում, պաթոգենեզ, կլինիկա: Շաքարային դիաբետի ախտորոշում: Տիպ 1և տիպ 2 շաքարային դիաբետի տարբերակիչ ախտորոշում: MODY դիաբետի տեսակները, ախտորոշման և բուժման առանձնահատկությունները: Դիաբետիկ միկրոանգիոպաթիաներ: Դասակարգում, պաթոգենեզ, կլինիկական դրսևորումները և բուժման ժամանակակից մեթոդները: Ավտոնոմ նեյրոպաթիայի կլինիկական դրսևորումները: Էրեկտիլ դիսֆունկցիա: Դասակարգում, պաթոգենեզ և բուժման ժամանակակից մեթոդները: Դիաբետիկ ոտնաթաթի համախտանիշ: Դասակարգում, պաթոգենեզ,

կլինիկական դրսևորումները և բուժման ժամանակակից մեթոդները: Դիաբետիկ հիպերգլիկեմիկ կոմաներ: Պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում, կանխարգելում: Դիաբետիկ կետոացիդոտիկ կոմայի ախտորոշումը և բուժումը: Հիպերօսմոլյար կոմայի կլինիկական դրսևորումները, ախտորոշումը, բուժումը: Լակտացիդեմիկ կոմայի պաթոգենեզը, կլինիկական դրսևորումները, ախտորոշումը, բուժումը: Դիաբետիկ հիպոգլիկեմիկ կոմա և վիճակ: Պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում, կանխարգելում: Գլյուկոզայի նկատմամբ տոլերանտության խանգարում ունեցող հիվանդների վարումը: Շաքարային դիաբետի բուժում: Սննդակարգային թերապիա: Ինսուլինոթերապիա: Պերօրալ հիպոգլիկեմիկ դեղահաբեր: Շաքարային դիաբետի ինքնահսկում և հիվանդների ուսուցման սկզբունքները: Շաքարային դիաբետ և հղիություն: Գեստացիոն շաքարային դիաբետ, դիսկի գործոնները, ախտորոշումը և բուժումը: Վահանագեղձի անատոմիա և ֆիզիոլոգիա, հետազոտման եղանակները: Վահանագեղձի հիվանդություններ, դասակարգում: Հիպերթիրեոզի համախտանիշ՝ էթիոլոգիական դասակարգումը, տարբերակիչ ախտորոշումը: Դիֆուզ տոքսիկ խախտ: Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Թիրեոտոքսիկ կրիզ՝ կլինիկական դրսևորումները, ախտորոշումը, անհետաձգելի օգնությունը: Էնդոկրին օֆթալմոպաթիա՝ էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկական և գործիքային ախտորոշման սկզբունքները, բուժումը: Անգուցավոր և բազմահանգուցավոր խախտ: Հասկացողություն վահանագեղձի ֆունկցիոնալ ավտոնոմիայի մասին: Էթիոլոգիա, պաթոգենեզ: Կլինիկական դրսևորումների առանձնահատկությունները տարեց հիվանդների մոտ, բուժում: Վահանաձև գեղձի տոքսիկ ադենոմայի տարբերակիչ ախտորոշումը և բուժումը: Հիպոթիրեոզի համախտանիշ: Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Բնածին հիպոթիրեոզի էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկական դրսևորումները: Բնածին հիպոթիրեոզի սկրինինգը և բուժումը: Հիպո-

թիրեոիդային կոմա՝ էթիոպաթոզենեզը, բուժումը: Ընդեմիկ և սպորադիկ խափա: Էթիոլոգիա, պաթոզենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Յոդային անբավարարության հետևանքով առաջացած հիվանդություններ՝ էպիդեմիոլոգիան, պաթոզենեզը: Անհատական և զանգվածային կանխարգելումը: Վահանագեղձի հիվանդություններ ինդուկցված յոդով: Կլինիկական դրսևորումները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Վահանագեղձի հիվանդություններ և հղիություն: Հիպոթիրեոզի և թիրեոտոկսիկոզի ախտորոշման և բուժման սկզբունքները հղիության ժամանակ: Վահանագեղձի քաղցկեղ՝ դասակարգումը, կլինիկական դրսևորումները, ախտորոշումը և բուժման սկզբունքները: Թիրեոիդիտներ: Դասակարգում, Էթիոլոգիա, պաթոզենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Քրոնիկական աուտոիմուն թիրեոիդիտ՝ էթիոպաթոզենեզը, կլինիկական դրսևորումները, ախտորոշումը, բուժումը: Ենթասուր թիրեոիդիտ՝ էթիոպաթոզենեզը կլինիկական դրսևորումները, բուժումը: Թարախային, ֆիբրոզ և հետծննդաբերական թիրեոիդիտ, տարբերակիչ ախտորոշումը: Հարվահանածն գեղձերի անատոմիա և ֆիզիոլոգիա, հետազոտման եղանակները: Հիպերկալցեմիայի համախտանիշ՝ էթիոլոգիական դասակարգումը և ախտորոշման ալգորիթմը: Հիպերպարաթիրեոզ: Էթիոլոգիա, պաթոզենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Հիպոկալցեմիայի համախտանիշ՝ դասակարգումը և ախտորոշման ալգորիթմը: Հիպոպարաթիրեոզ: Էթիոլոգիա, պաթոզենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Մակերիկամների անատոմիա և ֆիզիոլոգիա, հետազոտման եղանակները: Մակերիկամի կեղևային հիվանդություններ: Իցենկո-Կուշինգի հիվանդություն և համախտանիշ: Էթիոլոգիա, պաթոզենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Հիպերալդոստերոնիզմ, առաջնային և երկրորդային: Էթիոլոգիա, պաթոզենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Մակերիկամի կեղևի սուր անբավարարություն: Էթիոլոգիա, պաթոզենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Մակերիկամի կեղևի քրոնիկական անբա-

վարարություն: Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Մակերիկամի կեղևի բնածին դիսֆունկցիա: Դասակարգում: Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Մակերիկամների կեղևի բնածին դիսֆունկցիա՝ 21-հիդրոքսիլազայի դեֆիցիտ, էթիոպաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Մակերիկամների կեղևի բնածին դիսֆունկցիա՝ մակերիկամների լիպոիդ հիպերպլազիա, հիդրոքսիստերոիդ դեհիդրոգենազայի, 17a-հիդրոքսիլազայի, 11bհիդրոքսիլազայի դեֆիցիտ, էթիոպաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Մակերիկամի միջուկային շերտի հիվանդություններ: Ֆեոքրոմոնցիտոմա: Դասակարգում: Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Ինցեղենտալումա (մակերիկամների հորմոնալ ոչ ակտիվ ուռուցքներ), տարբերակիչ ախտորոշում:

Բուժման մոտեցումները: Սեռական գեղձերի անատոմիա և ֆիզիոլոգիա, հետազոտման եղանակները: Ձվարանների հիպոֆունկցիա, դասակարգումը, կլինիկական դրսևորումները, բուժման սկզբունքները: Հիպերգոնադոտրոպ հիպոգոնադիզմ՝ դասակարգումը, կլինիկական դրսևորումները, բուժման սկզբունքները: Սեռական զարգացման ուշացում: Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Շերեշևսկի-Թերների համախտանիշ: Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Կլայնֆելտերի համախտանիշ: Էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Հիպոգոնադոտրոպ հիպոգոնադիզմ, դասակարգումը, կլինիկական դրսևորումները, բուժման սկզբունքները: Հիպերանդրոգենեմիա, դասակարգումը, կլինիկական դրսևորումները, բուժման սկզբունքները: Վաղաժամ սեռական զարգացում՝ դասակարգում, էթիոպաթոգենեզ, կլինիկական և հորմոնային բնութագիրը, տարբերակիչ ախտորոշումը, բուժման սկզբունքները: Սեռի տարբերակման խանգարումներ՝ հերմաֆրոդիտիզմի տարբեր տեսակների վաղ տարբերակիչ ախտորոշման սկզբունքները: Սեռի պատկանելիության ընտրությունը:

Ձվարանների պոլիկիստոզ՝ էթիոպատոզենեզ, առաջնային և երկրորդային պոլիկիստոզի տարբերակիչ ախտորոշումը, բուժում: Սեռական ստերոիդային հորմոնների կիրառման սկզբունքները կլինիկական պրակտիկայում և նրանց համակարգային ազդեցությունը: Մենոպաուզայի համախտանիշ, կլինիկական ձևերի արտահայտումը: Փոխարինող հորմոնալ թերապիայի ցուցումները: Գինեկոմաստիա, դասակարգումը, էթիոպաթոզենեզը, կլինիկական դրսևորումները, բուժումը: Օստեոպորոզ, պաթոզենեզը, զարգացման ռիսկի գործոնները, կլինիկական դրսևորումները, ախտորոշումը, բուժման ժամանակակից մեթոդները: Ճարպակալում: Դասակարգում: Էթիոլոգիա, պաթոզենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Ճարպակալման տարբեր ձևերի բուժման սկզբունքները: Մենոպաուզայի և ապրելակերպի դերը: Դեղորայքային բուժման տարբերակները: Մետաբոլիկ համախտանիշ, պաթոզենեզ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Աուտոիմուն պոլիգլանդուլյար համախտանիշներ՝ դասակարգումը, տարբեր տիպերի կլինիկական դրսևորումները, ախտորոշման մեթոդներ, բուժում: Բազմակի նեոպլազիաների համախտանիշ՝ տեսակները, ախտորոշում և բուժում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Балаболкин М.И., Клебанова Е.М., Креминская В.М. Дифференциальная диагностика и лечение эндокринных заболеваний. М., Медицина, 2002.
2. Балаболкин М.И., Лукьянчиков В.С., Мкртумян А.М. Учебное пособие по эндокринологии (практикум). М., 1991.
3. Вильям М. Кеттайл, Рональд А. Арки. Патофизиология эндокринной системы. - BINOM publishers, Москва, С. Петербург, 2001.
4. Жуковский И.А., Лебедев Н.Б., Семичев Т.В. ч др. Нарушения полового развития. М., Медицина, 1989.
5. Лукьянчиков В.С. Гиперальдостеронизм (метод. рекомендации) М., 1995
6. Окорочков. Н.А. Диагностика болезней внутренних органов (руководство). Витебск. Белмедкнига, 2005

7. Огороков. Н.А. Лечение болезней внутренних органов (руководство). Витебск. Белмедкнига, 2005
8. Старкова И.Т. Клиническая эндокринология. М., Медиц.,2002, 3 изд.
9. Гарет Уильямз, Джон К.Пикап. Руководство по диабету. Москва,2003
10. Дж. Гриффин, Физиология эндокринной системы, Москва, 2008
11. В.М. Сидельникова, Эндокринология беременности, Москва, 2007
12. Э.Петерс Хармел, Сахарный диабет, Москва. Практика, 2008
13. И.И. Дедов, Г.А.Мельниченко Рациональная фармакотерапия заболеваний эндокринной системы и нарушений обмена веществ, М. 2006
14. И.И. Дедов Эндокринология, национальное руководство, М., 2008
15. Питер П. Тот, Нарушения липидного обмена, М.. Геотар-Медиа, 2010
16. Генри М. Кроненберг, Эндокринология по Вильямсу. Сахарный диабет и нарушения углеводного обмена, Москва, 2010
17. Генри М. Кроненберг, Эндокринология по Вильямсу. Нейроэндокринология, Москва, 2010
18. Генри М. Кроненберг, Эндокринология по Вильямсу, Репродуктивная эндокринология, Москва, 2010
19. Генри М. Кроненберг, Эндокринология по Вильямсу, Заболевания щитовидной железы, Москва, 2010
20. Генри М. Кроненберг, Эндокринология по Вильямсу, Заболевания коры надпочечников и эндокринная артериальная гипертензия, Москва, 2010
21. Н. П. Шабалова, Диагностика и лечение эндокринных заболеваний у детей и подростков, 2-е изд., Москва "МЕДпресс-информ", 2009
22. И. И. Дедов, В. А. Петеркова, Руководство по детской эндокринологии, Москва, Универсум паблишинг, 2006
23. Ю. И. Караченцев, А. В. Казаков, Н. А. Кравчун, И. М. Ильин, 100 избранных лекций по эндокринологии, Харьков, 2009
24. Дэвид Гарднер, Долорес Шобек, Базисная и клиническая эндокринология, Москва, Издательство БИНОМ, 2010
25. Руководство по эндокринной гинекологии, под редакцией Е. М. Вихляевой, 3-е издание, Москва, 2006
26. ESPE guidelines, Conjenital hypothyroidism, 2014
27. ISPAD guidelines, Diabetes, 2013
28. ESPE guidelines, Growth hormone deficiency, 2014
29. С.И. Козлова, Н. С. Демикова-Наследственные синдромы и медико-

генетическое консультирование, 3-е издание, Москва, 2007

30. Prof. Peter Kempler, Tamas Varkonyi, Нейропатии в клинической практике, 2012
31. С.Б. Шустов, Эндокринология в таблицах и схемах, Москва, 2009
32. Martin Schlumberger, Furio Pacini, R Michael Tuttle-Thyroid tumors, France, 2016
33. ESE guidelines-Diabetes and pregnancy (2013), Diagnosis and treatment of hyperprolactinemia (2011), Diagnosis and treatment of polycystic ovary syndrome(2013), The diagnosis of Cushing's syndrome(2008), Treatment of Cushing's syndrome (2015)

10. ԱՐՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Արյուն՝ բնորոշումը, ֆունկցիաները, դերը օրգանիզմի ընդհանուր գործունեության մեջ: Արյունաստեղծման համակարգ՝ անատոմիա, ֆիզիոլոգիա, ցողունային բջջի տեսություն, արյունաստեղծման աճի գործոններ, հեմոպոետիկ միկրոշրջապատ: Արյունաստեղծում՝ տեսությունը, կարգավորման մեխանիզմները: «Բջջային մահ» հասկացողություն: Պտղի, դեռահասների, մեծահասակների հեմոպոեզի առանձնահատկությունները: Ծայրամասային արյան կազմը, բջիջների անատոմիան, ֆունկցիան, ախտաբանական ձեւերը, տարիքային առանձնահատկությունները: Թթվածինը օրգանիզմի համար, հեմոգլոբին՝ կառուցվածքը եւ ֆունկցիան, ախտաբանական ձեւերը: Իմունաիրազեք համակարգ, իմունիտետի մեխանիզմները: Արյան ազրեգատային համակարգ: Արյան ազրեգատային համակարգի լաբորատոր գնահատումը: Խանգարումների ախտորոշումը: Թրոմբագոյացման գործընթացի ակտիվացումը:

Սակավարյունություններ. Հետարյունահոսական սակավարյունություններ: Պակասորդային սակավարյունություններ՝ երկաթ-. վիտամին B₁₂- և ֆոլաթուրապակասորդային: Ապլաստիկ սակավարյունություններ: Հեմոլիտիկ սակավարյունություններ: Սիդերոբլաստային սակավարյունություն-

ներ: Դիզերիթրոպոետիկ սակավարյունություններ: Սակավարյունություններ այլ հիվանդությունների ժամանակ, արյան դիլյուցիա:

Հեմոսթազի համակարգի ախտաբանություն. Թրոմբոցիտոպենիաներ՝ դասակարգում: Ներանոթային տարածուն մակարդման համախտանիշ: Մոշկովիցի համախտանիշ, հեմոլիտիկ-ուռեմիկ համախտանիշ: Հեմոֆիլիաներ: Վիլբրանդի հիվանդություն: Հեմոռագիկ ցասկուլիտ: Թրոմբոցիտոպաթիաներ: Թրոմբոֆիլիաներ:

Արյան համակարգի չարորակ հիվանդություններ. Միելոպրոլիֆերատիվ հիվանդություններ: Լիմֆոպրոլիֆերատիվ հիվանդություններ: Միելոմային հիվանդություններ: Միելոդիսպլաստիկ համախտանիշ: Սուր լեյկոզներ: Ոչ հոջկինյան լիմֆոմաներ: Հոջկինի լիմֆոմա:

Իմունահեմատոլոգիա. ABO, Rh-Hr էրիթրոցիտային համակարգեր: HLA համակարգ: Էրիթրոցիտային իմունաժառանգական հազվադեպ հանդիպող համակարգեր:

Փոխներարկաբանություն. Անվտանգ դոնորի ընտրությունը և նրա առողջության պահպանման սկզբունքային դրույթները, դոնորության տեսակները: Ստանդարտ օպերացիոն գործողությունները արյան ծառայության ստորաբաժանումներում, նրանց համապատասխանությունները արյան և արյան բաղադրամասերի անվտանգության ժամանակակից պահանջներին: Փոխներարկումային բուժօգնության, արյան բաղադրամասերի որակը և անվտանգություն, տեսակները: Արյան համատեղելի բաղադրամասերի ընտրությունը: Հետփոխներարկումային բարդություններ, նրանց կանխարգելումը: Արյան փոխանակային ներարկումը նորածինների մոտ: Արյան պատրաստուկները և նրանց կլինիկական կիրառումը: Աուտոփոխներարկում: Ռեինֆուզիա: Թթվածնի արհեստական փոխադրիչներ:

Արյունաստեղծ ցողունային բջիջների եւ ոսկրածուծի փոխպատվաստման սկզբունքները. Արյունաստեղծ ցողունային բջիջների և

ուկրաճուծի դոնորների ընտրությունը, փոխապատվաստման տեսակները, ցուցումները: «Պատվաստ ընդեմ տիրոջ» ռեակցիա հասկացողություն: Իմունաբանական խիմերիզմ հասկացողություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Абрамов М.Г. Гематологический атлас. М., Медицина, 1985. 344 с.
2. Абдулкадыров К.М., Бессмельцев С.С. Апластическая анемия. Москва, Наука, Санкт-Петербург: Изд. КН. 1995. 231 с.
3. Балуда В.П., Деянов И.И., Балуда Ф.М. Профилактика тромбозов. Саратов: Изд университета. 1992. 176 с.
4. Баркаган Э.С. Геморрагические заболевания и синдромы. М., 1988.
5. Братчик А.М. Клинические проблемы фибринолиза. Киев: Здоровья 1999. 344
6. Волкова М. А. Онкогематология. Москва. Медицина, 2001. Воробьев А. И. Руководство по гематологии в 2-х томах, М., 1995.
7. Гематология. Новейший справочник. Под ред. К.М. Абдулкадырова. Москва. Изд. Сова. 2004, 928
8. Гематология (онкология детского возраста) (В сер. "Практическое руководство по детским болезням у детей") под ред. А.Т. Румянцева
9. Гематологическая цитохимия. 1983. 319.
10. Гусева С.А., Вознюк В.П. Болезни системы крови. Москва "МЕДпресс-информ". 2004. 488
11. Долгов В.В., Морозова В.Т. Лабораторная диагностика анемий. 2001.
12. Зубарева. Болезни системы крови. 1992.
13. Комаров Ф.И. Диагностика и лечение внутренних болезней (Руководство для врачей в 3-х томах) Москва. 1997.
14. Кост Е.А. Справочник по лабораторным методам исследования. 1975. 359с.
15. Ланцковский Филипп Детская гематология и онкология, изд. 3-е, издательство „Лори,,. 2005.
16. Луговская С.А., Почтарев М.Е. Гематологический атлас 2004. 227
17. Майерс - Терапия. 1997. (перевод с англ.)
18. Майкл Дж. Роуз, Ненси Берлинер-Шифман Патология физиология крови. (перев. с англ. Е.Б. Жибурт, Ю.Н. Оокарев) Москва, 2000.

19. Мари Э. Вуд, Пол А Банн Секреты онкологии и гематологии. (пер. Ю.Н.Токарев и А. Е. Бухин) Москва, 1997.
20. Нерсесян В.М. Системы АВО и Резус фактор в клинике. Изд. «Айастан». Ереван, 1972.
21. Нерсесян В.М. Мартиросян И.Г., Мусаелян Н.О. Учебно-методическое пособие по изоиммунологии. Е., 1 изд.1988. 2 изд.1989. 3 изд. 1999.
22. Романова А.Ф. Справочник по гематологии. Ростов на Дону, 2000.
23. Романова А.Г. Болезни системы крови. 2002.
24. Румянцев А.Г., Аграненко В.А. Клиническая трансфузиология., М., 1997.
25. Румянцев А. Т., Аграненко В.А. Клиническая трансфузиология М. ГЭОТАР,,Медицина,, 1997. 575
26. Руководство по гематологии в 3-х томах (под ред. А.И.Воробьева 3-е изд. Переработанное и дополненное) М: ,,Ньюдиамед ,, 2002-2003.
27. Ю.Л. Шевченко, В.Н.Шабалин, М.Ф. Заривчацкий, Е.А.Селиванов. Руководство по общей и клинической трансфузиологии Санкт-Петербург. Савченко В.Г., Паровичникова Е.Н., Исаев В.Г. Программное лечение лейкозов. М. ,,Фолиант ,, 2003. 608с.
28. Савченко В.Г., Паровичникова Е.Н., Исаев В.Г. Программное лечение лейкозов. М. Фолиант, 2002. 238 с.
29. Хариссон, Гематология. 2-ой том (14 томов)
30. Хоффбранд В., Петтит Дж. Атлас справочник Гематология М. ,,Практика,, 2007
31. Шевченко Ю.А., Жибурт Е.Б. Безопасное переливание крови. С.Петербург, 2000.
32. Шиффман Фред Джю Патофизиология кровию Перевод с англ. Под редакцией проф. Е.Б.Жибурта и проф.Ю.Н.Токарева, 2007, 446 с.
33. L. S. Բալայան. Նորածինների հեմոլիտիկ հիվանդություններ Ե. 1997
34. Վ. Ն. Ներսիսյան, Իմունոտրանսֆուզիոլոգիա և ռեպրադուկցիա Առողջապահության լրատու, 1999թ. N23;25;27-30;41-43 2001թ. N2-5
35. Վ. Ն. Ներսիսյան, Իմունաարյունաբանական ստուգումներն արյան փոխներարկման և հղիության դեպքում. Երևան 1999թ.
36. AABB Technical Manual 14th edition. 2004.
37. Casey O'Connell, Vanessa Lynn Dickey Blueprints Hematology and Oncology Blackwell Publishing 2002.

38. Colman RW, Hirsh J, Marder VJ, Clowes AW, George JN, editors. Hemostasis and thrombosis: basic principles and clinical practice. 4th ed. Philadelphia: Lippincott Williams and Wilkins; 2001
39. Hoffman R. Benz E J Jr, Shattil SJ, et all editors. Hematology: basic principles and practice. 3rd ed. New York: ChurchillLivingstone; 2000.
40. O'Conner B.H. A Color Atlas and instruction Manual of Peripheral Blood Celle Morphology. Baltimor, USA, 1984; p.316.
41. PDQ Hematology William F.Kern MD Department of Pathology University of Oklahoma Helth Sciences Center London Hamilton BC Decker Inc 2002.
42. Hematology in Practice by Betty Ciesla (second edition). Davis Plus, 2011

11. ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինֆեկցիոն հիվանդություններ ուսումնական առարկայի հիմնական բաժինները. Ինֆեկցիոն հիվանդների օգնության կազմակերպման

կառուցվածքը: Ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելում:

Ինֆեկցիոն հիվանդությունների ախտաբանության տեսական հիմունքները: Ինֆեկցիոն հիվանդությունների ախտորոշման ժամանակակից մեթոդները: Ինֆեկցիոն հիվանդությունների կլինիկական ֆարմակոլոգիայի ժամանակակից հիմունքները:

Աղիքային ինֆեկցիաներ և ինվազիաներ: Շնչական ուղիների ինֆեկցիաներ: Արտաքին ծածկույթների վարակներ: Տրանսմիսիվ (արյունային) վարակներ: Կարանտինային և հատուկ վտանգավոր վարակներ: Վիրուսային հեպատիտներ, ՁԻԱՀ-աուցացված հիվանդություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. В.Ф. Учайкин, Руководство по инфекционным болезням у детей, 1998, Санкт-Петербург
2. К.П.Майер, Гепатит и последствия гепатита, 1999, Москва
3. Н.Д.Ющук, Острые кишечные инфекции, 2001, Москва
4. Н.А.Яковлев, НейроСпид, 2005, Москва
5. Ю.Ю.Елисеев, Полный справочник инфекциониста, 2007, М.

6. Ю.Я.Венгеров, Инфекционные и паразитарные болезни, 2010, М.
7. А.В.Калинин, Гастроэнтерология и гепатология, 2007, Москва
8. А.К.Токмалаев, Клиническая паразитология, 2010, Москва
9. В.Т.Ивашкин, Болезни печени и желчевыводящих путей. 2005, М.
10. П.Р.МакНелли, Секреты гастроэнтерологии, 2001, Санкт-Петербург
11. И.И.Сахарчук, Вирусные заболевания, 2007, Киев
12. В.Н. Тимченко, Руководство по инфекционным болезням у детей, 2001, Санкт-Петербург
13. Ю.В.Лобзин, Руководство по инфекционным болезням, 2000, С.-Пет.
14. Ш.Шерлок, Заболевания печени и желчных путей, 1999, Москва
15. С.Н.Соринсон, Вирусные гепатиты А, В, С, Д, Е, и А - Е в клинической практике, 1996, Санкт-Петербург
16. И.Н.Бокарев, Желтуха и гепатомегалия, 2008, Москва
17. В.Н. Тимченко, Воздушно-капельные инфекции в практике педиатра и семейного врача, 2007, Санкт-Петербург
18. В.П.Яковлев, Рациональная антимикробная фармакотерапия, М 2003
19. Е.П.Шувалова, Инфекционные болезни”. 2015, Москва
20. Т.М Зубик, Дифференциальная диагностика инфекционных болезней, 1999, Москва
21. Н.А.Фарбер, Вирусные гепатиты у беременных, 1990, Москва
22. Т.Р.Harrison, Principles of Internal Medicine, 2008, New York
23. А. О. Буеверов, Гепатиты, 2010, Москва
24. В.Г.Радченко, Основы клинической гепатологии, 2005., Санкт-Пет.
25. Е. С. Белозеров, Бруцеллез, 1985, Санкт-Петербург
26. В. Н. Никифоров, Ботулизм, 1985, Санкт-Петербург
27. Ա. Ե. Մկրտչյան, Մալարի, 2002, Երևան
28. Ա.Վ.Ասոյան, Ինֆեկցիոն հիվանդություններ կրած անձանց դիսպանսեր հսկողությունը, Մ.Վ.Շմավոնյան, Ա.Լ.Մխիթարյան, Ե., 2005
29. Ա.Վ.Ասոյան, Մ.Վ.Շմավոնյան, Ա.Լ.Մխիթարյան, Քրոնիկ հեպատիտ В-ով հիվանդների հակավիրուսային բուժման ուղեցույց, Ե., 2010
30. В.И. Покровский, С.Г. Пак, Н.И. Брико, Б.К. Данилкин, Инфекционные болезни и Эпидемиология, 2008, Москва
31. Ю.В.Лобзин, Избранные вопросы терапии инфекционных больных, 2005, Санкт-Петербург.
32. П.В. Колхир, Доказательная аллергология и иммунология, 2010

33. Ф.И. Ершов, М.Г. Романцева, Иммуный ответ при вирусных инфекциях, 2010
34. Mkhitaryan L.M. Diff. diagnostics of Infectious Diseases, 2005
35. Յ.Հ.Նավդյան, Ն.Գ. Կարախանյան, Ցաների տարբերակիչ ախտորոշումը, 2007, Երևան
36. Н.М. Грлазян, Дифференциальная диагностика лимфаденопатий, 2004, Ереван.
37. Л.М. Мхитарян, Р.Б.Магдесиева, Дифференциальная диагностика менингитов, 2004, Ереван
38. Н.Г.Будагян, Дифференциальная диагностика лихорадок. 2004, Е.
39. Н.Г.Будагян, Дифференциальная диагностика лихорадок, 2004, Е.
40. Н.К.Саркисянц, Дифференциальная диагностика диарей. 2004, Е.
41. Н.М. Грлазян, Ю. А. Манукян, Герпетическая инфекция, 2003г, Е.
42. Р.А. Аракелян, Ц.А. Навоян, А.В. Асоян и др., Дифференциальная диагностика синдрома желтухи у детей, 2004г., Ереван
43. Л.М. Мхитарян, Ц.А. Навоян, А.Р. Шаапуни, ВИЧ- инфекция у детей, 2001., Ереван

12. ՌԵԱԲԻԼԻՏՈՒՈՎԻԱ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Ռեաբիլիտոլոգիա. Հարմարվողականություն և զարգացման մեխանիզմներ: Հարմարվողականության ինքնակարգավորում և սանոգենետիկ մեխանիզմները: Ստրեսի և հարմարվողականության դերը ռեաբիլիտացիայի մեջ: Ռեաբիլիտալոգիայի ֆիզիկական գործոնների ազդեցությունը մարդու ծերացման գործընթացի վրա: Առողջության ախտորոշում: Նյարդային համակարգի դերը տարբեր ֆունկցիանների կարգավորման մեջ (նեյրոկրին, նեյրոէնդոկրին ազդեցություն, պեպտիդերգիկ նյարդային համակարգ): Իմունային համակարգ:

Ֆունկցիոնալ համակարգերի ախտաբանական ֆիզիոլոգիա: Պատոգենետիկ և տարբեր սոմատիկ հիվանդությունների զարգացման ժամանակակից ներկայացումը: Ռեաբիլիտոլոգիայի սկզբունքները, խնդիրները,

նպատակները: Ռեաբիլիտացիոն թիմի կազմը և աշխատանքային առանձնահատկությունները: Ռեաբիլիտացիոն մեթոդների դասակարգում և նրանց նշանակությունը վերականգման մեջ:

Բուժական ֆիզկուլտուրայի (ԲՖ) նպատակը, խնդիրները և բովանդակությունը: ԲՖ կապը թերապիայի, վիրաբուժության, գինեկուլոգիայի և միուս մասնագիտությունների հետ: Ընդհանուր և հատուկ մարզումներ, ֆիզիկական վարժությունների ազդեցության ճանապարհները:

ԲՖ սրտանոթային հիվանդությունների ժամանակ, հակացուցումներ:

ԲՖ անոթային խնդիրների ժամանակ, ԲՖ փուլայնությունը ինֆարկտով հիվանդների մոտ: ԲՖ նշանակման սկզբունքները վաղ, հիվանդանոցային և հետհիվանդանոցային (սանատոր-կուրորտական) փուլերում:

ԲՖ շնչառական համակարգի հիվանդությունների ժամանակ, հակացուցումներ: ԲՖ մարսողական համակարգի հիվանդությունների ժամանակ, հակացուցումներ: ԲՖ առանձնահատկությունները նյութափոխանակության խանգարման հիվանդությունների ժամանակ՝ ճառագայում, պողպատ, մետաբոլիք համախտանիշի: ԲՖ առանձնահատկությունները շաքարային դիաբետի ժամանակ: ԲՖ կիրառումը ողնաշարային և հոդային հիվանդությունների ժամանակ, հակացուցումներ: ԲՖ առանձնահատկությունները ռևմատիզմի և ռևմատոիդ արտրիտի ժամանակ: Աշխատանքային ռեաբիլիտացիայի կազմակերպում:

Հենաշարժիչ ապարատի վնասվածքների և դեֆորմացիանների վերականգնողական բուժման սկզբունքները: ԲՖ և մերսման կիրառումը այդ պաթոլոգիանների ժամանակ: Կեծվացքի խանգարումներ, կանխարգելում և ռեաբիլիտացիոն բուժում: ԲՖ կիրառման ցուցումներ և հակացուցումներ հետվիրահատական շրջանում: ԲՖ կիրառման սկզբունքները երեխանների մոտ տարբեր հիվանդությունների ժամանակ: Ինչպես է ազդում ԲՖ երեխանների օրգանիզմի վրա տարբեր հիվանդությունների ընթացքում:

Նեյրոռեաբիլիտացիայի սկզբունքները, կիրառման մեթոդները, ցուցումներ և հակացուցումներ, արդյունավետություն:

Կլիմատոթերապիայի հիմնական սկզբունքները: Բուժական հանքային ջրերի օգտագործումը տարբեր հիվանդությունների ժամանակ:

Բուժական ցեխեր: Բնորոշումը, բուժական ցեխերի ֆիզիկական և քիմիական բնութագրում: Ջրաբուժություն. հիմնական սկզբունքները, ազդող գործոնները և մեխանիզմները: Ֆիզիոլոգիական և ախտաբանական վիճակները, որոնք կարող են առաջանալ ջրաբուժության ընթացքում, բժշկի գորցելակերպը: Ընդհանուր ցուցումներ և հակացուցումներ:

Հիդրոթերապիա: Սահմանում, ջրի ֆիզիկական հատկությունները: Ջերմային և մեխանիկական բաղադրիչ: Սարը և տաք ջրի ազդեցության մեխանիզմները մարդու վրա: Ցուցումներ և հակացուցումներ:

Ցնցուղներ և լոզանքներ, ազդեցության մեխանիզմ, ցուցումներ և հակացուցումներ, տեսակներ և կիրառման առանձնահատկություններ:

Մերսում, ազդեցության մեխանիզմներ, ցուցումներ և հակացուցումներ: Մերսման տեսակներ և նրանց կիրառումը տարբեր հիվանդությունների ժամանակ: Մերսման տեխնիկան:

Էլեկտրոթերապիա: Սահմանում, կիրառվող գործոններ:

Գալվանիզացիա և դեղորայքային էլեկտրոֆորեզ, կիրառման մեթոդիկա, հիմնական ցուցումներ և հակացուցումներ, անվտանգության կանոններ:

Էլեկտրոախտորոշում և էլեկտրոստիմուլյացիա: Կիրառման մեթոդիկա, հիմնական ցուցումներ և հակացուցումներ:

Ամպլիպուլսոթերապիա: Սահմանում, կիրառման մեթոդիկա, հիմնական ցուցումներ և հակացուցումներ, տարբեր մեթոդների հետ համատեղելիության առանձնահատկությունները, անվտանգության կանոններ:

Էլեկտրոմագնիսական դաշտ: Բարձր հաճախականության էլեկտրոմագնիսական դաշտ: Դարսոնվալիզացիա, սահմանում, կիրառման մեթոդիկա, հիմնական ցուցումներ և հակացուցումներ:

ՈւձԹ, բուժական ազդեցություն, կիրառման մեթոդիկա, հիմնական ցուցումներ և հակացուցումներ: Ռեաբիլիտացիան ինչպես համալիր բուժում:

Սպորտային բժշկություն. Սպորտային բժշկության բովանդակությունը, նպատակները և խնդիրները: Սպորտային բժշկության հիմնական բաղադրամասերը: Սպորտային բժշկությունը՝ ինչպես առողջապահության կարևոր բաղադրամաս: Ֆիզիկական կուլտուրայի (ՖԿ) և սպորտի ազդեցությունը մարդու ֆունկցիոնալ վիճակի վրա: Մարզիկների ֆիզիկական զարգացումը (ՖԶ) և մարմնակազմությունը: Օրգանիզմի ՖԶ վրա ազդող գործոնները: Մարդու տարիքային ՖԶ դինամիկան: Տարբեր սպորտաձևերի ազդեցությունը ՖԶ ցուցանիշների վրա: Մարզիկների ՖԶ հետազոտման և գնահատման ժամանակակից մեթոդները: Մարզիկների մարմնակազմության տեսակները: Մարդու կեցվածքը և կեցվածքի հիմնական խանգարումները: Կեցվածքի առանձնահատկությունների վիզուալ և գործիքային ախտորոշում: Տարբեր մարզաձևերի ազդեցությունը կեցվածքի կազմավորման վրա: Մարզիկների հենաշարժողական և ոսկրահողակապանային համակարգերի զարգացման առանձնահատկությունները և փոփոխությունները: ՖԿ և սպորտի ազդեցությունը մարզիկների մկանային համակարգի զարգացման վրա:

Մարզիկների նյարդային և նյարդամկանային համակարգերի ֆունկցիոնալ վիճակը: Նյարդային համակարգ և մարզման գործընթաց: Մարզման ընթացքում նյարդային գործունեության տարբեր ֆիզիկական հատկանիշների համեմատական վերլուծությունը: Ստատիկ և դինամիկ համակարգում և նրանց ցուցանիշները: Մարզիկների տարբեր զգայարանների գործունեության առանձնահատկությունները:

Սպորտային գործունեության ընթացքում սրտանոթային համակարգը, ինչպես թթվածնի տեղափոխությունը սահմանափակող օղակ: Սպորտային սրտի կառուցվածքային առանձնահատկությունները: Մարզիկների սրտի հիպերտրոֆիկ փոփոխություններ:

Արտային գործունեության կոնոմետրիկ սկզբունքը և դրա իրականացումը մարզիկների մոտ հանգիստ վիճակում և ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ՝ կախված մարզվածության աստիճանից:

Մարզիկների մոտ անոթային համակարգի ֆունկցիոնալ վիճակի առանձնահատկությունները: Մարզիկների մոտ կարդիոռեսպիրատոր համակարգի ֆունկցիոնալ վիճակի առանձնահատկությունները: Թոքային ծավալ և ծավալի փոփոխությունները հանգիստ ժամանակ և ֆիզիկական ծանրաբեռնվածության ընթացքում: Շնչառական համակարգի ֆունկցիոնալ փորձեր: Մարզիկների մարսողական համակարգի ֆունկցիոնալ վիճակը: Մարզիկների մոտ կատարվող մեզի փոփոխությունները: Միոգլոբինուրիա: Աղաջրային հաշվեկշռի առանձնահատկությունները տարբեր սպորտաձևերում: Արյան փոփոխությունները հանգիստ վիճակում և մկանային ակտիվության ժամանակ:

Տարբեր սպորտաձևերում մարզիկների ֆունկցիոնալ վիճակի առանձնահատկությունները և ֆիզիկական որակների զարգացումը: Ոչ ճիշտ և ոչ ռացիոնալ մարզումների հետևանքով առաջացած մարզիկների ֆունկցիոնալ վիճակի խախտում և վատացում:

Բժշկական հսկողության սկզբունքները տարբեր սեռի և տարիքի մարզիկների մոտ: Կին մարզիկների բժշկական հսկողության առանձնահատկությունները: ՖԿ և սպորտով պարապող երեխանների բժշկական հսկողության հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները: Տարիքային խմբեր և նրանց առանձնահատկությունները:

Միջին տարիքի և տարեց մարդկանց կենսաբանական առանձնահատկությունները: Ծերացման տեսության հիմնական սկզբունքները: ՖԿ և սպորտի կարևոր կանխարգելիչ ազդեցությունը: Միջին տարիքի և տարեց մարդկանց բժշկական հսկողության առանձնահատկությունները:

Մարզիկների ֆիզիկական աշխատունակության և ֆունկցիոնալ պատրաստվածության գնահատում: Ֆիզիկական և ֆունկցիոնալ տեսթավո-

րում սպորտային բժշկության մեջ և այդ տեսթավորման հանդեպ ունեցած պահանջները: Տեսթավորման արդյունքների քանակական և որակական գնահատում: Ֆիզիկական աշխատունակություն հասկացողությունը: Մարդու աերոբ (թթվածինայի) աշխատունակություն: Մաքսիմալ և սուբ-մաքսիմալ փորձեր, որոնք օգտագործվում են ֆիզիկական աշխատունակության գնահատման համար:

Բժշկական հսկողություն մարզումների և մրցումների ժամանակ: Օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի փոփոխությունները մարզումների ժամանակ: Նախամարզանքի շրջանում սրտանոթային, շնչառական, նյարդային համակարգերի և արյան ցուցանիշների փոփոխությունները: Հիմնական կամ մրցումայի շրջանում սրտանոթային, շնչառական, նյարդային համակարգերի և արյան ցուցանիշների փոփոխությունները: Սպորտային վիճակ հասկացողությունը: Սպորտային վիճակի պահպանում և գերմարզվածություն:

Բժշկական ապահովածությունը և հսկողությունը մրցումների ժամանակ: Մրցումների ժամանակ բժշկի պարտականությունները և իրավունքները: Մրցումների սանիտարահիգիենիկ նորմերի ապահովում: Տարբեր կլիմայական, ջերմաստիճանային, ժամանակային պայմաններում մրցումների անցկացման առանձնահատկությունները: Ակլիմատիզացիա բարձրադիր կլիմայական գոտիներում: Ռեակլիմատիզացիա և նրա ազդեցությունը մարզիկի աշխատունակության վրա:

Դոպինգ և հակադոպինգային հսկողություն մրցումների ընթացքում: Դոպինգ հասկացողություն: Դոպինգ համարվող նյութերի դասակարգում: Հակադոպինգային հսկողության կազմակերպում ՀՀ: Հակադոպինգային հսկողության անցկացման կանոնակարգ: Մրցումների ժամանակ հակադոպինգային հսկողության անցկացման պրոցեդուրան: Կիրառվող պատժամիջոցները: Բժշկական միջոցներ, որոնք կիրառվում են մարզիկների մոտ աշխատունակության վերականգման համար:

Դեղամիջոցներ, նրանց բնութագիրը, ազդեցության մեխանիզմները, ցուցումները և հակացուցումները: Սննդակարգ և վիտամինների ընդունում սպորտում: Ռացիոնալ սննդակարգի նշանակությունը մարզիկի աշխատունակությունը վերականգնելու համար: Համալիր դեղամիջոցների և առանձին վիտամինների օգտագործումը մարզումների տարբեր փուլերում: Մարզիկի վերականգման և աշխատունակության բարձրացման համար կիրառվող ֆիզիկական գործոնները:

Սպորտային մերսում: Մերսման ազդեցության մեխանիզմները: Տեղային, դասական, սեզմենտար մերսում: Վիբրոմերսում, հիդրոմերսում, բարոմերսում: Ապարատային ֆիզիոթերապիա. Ջրաբուժություն. Ռեֆլեկտոթերապիա. Բալնոթերապիա:

Սպորտային պատոլոգիա: Սպորտային հիվանդությունների և վնասվածքների դասակարգում: Տարբեր սպորտաձևերի ազդեցությունը հիվանդությունների և վնասվածքների զարգացման վրա: Հիվանդության ընթացքը մարզիկների մոտ: Սպորտային վնասվածքներ, նրանց առաջացման պատճառները և դասակարգումը:

Գերլարվածություն և գերմարզվածություն, զարգացման պատճառները մարզիկների մոտ: Քրոնիկ ինֆեկցիոն օջախի և մարզումների դերը գերլարվածության և գերմարզվածության զարգացման մեջ: Գերմարզվածության հատկանիշները, զարգացման փուլերը, կանխարգելումը և բուժումը: Սուր և քրոնիկ գերլարվածություն՝ հատկանիշները, զարգացման պատճառները, կանխարգելումը և բուժումը: Սուր ախտաբանական վիճակներ՝ ուշագնացություն, կոմատոզ վիճակ: Ուշագնացության զարգացման մեխանիզմները մարզիկների մոտ, նրանց կանխարգելումը և բուժումը: Արևային և ջերմային հարված, կլինիկա, կանխարգելում, բուժում: Հիպոգլիկեմիկ վիճակներ մարզիկների մոտ, զարգացման մեխանիզմներ, կանխարգելումը և բուժումը: Կեսոնային հիվանդություն զարգացման մեխանիզմներ, կանխարգելումը և բուժումը: Մարզիկների մոտ

ռեաբիլիտացիայի սկզբունքները տարբեր հիվանդությունների, վնասվածքների և ախտաբանական վիճակների ժամանակ: Մարզիկների վերականգման ժամկետները տարբեր հիվանդություններից հետո: Սպորտային ռեաբիլիտացիայի խնդիրները և նպատակները: Ֆիզիկական ակտիվության դերը մարզիկների վերականգման մեջ: Բուժական ֆիզկուլտուրա և սպորտային ռեաբիլիտացիա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրանսկայա Ն.Դ., Դովլատովա Տ.Ի., Սպորտային բժշկություն, Դասախոս. և գործնական պարապունքների հավաքածու, 2004, 2 հատոր:
2. Դիդյուր Մ.Դ. Կոմաշնյա Ա.Վ. Ռեաբիլիտացիայի հիմունքները, Ձեռնարկ, 2008, 34 էջ:
3. Եպիֆանով Վ.Ա., Վերականգնողական բժշկություն, 2007, 588 էջ:
4. Եպիֆանով Վ.Ա., Սպորտային բժշկություն, ուս. ձեռնարկ, 2006, 336 էջ:
5. Պոնոմարենկո Գ.Ն., Ընդհանուր ֆիզիոթերապիա, 2014, 368 էջ:
6. Տեղեկություններ ռեաբիլիտացիոն մեթոդների գործնական կիրառության մասին՝ www.medscape.com, www.meduhod.ru/components/reabilitatsia.

13. ՌԱԶՄԱՇՏԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱ

Թերապեվտիկ պրոֆիլի հիվանդների եվ ախտահարվածների բժշկական օգնության կազմակերպումը. Ռազմադաշտային թերապիայի խնդիրները և էությունը: Ռազմադաշտային թերապիայի խնդիրները, նրա էությունը և առանձնահատկությունները: Ռազմադաշտային թերապիայի զարգացման հիմնական շրջանները: Ռազմադաշտային թերապիան Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, հետպատերազմյան շրջանում և Արցախյան ազատամարտի ժամանակահատվածում:

Զորքերի մարտական գործունեության պայմաններում ախտահարվածների և հիվանդների համար թերապևտիկ օգնության կազմակերպումը, բժշկական տեսակավորումն ու ծավալը: Թերապևտիկ օգնության կարիք

ունեցող ախտահարվածների և հիվանդների հիմնական խմբերի բնութագիրը: Օգնության կազմակերպման սկզբունքները և ծավալը (առաջին բուժական, նախաբժշկական, առաջին բժշկական, որակավորված և մասնագիտացված թերապևտիկ օգնություն): Բուժկետերի և բուժհիմնարկների ախտորոշիչ և այլ հնարավորությունները:

Ախտահարվածների և հիվանդների միաժամանակյա զանգվածային ընդունան պայմաններում բուժկետերում և բուժհիմնարկներում բժշկական տեսակավորման սկզբունքները և նրա անցկացման առանձնահատկությունները: Թերապևտիկ ուղղվածության բուժհիմնարկները: Ուժեղացման խմբերը և նրանց դերը միջուկային և քիմիական զենքերի կիրառման դեպքերում: Թերապևտիկ մարտական ախտահարումների ժամանակ կիրառվող հաշվեցուցակային նյութերը:

Ներքին օրգանների փոփոխությունները այրվածքային հիվանդության ժամանակ: Այրվածքային հիվանդության հասկացության որոշումը: Այրվածքային հիվանդության դասակարգումն ըստ շրջանների (շոկ, տոքսեմիա, սեպտիկոտոքսեմիա, առողջացում):

Ախտաճագումը: Նյարդային, տոքսիկ, էնդոկրին, ինֆեկցիոն, աուտոիմուն գործոնների, հիպոքսիայի և պլազմայի կորստի դերը այրվածքային հիվանդության զարգացման գործում:

Այրվածքային հիվանդության ընդհանուր համախտանիշների բնութագիրը (շոկ, տոքսեմիա, վարակ, հյուծում): Նյարդային, սրտանոթային համակարգերի, երիկամների, շնչառական և մարսողական օրգանների, արյան և արյունաստեղծ օրգանների փոփոխությունների կլինիկական բնութագիրը: Նյութափոխանակության և ջրաաղային հավասարակշռության խանգարումը: Այրվածքային շոկի ժամանակ անհետաձգելի օգնությունը: Այրվածքային հիվանդության ախտաճագումային բուժման սկզբունքները: Վիրավորների և կոնտուզիայի ենթարկվածների ներքին օրգանների հիվանդությունները:

Վնասվածքի ժամանակ ընդհանուր վիսցերալ համախտանիշների և օրգանախտաբանական փոփոխությունների դասակարգումը: Ընդհանուր համախտանիշների բնութագիրը: Թոքերի, սիրտանոթային համակարգի, մարսողական օրգանների, երիկամների հիվանդությունները, արյան և նյութափոխանակության խանգարումները: Ախտաձագումը: Կլինիկայի, ախտորոշման, կանխարգելման և բուժման առանձնահատկությունները: Ներքին օրգանների փոփոխությունները պայթյունային վնասվածքի ժամանակ: Կոմմոցիոնկոնտուզիոն համախտանիշ: Ախտաձագումը: Կլինիկան և բուժումը: Բարդությունների կանխարգելումը: Ծավալային պայթման զենքով ախտահարումների կլինիկական ընթացքի առանձնահատկությունները:

Զինծառայողների ներքին օրգանների հիվանդությունների առանձնահատկությունները: Զինծառայողների տարբեր օրգան-համակարգերի (շնչառական, սրտանոթային, աղեստամոքսային, երիկամների, շարակցական հյուսվածքի և ոսկրամկանային, և այլն) հիվանդությունների ախտաձագման, ախտորոշման և բուժման առանձնահատկությունները: Ներքին օրգանների հիվանդություններ ունեցող զինծառայողների փուլային բուժման կազմակերպումը:

ԳԲՀ ալիքների ազդեցությունը մարդու վրա: Ախտահարումների դասակարգումը: Սուր և քրոնիկական ախտահարումների կլինիկան, ախտորոշումը, բուժումը և կանխարգելումը: ԳԲՀ ալիքների գեներատորների հետ աշխատողների դիսպանսեր հսկողության կազմակերպումը:

Ռազմաբժշկական փորձաքննության անցկացումը խաղաղ ու պատերազմական ժամանակ: Ռազմաբժշկական փորձաքննության էությունը, խնդիրներն ու մարմինները: Ռազմաբժշկական փորձաքննության հանձնաժողովների որոշումները խաղաղ ու պատերազմական ժամանակ: Բժշկական հանձնաժողովների որոշումների ձևերը զինապարտների համար: Բժշկական հանձնաժողովների որոշումների ձևակերպման կարգը

Ճառագայթային ախտահարումների կլինիկան և թերապիան. Իոնացնող ճառագայթների կենսաբանական ազդեցության հիմունքները: Արտաքին հավասարաչափ ճառագայթումից առաջացած սուր ճառագայթային հիվանդության պաթոգենեզն ու կլինիկան: Իոնացնող ճառագայթների կենսաբանական ազդեցությունը: Տոքսեմիայի, նյարդային, տրոֆիկ, էնդոկրին, նյութափոխանակության խանգարումների դերը ճառագայթային հիվանդության պաթոգենեզում: Սուր ճառագայթային հիվանդության առանձին համախտանիշների զարգացման մեխանիզմը:

Սուր ճառագայթային ախտահարումների դասակարգումը:

Սուր ճառագայթային հիվանդության ոսկրածուծային ձևը: Հիվանդության ընթացքի բնութագիրը ըստ շրջանների: Հիվանդության առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ աստիճանի ծանրության կլինիկական պատկերը: Ոսկրածուծի և արյան փոփոխությունները: Վաղ ախտորոշումը: Ախտաբանական-անատոմիական փոփոխությունները: Սուր ճառագայթային հիվանդության աղիքային, տոքսեմիկ և ուղեղային ձևերի կլինիկական ընթացքի առանձնահատկությունները:

Անհավասարաչափ երկարատև, համակցված և նեյտրոնային ճառագայթումից առաջացած հիվանդություն: Համատեղված ճառագայթային ախտահարումներ: Ճառագայթային հիվանդության կլինիկայի առանձնահատկությունները կախված ճառագայթման երկրաչափական դիրքից: Նեյտրոնային ճառագայթումից առաջացած ճառագայթային հիվանդության կլինիկայի առանձնահատկությունները: Սուր ճառագայթային հիվանդություն երկարատև ոչ հավասարաչափ ճառագայթումից ռադիոակտիվ ամպի հետքի վրա: Ներքին ճառագայթումից առաջացած ճառագայթային հիվանդության ախտորոշման և կլինիկական ընթացքի առանձնահատկությունները: Համատեղված ռադիացիոն վնասվածքների կլինիկայի և ախտորոշման առանձնահատկությունները:

Սուր ճառագայթային ախտահարումների ժամանակ բուժտարհանման փուլերում բժշկական տեսակավորումը և օգնության ծավալը: Ճառագայթային հիվանդության բուժման ընդհանուր սկզբունքները: Գնդում ճառագայթային ախտահարումների բժշկական տեսակավորման կազմակերպումը: Համակցված և նեյտրոնային ճառագայթամից սուր ճառագայթային հիվանդության բուժման առանձնահատկությունները: Համատեղված ճառագայթային ախտահարումների բուժման սկզբունքները:

Թունավոր նյութերի ախտահարումների կլինիկան եվ թերապիան.

Նյարդալուծանքային ազդեցության թունանյութերով ախտահարումների կլինիկան և բուժումը: Ընդհանուր թունաբանական բնորոշումը: Ախտահարումների ախտածագումը: Ֆոսֆորային թունանյութերի ագետիլխոլինէսթերազային, ուղղակի (ագետիլ-խոլինանմանատիպ) և սենսիբիլիզացնող հատկությունները: Ախտահարումների կլինիկայում մուսկարինային և նիկոտինատիպ արդյունքները: Թեթև, միջին և ծանր աստիճանի ախտահարումների ախտորոշումը և կլինիկան: Ախտաբանական անատոմիական փոփոխությունները: Հոգեկան, նյարդաբանական և մարմնավոր բարդությունների ընդհանուր բնութագիրը: Պսիխոզներ, ասթենիզացիա, հիպոկլինեզներ, մկանային թուլություն, պարեզներ, պարալիչներ, ներիտներ: Էնդոկրին խանգարումներ: Նեյրոցիրկուլյատոր խանգարումներ, արյան պսակաձև շրջանառության, սրտամկանի ռիթմի և հաղորդչականության խանգարումներ: Բրոնխոսպաստիկ կրիզների կրկնումներ, բրոնխիտներ, թոքաբորբեր: Աղեստամոքսային համակարգի հյութազատիչ և շարժողական ֆունկցիաների խանգարումներ: Ախտահարվածների բժշկական տեսակավորման սկզբունքները: Բժշկական տարահանման փուլերում անհետաձգելի օգնությունը: Հակաթունային թերապիայի մեթոդների հիմնավորումը: Խոլինոլիտիկներ և խոլինեսթերազայի վերականգնիչներ: Ժամանակակից հակաթույներին ներկայացվող պահանջ-

ները և նրանց օգտագործման հնարավորությունների բնութագիրը: Բուժկետերում և բուժհիմնարկներում թերապևտիկ օգնության ծավալը: Տեխնիկական հեղուկներով և մի շարք կենցաղային նյութերով թունավորումներ: Տարբեր տեխնիկական միջոցներից առաջացած սուր թունավորումների կլինիկան, ախտորոշումը, անհետաձգելի օգնությունը: Կենցաղային թունավորումներ: Ցիանիդներով և ածխածնի օքսիդով գազով թունավորումների կլինիկան և բուժումը: Ցիանիդների թունաբանական բնութագիրը: Ախտածագումը: Առանձին ձևերի կլինիկական բնութագիրը: Քլորցիանով ախտահարումների ժամանակ կլինիկական երևույթների առանձնահատկությունները: Ախտորոշումը: Հակաթունային թերապիայի մեթոդների հիմնավորումը (ցիանիդների քայքայման բնական ուղիների ակտիվացում, մեթեմոգլոբինի առաջացում, ջրածնի կապում և այլն): Ընդունված հակաթույներ: Ախտանշանային բուժում: Ախտահարվածների բժշկական տեսակավորումը և նրանց թերապևտիկ օգնության կազմակերպումը: Ելքը: Շնոլ գազի թունաբանական բնութագիրը: Ազդեցության մեխանիզմը: Կլինիկական ձևերը: Ախտորոշումը: Ախտաբանական անատոմիական փոփոխությունները: Անհետաձգելի օգնությունը և բուժումը: Մաշկաթարախային թունանյութերով ախտահարումների կլինիկան և բուժումը: Իպրիտների թունաբանական բնութագիրը: Ախտահարումների պաթոգենեզը: Ծծմբային իպրիտով ախտահարումների կլինիկական բնութագիրը: Գազանման իպրիտի ազդեցության ժամանակ մաշկային ախտահարումների տիպիկ տեղակայումը: Մաշկի ախտահարումների ընթացքն ու ելքը: Աչքերի ախտահարումն իպրիտով: Շնչառական օրգանների ախտահարումը (ռինոֆարինգոլարինգիտներ, տրախեոբրոնխիտներ, նեկրոտիկ թոքաբորբեր): Մարսողական օրգանների ախտահարումները բերանի խոռոչից թունավորումների ժամանակ:

Ի պրիտով թունավորման ընդհանուր նշանները (արյունաստեղծման փոփոխություններ, սիրտ-անոթային և նյարդային համակարգերի, նյութափոխանակության խանգարումներ): Ախտաբանական անատոմիական փոփոխություններ: Ազոտային ի պրիտով ախտահարումների կլինիկական ընթացքի առանձնահատկությունները: Բուժման ընդհանուր սկզբունքները: Բժշկական տեսակավորումը: Թերապևտիկ օգնության ծավալը:

Լուիզիտի թունաբանական բնութագիրը: Ախտածագումը: Կլինիկական պատկերը: Շնչառական թունավորումներ: Մաշկային ծածկույթների և աչքերի ախտահարումները: Պերորալ թունավորումներ: Ընդհանուր ազդեցության նշանները: Ախտորոշումը: Ախտաբանական անատոմիական փոփոխությունները: Հակաթունային թերապիայի հիմնավորումը: Բժշկական տեսակավորում ու թերապևտիկ օգնության ծավալ:

Խեղդող ու գրգռող գործողության թունանյութերով ախտահարումների կլինիկական և բուժումը: Ընդհանուր թունաբանական բնութագիրը: Ֆոսգենով և դիֆոսգենով ախտահարումների կլինիկական պատկերը: Թոքերի տոքսիկ այտուց: Ախտաբանական անատոմիական փոփոխություններ: Ախտահարման տարբեր շրջաններում անհետաձգելի օգնությունը և բուժումը:

Պայքարը թթվածնային քաղցի, այրան շրջանառության և այլ ախտաբանական երևույթների դեմ:

Բժշկական տեսակավորումը: Բուժկետերում և բուժհիմնարկներում թերապևտիկ օգնության ծավալը: Ելքը:

Գրգռիչ գործողության թունանյութերի ընդհանուր թունաբանական բնութագիրը: Ախտահարումների կլինիկական, ախտորոշումը, անհետաձգելի օգնությունը, բուժումը:

Ռազմամասնագիտական հիվանդությունների կլինիկական և թերապիան

Հրթիռային վառելիքի բաղադրիչներով ախտահարումների կլինիկան և բուժումը: Հրթիռային վառելիքի կազմում այրիչները և օքսիդացնողները: Ախտահարումների դասակարգումը:

Օքսիդացնողներ: Թունաբանական բնութագիրը: Սուր թունավորումների ժամանակ կլինիկական պատկերը: Մաշկի, աչքերի, շնչառական օրգանների ախտահարումները: Ընդհանուր ազդեցությունը: Թոքերի տոքսիկ այտուց: «Նիտրիտային արդյունք»: Սիրտանոթային համակարգի խանգարումներ: Ախտաբանական անատոմիական պատկերը: Սուր ախտահարումների ախտորոշումը: Սուր թունավորումների բարդությունները և հետևանքները: Կանխարգելումը և բուժումը: Մաշկի, աչքերի ախտահարումների և թոքերի այտուցի ժամանակ բուժկետերում և բուժհիմնարկներում անհետաձգելի օգնությունը: Խրոնիկ ախտահարումներ: Կլինիկան: Նյարդաբանական խանգարումներ, հեմոդինամիկ փոփոխություններ, լյարդի տոքսիկ ախտահարումներ, աղետամոքսային համակարգի, շնչառական օրգանների հիվանդություններ:

Հրթիռային վառելիքի այրիչ բաղադրամասերը: Հիդրազինը և նրա ածանցյալները: Ընդհանուր թունաբանությունը: Սուր թունավորումների կլինիկան: Տեղային և ընդհանուր ազդեցությունը: Ախտորոշումը: Ախտաբանական-անատոմիական փոփոխություններ: Ախտաձագումը: Կանխարգելումը: Բուժումը: Խրոնիկ թունավորումների կլինիկան, կանխարգելումը և բուժումը: Ալիֆատիկ և արոմատիկ ամիններ: Ամոնիակ: Թունաբանական բնութագիրը: Ախտահարումների կլինիկան: Տեղային և ընդհանուր գործողությունը: Ախտորոշումը: Անհետաձգելի օգնությունը և բուժումը: Բորաջրածիններ: Թունաբանական բնութագիրը: Թունավորումների կլինիկան: Բուժումը:

ԳԲՀ ալիքներով ախտահարումներ: ԳԲՀ ալիքների կենսաբանական ազդեցությունը: Ախտահարումների դասակարգումը: Սուր և խրոնիկ ախտահարումների կլինիկան, ախտորոշումը, բուժումը և կանխար-

գելումը: ԳԲՀ ակիբների գեներատորների հետ աշխատողների դիսպանսեր հսկողության կազմակերպումը:

Գնդի բուժկետում լաբորատոր եվ գործիքային հետազոտման մեթոդներ. Գնդի բուժկետում լաբորատոր և գործիքային հետազոտությունների կազմակերպումը: Գնդի բուժկետում լաբորատոր և գործիքային հետազոտությունների ծավալը: Անհրաժեշտ սարքավորումներ, դրանց կիրառման կարգը:

Անհետաձգելի թերապևտիկ օգնության կազմակերպումը գնդի բուժկետում. Գնդի բուժկետում կյանքի համար վտանգ սպառնացող վիճակների ժամանակ անհետաձգելի թերապևտիկ օգնությունը: Գնդի բուժկետում անհետաձգելի թերապևտիկ օգնության կազմակերպումը: Գնդում առավել շատ հանդիպող կյանքի համար վտանգ սպառնացող վիճակների բնութագիրը և գնդի բուժկետում անհետաձգելի թերապևտիկ օգնության սկզբունքները: Գնդում տարբեր պատճառներից առաջացած սուր թունավորումների, սուր սրտային և անոթային անբավարարության, նյարդահոգեկան գրգռվածության, կծկումային համախտանիշի ախտորոշումը և գնդի բուժկետում անհետաձգելի օգնության ցուցաբերումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնական

1. Ճառագայթային ախտահարումներ. Ուս. ձեռնարկ, Գալստյան Ս.Գ., Արզումանյան Ն.Ռ., 2008թ., Երևան
2. Զինծառայողների ներքին օրգանների հիվանդությունների ախտաճանաչման, կլինիկայի և բուժման առանձնահատկությունները, Ուս. ձեռն., Գալստյան Ս.Գ., ՆարիմանյանՄ. Զ., ԾատուրյանՎ.Վ., Սարգսյան Մ.Վ., 2008թ. Երևան
3. Գործող բանակում թերապևտիկ օգնության կազմակերպումը. Մեթոդական ցուցումներ, Մխիթարյան Դ.Ա., Դանիելյան Ա.Գ., Ե. 2007թ.,
4. Գերբարձր հաճախականության էլեկտրամագնիսական դաշտի ազդեցությանը ենթարկվող անձանց ծառայողական գործունեության բժշկա-

կան հսկողության մասին: Մեթոդական ցուցումներ Փարսդանյան Ա.Մ., Մխիթարյան Դ.Ս., Գալստյան Ս.Գ., Սահակյան Բ. Մ., Ե. 2006թ.,

Լրացուցիչ

5. Внутренние болезни. Военно-полевая терапия. Раков А.Л., Сосюкин А. Е., 2003. Санкт-Петербург
6. Военно-полевая терапия. Гембицкий Е.В., Комаров Ф.И., 1983. М.

ԺԴ.00.04 - ՄՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐՏ-ԱՆՈՒԹԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռևմատիզմ. Պատճառները, ախտաձագումը: Տարբեր փուլերի կազմաբանությունը: Դասակարգումը: Հիմնական արտահայտությունների կլինիկական պատկերը: Ընթացքի տարբերակները: Ախտորոշումը, չափանիշները: Բուժումը: Կանխարգելումը:

Վարակային էնդոկարդիտներ. Պատճառները: Ախտաձագումը: Նպաստող գործոնները: Սուր և ձգձգվող սեպտիկ էնդոկարդիտի առանձնահատկությունները: Կլինիկան. հիվանդության սկզբի տարբերակները: Թրոմբոէմբոլիկ բարդությունները: Լաբորատոր տվյալները: Ախտորոշումը: Ընթացքը և ելքերը: Կանխատեսումը: Բուժումը. հակաբիոտիկների ընտրությունը, դեղաչափերը, տևողությունը, վիրաբուժական բուժման ցուցումները: Լիարժեք բուժման չափանիշները: Բարդությունների կանխարգելումը:

Սրտի ձեռքբերովի արատներ. Միթրալ փականի անբավարարություն: Պատճառները: Հեմոդինամիկայի փոփոխությունների ախտաձագումը: Օրգանական և հարաբերական անբավարարությունը: Կլինիկական պատկերը: Ընթացքի փուլերը, ախտորոշումը: Կանխատեսումը, բուժումը, վիրաբուժական բուժման ցուցումները: Միթրալ պրոլապսի (արտանկման) պատճառները, հեմոդինամիկայի առանձնահատկությունները: Միթրալ փականի անբավարարություն: Ախտորոշումը: Կանխատեսումը, բուժումը:

Միթրալ ստենոզ: Պատճառները: Հեմոդինամիկայի փոփոխությունների ախտաձագումը: Կլինիկական պատկերը, ընթացքի փուլերը: Հետազոտման գործիքային մեթոդների նշանակությունը ախտորոշման հարցում: Դեկոմպենսացիայի պատճառները: Բարդությունները: Կանխատեսումը, բուժումը, վիրաբուժական բուժման ցուցումները: Կանխարգելումը: Աորտալ փականի անբավարարություն: Պատճառները: Հեմոդինամիկայի փոփոխությունների ախտաձագումը: Կլինիկական պատկերը, ընթացքի փուլերը: Հետազոտման գործիքային մեթոդները: Բարդությունները: Կանխատեսումը Բուժումը, վիրաբուժական բուժման ցուցումները: Կանխարգելումը: Աորտալ ստենոզ: Պատճառները: Հեմոդինամիկայի փոփոխությունների ախտաձագումը: Կլինիկական պատկերը, ընթացքի փուլերը: Հետազոտման գործիքային մեթոդները: Դեկոմպենսացիայի պատճառները: Բարդությունները: Կանխատեսումը: Բուժումը, վիրաբուժական բուժման ցուցումները: Կանխարգելումը: Եռփեղկ փականի անբավարարություն: Պատճառները: Հեմոդինամիկայի փոփոխությունների ախտաձագումը: Օրգանական և հարաբերական անբավարարությունը: Կլինիկական պատկերը: Հետազոտման գործիքային մեթոդների նշանակությունը: Ընթացքը: Կանխատեսումը: Բուժումը, վիրաբուժական բուժման ցուցումները: Կանխարգելումը: Միտրալ-աորտալ, միտրալ-եռփեղկ և միտրալ-աորտալ-եռփեղկ սրտի արատներ: Նրանց ախտորոշումը, ստենոզի կամ անբավարարության գերակշռման հայտնաբերումը: Ընթացքի տարբերակները և բարդությունները: Կանխատեսման և բուժման առանձնահատկությունները:

Սրտի բնածին արատներ. Գենեզը, դասակարգումը: Ախտորոշման մեթոդները: Տարբերակիչ ախտորոշումը: Սրտի կատետերիզացիայի դերը ախտորոշման գործում: Բաց բոտալյան ծորան: Բուժումը, կանխատեսումը և ելքը: Աորտայի կոարկտացիա: Բուժումը, կանխատեսումը և

ելքը: Միջնախասարտային և միջփորոքային միջնապատերի արատներ: Բուժումը, կանխատեսումը և ելքը:

Զարկերակային հիպերտենզիա. Պատճառները, ախտաձագումը: Ռիսկի գործոնները: Դասակարգումը: Հիվանդության տարբեր փուլերի կլինիկական պատկերը: Թիրախ օրգանների ախտահարումը: Հեմոդինամիկ տարբերակները: Ընթացքը: Բարդությունները: Տարբերակիչ ախտորոշումը: Բուժման սկզբունքները: Կանխարգելումը: Ելքերը: Կանխատեսումը: Կանխարգելումը:

Սիմպտոմատիկ հիպերտենզիաներ. Տեսակները: Տարբերակիչ ախտորոշումը: Հետազոտման սխեման: Ռենովասկուլյար զարկերակային հիպերտենզիաներ. ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը: Էնդոկրին զարկերակային հիպերտենզիաներ: Քուշինգի հիվանդություն և համախտանիշ. ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը: Ֆեոքրոմոցիտոմա. ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը: Ալդոստերոմա. Ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը: Հեմոդինամիկ հիպերտենզիաներ. ախտաձագումը, ախտորոշումը, բուժումը:

Կրծքավանդակի օրգանների ուռուցքներ - Կրծքավանդակի անատոմիան, թոքերի անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտման մեթոդները, ախտորոշումը. Շնչափողի առաջնային և երկրորդային ուռուցքներ. Թոքի քաղցկեղ. Թոքի երկրորդային ախտահարում. Միջնորմի անատոմիան, վիրաբուժական մուտքերը: Միջնորմի նորագոյացություններ՝ թիմոմաներ, միջնորմի հերմինոգեն ուռուցքներ, միջնորմի մեզենխիմալ ուռուցքներ, միջնորմի նեյրոգեն ուռուցքներ, մեզոթելիոմա. Կերակրափողի անատոմիան. Ֆիզիոլոգիան: Կերակրափողի քաղցկեղ. Որովայնի խոռոչի օրգանների ուռուցքներ: Աղե-ստամոքսային տրակտի անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտման մեթոդները, ախտորոշումը: Ստամոքսի անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտման մեթոդները. ստամոքսի ուռուցքներ, բուժումը /վիրահատական և պալեատիվ բուժում, քիմիոթերապիա/: Բարակ աղու անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտման մեթոդները.

բարակ աղու ուռուցքներ: Հաստ աղու անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտման մեթոդները: Հաստ աղու ուռուցքներ. ուղիղ աղու ուռուցքներ. Բիլիոպանկրեատոդուոդենալ շրջանի ուռուցքներ:

Լյարդի անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտման մեթոդները, լյարդի առաջնային և մետաստատիկ քաղցկեղ. Լյարդի ուռուցքների բուժումը:

Հետվորովայնամզային արտաօրգանային ուռուցքներ:

Կանաչի սեռական օրգանների ուռուցքներ - Իգական սեռական օրգանների անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտման մեթոդները, ախտորոշումը: Արգանդի վզիկի բարորոկ ուռուցքներ, նախաքաղցկեղային հիվանդություններ, քաղցկեղ: Արգանդի մարմնի բարորակ ուռուցքներ, նախաքաղցկեղային հիվանդություններ: Ձվարանի բարորակ ուռուցքներ, քաղցկեղի միջազգային դասակարգումը, ախտորոշումը, բուժումը: Արտաքին սեռական օրգանների և հեշտոցի բարորակ ուռուցքներ, ֆոնային և նախաքաղցկեղային հիվանդություններ, քաղցկեղի ախտորոշումը և բուժումը: Տրոֆոբլաստիկ ուռուցքների կլինիկան, ախտորոշումը, բուժումը:

Հենաշարժական օրգանների ուռուցքներ - փափուկ հյուսվածքների բարորակ, չարորակ ուռուցքներ. ոսկրերի բարորակ,չարորակ ուռուցքներ:

Միզասեռական օրգանների ուռուցքներ

Միզասեռական օրգանների անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտման մեթոդները, ախտորոշումը: Երիկամի ուռուցքներ, բուժումը. միզածորանի ուռուցքներ, բուժումը. շագանակագեղձի ուռուցքներ, բուժումը. Ամորձիների ուռուցքներ, բուժումը. առնանդամի ուռուցքներ, բուժումը:

Կրծքագեղձի ուռուցքներ - Կրծքագեղձի անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտման մեթոդները, ախտորոշումը: Կրծքագեղձի չարորակ ուռուցքներ, կլինիկա, ախտորոշում, բուժում, պրոֆիլակտիկա (սկրինինգ, դիսպանսեր հսկողություն): Բարորակ ուռուցքներ: Կլինիկա, ախտորոշում, բուժում, պրոֆիլակտիկա (սկրինինգ, դիսպանսեր հսկողություն):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ганцев Ш. Х. Онкология Учебник. Москва 2006.
2. Dennis Casciato. "Manual of Clinical Oncology" Seventh Edition.
3. DeVita, Hellman, and Rosenberg's 'Cancer: Principles and Practice of Oncology' 10th Edition.
4. Поддубная И.В.Онкология. Справочник практического врача. М. 2009.
5. В.И. Чиссов, С. Л. Дарьялова. Онкология Учебник. Москва 2007.
6. М. Давыдов Ш. Ганцев. Атлас по онкологии. Москва 2007.

ԺԴ.00.09 - ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԱՏՈՄԻԱ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԱՏՈՄԻԱ

Դիստրոֆիաներ, բնորոշումը և հիմնական ձևերը: Նեկրոզ /մեռուկ/, պատճառները, տեսակները, մորֆոլոգիան և ելքը: Ապոպտոզ: Երակային գերարյունություն, բնորոշումը, մորֆոլոգիան և ելքը: Արյունահոսություն, տեսակները, մեխանիզմը և ելքը: Թրոմբոզ, առաջացման պատճառները, մորֆոլոգիան և ելքը: Թրոմբո-հեմոռագիկ համախտանիշ /արյան տարածված ներանոթային մակարդում/: Էմբոլիա, ձևերը, մորֆոլոգիան, հետևանքները: Ընդհանուր տեղեկություններ բորբոքման մասին: Բորբոքման էությունը, մորֆոլոգիական նշանները, նշանակությունը:

Ուռուցքների դասակարգումը, ընդհանուր մորֆոլոգիան: Հիպերտրոֆիա /գերած/, ձևերը, պատճառները, մորֆոլոգիան և ելքը: Հեմոբլաստոզներ, առանձին տեսակների մորֆոլոգիան: Լիմֆոգրանուլեմատոզ: Աթերոսկլերոզ, էթիոլոգիան, մորֆոլոգիան: Հիպերտոնիկ հիվանդություն, ախտաբանական անատոմիան: Սրտի իշեմիկ հիվանդություն:

Ռեմատիկ հիվանդություններ, պաթոգենեզի և մորֆոգենեզի հարցերը: Ռեմատիզմի էությունը, հիմնական կլինիկաանատոմիական ձևերը: Ընդհանուր մորֆոլոգիան: Համակարգային կարմիր գայլախտ: Ռեմատոիդ արթրիտ: Կրուպոզ թոքաբորբ: Բրոնխոպնևմոնիաներ: Թոքերի էմֆի-

զեմա /փքանք/, հիվանդության զարգացման դինամիկան և ելքը: Թոքերի խրոնիկական, ոչ յուրահատուկ հիվանդություններ:

Թոքերի քազցկեղ, անատոմիական և հյուսվածքաբանական ձևերը, բարդությունները: Գաստրիտներ, ձևերը, առանձին տեսակների մորֆոլոգիան:

Ստամոքսի և 12-մատնյա աղիքի խոցային հիվանդություն: Ապենդիցիտ, դասակարգումը, առանձին ձևերի մորֆոլոգիան: Հեպատիտներ:

Լյարդի տոքսիկ դիստրոֆիա: Լյարդի ցիռոզներ, պատճառները, ախտաբանական անատոմիան, ելքը:

Գլոմեռուլոնեֆրիտ, դասակարգումը, առանձին ձևերի մորֆոլոգիան:

Տուբուլոպաթիաներ, երիկամային սուր անբավարարություն:

Երիկամային խրոնիկական անբավարարություն /ուրեմիա/, առաջացման պատճառները, ախտաբանական անատոմիան:

Գրիպ: Կարմրուկ, կլինիկաձևաբանական բնութագիրը:

Դիֆթերիա, պատճառագիտությունը, ախտաձագումը, ախտաանատոմիական փոփոխությունները: Որովայնային տիֆ: Դիզենտերիա /շիզելոզ/:

Ամիոբիոզ: Քուլտեր, շրջանները, երկրորդային շրջանի բարդությունները:

Մալարիա: Բրուցելոզ: Ձեռք բերովի իմունային անբավարարության համախտանիշ /ՁԻԱՀ/: Խոլերա: Հետադարձ տիֆ: Մենինգոկոկային

վարակ: Բժավոր տիֆ: Պոլիոմիելիտ: Տուբերկուլոզ: Սիֆիլիս, փուլերը, մորֆոլոգիան: Սեպսիս, ախտաբանական անատոմիան, կլինիկա-անատոմիական ձևերը:

ԴԱՏԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Դատական բժշկության իրավաբանական և կազմակերպչական հիմունքները. Բժիշկ-մասնագետի և դատաբժշկական փորձագետի իրավունքները և պարտականությունները: Դեպքի վայրում բժիշկ-մասնա-

գետի և դատաբժշկական փորձագետի մասնակցությունը և իրավասությունները:

Մահաբանություն. Դիակային բժերը և նրանց դատաբժշկական նշանակությունը: Դիակային փայտացումը և նրանց դատաբժշկական նշանակությունը: Դիակի նեխման պայմանները, նրա դատաբժշկական նշանակությունը:

Վնասվածքաբանություն. Վնասնաճքաբանության /տրավմատիզմի/ սահմանումը և նրա տեսակները: Վնասվածքների բժշկական բնութագիրը, առաջացման մեխանիզմը և դատաբժշկական նշանակությունը:

Մեխանիկական վնասվածքներից առաջացած մահվան պատճառները: Կրծքավանդակի օդահավաքի և օդային խցանման (էմբոլիայի) որոշման փորձերը: Կենդանության օրոք և հետմահու առաջացած մեխանիկական վնասվածքների տարբերակիչ ախտորոշումը: Վնասվածքների բնութափրկ բարձունքից վայր ընկնելիս: Ավտոմոբիլային փոխադրամիջոցներից առաջացած վնասվածքների առանձնահատկությունները: Գծային փոխադրամիջոցներից առաջացած վնասվածքների տեսակները և առանձնահատկությունները: Օդաչվական վնասվածքների առանձնահատկությունները և դատաբժշկական փորձաքննությունը:

Ծակող, ծակող-կտրող և կտտորող գործիքներով հասցված վնասվածքների առանձնահատկությունները: Հրազենային կրակոցի գնդակի ծակող, սեպածև, ծեծվածքային և պատռվածքային վնասվածքների առաջացման մեխանիզմը: Հրազենային կրակոցի ուղղության որոշումը:

Հրազենային կրակոցի հեռավորության որոշումը: Ն.Վ.Վինոգրադովի բացառիկությունը: Հրազենային ընդհուպ կրակոցի տարատեսակների դատաբժշկական փորձաքննությունը: Հրազենային վնասվածքի մուտքի և ելքի անցքերի տարբերակիչ ախտորոշումը: Մոտ տարածությունից կատարված կրակոցի գործոնների դատաբժշկական նշանակությունը:

Կոտորակային զենքերի կրակոցից առաջացած վնասանաձևերի առանձնահատկությունները, կրակոցի հեռավորության որոշումը: Հրազենային գնդակային և կոտորակային զենքերից կատարված կրակոցների հաջորդականության որոշումը:

Մեխանիկական շնչահեղձում. Մեխանիկական շնչահեղձման դատաբժշկական դասակարգումը և բնորոշ դիակային երևույթները: Մեխանիկական շնչահեղձման մինչ մահվան փուլերը: Կախում և խեղդում օղով, խեղդում ձեռքերով: Դրանց հետևանքով առաջացած մահվան մեխանիզմը և դատաբժշկական տարբերակիչ ախտորոշումը:

Կենդանության օրոք և հետմահու առաջացած ճմլման ակոսի դատաբժշկական փորձաքննությունը: Կրծքավանդակի և որովայնի սեղմման ժամանակ շնչահեղձման ընթացքի առանձնահատկությունները և դիահերձման պատկերը: Օտար մարմիններով շնչական անցքերի, սրուն մարմիններով և փսխման զանգվածներով շնչական ուղիների փակումից առաջացած մահվան դատաբժշկական ախտորոշումը:

Ջրահեղձման տեսակները, մեխանիզմը և դատաբժշկական ախտորոշումը: Դիակի ջրում գտնվելու տևողության որոշումը: Ջրից հանված դիակների փորձաքննության առանձնահատկությունները:

Ջրահեղձման ախտորոշման լաբորատոր եղանակները:

Վնասվածքները եվ մահը արտաքին մթնոլորտային գործոններից. Ցածր ջերմաստիճանների տեղային և ընդհանուր ներգործությունից առաջացած մահվան պատճառները, նրանց դատաբժշկական փորձաքննության առանձնահատկությունները: Բարձր ջերմաստիճանների տեղային և ընդհանուր ներգործության հետևանքով մարմնական վնասվածքներից առաջացած մահվան պատճառները: Կենդանության օրոք կրակի մեջ ընկնելուց առաջացած վնասվածքների ախտորոշման եղանակները: Մարմնի այրվածքային մակերեսի որոշումը: Էլեկտրական հոսանքի ներգործության պայմանները և մահվան մեխանիզմը: Էլեկտրանիշ:

Էլեկտրահարությունից մահացած անձանց դիակների դատաբժշկական փորձաքննության առանձնահատկությունները: Հիվանդագին երևույթները և մահը ծայրահեղ մթնոլորտային ճնշումներից:

Թունաբանություն. Թույնի և թունավորման հասկացության սահմանումը: Թույնի ներգործության պայմանները: Թունավորման կասկածի դեպքում դիակի դատաբժշկական փորձաքննության և դեպքի վայրի ուսումնասիրության առանձնահատկությունները: Թույնի օրգանիզմ ներմուծման և օրգանիզմից հեռացման ուղիները: Թույնի ազդեցությունը՝ կախված օրգանիզմ ներմուծման և հեռացման ուղիներից:

Թունավորման կասկածի դեպքում նյութերի վերցման կարգը՝ տարբեր լրացուցիչ լաբորատոր ուսումնասիրությունների համար: Թունավորման կասկածի դեպքում դիակի օրգանների դատաքիմիական ուսումնասիրության դրական և բացասական արդյուքների դատաբժշկական գնահատականը: Թունավորում հիմքերով և թթուներով, նրանց տարբերակիչ ախտորոշումը: Թունավորում ածխածնի մոնօքսիդով և մեթեմոգլոբին առաջացնող թույններով, դիահերձման պատկերը և ուսումնասիրության լաբորատոր եղանակները: Թունավորում սնդիկի անօրգանական միացություններով /սուլեմա/: Թունավորում մկնդեղով, կլինիկան և դիահերձման պատկերը: Թունավորում կապտաթթվի միացություններով: Քնաբեր դեղորայքով և թմրանյութերով թունավորման կասկածի դեպքում դիակի դատաբժշկական փորձաքննության առանձնահատկությունները: Թունավորում էթանոլով, կլինիկան և դիահերձման պատկերը: Թունավորում մեթանոլով, կլինիկան և դիահերձման պատկերը: Սննդային թունավորումների դասակարգումը: Թունավորում սնկերով /կարմիր ճանճասպան, դժգույն սունկ, մորկեղասունկ/, նրանց դատաբժշկական ախտորոշումը: Թունավորում բոտուլոտոքսինով, կլինիկան և դիահերձման պատկերը: Թունավորում թունաքիմիկատներով /քլոր-, ֆոսֆոր-, սնդիկօրգանական միացություններով/:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վարդանյան Շ.Ա., Նազարեթյան Կ.Լ., Դատական բժշկություն: Երևան, "Լույս" հրատարակչություն, 1995, 528 էգ:
2. Վարդազարյան Ն.Դ. Ախտաբանական անատոմիա. Երևան, 2003.
3. Դիակի դատաբժշկական փորձաքննության տեխնիկական և փորձագետի եզրակացության հիմնավորումը: Վարդանյան Շ.Ա., Նազարեթյան Կ.Լ. Երևան, 1997:
4. Վարդանյան Շ.Ա., Դատական բժշկություն: Երևան, 2010:
5. Авдеев М.И. Курс судебной медицины. М, 1959.
6. Авдеев М.И. Судебно-медицинская экспертиза живых лиц. М,1968.
7. Громов А.П. Курс лекций по судебной медицине. М, 1970.
8. Громов А.П. Практикум по судебной медицине. М, 1970.
9. Громов А.П., Науменко В.П. Судебно-медицинская травматология. М., Медицина, 1977.
10. Бережной Р.В. и др. Руководство по судебно-медицинской экспертизе отравлений. М., Медицина, 1980.
11. Диагностикум механизмов и морфологии переломов при тупой травме скелета. Под ррд. В.Н.Крюкова и др. Новосибирск, 2011.
12. Пиголкин Ю.В. и др. Судебная медицина. Учебник. М., 2011.
13. Попов В.Л. Учебник судебной медицины. С-Пб, 2002.
14. Попов В.Л. Судебная медицина. Практикум. С-Пб, 2001.
15. Попов В.Л. и др. Судебно-медицинская баллистика. С-Пб, 2002.
16. Смольянинов В.М./ред./ Судебная медицина. М., Медицина, 1982.
17. Солохин Л.А. Судебно-медицинская экспертиза в случаях автомобильной травмы. М., Медицина, 1981.
18. Струков А.и., Серов В.В. Патологическая анатомия. М., 1979.
19. Судебная медицина. Учебник под ред. С.Ф.Щадрина и др. М., 2005.
20. Томилин В.В. Судебная медицина. М,2001.
21. Хохлов В.В. Руководство по судебной медицине. М, 2003.
22. Чистович А.П. /ред./ - Патологическая анатомия. М., Медгиз, 1963.

ԺԴ.00.10 - ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱԼ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ

Ախտաֆիզիոլոգիա - Ժառանգականության տիպային խաթարումների դասակարգումը, էթիոլոգիան և պաթոգենեզը. Մուտացիաների դասակարգումը: Առավել հաճախ հանդիպող մոնոգենային (Մենդելյան եւ ոչ Մենդելյան) և քրոմոսոմային հիվանդությունների ժառանգման տեսակները, էթիոլոգիան և պաթոգենեզը: Բջջի վնասումը որպես ախտաբանական տեղաշարժերի առաջնային օղակ: Պատճառները, վնասման ընդհանուր մեխանիզմները: Բջջի դարձելի և անդարձելի վնասում, նրանց բնորոշ տեղաշարժերը: Բջջի վնասման սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ դրևորումները: Բջջի պաշտպանության և ադապտացիայի մեխանիզմներ: Բջջի վնասման համապարփակ մոլեկուլյար մեխանիզմներ, օքսիդատիվ և կալցիումական սթրես, ապաֆոլդավորված սպիտակուցի պատասխան: Ազդանշանային համակարգի տիպային խանգարումներ: Բջջի մահ, տեսակները: Ապոպտոզ, զարգացման մեխանիզմները, մակաձման արտաքին և ներքին ուղիները: Ապոպտոզի դերն ախտաբանության մեջ: Նեկրոզի ծրագրավորված և բռնի տարբերակները: Աուտոֆագիա, դերն ախտաբանության մեջ:

Ադապտացիա և սթրես: Սթրեսորներ, դասակարգումը: Սթրես համակարգ, գործունեության սկզբունքները: Սթրեսի զարգացման մեխա-

նիզմները և շրջանները: Սթրեսի պաշտպանողական-հարմարվողական և ախտածնական նշանակությունը: Սթրես և հիվանդություն:

Տեղային արյան շրջանառության խանգարումները, տեսակները: Իշեմիա, զարկերակային և երակային գերարյունություններ, տեսակները, էթիոլոգիան, պաթոգենեզը, դրսևորումները և նշանակությունը:

Թրոմբոզ. պատճառները, զարգացման մեխանիզմները, հետևանքները և ելքերը: Ստազ և էմբոլիա. տեսակները, էթիոլոգիան, պաթոգենեզը և հետևանքները:

Հիպօքսիա, դասակարգումը, էթիոլոգիան և պաթոգենեզը: Սեղմաժակետ և երկարաժամկետ կոմպենսատոր մեխանիզմներ: HIF-ի դերը պաթոլոգիայում: Սուր և քրոնիկ հիպօքսիաների պայմաններում զարգացող փոխանակային ու կառուցվածքա-ֆունկցիոնալ խանգարումները:

Բորբոքում, դասակարգումը, բորբոքման ընդհանուր և տեղային նշանները: Սուր բորբոքման էթիոլոգիան և պաթոգենեզի բաղադրյալները: Քրոնիկ բորբոքման էթիոլոգիկ և պաթոգենետիկ առանձնահատկությունները: Բորբոքման միջնորդներ, դասակարգումը, նրանց դերը բորբոքման ձևավորման գործընթացում:

Աուտոբորբոքում, աուտոբորբոքային հիվանդություններ: Հասկացություն պարաբորբոքման և համակարգային բորբոքման մասին:

Սուր փուլի պատասխան և տենդ: Հիմնական միջնորդները, սուր փուլի սպիտակուցներ: Ցիտոկինները որպես օրգանիզմի տարաբնույթ ֆունկցիաների կարգավորիչներ, դերը պաթոլոգիայում:

Իմուն համակարգի խաթարման տիպային ձևերը: Իմունադեֆիցիտներ, դասակարգումը, առաջացման պատճառները և զարգացման մեխանիզմները: Աուտոիմունիտետ: Աուտոիմուն և հետտրանսպլանտացիոն ռեակցիաներ: Իմուն տոլերանտություն, տեսակները, նշանակությունը ախտաբանության մեջ: Գերզգայնության ռեակցիաներ, տեսակները, էթիոլոգիան: Գերզգայնության ռեակցիաների ընդհանուր պաթոգենեզը և

շրջանները: Առանձին տեսակների էթիոլոգիայի և պաթոգենեզի յուրահատկությունները: Հյուսվածքային հոմեոստազի խանգարման տիպային ձևերը: Ուռուցքային աճի բնութագիրը, էթիոլոգիան և պաթոգենեզը: Ուռուցքային աճի մոլեկուլյար մեխանիզմները: Ուռուցքային ատիպիզմ, տեսակները: Բարորակ և չարորակ ուռուցքների առանձնահատկությունները: Չարորակ ուռուցքների առանցքային առանձնահատկությունները: Պարանեոպլաստիկ համախտանիշներ: Հակաբլաստոմային ռեգիստենտություն, հիմնական օղակները:

Հիպեր-, հիպոգլիկեմիկ վիճակներ, տեսակները, պատճառները, զարգացման մեխանիզմները: Հասկացություն գլիկոգենոզների մասին:

Շաքարային դիաբետ, տեսակները, էթիոլոգիան և պաթոգենեզը:

Շաքարային դիաբետի պայմաններում զարգացող նյութափոխանակային տիպային խանգարումներ, բարդություններ, նրանց զարգացման մեխանիզմները: Ճարպակալում, տեսակները և զարգացման մեխանիզմները: Մետաբոլիկ համախտանիշի մասին:

Դրական և բացասական ազոտային հաշվեկշիռ: Հիպերազոտեմիա, տեսակները, զարգացման մեխանիզմները: Արյան սպիտակուցային կազմի տեղաշարժեր՝ հիպո-, հիպեր-, դիս- և պարապրոտեինեմիաներ:

Հիպեր- և հիպոհիդրատացիաներ, տեսակները, առաջացման պատճառներն ու զարգացման մեխանիզմները: Այտուցներ, ընդհանուր ախտածնական գործոնները, տեսակները, առաջացման պատճառները և զարգացման մեխանիզմները: Իոնային (K^+ , Na^+ , Ca^{2+} , Mg^{2+}) հոմեոստազի խանգարումների հիմնական պատճառները, մեխանիզմները և դրսևորումները: Ացիդոզ և ալկալոզ, տեսակները, ախտածնությունն ու դրսևորումները: Անիոնային տարբերություն, տարբերակիչ նշանակությունը մետաբոլիկ ացիդոզների դեպքում: Շոկ, տեսակները, առաջացման պատճառները և զարգացման մեխանիզմները: Ըստ պաթոգենեզի շոկի տարբեր տեսակների առանձնահատկությունները: Համակարգային բոր-

բոքային ռեակցիայի համախտանիշը, սեպսիսը և սեպտիկ շոկը որպես կոնտինուում: Բազմաօրգանային անբավարարության հանախտանիշ:

Հեմոստազի համակարգի ախտաբանության տիպային ձևերը, պատճառները, զարգացման մեխանիզմները և դրսևորումները: Տարածուն ներանոթային մակարդման համախտանիշի էթիոլոգիան և պաթոգենեզը:

Անեմիաներ, դասակարգման սկզբունքները, տեսակները: Պոստհեմոռագիկ, հեմոլիտիկ, դիսէրիթրոպոետիկ անեմիաների էթիոլոգիան, պաթոգենեզը, ծայրամասային արյան պատկերը:

Լեյկոցիտոզ և լեյկոպենիա. տեսակները, առաջացման պատճառները, զարգացման մեխանիզմները, ծայրամասային արյան պատկերը: Ագրանուլոցիտոզ, տեսակները, պատճառները, զարգացման մեխանիզմները և նշանակությունն օրգանիզմի համար:

Լեյկեմիաներ, էթիոլոգիան, պաթոգենեզը, դասակարգումը և ծայրամասային արյան պատկերի առանձնահատկությունները:

Համակարգային զարկերակային ճնշման տիպային խանգարումներ. Ջարկերակային հիպերտենզիաներ: Էսենցիալ հիպերտենզիա, էթիոլոգիան և պաթոգենեզը: Երկրորդային հիպերտենզիաներ, տեսակները, պատճառները և զարգացման մեխանիզմները:

Սրտային անբավարարություն, տեսակները, պատճառները, զարգացման մեխանիզմները և դրսևորումները:

Կորոնար անբավարարություն, պատճառներն ու զարգացման մեխանիզմները: Սրտի իշեմիկ հիվանդություն: Աթերոսկլերոզ, պատճառները, զարգացման մեխանիզմները և ախտաճնական նշանակությունը:

Արտաքին շնչառության անբավարարություն, տեսակները: Ջարգացման հիմնական դետերմինանտները՝ օդահարության, պերֆուզիայի և գազերի դիֆուզիայի խանգարումներ: Շնչական դիսթրես համախտանիշ, տեսակները, պատճառներն ու զարգացման մեխանիզմները:

Որկորի ֆունկցիաների տիպային խանգարումներ, էթիոլոգիան և պաթոգենեզը: Խոցային հիվանդություն, էթիոլոգիան և պաթոգենեզը:

Մալբարոբրեցիայի համախտանիշ, պատճառները, զարգացման մեխանիզմները և հետևանքները: Լուծեր և փորկապություններ, տեսակները, առաջացման պատճառներն ու զարգացման մեխանիզմները: Աղիքային անանցանելիություն:

Ենթաստամոքսային գեղձի սեկրետոր գործունեության խանգարումներ. Սուր և քրոնիկ պանկրեատիտներ:

Լյարդային անբավարարություն, տեսակները, պատճառները, հիմնական ախտածնական մեխանիզմները և դրսևորումները: Լյարդային էնցեֆալոպաթիա և կոմա, էթիոլոգիան ու պաթոգենեզը:

Լյարդային անբավարարության ժամանակ զարգացող համախտանիշների էթիոլոգիան և պաթոգենեզը: Դեղնուկներ, տեսակները, պատճառները, զարգացման մեխանիզմները և դրսևորումները:

Երիկամների հիմնական գործառույթների տիպային խանգարումները: Միզային համախտանիշ: Երիկամային անբավարարություն, տեսակները, պատճառներն ու հիմնական ախտածնական մեխանիզմները: Ուրեմիա: Նեֆրոտիկ և նեֆրիտիկ համախտանիշ, պատճառները, զարգացման մեխանիզմները և դրսևորումներ:

Նյարդային համակարգի վնասման ընդհանուր էթիոլոգիան և պաթոգենեզը: Նյարդային համակարգի ախտաբանության հիմնական խմբերը: Նեյրոնի ախտաֆիզիոլոգիա: Գլխուղեղի հիպոքսիկ և իշեմիկ վնասման ախտածնությունը: Էքսայտոտոքսիկություն:

Ցավ, ցավային և հակացավային համակարգեր, ցավի միջնորդներ, տեսակները: Քրոնիկ ցավի ախտածնական նշանակությունը: Ծայրամասային և կենտրոնական սենսիտիզացիա:

էնդոկրինոպաթիաների ընդհանուր էթիոլոգիան և պաթոգենեզը: Աուտոիմուն մեխանիզմների նշանակությունը էնդոկրին խանգարումների զարգացման գործընթացում:

Առանձին էնդոկրին գեղձերի ախտաֆիզիոլոգիա (հիպոֆիզ, մակերիկամներ, վահանագեղձ, հարվահանագեղձեր և սեռական գեղձեր):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գ.Ա.Նավասարդյան, Ընդհանուր ախտաֆիզիոլոգիա, 2007թ.
2. Գ.Ա.Նավասարդյան և համահեղ., Մասնավոր ախտաֆիզիոլոգիա, Ե., 1998 թ.
3. Ս.Ա. Ավետիսյան, Ա.Ա.Պապյան, Ա.Ս.Գրիգորյան, Ընդհանուր ախտաֆիզիոլոգիայի հարցեր եւ թեստեր, 2012թ.
4. Գ.Ա.Նավասարդյան եւ համահեղ., Մասնավոր ախտաֆիզիոլոգիայի գործնական պարապմունքներ, Ե., 2005թ.
5. Ավետիսյան Ս.Ա., Աուտոբրոբոքում և էնդոտոքսինային տուլերան-տություն, Ե., 2012թ
6. П.Ф.Литвицкий, Патофизиология”, в двух томах, 2012г.
7. Н.Н.Зайко, Патологическая физиология, 2006г.
8. А.Ш.Зайчик, Л.П.Чурилов, Основы общей патологии, 2005г.
9. А.Д.Адо, Патологическая физиология, 2009г.
10. Дж. А. Шейман, Патофизиология почки, 2007
11. М. А. Гриппи, Патофизиология легких, 2008
12. Дж. М. Хендерсон, Патофизиология органов пищеварения, 2005
13. В.М. Кэттайл, Р.А. Арки, Патофизиология эндокринной системы, 2001
14. Ф.Дж. Шиффман, Патофизиология крови, 2000
15. Л. Лилли, Патофизиология заболеваний сердечно-сосудистой системы, 2003
16. В.Ю. Шанина. Патофизиология. Практикум. 2002.
17. "Pathologic basis of disease", Robbins, 8th or 9th edition

Նորմալ ֆիզիոլոգիա. Ֆիզիոլոգիայի հիմնական հասկացություններ:

Օրգանիզմ: Օրգանիզմի և արտաքին միջավայրի միասնությունը: Հոմեոստազ, հոմեոկինեզ: Օրգան: Գաղափար կառուցվածքա-ֆունկցիոնալ միավորի և ֆունկցիոնալ տարրի մասին: Բջջիչ, նրա ֆունկցիաները:

Ֆիզիոլոգիական ֆունկցիա: Ֆիզիոլոգիական և ֆունկցիոնալ համակարգեր: Կազմավորման և կարգավորման մակարդակներ:

Դրդունակ հյուսվածքների ֆիզիոլոգիա. Դրդունակ հյուսվածքներ. դրանց բնութագիրը: Դրդունակություն, գրգռականություն: Գրգռիչների դասակարգում:

Ժամանակակից պատկերացումներ թաղանթների կառուցվածքի և ֆունկցիաների մասին: Իոնային անցուղիներ, իոնների պասիվ և ակտիվ փոխադրում: Թաղանթային պոտենցիալ. առաջացման մեխանիզմը, գրանցման եղանակները: Գործողության պոտենցիալ. փուլերը, առաջացման իոնային մեխանիզմները: Տեղային պոտենցիալ, հատկությունները: Դրդունակության փոփոխությունը դրդման ժամանակ: Ռեֆրակտերություն. տեսակները, զարգացման պատճառները, նշանակությունը: Դրդման չափանիշներ: Հասկացություն ռեբազայի, խրոնաքսիայի մասին: Լաբիլություն:

Նյարդաթելի ֆիզիոլոգիա: Նյարդաթելերի դասակարգում: Միելինապատ և միելինազուրկ նյարդաթելերով գրգռիչ հաղորդման մեխանիզմ և օրինաչափություններ: Միափուլ և երկփուլ գործողության պոտենցիալի առաջացման մեխանիզմ: Նյարդամկանային սինապս, կառուցվածքը: Գրգռիչ հաղորդման մեխանիզմը և առանձնահատկությունները: Ծայրային թիթեղի պոտենցիալ, մանրապոտենցիալ: Սինապսով գրգռիչ հաղորդման շրջափակման մեխանիզմներ:

Մկանների ֆիզիոլոգիա: Կմախքային մկանների ֆիզիոլոգիական առանձնահատկություններ: Մկանների կծկման ռեժիմներ՝ իզոտոնիկ, իզոմետրիկ, աուքսոտոնիկ կծկումներ: Մկանների կծկման տեսակներ՝ միայնակ կծկում, տետանոս, տետանոսի տեսակները: Մկանաթելի

կառուցվածքը: Մկանի կծկման և թուլացման մեխանիզմները: Հարթ մկաններ. նրանց առանձնահատկությունները:

ԿՆՀ-ի գործունեության հիմնական սկզբունքներ և ֆունկցիաների նյարդային կարգավորում. ԿՆՀ-ի ֆունկցիաները: ԿՆՀ-ի դերը օրգանիզմի ինտեգրատիվ հարմարողական գործունեության մեջ: Նեյրոնը որպես ԿՆՀ-ի կառուցվածքային և ֆունկցիոնալ միավոր: Հասկացություն գլխայի և նրա ֆունկցիաների մասին: ԿՆՀ-ի հետազոտման մեթոդները: Հատում, քայքայում, գրգռում: Ստերեո-տաքսիկ մեթոդ: Հետազոտման էլեկտրաֆիզիոլոգիական մեթոդներ:

Ռեֆլեքսներ. դասակարգումը, ռեֆլեկտոր աղեղի կառուցվածքը: Զգացող, ներդիր և շարժանեյրոնների բնութագիրը: Կենտրոնական սինապսներ. դասակարգումը: Գրգիռի հաղորդումը քիմիական և էլեկտրական սինապսներով, նրաց համեմատական բնութագիրը:

Կենտրոնական արգելակում. տեսակները: Նախա- և հետսինապսային արգելակման զարգացման մեխանիզմները, նշանակությունը:

Նյարդային կենտրոն, բնութագիրը: Նյարդային կենտրոնների հատկություններ՝ միակողմանի հաղորդում, դրդման տարածական և ժամանակային գումարում, խցանման երևույթ, դրդման ռիթմի տրանսֆորմացիա, հետտետանիկ պոտենցիալացիա, դյուրիողնելիություն և այլն:

ԿՆՀ-ի կողորդինացված գործունեության ընդհանուր սկզբունքներ՝ հետադարձ կապի, դոմինանտության, ճկունության, ընդհանուր վերջնական ուղու և այլ սկզբունքներ:

Վեգետատիվ նյարդային համակարգ, նրա կառուցվածքաֆունկցիոնալ առանձնահատկությունները: Սիմպաթիկ, պարասիմպաթիկ և մետասիմպաթիկ բաժիններ: Սիմպաթիկ և պարասիմպաթիկ համակարգերի սիներգիզմը և հարաբերական անտագոնիզմը, նրանց ազդեցությունը ներքին օրգանների վրա: Վեգետատիվ նյարդային համակարգի հանգույցները և նրանց ֆունկցիաները: Վեգետատիվ սինապսներ և միջնոր-

դանյութեր: Վեգետատիվ ռեֆլեքսներ, դասակարգումը, նշանակությունը: Ցանցանման գոյացության, լիմբիկ համակարգի, ուղեղիկի, ենթատեսաթմբի, ուղեղի մեծ կնիսագնդերի կեղևի դերը վեգետատիվ ֆունկցիաների կարգավորման մեջ:

Ֆունկցիաների հումորալ կարգավորում. Էնդոկրին համակարգի դերը ֆունկցիաների հումորալ կարգավորման և օրգանիզմի ինտեգրատիվ հարմարողական գործունեության ապահովման մեջ: Հորմոններ, հատկությունները, նշանակությունը, ազդեցության մեխանիզմը, արտադրության կարգավորման մեխանիզմները: Ներզատիչ գեղձերի ֆունկցիաների ուսումնասիրության մեթոդներ:

Հիպոթալամ-հիպոֆիզային համակարգ: Հիպոթալամ-նյարդահիպոֆիզային համակարգ, հորմոնները, նշանակությունը: Հիպոթալամուսի և ադենոհիպոֆիզի ֆունկցիոնալ կապը: Լիբերիններ, ստատիններ, նրանց կարգավորիչ դերը: Ադենոհիպոֆիզի հորմոններ, նրանց ֆիզիոլոգիական էֆեկտները: Հիպոթալամ-էքստրահիպոթալամիկ համակարգ:

Վահանագեղձ: Թիրիեոիդ հորմոնների դերը էներգիայի և նյութափոխանակության կարգավորման, օրգանիզմի աճի և զարգացման պրոցեսներում: Կալցիտոնին, նշանակությունը կալցիումի և ֆոսֆորի հոմեոստազի կարգավորման պրոցեսում: Վահանագեղձի գործունեության կարգավորման մեխանիզմներ: Հարվահանագեղձեր, նրանց դերը կալցիումի և ֆոսֆորի փոխանակության կարգավորման մեջ:

Ենթաստամոքսային գեղձի ներզատիչ ֆունկցիան: Հորմոնների դերը ածխաջրատային, սպիտակուցային և ճարպային փոխանակության կարգավորման պրոցեսում: Ենթաստամոքսային գեղձի ներզատիչ ֆունկցիայի կարգավորման մեխանիզմներ:

Մակերիկամներ: Կեղևային և միջուկային նյութերի հորմոններ: Նրանց նշանակությունը օրգանիզմի և տարբեր ֆունկցիաների նյութափոխա-

նակության կարգավորման մեջ: Մակերիկամների ֆունկցիայի կարգավորում:

Սեռական գեղձեր: Արական և իգական սեռական հորմոններ, նշանակությունը, արտադրության կարգավորումը: Իգական սեռական ցիկլ: Ընկերքի ներգատիչ ֆունկցիան: Էպիֆիզ, նրա հորմոնների դերը օրգանիզմի ֆունկցիաների կարգավորման մեջ: Ուրցագեղձ, նրա ֆունկցիաները: APUD համակարգ, նշանակությունը:

Բարձրագույն նյարդային գործունեություն. Տիպերը, դասակարգումը, բնութագիրը, որոշման եղանակները:

Քուն, տեսակները, փուլերը, ուղեկցող կենսաբանական պրոցեսները և ֆիզիոլոգիական նշանակությունը: Քնի առաջացման մեխանիզմները:

Արյան ֆիզիոլոգիա. Օրգանիզմի ներքին միջավայր: Հասկացություն արյան համակարգի մասին: Արյան ֆունկցիաները, բաղադրությունը, քանակը, հիմնական ֆիզիոլոգիական հաստատունները, նրանց կարգավորման մեխանիզմները:

Պլազմա. կազմությունը: Պլազմայի սպիտակուցները, նշանակությունը: Արյան օսմոտիկ և օնկոտիկ ճնշումներ, նշանակությունը: Հեմոլիզ, պլազմոլիզ: Արյան pH, կարգավորումը: Արյան փոխարինիչներ:

Էրիթրոցիտներ: Էրիթրոցիտների կառուցվածքը, ֆունկցիաները, տեսակները: Քանակը, տատանումները, քանակի հաշվումը: Հեմոգլոբին. կառուցվածքը, հատկությունները, միացությունները: Հեմոգլոբինի քանակը, որոշման եղանակը: Գունային ցուցանիշ, որոշումը, նշանակությունը:

Էրիթրոցիտների նստման արագություն, արժեքը, նշանակությունը, նրա վրա ազդող գործոնները: Էրիթրոպոեզ, նրա կարգավորման նյարդային և հումորալ մեխանիզմները:

Լեյկոցիտներ, տեսակները, ֆունկցիաները, քանակը, հավշման եղանակը: Լեյկոցիտոզ, լեյկոպենիա: Լեյկոցիտար բանաձև: Լեյկոպոեզի նյարդային և հումորալ կարգավորում: Թրոմբոցիտներ, կառուցվածքը,

քանակը, ֆունկցիաները: Արյան մակարդում, նշանակությունը: Մակարդմանը մասնակցող գործոններ: Մակարդման փուլեր, ֆիբրինոլիզ: Մակարդիչ, հակամակարդիչ համակարգեր:

Արյան խմբեր, ռեզուս-գործոն: Արյան փոխներարկման կանոններ:

Արյան շրջանառության ֆիզիոլոգիա. Արյան և ավշաշրջանառության մորֆոֆունկցիոնալ բնութագիրը: Նրա դերը և տեղը օրգանիզմի կենսագործունեության ապահովման մեջ:

Սիրտ: Միոկարդի ֆիզիոլոգիական հատկություններ (դրդունակություն, հաղորդականություն, կծկելիություն): Սրտի ավտոմատիզմ: Սրտի հաղորդող համակարգ, նրա ֆունկցիոնալ առանձնահատկությունները: Սրտային ցիկլ և նրա փուլային վերլուծությունը: Արյան սիստոլիկ և ռոպեական ծավալներ: Սրտի գործունեության ուսումնասիրման մեթոդներ (էլեկտրասրտագրություն, ֆոնոսրտագրություն, ուլտրաձայնային սրտագրություն և այլն): Սրտի գործունեության կարգավորման մեխանիզմներ (ներսրտային և արտասրտային՝ նյարդային և հումորալ):

Համակարգային արյան շրջանառություն: Արյան անոթների ֆունկցիոնալ դասակարգում: Հեմոդինամիկային հիմնական օրինաչափություններ: Արյան անընդհատ և միակողմանի հոսքը պայմանավորող գործոններ: Հեմոդինամիկայի հիմնական ցուցանիշներ: Արյան ճնշում, նրա մեծությունը բնութագրող գործոններ, արժեքը անոթային համակարգի տարբեր բաժիններում: Արյան ճնշման որոշման եղանակներ: Զարկերակային անոթազարկ, նրա կլինիկո-ֆիզիոլոգիական բնութագիրը: Սֆիզմոգրամմա, նրա վերլուծությունը: Օրգանային արյան շրջանառություն: Արյան շրջանառության առանձնահատկությունները միոկարդում, ուղեղում, թոքերում և այլ օրգաններում: Օրգանային արյան շրջանառության փոփոխությունները մկանային ծանրաբեռնվածության, սննդի ընդունման, հղիության, հիպօքսիայի և այլ վիճակների ժամանակ: Արյան պահեստներ:

Միկրոշրջանառություն, նրա հիմնական բաղադրամասերի մորֆոֆունկցիոնալ բնութագրը: Միկրոշրջանառության դերը արյան և հյուսվածքների միջև հեղուկի և տարբեր նյութերի փոխանակության մեխանիզմներում:

Ավշագոյացում և նրա կարգավորման մեխանիզմները:

Շնչառության ֆիզիոլոգիա. Շնչառության դերը օրգանիզմի համար: Շնչառության պրոցեսի հիմնական փուլերը: Շնչառական ուղիների ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Արտաքին շնչառություն: Ներշնչման և արտաշնչման մեխանիզմները: Ճնշումը պլևրալ ճեղքում, նրա նշանակությունը և փոփոխությունները ներշնչման և արտաշնչման ժամանակ: Թոքերի և կրծքավանդակի առածական հատկություններ:

Շնչառական ծավալներ: Սպիրոմետրիա, սպիրոգրաֆիա:

Ներշնչվող, արտաշնչվող և ավելոյալին օդերի կազմը անատոմիական և ֆիզիոլոգիական մեռյալ տարածություններում: Ավելոյար օդի կազմի հարաբերական կայունությունը:

Գազափոխանակությունը թոքերում: Գազերի (O^2 –ի և CO^2 -ի) պարցիալ ճնշումը ավելոյար օդում: Թոքային թաղանթի հատկությունները: Թոքերի դիֆուզիոն ունակություն: Գազերի լուծելիությունը և լարվածությունը արյան մեջ: Գազերի (O^2 –ի և CO^2 -ի) փոխադրումը արյան միջոցով: Օքսիհեմոգլոբինի դիսոցման կորը, նրա վրա ազդող գործոնները: O^2 –ի և CO^2 -ի պարունակությունը զարկերակային և երակային արյան մեջ: Արյան թթվածնային տարողություն: Կարբեմոգլոբինի և բիկարբոնատների առաջացումը: Կարբոանհիդրազայի դերը: Գազափոխանակությունը արյան և հյուսվածքների միջև:

Շնչառության կարգավորում: ԿՆՀ-ի տարբեր բաժիններում տեղակայված շնչառական կենտրոններ, նրանց կորիզային խմբեր: Շնչահսկիչ կենտրոն: Շնչառության կարգավորման նյարդահումորալ մեխանիզմներ: Կենտրոնական և ծայրամասային քեմոռեցեպտորներ, նրանց դերը ներշնչման կարգավորման պրոցեսում: Շնչառական ուղիների մեխանո-

ընկալիչներ, նրանց նշանակությունը շնչառության հաճախության և խորության ինքնակարգավորման մեջ: Շնչառության պայմանական ռեֆլեկտոր և կամայական կարգավորում:

Շնչառական պաշտպանական ռեֆլեքսներ: Շնչառությունը ֆիզիկական աշխատանքի, բարձր և ցածր մթնոլորտային ճնշման պայմաններում:

Մարսողություն. Սննդային մոտիվացիա: Քաղցի և հագեցման ֆիզիոլոգիական հիմունքները: Հասկացություն սննդային կենտրոնի մասին: Արյան մեջ սննդանյութերի հաստատուն մակարդակը պահպանող ֆունկցիոնալ համակարգ: Մարսողական համակարգ, նրա ֆունկցիաները: Մարսողության տեսակները: Մարսողության կարգավորման հիմնական սկզբունքները և մեխանիզմները: Մարսողական ապարատի ֆունկցիաների ուսումնասիրության եղանակներ:

Մարսողությունը բերանի խոռոչում: Բերանի խոռոչի լորձաթաղանթի ռեցեպտորների դերը ստամոքս-աղիքային տրակտի հյութազատիչ և շարժական ֆունկցիաների կարգավորման մեջ: Թքի կազմը, հատկությունները, նշանակությունը, քանակը: Թքարտադրության կարգավորման մեխանիզմները: Ծամում, սննդի տեսակից կախված առանձնահատկությունները: Կլման ակտ, փուլերը, կարգավորումը: Մարսողությունը ստամոքսում: Ստամոքսի հյութազատիչ ֆունկցիան: Ստամոքսահյութի կազմը և հատկությունները: Աղաթթվի դերը մարսողության պրոցեսում: Ստամոքսի գեղձերի գործունեության կարգավորումը: Ստամոքսի հյութազատման հարմարողական փոփոխությունները: Ստամոքսի շարժական և էվակուացիոն գործունեությունը, նրա կարգավորումը: Մարսողությունը բարակ աղիքներում: 12-մատնյա աղիք: Ենթաստամոքսային գեղձի դերը մարսողության մեջ: Ենթաստամոքսահյութի կազմը և հատկությունները, նրա արտադրության կարգավորումը: Լյարդի դերը մարսողության պրոցեսում: Լեղագոյացում և լեղազատում: Լեղու կազմը, հատկությունները և նշանակությունը: Լեղամզման կարգավորումը:

Աղիքային հյութազատություն: Բարակ աղիքի հյութի կազմը և հատկությունները, նրա արտադրության կարգավորումը: Սննդանյութերի խոռոչային և թաղանթային հիդրոլիզ: Բարակ աղիքների շարժական գործունեությունը, նրա կարգավորումը:

Մարսողությունը հաստ աղիքում: Աղիքային միկրոֆլորայի նշանակությունը: Հաստ աղիքի շարժական ֆունկցիան: Կղազատում, կարգավորումը:

Մարսողական ապարատի պարբերական գործունեություն, նրա նշանակությունը: Ներծծում: Նյութերի ներծծումը և նրա մեխանիզմները մարսողական տրակտի տարբեր բաժիններում: Ներծծման կարգավորում:

Արտազատության համակարգ. Արտազատիչ օրգաններ (երիկամներ, մաշկ, թոքեր, մարսողական ապարատ), նրանց մասնակցությունը օրգանիզմի հոմեոստազի պահպանմանը: Երիկամ: Երիկամների դերը: Ազոտային բալանսի, օսմոտիկ ճնշման, արյան pH-ի, արյան ծավալի և այլն-ի պահպանման մեջ: Երիկամների ոչ արտազատիչ ֆունկցիաներ:

Նեֆրոնը որպես երիկամի մորֆոֆունկցիոնալ միավոր: Երիկամների արյունամատակարարումը, նրա առանձնահատկությունները: Միզագոյացման հիմնական պրոցեսները (կծիկային քամում, խողովակային հետներծծում և սեկրեցիա): Կծիկային ֆիլտրացիայի մեխանիզմը, շարժիչ ուժը, առաջնային մեզի կազմը և քանակը: Խողովակային հետներծծում, տեսակները, մեխանիզմները, կարգավորումը: Շրջադարձա-հակընթացային համակարգ: Սեկրետոր պրոցեսները խողովակներում: Վերջնական մեզ, նրա կազմը: Միզագոյացման նյարդա-հումորալ կարգավորումը: Միզարձակում, նրա կարգավորումը: Երիկամների ֆունկցիաների ուսումնասիրության կլինիկո-ֆիզիոլոգիական մեթոդներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Физиология человека. Учебник для студентов медицинских институтов. Под редакцией Косицкого Г.И.- М.: “Медицина”, 1985.

2. Основы физиологии человека, под ред. Б.И. Ткаченко, в 2-х томах. Санкт-Петербург, 1994.
3. Физиология человека. Учебник, В 3-х томах. Пер. с английского. Под ред. Р. Шмидта и Г. Тевса. М.: Мир, 1995.
4. Մարդու ֆիզիոլոգիայի հիմունքներ: Դասագիրք բարձր. ուս. հաստ. համար. Դ. Ն. Խուրդավերդյանի և Վ. Բ. Ֆանարջյանի խմբ., Ե., 1998
5. Агаджанян Н.А. и др. Физиология человека, СПб: Сотис, 1998
6. Фундаментальная и клиническая физиология/ под ред. А.Г. Камкина, А.А. Каменского. М.: Издательский центр “Академия”, 2004.
7. Гайтон А.К. Д.Э. Холл.Медицинская физиология, М. Логосфера, 2008.
8. Нормальная физиология, под ред. В.М. Смирнова. М.: Академия, 2010.

ԺԴ.00.11 - ԲԺՇԿԱԿԱՆ ՌԱԴԻՈԼՈԳԻԱ

Բժշկական ռադիոլոգիայի հիմունքներ. Բժշկական ռադիոլոգիան, որպես գիտական և կլինիկական առարկա: Հայրենական և արտասահմանյան բժշկական ռադիոլոգիայի զարգացման հիմնական փուլերը: Բժշկական ռադիոլոգիայի ոլորտում գլխավոր միջազգային և հայրենական գիտական միությունները: Արտասահմանում գլխավոր գիտահետազոտական ռադիոլոգիական կենտրոնները: Բժշկական ռադիոլոգիայի պարբերական և բիբլիոգրաֆիկ հրատարակումներ, տեղեկատուներ: Արտասահմանյան ռադիոլոգիական գլխավոր ամսագրեր և ռեֆերատիվ հրատարակումներ: Աշխատանք բիբլիոգրաֆիկ հրատարակումների հետ: Ինտերնետի համակարգով բիբլիոգրաֆիկ, գիտական և գովազդային տեղեկատվության փնտրում:

Կլինիկական ռադիացիոն կենսաբանություն. Սուր ճառագայթային հիվանդություն – ընդհանուր բնութագիրը, ախտանշանները, ընթացքի փուլերը, կլինիկական դրսևորումները: Բժշկական աշխատողներին գործողությունները ռադիացիոն վթարների, զանգվածային ռադիացիոն և զուգակցված ախտահարումների ժամանակ: Քրոնիկական ճառագայթային

հիվանդություն – կանխարգելումը, կլինիկական դրսևորումները: Ճառագայթման գենետիկ հետեվանքները: Հարաբերական փոքր չափաբաժինների կենսաբանական ազդեցությունները: Գերծայնի մագնիսական դաշտերի կենսաբանական ազդեցությունը:

Ինֆորմատիկայի հիմունքները: Ռադիոլոգիայում հաշվիչ համակարգերը. Ինֆորմատիկան, որպես գիտական գիտելիքների ոլորտ: Ճառագայթային ախտորոշման մեջ հաշվողական սարքերի կիրառումը; բժշկական պատկերի ստացումը: Տվյալների հավաքման, պահպանման և վերլուծության ավտոմատացում: Տվյալների տեղեկատվական բազայի ստեղծում: Հեռուստառադիոլոգիայի կազմակերպում և սարքերով հագեցում: Դրա դերը անհետաձգելի ախտորոշման և փորձաքննության գործընթացում: Հեռուստակոնսուլտացիաներ, հեռուստաժողովներ: Ուսումնական գործընթացում հեռուստառադիոլոգիայի օգտագործումը: Ինտերնետ համացանցի կառուցման սկզբունքները: Ինտերնետի տեղեկատվական պահուստների հայթհայթում: Ինտերնետը՝ համաշխարհային համակարգչային ցանցերի միություն: Ճառագայթային ախտորոշման ծրագրային ապահովում:

Դոզիմետրիայի հիմունքները. Դոզիմետրիկ մեծությունները և միավորները: Դոզայի հզորությունը և չափման միավորները: Անձնակազմի և հիվանդների հակառադիացիոն պաշտպանման միջոցների նմանակառուրան: Սարքերի օգնությամբ հիվանդների ճառագայթման մակարդակի գնահատումը: Անձնակազմի և հիվանդների ճառագայթային ծանրաբեռման հաշվառում:

Ճառագայթային ախտորոշման եղանակներ և միջոցներ:

Ռենտգենաբանական եղանակ. Ընդհանուր տեղեկություններ բժշկական ռենտգենաբանական սարքերի մասին: Բժշկական ռենտգենաբանական սարքերի դասակարգումը՝ սարքեր ախտորոշման և բուժման, ստացիոնար ռենտգեն ախտորոշիչ համակարգեր, շարժական, քանդվող և տեղափոխվող սարքեր, հատուկ նշանակության սարքեր՝ վնասվածքաբանության,

վիրաբուժության, անգիոգրաֆիայի, ատամնաբուժության, ուռուլոգիայի, մամմոլոգիայի, նյարդաախտորոշման համար: Տոմոգրաֆիկ /շերտավոր/ և ֆյուորոգրաֆիկ սարքեր: Ռենտգենյան հետազոտման ցուցումներ և հակացուցումներ: Ռենտգենյան հետազոտման նշանակման կարգը: Կոնտրաստ նյութերի ձևերը: Հիվանդի տարիքի և քաշի հետ կապված կոնտրաստ նյութի տեսակի և չափաբաժնի որոշումը: Կոնտրաստ նյութի ընդունումից /ներարկումից/ առաջ հիվանդին բացատրումը /պատրաստումը, դիետան, դեղամիջոցները/: Կոնտրաստ նյութի ներարկման ուղիները: Կոնտրաստ նյութերի ներարկումից հետո ռեակցիան և բարդությունները: Տեղային բարդությունները՝ դեղամիջոցի էքստրավազացիա, ֆլեբիտ, թրոմբոէմբոլիա: Տեղային ռեակցիաների և բարդությունների բուժումը: Ընդհանուր ռեակցիաներ՝ արյան հոսք դեպի գլուխ, մարմնում ջերմության զգացում, սրտխառնոց, ցան, կեղծ կրուպ: Ալլերգիկ և տոքսիկ բնույթի ծանր բարդություններ:

Ռենտգենագրաֆիա, դրա ձևերը /ժապավենածև, թվային, նկարի ուղղակի մեծացումով, հեռուստառենտգենագրաֆիա, էլեկտրառենտգենագրաֆիա/: Տեսարանային և նշանակետային նկարներ: Ռենտգենագրաֆիկ թվային վերափոխիչներ: Ռենտգենագրաֆիայի ժամանակ հիվանդների և անձնակազմի ռադիացիոն պաշտպանությունը: Ռենտգենագրաֆիայի ժամանակ դոզայի ծանրաբեռնումները: Ֆյուրոգրաֆիան, որպես զանգվածային ստուգիչ հետազոտման եղանակ: Թվային ֆյուրոգրաֆիա:

Արյունատար և ավշային անոթների ռենտգենյան հետազոտում /անգիոգրաֆիա/: Անոթի պունկցիայի կամ կատետերիզացիայի միջոցով արտերիոգրաֆիա: Անոթի պունկցիայի կամ կատետերիզացիայի միջոցով վենոգրաֆիա:

Ռենտգենյան համակարգչային շերտագրում /ՀՇ/. Համակարգչային շերտագրման /ՀՇ/ պատմությունը և այժմյան վիճակը ախտորոշման մեջ: ՀՇ նկարի ձևավորման սկզբունքը: ՀՇ ժամանակ ուղղակի և անուղղակի

կոնտրաստավորման եղանակը: Կոնտրաստային նյութերի կիրառման ցուցումները և հակացուցումները; չափաբժինները և ներարկման եղանակները: Հատուկ եղանակներ՝ դինամիկ ՀՇ, ՀՇ-անգիոգրաֆիա, ՀՇ-ուռոգրաֆիա, ՀՇ-խոլանգիոգրաֆիա: Համակարգչային տոմոգրամների ռենտգենաանատոմիկ և դենսիտոմետրիկ վերլուծություն:

Մագնիսառեզոնանսային շերտագրում /ՄՌՇ/. Մագնիսառեզոնանսային ինտրոսկոպիայի ֆիզիկական հիմքերը և տեխնիկան: Կոնտրաստավորումը ՄՌՇ-ն ժամանակ: Ցուցումները և հակացուցումները: Կոնտրաստային նյութերի ձևերը, դրանց դոզավորումը և ներարկման եղանակները: Կոնտրաստային նյութերի ներարկման բարդությունների կանխարգելումը և պայքարի ձևերը դրանց դեմ: Հատուկ եղանակները: Դինամիկ ՄՌՇ, ՄՌ-անգիոգրաֆիա, ՄՌ-սիւլոգրաֆիա, ՄՌ-լիմֆոգրաֆիա, կրծքային ծորանի ՄՌՇ, ՄՌ-ուռոլոգիա, ՄՌ-խոլանգիոպանկրեատոգրաֆիա:

Հիվանդի ինստրուկտաժ և պատրաստում: Հիվանդի ճիշտ դիրքում տեղադրում: ՄՌՇ-ն նկատմամբ հատուկ հակացուցումներ: Հիվանդների պրեմեդիկացիա: ՄՌՇ-ն կաբինետում անձնակազմի և հիվանդների անվտանգության միջոցառումներ: Անհետաձգելի միջոցառումներ /մագնիսի մարում/, հիվանդի էվակուացում:

Գերձայնային եղանակ. Գերձայնի ֆիզիկական հիմունքները: Գերձայնային ալիքների բնութագիրը, նրանց հատկությունները /թափանցելու հնարավորությունը, անդրադարձումը, կլանումը, ցրումը/: Գերձայնային ճառագայթման ինտենսիվությունը: Գերձայնային տատանումների հաճախականությունը, ալիքի փուլը և երկարությունը, գերձայնային տատանումների տեղաբաշխումը՝ կախված հաճախականությունից: Գերձայնի կենսաբանական ազդեցությունը: Գերձայնային հետազոտման ցուցումները: Գերձայնային պատկերի ձևավորումը: Էխոնեգատիվություն, էխոպոզիտիվություն: Գերձայնային ճառագայթի անկման կրիտիկական անկյան հասկացություն: Ստացվող տեղեկատվության կախվածությունը գերձայնային տատանման

հաճախականությունից: Գերծայնային հետազոտման մեթոդիկան՝ միաչափ էխոգրաֆիա, երկչափ էխոգրաֆիա, դոպլերոգրաֆիա, գունավոր դոպլերոգրաֆիա, դոպլեքս սոնոգրաֆիա, եռաչափ էխոկարդիոգրաֆիա, գերծայնային անգիոգրաֆիա, գերծայնային հետազոտում էներգետիկ դոպլերի և նատիվ հյուսվածքային հարմոնիկայի եղանակով: Էլաստոգրաֆիա, ներանոթային գերծայնային հետազոտություն: Գերծայնային հետազոտման կոնտրաստ նյութերը: Գերծայնային հետազոտման եղանակների հնարավորությունները օրգանների մորֆոլոգիայի և ֆունկցիայի հետազոտման մեջ: Գերծայնային հետազոտման դերը երեխաների և հղիների հետազոտման ժամանակ: Դիսպանսերային խմբերի հետազոտման ժամանակ գերծայնային եղանակի նշանակությունը: Ինտերվենցիոն միջամտությունները գերծայնի հսկողության տակ:

Ռադիոնուկլիդ եղանակ. Ռադիոնուկլիդային ախտորոշիչ համակարգ՝ ճառագայթման աղբյուրը, հետազոտման օբյեկտը, ճառագայթման ընդունիչները: Ռադիոֆարմ պրեպարատները in vivo հետազոտման համար, ստացման եղանակները, հիմնական պրեպարատների բնութագիրը, նրանց ընտրությունը: Ռեագենտներ in vitro հետազոտման համար:

Ռադիոնուկլիդային հետազոտման ցուցումները և հակացուցումները: Հետազոտման ընտրությունը կախված նպատակներից /կառուցվածքային կամ ֆունկցիոնալ վիճակների գնահատում/: In vivo հետազոտման եղանակները՝ ռադիոմետրիա /դիստացիոն, կոնտակտային/, ռադիոգրաֆիա: Սցինտիգրաֆիա՝ ստատիկ, դինամիկ: Էմիսիոն համակարգչային տոմոգրաֆիա՝ միաֆոտոնային, պոզիտրոնային: Նեյտրինո – ակտիվացիոն վերլուծում: Ռադիոնուկլիդային հետազոտման արդյունքների վերլուծություն: Ռադիոֆարմացեպտիկ պրեպարատների հետ աշխատանքի ռադիացիոն անվտանգության օրենքները, դրանց պահպանումը և ստուգումը: Անձնակազմի դոզային ծանրաբեռնումները ռադիոնուկլիդ հետազոտման ժամանակ: Հիվանդների ճառագայթման ռեգլամենտացում:

Ինտերվենցիոն ճառագայթային միջամտություններ. Էնդովազալ ռենտգենյան, գերձայնային ՀՇ, ՄՌՇ միջամտություններ: Ռենտգեն-էնդովասկոպար դիլատացիա և ռեկանալիզացիա, պրոթեզավորում, ֆիլտրերի և ստենտերի տեղադրում: Ռենտգեն – էնդովասկոպար օկյուզիա /մեխանիկական, ֆարմակոլոգիական/: Գերձայնային էնդովասկոպար միջամտություններ: Էքստրավազալ ճառագայթային միջամտություններ՝ էնդոբրոնխիալ, էնդոէզոֆագեալ, էնդոգաստրալ, էնդոբիլիար, էնդոուռինալ: Միջամտություններ արգանդի փողերի վրա:

Գերձայնի, ՀՇ, ՄՌՇ հսկողության տակ պունկցիաներ, բիոպսիաներ և բուժական միջամտություններ:

Վնասվածքների և հիվանդությունների ճառագայթային ախտորոշում.

Հիվանդի ճառագայթային հետազոտման համակարգ՝ անամնեզի, կլինիկական, ինստրումենտալ և լաբորատոր տվյալների գնահատում: Ճառագայթային հետազոտման պլանի մշակում, ճառագայթային հետազոտման իրականացում, ստացված տեղեկատվության տրամաբանական վերլուծություն:

Կմախքամկանային համակարգ. Ոսկրերի, հոդերի և փափուկ հյուսվածքների ճառագայթային հետազոտման եղանակները:

Ոսկրերի մորֆոմետրիա և դենսիտոմետրիա: Օստեոպենիայի և օստեոպորոզի ախտորոշումը: Համակարգային օստեոպորոզներ: Ոսկրերի կոտրվածքների և հոդախախտերի մեխանիզմները և տեսակները: Ոսկրերի, հոդերի և փափուկ հյուսվածքների ճառագայթային սեմիոտիկա: Ռենտգենաբանական պատկերում ոսկրերի կոտրվածքների սերտաճում, սերտաճման խանգարումներ /ավելորդ ոսկրային կոշտուկ, դանդաղ սերտաճում, կեղծ հոդի առաջացում/:

Կմախքամկանային համակարգի հիվանդությունների ճառագայթային սեմիոտիկա: Ինֆեկցիոն, սնկային և պարազիտար ախտահարումների ճառագայթային պատկերը: Օստեոմիելիտներ, արթրիտներ, սպոնդիլիտներ, ոսկրերի և հոդերի տուբերկուլյոզ:

Դիստրոֆիկ ախտահարումներ: Արթրոզներ, ասեպտիկ նեկրոզներ, վերակազմավորման գոտիներ, սթրես-կոտրվածքներ: Ողնաշարի դիստրոֆիկ պրոցեսներ /դիսկոզ, օստեոխոնդրոզ, սպոնդիլոզ, ֆասեթային արթրոզ, անկիլոզացնող հիպերօսթոզ/: Կմախքի փոփոխությունները էնդոկրին և արյան համակարգի հիվանդությունների ժամանակ:

Ոսկրերի, հոդերի և փափուկ հյուսվածքների ուռուցքանման գոյացությունները և բարորակ ուռուցքները: Կմախքում՝ չարորակ ուռուցքների մետաստազների ճառագայթային հայտնաբերումը և ճառագայթային պատկերը:

Սիրտ-անոթային համակարգ. Հակիրճ անատոմոֆիզիոլոգիական տվյալներ: Սիրտ-անոթային համակարգի վնասվածքների և հիվանդությունների հակիրճ կլինիկական պատկերը: Սրտի և անոթների գերձայնային, ռենտգենյան, ռադիոնուկլիդ, ՀՇ և ՄՌՇ հետազոտման եղանակները: Սրտի և անոթների ճառագայթային անատոմիա և ֆիզիոլոգիա: Սրտի և անոթների ախտահարումների ճառագայթային ախտանիշներ և համախտանիշներ: Սրտի, աորտայի, թոքային զարկերակի, կրծքավանդակի խոռոչի խոշոր երակների զարգացման արատներ:

Կարդիոմիոպատիաներ: Սրտի իշեմիկ հիվանդություն, սրտամկանի ինֆարկտ, սրտի անևրիզմա: Հիպերտոնիկ հիվանդություն: Սրտի ուռուցքներ: Պերկարդիտներ: Աորտիտ, աորտայի անևրիզմա: Հիմնական կլինիկական համախտանիշների ժամանակ սրտի, կրծքային աորտայի և թոքային զարկերակի հետազոտման ախտորոշիչ ծրագրեր:

Շնչառական օրգաններ: Ստոծանի: Միջնորմ - Հետազոտման ճառագայթային ինստրումենտալ եղանակները՝ ռենտգենոգրաֆիա, ֆլյուորոգրաֆիա, ռենտգենոսկոպիա, ՀՇ և ՄՌՇ, սոնոգրաֆիա, անգիոպլանոնոգրաֆիա, բրոնխիալ արտերիոգրաֆիա, սցինտիգրաֆիա և այլն:

Բրոնխիալ անցանելիություն, թոքերում արյան շրջանառության և հեղուկի փոխանակման խանգարումների ճառագայթային պատկերը: Թոքային հիպերթենզիա: Թոքային զարկերակի և նրա ճյուղերի թրոմբոէմբոլիա:

Սցիտնիգրաֆիայի, ՀՇ – անգիոգրաֆիայի ՄՌՇ դերը դրա ախտորոշման մեջ: Թոքի ինֆարկտ: Թոքերի այտուց: Կրծքավանդակի, թոքերի, պլևրայի, ստոծանու վնասվածքներ: Ստոծանու ճողվածք: Բրոնխիալ ասթմա: Խրոնիկ բրոնխիտներ: Թոքերի երկրորդային էմֆիզեմա: Բրոնխոէկտատիկ հիվանդություն: Սուր թոքային դիստրես – համախտանիշ: Սուր թոքաբորբեր /բակտերիալ, վիրուսային, միկոպլազմային, հետվիրահատական, կանգային/: Թոքերի սնկային ախտահարումներ: Թոքերի աբսցես և գանգրենա, խրոնիկական թոքային թարախակալումներ, թոքամզի էմպիեմա: Թոքերի ախտահարումները համակարգային հիվանդությունների և արյան հիվանդությունների ժամանակ: Թոքերի ինտերստիցիալ հիվանդություններ: Պնևմոկոնիոզներ: Ոչ սպեցիֆիկ պնևմոսկլերոզներ, խրոնիկական թոքաբորբեր: Թոքերի սարկոիդոզ: Հիստիոցիտոզ X: Թոքային տուբերկուլյոզի ճառագայթային ախտորոշումը: Պլևրիտներ: Թոքերի բարորակ ուռուցքներ: Թոքերի, պլևրայի և ստոծանու չարորակ առաջնային և երկրորդային /մետաստատիկ/ ուռուցքներ: Մեդիաստենիտ: Միջնորմում ծավալային գոյացություններ /ուրցագեղձի հիպերպլազիա, թիմոմաներ, ներկրծքային խալիպ/:

Մարսոդական համակարգ. Հետազոտման ճառագայթային ինստրումենտալ եղանակները՝ /ռենտգենաբանական, ուլտրաձայնային, ռադիոնուկլիդ, ՀՇ և ՄՌՇ, էնդոսկոպիա/: Վիրտուալ էզոֆագոսկոպիա, գատրոսկոպիա, կոլոնոսկոպիա:

Ըմպան և կերակրափող. Ըմպանի և կերակրափողի ֆունկցիոնալ խանգարումների ճառագայթային ախտորոշում, դիսֆագիաներ: Էզոֆագիտներ: Ռեֆլյուքս-էզոֆագիտ: Ստոծանու կերակրափողի անցքի ճողվածք: Կերակրափողի այրվածք: Ըմպանի և կերակրափողի օտար մարմիններ: Հետըմպանային աբսցես: Կերակրափողի թափածակում: Կերակրափողի երակների վարիկոզ լայնացում: Կերակրափողի ախալա-

զիս: Բարորակ և չարորակ ուռուցքներ: Վիրահատված կերակրափողը ռենտգենյան պատկերում:

Ստամոքս և 12-մատնյա աղի. Վնասվածքներ, օտար մարմիններ: Ստամոքսի և 12-մատնյա աղիքի ֆունկցիոնալ խանգարումներ: Սուր գաստրիտ: Խրոնիկական գաստրիտներ: Էրոզիա: Խոցային հիվանդություն և դրա բարդությունները: Մենետրիեյի հիվանդություն: Դուոդենիտ: Լիմֆոիդ հիպերպլազիա: Ստամոքսի բեզոարներ: Պոլիպներ և պոլիպոզ: Բարորակ և չարորակ ուռուցքներ: Վիրահատական միջամտություններից հետո ստամոքսի և 12-մատնյա աղիքի ճառագայթային պատկերը: Հետվիրահատական բարդությունների և համախտանիշների ախտորոշումը:

Բարակ աղի. Զարգացման արատներ /ատրեզիա և ստենոզ, Մեկկելի դիվերտիկուլ, երկատում, դիվերտիկուլոզ/: Մալաբսորբցիա և իմունոդեֆիցիտ /ցելիակիա, սպրու, Ուիպլի հիվանդություն, լիմֆանոգեկտազիաներ, սննդային ֆերմենտների պակաս/: Կրոնի հիվանդություն: Անոթային խանգարումներ /իշեմիա, վենոզ թրոմբոզ/: Ինֆեկցիոն էնտերիտներ /տուբերկուլոզ, իերսինյոզ, սալմոնելյոզ, կամպիլոբակտեր/: Խոցային էնտերիտ: Լիմֆոիդ հիպերպլազիա: Կաուսային հիվանդություն: Պոլիպոզ: Բարորակ և չարորակ ուռուցքներ: Բարակ աղու մեխանիկական և դինամիկ անանցելիություն: Աղիքային ճողվածքներ: Բարակ աղու վիրահատություններից հետո ճառագայթային պատկերը:

Հաստ աղի. Զարգացման արատներ /ստենոզներ և ատրեզիա, երկատում, միկրոկոլոն, Գիրշարունգի հիվանդություն, անոռեկտալ անոմալիաներ/: Դիվերտիկուլոզ, դիվերտիկուլիտ: Ինֆեկցիոն կոլիտներ, խոցային կոլիտ, գրանուլեմատոզ կոլիտ: Տուբերկուլոզ: Սուր և խրոնիկ ապենդիցիտ, բարդությունները: Հաստ աղու դիսկինեզիա, փորկապություն: Անոռեկտալ էվակուացիայի խանգարումներ: Պոլիպներ և պոլիպոզ: Հաստ աղու վիրատուալ կոլոնոսկոպիա: Հաստ աղու մեխանիկական և դինամիկ անանցելիություն: Ստամոքս-աղիքային արյունահոսություններ: Մեզենտերիալ

արյան շրջանառության խանգարումներ: Բարորակ և չարորակ ուռուցքներ: Հաստ աղու վիրահատություններից հետո ճառագայթային պատկերը:

Լյարդ և լեղուղիներ. Լյարդի և լեղուղիների զարգացման արատներ: Լյարդի դիֆուզ ախտահարումներ /ճարպային հեպատոզ, հեպատիտներ, ցիռոզներ, արյան հիվանդություններից առաջացած փոփոխություններ, Վիլսոնի հիվանդություն, հեմոխրոմատոզի ժամանակ փոփոխություններ/: Լյարդի օջախային ախտահարումներ /կիստաներ, էխինակոկ, ավվետկոկ, արքցես, ֆոկալ, հանգույցային հիպերպլազիա, հեմանգիոմա, ադենոմա, հեպատոմա, խոլանգիոկարցինոմա, չարորակ ուռուցքների մետաստազներ/: Պիկի պսևդոցիռոզ: Բադ-Խիարիի համախտանիշի ճառագայթային պատկերը: Պորտալ հիպերտենզիայի ճառագայթային պատկերը:

Լեղաքարային հիվանդություն: Հիպերպլաստիկ խոլեցիստոզներ /խոլեստերոզ, ադենոմիո-մատոզ/: Սուր խոլեցիստիտներ: Խրոնիկական խոլեցիստիտներ: Պերիխոլեցիստիտ: Լեղապարկի ջրգողություն: Խոլանգիտներ: Լեղապարկի և լեղուղիների բարորակ և չարորակ ուռուցքներ: Դուոդենալ մեծ պտկիկի քաղցկեղ: Հետխոլեցիստէկտոմիկ համախտանիշ: ՄՌ - պանկրեատոխոլանգիոգրաֆիա: Էնդոսկոպիկ ռետրոգրադ պանկրեատոխոլանգիոգրաֆիա:

Ենթաստամոքսային գեղձ. Ճառագայթային հետազոտման եղանակները: Զարգացման արատներ /հիպոպլազիա, էկտոպիկ գեղձ և այլն/: Սուր պանկրեատիտներ: Ենթաստամոքսային գեղձի արքցես: Խրոնիկ պանկրեատիտներ, կեղծ կիստաներ: Քարեր և կալցիֆիկատներ: Բարորակ և չարորակ ուռուցքներ: Շաքարային դիաբետի, ճարպակալման, Զոլինգեր-Էլիսոնի համախտանիշներ և այլն:

Փայծախ. Զարգացման արատներ /ասպլենիա, պոլիսպլենիա, ավելորդ փայծախ, թափառող փայծախ/: Փայծախի դիֆուզ ախտահարումներ /արյան, լյարդի և այլ հիվանդությունների ժամանակ/: Օջախային

ախտահարումներ /աբսցես, տուբերկուլյոզ, էխինոկոկ, ինֆարկտ, ուռուցք/:
Փայծախային զարկերակի անևրիզմա:

Արտաօրգանային ախտահարումներ. Դիֆուզ և սահմանափակ պերիտոնիտ: Արտաօրգանային աբսցեսներ /ենթաստոծանային, ենթալյարդային, միջաղիքային, կոնքային/ : Հետորովայնամզային ֆիբրոզ: Արտաօրգանային ուռուցքներ /որովայնի պատի, որովայնամզի, մեջընդերքի/: Որովայնի խոռոչի և հետորովայնամզային տարածության լիմֆատիկ հանգույցների ախտահարման ճառագայթային ախտորոշումը:

Միզասեռական համակարգ. Արտազատական օրգանների ճառագայթային և գործիքային հետազոտման եղանակներ: Վնասվածքներ, օտար մարմիններ: Հետորովայնամզային արյունազեղում: Երիկամների, միզածորանների, միզապարկի և միզուկի զարգացման արատներ: Բորբոքային ախտահարումներ /գլոմերուլոնեֆրիտ, պիելոնեֆրիտ, աբսցես, կարբունկուլ, տուբերկուլյոզ, պիոնեֆրոզ, պարանեֆրիտ/: Պիելոէկտազիա, հիդրոնեֆրոզ: Նեֆրոսկլերոզ: Երիկամաքարային հիվանդություն: Օբստրուկտիվ ուրոպատիա: <<Համր>> երիկամ: Միզապարկ-միզախորանային ռեֆլյուքս: Երիկամների կիստաներ: Երիկամների պոլիկիստոզ: Նեֆրոկալցինոզ: Երիկամների, միզածորանների, միզապարկի բարորակ և չարորակ ուռուցքներ: Նեֆրոզեն զարկերակային հիպերտենզիա: Երիկամային զարկերակի ստենոզ: Երիկամային զարկերակի և նրա ճյուղերի էմբոլիա և թրոմբոզ: Երիկամի ինֆարկտ և իշեմիա: Երիկամային երակի թրոմբոզ:

Պրոստատիտներ: Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիա: Աբսցես: Շագանակագեղձի կիստաներ և ուռուցքներ: Էպիդիդեմիտ: Խրոնիկական էպիդիդեմիտ, վարիկոցելե, հիդրոցելե, սպերմատոցելե: Չիժած ամորձի: Ամորձու ուռուցք: Իմպոտենցիայի ճառագայթային հետազոտում:

Մենստրուալ-օվարիալ ցիկլի խանգարումների ճառագայթային հետազոտում: Արգանդի, հավելումների և արտաքին սեռական օրգանների զարգացման արատներ:

Բորբոքային ախտահարումների ճառագայթային ախտորոշում /էնդոմետրիոզ, ադենոմիոզ, էնդոմետրիոմի սուր վարակ, պիոսալպինգս, խողովակ-օվարիալ արքցես/: Հեղուկի ներարգանդային կուտակումներ: Արգանդի ուռուցքներ /լեյոմիոմա, էնդոմետրիալ պոլիպ, արգանդի մարմնի, վզիկի քաղցկեղ, կարցինոսարկոմա, լիմֆոմա/: Ձվարանի կիստաներ: Սկլերոկիստոզ ձվարանների համախտանիշ: Ձվարանի ուռուցքներ: Պտղի և պլացենտայի արատներ: Տարբեր փուլերում հղիության ընդհատման պատկերը: Էկտոպիկ հղիություն:

Կրծքագեղձեր. Կանանց սկրինինգային հետազոտությունների նշանակությունը և դրանց կազմակերպումը: Ճառագայթային հետազոտման եղանակները՝ տեսարանային և նշանակակետային նկարներ /մամոգրաֆիա/, կոմպրեսիայով նկարներ, կիստո- և պնևմոկիստոգրաֆիա, գալակտոգրաֆիա /դուկտոգրաֆիա/, սոնոգրաֆիա, դոպլերոգրաֆիա, սցինտիգրաֆիա, ՀՇ, ՄՌՇ: Գերծայնի հսկման տակ պունկցիոն բիոպսիա: Կրծքագեղձի բորբոքային ախտահարումներ /մաստիտներ, արքցես, տուբերկուլյոզ, ակտինոմիկոզ/: Պարզ մեծ կիստաներ, ադենոմաներ, ֆիբրոադենոմաներ, անգիոլիպոմաներ: Սպիներ կրծքագեղձում: Չարորակ ուռուցքների ախտորոշումը: Կրծքագեղձի հետվիրահատական փոփոխությունները: Պլաստիկ վիրահատություններից հետո ճառագայթային պատկերը: Տղամարդկանց մոտ կրծքագեղձի հիվանդությունների ճառագայթային ախտորոշումը:

Նյարդային համակարգ. Գանգի և ողնաշարի վնասվածքներ: Գանգի և ողնաշարի զարգացման արատներ: Ողնաշարի բորբոքային ախտահարումներ: Գանգի և ողնաշարի ուռուցքներ: Գանգի և ողնաշարի փոփոխությունները տարբեր հիվանդությունների ժամանակ /ֆիբրոզ օստեոդիստրոֆիա, ռետիկուլոհիստոցիտոզներ, ոչ ինֆեկցիոն գրանուլեմաներ, արյան և էնդոկրին համակարգի հիվանդություններ, վիտամինային հաշվեկշռի խանգարումներ/:

Գլխուղեղի և ողնուղեղի ճառագայթային հետազոտման եղանակները: Գլխուղեղի և ողնուղեղի վնասվածքներ: Գլխուղեղի և ողնուղեղի զարգացման արատներ: Գլխուղեղի ուռուցքներ: Թուրքական թամբի շրջանի ուռուցքներ, հիպոֆիզի միկրոադենոմաների որոշումը:

Գլխուղեղի անոթային ախտահարումներ: Գլխուղեղում լրկալ հեմոդինամիկայի ֆունկցիոնալ ՄՌ – ախտորոշում: Գլխուղեղում ռեցեսսոր ապարատի և փոխանակության գործընթացների գնահատման մեջ պոզիտրոնային էմիսիոն շերտագրության դերը: Ուղեղանյութի մեջ և թաղանթերի տակ արյունազեղումներ: Գլխուղեղի անոթների թրոմբոէմբոլիա: Ուղեղի ինֆարկտ: Ուղեղային անոթների անևրիզմաներ:

Գլխուղեղի ինֆեկցիոն ախտահարումներ /մենինգիտ, էնցեֆալիտ, ուղեղի աբսցես, պարազիտար հիվանդություններ՝տոքսոպլազմոզ, ամեոբիազ, ցիստիցերկոզ, էխինակոկոզ/: Գլխուղեղի սպիտակ նյութի հիվանդություններ /ցրված սկլերոզ, դեմիելինիզացիա, Պարկինսոնի հիվանդություն, Վիլսոնի հիվանդություն/:

Վերտեբրոգեն ցավային համախտանիշ: Ողնուղեղի և դրա թաղանթների, նյարդային արմատիկների և գանգլիաների բորբոքային դիստրոֆիկ և ուռուցքային ախտահարումների ճառագայթային պատկերը: Արախնոիդիտի ճառագայթային պատկերը: Ողնուղեղի և թաղանթների ուռուցքների և կիստաների ճառագայթային պատկերը: Զարկերակային և երակային մալֆորմացիաներ: Միելոմենինգոցելե:

Տեսողության օրգաններ. Աչքի և ականակապիճի ճառագայթային հետազոտման եղանակները: Վնասվածքների ճառագայթային ախտորոշում: Ակնագնդում և ականակապիճում օտար մարմինների հայտնաբերման և տեղակայման եղանակները: Ակնակապիճի զարգացման արատների, աբսցեսների և պսևդոուռուցքների ճառագայթային պատկերը: Էկզոֆթալմ, տարբերակիչ ախտորոշումը: Նեյրոֆիբրոմատոզի ժամանակ ախտահարումները: Աչքի և ականակապիճի ուռուցքներ:

Քիթ, կոկորդ, ականջ. Քունքոսկրի, քթի, քթըմպանի, քթի հավելյալ ծոցերի, ըմպանի ճառագայթային հետազոտման եղանակները: Օրգանների վնասվածքների և օտար մարմինների ճառագայթային ախտորոշում: Զարգացման արատներ: Սուր օտիտ, սուր մաստոիդիտ: Խրոնիկական օտիտ: Օտոսկլերոզ: Վիրահատված ականջ: Քթի և քթըմպանի բարորակ և չարորակ ուռուցքներ: Քթըմպանի ադենոիդներ: Սուր սինուսիտներ: Խրոնիկական սինուսիտներ: Ծոցերի կիստաներ: Հավելյալ ծոցերի շրջանների բարորակ և չարորակ ուռուցքներ: Ըմպանի ախտահարումներ:

Դիմաձևոտային շրջան. Դիմաձևոտային շրջանի ճառագայթային հետազոտման եղանակները: Դիմաձևոտային շրջանի վնասվածքներ և օտար մարմիններ, հոդախախտեր և ատամների կոտրվածքներ: Դիմաձևոտային շրջանի բնածին և ձեռքբերովի դեֆորմացիաներ, ատամների զարգացման արատներ, քիմքի ճեղվածք: Ծնոտի օստեոմիելիտի ճառագայթային ախտորոշումը: Ծնոտների կիստաների, բարորակ և չարորակ ուռուցքների ճառագայթային պատկերը: Քունքաձևոտային հոդի ախտահարումներ /արթրիտ, ռևմատոիդ արթրիտ, արթրոզ/:

Էնդոկրին համակարգի օրգաններ. Հիպոթալամուսի, հիպոֆիզի, վահանաձև և հարվահանաձև գեղձերի, մակերիկամների, սեռական գեղձերի ձևաբանության և ֆունկցիայի հետազոտման ճառագայթային եղանակները: Հիպոֆիզի, վահանաձև և հարվահանաձև գեղձերի, մակերիկամների, ձվարանների կլինիկա-ռադիոլոգիական համախտանիշներ և ախտորոշիչ ծրագրեր: Դիֆուզ խափափ, հանգուցավոր խափափ, վահանագեղձի բարորակ հանգուցավոր գոյացությունների, աուտոիմուն թիրեոիդիտի, չարորակ ուռուցքների տարբերակիչ ախտորոշումը: Հիպո- և հիպերթիրեոզի ճառագայթային հետազոտումները: Մակերիկամի ադենոմայի, կիստաների, միակողմանի և երկկողմանի հիպերպլազիայի, մակերիկամում քաղցկեղի մետաստազների ճառագայթային հետազոտման և ախտորոշման եղանակները: Իցենկո-Կուշինգի հիվանդության, հիպոգոնադիզմի,

հիպերպարաթիրեոզի, պսևդոհիպոպարաթիրեոզի, ակրոմեգալիայի, ամենոռեայի ճառագայթային հետազոտումը:

Անհետաձգելի ճառագայթային ախտորոշում. Վերակենդանացման բաժիններում, ինտենսիվ թերապիայի բաժնում կամ պալատներում, տնային պայմաններում անհետաձգելի ճառագայթային օգնություն: Հեռուստառադիոլոգիայի դերը անհետաձգելի ախտորոշման մեջ: Օրգանների և համակարգերի /գանգ, գլխուղեղ, սուր ողնաշարային վնասվածք, ուսագոտի և վերին վերջույթներ, կոնք և ստորին վերջույթներ, կրծքավանդակ և կրծքավանդակի օրգաններ, որովայնի և կոնքի օրգաններ/ վնասվածքների դեպքում անհետաձգելի ճառագայթային ախտորոշումը: Վիրահատական միջամտությունների ժամանակ կամ վաղ հետվիրահատական շրջանի ճառագայթային հետազոտումներ:

Մանկական ճառագայթային ախտորոշում. Նորածինների, տարբեր տարիքի երեխաների և պատանիների ճառագայթային ախտորոշման որակին առաջադրվող պահանջները: Տարբեր տարիքի երեխաների անշարժացում /ֆիքսում/: Սեդատիվ միջոցների օգտագործում: Մանկական տարիքում ճառագայթային հետազոտման ցուցումները և հակացուցումները: Կոնտրաստ նյութերի ընտրությունը՝ կախված հետազոտման նպատակից և հետազոտվողի տարիքից: Երեխաների համար հատուկ կոնտրաստ նյութեր:

Նորածինների մոտ կրծքավանդակի և որովայնի օրգանների ախտաբանական վիճակները: Սրտի և անոթների զարգացման արատները: Միզասեռական օրգանների զարգացման արատները: Միզուղիների վարակ: Մանկական հասակում օբստրուկտիվ ուրոպատիայի տարբերակիչ ճառագայթային ախտորոշումը: Վիլմսի ուռուցք:

Մանկական հասակում ոսկրերի և հողերի վնասվածքների առանձնահատկությունները, ոսկրերի սերտաճման առանձնահատկությունները կոտրված-

քի ժամանակ: Ազդրի բնածին հողախախտ: Կմախքի համակարգային և տեղային անոմալիաներ: Ռախիտ և ռախիտանման հիվանդություններ:

Ճառագայթային ախտորոշման կաբինետներում անհետաձգելի բժշկական օգնություն. Անհետաձգելի վիճակների դեպքում վերակենդանացման և իտենսիվ թերապիայի հիմունքները: Սրտի հանկարծակի կանգ: Սուր շնչառական անբավարարություն: Անհետաձգելի օգնություն: Վնասվածքային շոկ, վերակենդանացման միջոցառումներ: Սուր արյան կորստի դեպքում անհետաձգելի օգնություն: Այրվածքներ, անհետաձգելի օգնություն /ստերիլ վիրակապ, հակաշոկային միջոցներ/: Էլեկտրատրավմա, անհետաձգելի օգնություն:

Բրոնխիալ ասթմայի նոպա, անհետաձգելի օգնություն: Երեխաների մոտ տարբեր էթիոլոգիայի կրոպ, անհետաձգելի օգնություն: Ալերգիկ ռեակցիաների հիմնական տեսակները, բուժական միջոցառումները ալերգիկ ռեակցիաների ժամանակ: Անաֆիլակտիկ շոկ, կլինիկական դրսևորումները և անհետաձգելի օգնությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Линденбратен Л.Д., Королук И.П. Медицинская радиология. М.: Медицина, 2000.
2. Современные стандарты анализа лучевых изображений. Под ред. Т.Н. Трофимовой. Изд.-во Балтийский медицинский образовательный центр. 2016. 300с.
3. Неотложная радиология. тт.1,2. Под ред. Б.Маринчек, Р.Ф. Донделинжер. пер с англ. ВИДАР, 2009.
4. Лучевая диагностика. Голова и шея. Мёддер У., Конен М., Андерсен К., Энгельбрехт Ф., Фриц Б. МЕДпресс-информ, 2010. 304 с
5. Ланге С. Лучевая диагностика заболеваний органов грудной клетки: руководство / С. Ланге, Д. Уолш ; пер. с англ. под ред. С. К. Тернового, А. И. Шехтера. - М. : ГЭОТАР-Медиа, 2010. - 432с.
6. Национальное руководство. Лучевая диагностика болезней сердца и сосудов. Коков А.М.. Изд. Гэотар-Медиа. 2011. 688с.

7. Комплексная лучевая диагностика в уронефрологии, сост. Л.А. Тимофеева, А.В. Быкова, Т.Н. Алешина Издательство Чувашского государственного университета им. И.Н. Ульянова, 2013. 96с.
8. Лучевая диагностика заболеваний костей и суставов. Бургенер Ф.А., Кормано М., Пудас Т. Под ред. С.К. Тернового, А.И. Шехтера. ГЭОТАР-Медиа, 2011. 432 с.
9. Лучевая диагностика. Заболевания молочных желез. У. Фишер и др. МЕДпресс-информ, 2009. 256с.
10. Рентгенодиагностика в урологии. П.В.Власов, П.М. Котляров, Ю.Н. Жук. ВИДАР. 2010. 95с.
11. Практическое руководство по ультразвуковой диагностике. Общая ультразвуковая диагностика. Изд. 2-е. под ред. В.В. Митькова. ВИДАР, 2011. 720с.
12. Б.Блок. УЗИ внутренних органов. 2-е издание. МЕДпресс-информ, 2011. 256с.
13. Вискрэм Догра, Дэбра. Дж. Рубенс. Секреты ультразвуковой диагностики. МЕДпресс - информ, 2009. 564с.
14. Ультразвуковое исследование. Иллюстрированное руководство. Олти Дж., Хоуи Э., Вульстенхульм С., Вестон М. Перевод с англ. / Под ред. В.А. Сандрикова. ГЭОТАР-Медиа, 2010. 256с.
15. Сенча А.Н., Могутов М.С., Патрунов Ю.Н., Пеняева Э.И., Кашманова А.В., Сенча Е.А. Ультразвуковое исследование с использованием контрастных препаратов. ВИДАР, 2015. 144с.
16. Ма О. ДЖ., Матиэр Дж. Р., Блэйвес М.. Ультразвуковое исследование в неотложной медицине. Бином. Лаборатория знаний. 2013.
17. Ультразвуковая диагностика. Практическое решение клинических проблем. Том 1. Узи живота. Эдвард И.Блют, Кэрл Б.Бенсон, Филип У.Раллс, Мэрлин Дж.Сигел. Медицинская Литература. 176 с.
18. Буланов М.Н. Ультразвуковая гинекология. Курс лекций в 3-х томах. ВИДАР, 2011.
19. Семизоров, А. Н. Рентгенологическое и ультразвуковое исследование при заболеваниях суставов. Романов С. В. - 3-е изд., перераб. и доп. М. : Видар, 2008. 216.
20. Хофер Матиас. Компьютерная томография. Базовое руководство. М. Медицинская литература, 2008.

21. Терновой С.К., Абдураимов А.Б., Федотенков И.С. Компьютерная томография. М.: ГЭОТАР-Медиа, 2009.
22. Сергеев В.А. Рентгеновская компьютерная мультиспиральная томография сердца. ГЭОТАР-Медиа, 2009.
23. Труфанов Г. Е., Фокина В.А. Магнитно-резонансная томография. СПб, 2007.
24. *Лишманов Ю.Б., Чернов В.И. Радионуклидная диагностика для практических врачей. Практическое руководство. 2004.*

ԺԴ.00.12 - ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ

Շոկ, տեսակները. Առաջացման պատճառները և զարգացման մեխանիզմները: Ըստ էթիոլոգիայի շոկի տարբեր տեսակների պաթոգենետիկ առանձնահատկությունները:

Բորբոքում, դասակարգումը, պաթոգենեզի բաղադրյալները, գլխավոր միջնորդները. Առանձնահատկությունները բերանի խոռոչում:

Իմուն գերզգայունություն - Ալերգեններ, դասակարգումը: Ալերգիկ ռեակցիաների դասակարգումը: Իմուն գերզգայունության ռեակցիաների, հիվանդությունների պաթոգենեզը: Գերզգայունության ռեակցիաներ, տեսակները, էթիոլոգիան: Գերզգայունության ռեակցիաների ընդհանուր պաթոգենեզը և շրջանները: Առանձին տեսակների էթիոլոգիայի և պաթոգենեզի յուրահատկությունները: **Աղապտացիա և սթրես.** Սթրեսորներ, դասակարգումը: Սթրես համակարգ, գործունեության սկզբունքները: Սթրեսի զարգացման մեխանիզմները և շրջանները: Սթրեսի պաշտպանողական-հարմարվողական և ախտաճանական նշանակությունը:

Շաքարային դիաբետ, տեսակները, էթիոլոգիան, պաթոգենեզը և փոխանակային տիպային խանգարումները. Դրսևորումները դիմաձնոտային շրջանում:

Կալցիումի և ֆոսֆորի փոխանակության տիպային խանգարումներ.

Առաջացման պատճառները, զարգացման մեխանիզմները և դրսևորումները դիմաձնոտային շրջանում:

Հարվահանագեղձերի ախտաֆիզիոլոգիա. Հիպո- և հիպերպարաթիրեոզներ, տեսակները, էթիոլոգիան, պաթոգենեզը: Հարվահանագեղձի ախտերի ժամանակ պարօդոնտում առաջացող փոփոխությունների պաթոգենեզը:

Ցավ, ցավային և հակացավային համակարգեր, ցավի միջնորդներ, տեսակները. Ցավի բաղադրյալները (տրանսդուկցիա, տարանսմիսիա, մոդուլյացիա, պերցեպցիա): Քրոնիկ ցավի ախտաձևական նշանակությունը: Ծայրամասային և կենտրոնական սենսիտիզացիա: Դիմային ցավ: Ցավազրկման ախտաֆիզիոլոգիական հիմունքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գ.Ա.Նավասարադյան, «Ընդհանուր ախտաֆիզիոլոգիա», 2007թ.
2. Գ.Ա.Նավասարադյան, համահեղ., Մասնավոր ախտաֆիզիոլոգիա, 1998
3. Ս.Ա. Ավետիսյան, Ա.Ա.Պապյան, Ա.Ս.Գրիգորյան, «Ընդհանուր ախտաֆիզիոլոգիայի հարցեր և թեստեր», 2012թ.
4. Ավետիսյան Ս.Ա., «Աուտոբորբոքում և էնդոտոքսինային տուլերանս-տություն», 2012թ
5. П.Ф.Литвицкий, "Патофизиология", в двух томах, 2012г.
6. Н.Н.Зайко, "Патологическая физиология", 2006г.
7. А.Ш.Зайчик, Л.П.Чурилов, "Основы общей патологии", 2005г.
8. Дж. М. Хендерсон, "Патофизиология органов пищеварения", 2005
9. В.М. Кэттайл, Р.А. Арки, Патофизиология эндокринной системы, 2001
10. "Pathologic basis of disease", Robbins, 8th or 9th edition

Թերապևտիկ ստոմատոլոգիա. Հիվանդի հետազոտում. Հետազոտման հիմնական եղանակների արդյունքների գնահատումը թերապևտիկ ստոմատոլոգիայում: Հետազոտման հավելյալ եղանակների արդյունքների

գնահատումը թերապևտիկ ստոմատոլոգիայում: Բուժման անհատական պլանի կազմումը՝ հետազոտման տվյալների հիման վրա:

Տեղային անզգայացում. Ամբուլատոր ստոմատոլոգիական պրակտիկայում տեղային անզգայացման ժամանակակից տեխնոլոգիաները և միջոցները: Տեղային անզգայացնող միջոցների ընտրությունը տարբեր պաթոլոգիաներ ունեցող հիվանդների դեպքում: **Ատամների ոչ կարիեսային ախտահարումներ.** Սեպաձև դեֆեկտ կլինիկան, տարբերակիչ ախտորոշումը, բուժման սկզբունքները: Ատամների կարծր հյուսվածքների ոչ կարիեսային ախտահարումների բուժումը սպիտակեցման եղանակով: Ատամների կարծր հյուսվածքների ոչ կարիեսային ախտահարումների բուժումը. լեցավորում, ուղղակի եղանակով վինիրների պատրաստում: Ատամների վնասվածքներ: Ժամանակավոր և մշտական ատամների բուժման առանձնահատկությունները ատամի պսակի և արմատի տարբեր կոտրվածների դեպքում:

Ատամների կարիես. Կարիեսի բուժում: Բուժիչ և մեկուսիչ տակդիրների օգտագործում: Ատամների էսթետիկ վերականգնման համար նախատեսված ժամանակակից պլոմբանյութերը: Կիրառման առանձնահատկությունները: Ատամների կարիեսի բարդություններ. պուլպիտների և պերիօդոնտիտների կլինիկան, տարբերակիչ ախտորոշումը: Ատամների էնդոդոնտիկ բուժման ժամանակակից եղանակներն ու միջոցները:

Պարօդոնտի ախտահարումներ. Պարօդոնտի բորբոքային հիվանդությունների կլինիկական արտահայտությունը, բուժումը:

Շարժվող ատամների շինավորում: Ատամների ընտրողական հղկում:

Բերանի խոռոչի լորձաթաղանթի, շրթունքների, լեզվի ախտահարումներ. ՄԻԱՎ-ի դրսևորումները բերանի խոռոչի լորձաթաղանթին: Խեյլիտներ: Շրթունքի քրոնիկական ճաք: Կանխարգելում, բուժում: Բերանի խոռոչի լորձաթաղանթի և շրթունքների կարմիր երիզի վրա

նախաքաղցկեղային հիվանդությունների արտահայտումը: Կլինիկա, տարբերակիչ ախտորոշում, բուժում: Գլոսիտներ: Կլինիկա, բուժում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Ա.Վ. Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա, 2009
2. Եսայան Լ.Կ. Ատամի կարծր հյուսվածքների ոչ կարիեսային ախտահարումներ, 2010
3. Լ.Կ.Եսայան, Ա.Ա.Ավետիսյան «Կակղանի կառուցվածքը: Կակղանաբորբ», 2009
4. Пожарицкая, Пропедевтика стоматологических заболеваний, 2004
5. Максимовский Ю.М., Фантомный курс терапевтической стоматологии, 1999
6. Хоменко А.А., Биденко Н.В., Практическая эндодонтия, 2002
7. Николаев А.И., Цепов Л.М., Практическая терапевтическая стоматология, 2004
8. Боровский Е.В., Терапевтическая стоматология, 2002
9. Максимовский Ю.М., Терапевтическая стоматология, 2002
10. Данилевский Н.Ф., и др., Заболевания пародонта. Атлас, 1999
11. Боровский Е.В. Данилевский Н.Ф., Атлас заболеваний слизистой оболочки полости рта, 1981

Օրթոդոնտիա. Ատամնաձևոտային համակարգի աճը և զարգացումը.

Ատամնաձևոտային համակարգի ներարգանդային շրջանի զարգացում: Զարգացումը ծնվելուց մինչև 6 ամսեկան շրջան: Զարգացման առանձնահատկությունները կծվածքի ձևավորման տարբեր փուլերում 6 ամսեկանից մինչև 12-13 տ: ԴԾՇ աճի տեսակները, կմախքի օսիֆիկացիայի մակարդակի որոշումը: ԴԾՇ անատոմիորֆոլոգիական առանձնահատկությունները:

Ատամնաձևոտային անկանոնություններով երեխաների հետազոտման մեթոդները. Հիվանդի կլինիկական հետազոտում: Հիվանդի գլխի և

դեմքի անթրոպոմետրիկ հետազոտում: Ծնոտների գիպսե մոդելների չափումներ: Հետազոտման ռենտգենաբանական մեթոդները, հետազոտման ժամանակակից ֆունկցիոնալ մեթոդները՝ էլեկտրոմիոգրաֆիա, միոտոնոմետրիա, ՔՄՇՀ աքսիոգրաֆիա, պարոդոնտի: Հյուսվածքների վիճակի գնահատում: Ախտորոշման գրաֆիկական մեթոդները: Հետազոտման ֆոնոմետրիկ մեթոդները: Ճառագայթային ախտորոշման ժամանակակից մեթոդների կիրառումը օրթոդոնտիայում: ՄՌՏ-ի կիրառումը օրթոդոնտիայում:

Օրթոդոնտիայում ախտորոշման մեթոդաբանական ասպեկտները և բուժման պլանավորումը: Ատամնաձնոտային անկանոնությունների բուժման ժամանակակից մեթոդները. Օրթոդոնտիկ /սարքավորումային/. Վիրաբուժական. Թերապևտիկ. Օրթոպեդիկ. Ֆիզիկական. Միոգիմնաստիկա: Բուժման համալիր մեթոդներ:

Օրթոդոնտիկ սարքերի ազդեցության հետևանքով ատամնաձնոտային համակարգի մորֆոլոգիական և ֆունկցիոնալ վերակառուցման վերաբերյալ ժամանակակից հայացքները:

Օրթոդոնտիկ լաբորատոր տեխնիկան. Ժամանակակից օրթոդոնտիկ սարքերի պատրաստման տեխնոլոգիան, վետսիբուլյար լարային աղեղի ծռումը, կլոր կլամերների ծռումը, Ադամսի կլամերի ծռումը, օկյուզիոն վալիկներով մոմե հենքի պատրաստումը, սարքի հենքում տեղադրումը, քմային աղեղի ծռումը, լեզվային աղեղի ծռումը, ժամանակակից անտեսանելի շարժական օրթոդոնտիկ սարքերը, տեսակները, կիրառման ցուցումները և պատրաստման եղանակները:

Օրթոդոնտիկ բուժման տեխնիկան. Օրթոդոնտիկ սարքերի կիրառման տարիքային ցուցումները, կիրառումը ատամնաձնոտային անկանոնությունների պրոֆիլակտիկայի ժամանակ: Մեխանիկական ազդեցության օրթոդոնտիկ սարքեր: Շարժական օրթոդոնտիկ սարքերի պատրաստման ժամանակակից մեթոդները: Ժամանակակից օրթոդոնտիկ սարքերի

առանձնահատկությունները: Անշարժ օրթոդոնտիկ տեխնիկայի կիրառումը ատամնաձնոտային անկանոնությունների բուժման ժամանակ:

Ֆունկցիոնալ սարքերի կիրառումը ատամնաձնոտային անկանոնությունների բուժման ժամանակ: Դիմաձնոտային անոմալիաների բուժման ժամանակ անշարժ օրթոդոնտիկ տեխնիկայի կիրառումը, բրեկետների տեղադրման կոնցեպցիան: Օրթոդոնտիկ աղեղներ, նրանց ձևերը, կիրառման սկզբունքները: Լինգվալ տեխնիկայի օգտագործման հիմունքները: Տուցումները, հակացուցումները, ֆիքսման եղանակները: TARG-ի և Hiro-ի մեթոդիկանները: Բրեկետների ֆիքսման անուղակի մեթոդները:

Ռեցիդիվների և բարդություններ: Ռետենցիոն շրջան: Պոզիցիոնների կիրառման ցուցումները և նախագծումը:

Երեխաների և դեռահասների մոտ ատամնաձնոտային պրոթեզավորման առանձնահատկությունները: Պոստռեզելցիոն պրոթեզավորում:

Դեմքի և ծնոտների զարգացման բնածին արատների ժամանակ օրթոդոնտիկ օգնության ցուցաբերման առանձնահատկությունները:

Բժիշկ-օրթոդոնտի կլինիկական պրակտիկայում համակարգչի կիրառումը: Բարձրագույն տեխնոլոգիաները օրթոդոնտիայում:

Ստորձնոտազանգային խանգարումների տեսակները: Կլինիկական գնաթոլոգիայի հիմունքները, տերմինաբանությունը: Ֆունկցիոնալ օկյուզիան ստոմատոլոգիայում: Օկյուզիայի ֆունկցիոնալ վերլուծությունը: Ատամնաձնոտային անկանոնությունների բուժման սկզբունքները ԲՄՄՀ-ի դիսֆունկցիայի առկայության դեպքում: Օկյուզիոն շինաների կլինիկական կիրառումը, օկյուզիոն շինաների տեսակները,ցուցումները, հակացուցումները: Օրթոդոնտիկ բուժման հիմունքները ծնոտների կենտրոնական փոխհարաբերության դիրքում:

Օրթոդոնտիայում ախտորոշման մեթոդաբանական ասպեկտները և բուժման պլանավորումը. Հենքի ապահովումը օրթոդոնտիայում, ժամանակակից անկորաժի տեսակները /օրթոդոնտիկ միկրոիմպլանտներ/:

Օրթոդոնտիկ բուժման առանձնահատկությունները պարոդոնտի հիվանդությունների դեպքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Brian D. Willison, CDT, Stephen P. Warunek, DDS, MS Practical Guide to Orthodontic Appliances Great Lakes Orthodontics, LTD 2004
2. William R. Proffit. Henry W. Fields Contemporary orthodontics Fourth edition Mosby, 2007 768 p.
3. Персии Л.С. Ортодонтия. Диагностика, виды зубочелюстных аномалий. Изд. 2, дополнительное. М.: Ортоден-Инфо, 1999.-271с.
4. Персии Л.С. Ортодонтия. Лечение зубочелюстных аномалий. Издание 2, переработанное. М.: ООО Ортодент-Инфо, 1999, - 297с.
5. Персии Л.С., Косырева Т.Ф. Оценка гармоничного развития зубочелюстной системы. Уч. пособие.М.: Центр Ортодент, 1996, 5с.
6. Хорошилкина Ф.Я.Ортодонтия.МИА. 2006, 539с.
7. Тугарин В.А., Персии Л.С., Порохин А.Ю. Современная несъемная ортодонтическая техника эджуайс, М.: ООО Ортодент, 1996. 220с,
8. Уильям Р., Проффит. Современная ортодонтия. 3-е изд. М., 2006
9. Уильям Дж. Кларк .Ортодонтическое лечение парными блоками, Москва < Медпрессинфо> 2007г.
10. Р. Хинц, А. Шуман. Мультибанд-1. Основы лечения несъемной аппаратурой. Перевод с немец. ред. Л.С. Персина. М.: 1998. 92

Օրթոպեդիա. Օրթոպեդիկ ստոմատոլոգիա առարկան: Պրոթեզներ, ստոմատոլոգիական նյութագիտություն: Հիվանդների կլինիկական և պարակլինիկական հետազոտություն օրթոպեդիկ ստոմատոլոգիայում, ախտորոշում: Բուժման պլանավորում: Հիվանդների նախապատրաստումը օրթոպեդիկ բուժմանը: Բժշկական դեոնտոլոգիա: Օրթոպեդիկ ստոմատոլոգիական կլինիկայի ղեկավորում: Ատամների կարծր հյուսվածքների ախտահարման էթիոլոգիան, կլինիկական պատկերը և օրթոպեդիկ բուժումը: Ներդիրներ, վերդիրներ, CAD /CAM համակարգ: Ատամների հղկման հիմունքներ: Կլինիկական և լաբորատոր փուլեր: Ատամների

պսակների ախտահարման էթիոլոգիան, կլինիկական պատկերը և օրթոպեդիկ բուժումը: Ծայրատային գամիկավոր ներդիրներ (ամբողջաձույլ, կերամիկական, Pinlay, Cosmo-Post): Ատամների հղկման հիմունքներ: Կլինիկական և լաբորատոր փուլեր: Ատամների կարծր հյուսվածքների ախտահարման էթիոլոգիան, կլինիկական պատկերը և օրթոպեդիկ բուժումը տարբեր արհեստական պսակներով (ամբողջաձույլ մետաղական, մետաղ-կերամիկական, մետաղ-պլաստմասսե, մետաղ-կոմպոզիտային, լրիվ կերամիկական): Ատամների հղկման հիմունքներ: Կլինիկական և լաբորատոր փուլեր: Մասնակի անատամություն, դասակարգում, էթիոլոգիա, կլինիկական պատկեր, օրթոպեդիկ բուժումը ամբողջաձույլ մետաղական, մետաղ-պլաստմասսե, մետաղ-կոմպոզիտային, մետաղ-կերամիկական անշարժ մասնակի պրոթեզներով (կամուրջներ): Ատամների հղկման հիմունքներ: Կլինիկական և լաբորատոր փուլեր:

Մասնակի անատամություն. Օրթոպեդիկ բուժումը ժամանակավոր շարժական պրոթեզներով: Բռնիչների դասակարգումը: Կլինիկական և լաբորատոր աշխատանքները: Օրթոպեդիկ բուժումը մասնակի շարժական պրոթեզներով: Բռնիչների դասակարգումը: Կլինիկական և լաբորատոր աշխատանքները: Օրթոպեդիկ բուժումը մասնակի շարժական պրոթեզներով՝ կիրառելով աթաշմեններ: Բռնիչների դասակարգումը: Կլինիկական և լաբորատոր աշխատանքները: Օրթոպեդիկ բուժումը իմպլանտներով: Կլինիկական և լաբորատոր աշխատանքները:

Օրթոպեդիկ բուժումը պարօդոնտի ախտահարման դեպքում: Ընտրողական հղկում, ատամների բեկակալում ժամանակավոր և մշտական պրոթեզներով: Ախտորոշումը և օրթոպեդիկ բուժումը կծվածքի ախտահարումների դեպքում: Ախտաբանական մաշվածության օրթոպեդիկ բուժումը: Գնատալոգիայի հիմունքներ: ՔՄԾՀ-ի ախտահարումների կլինիկական պատկերը և օրթոպեդիկ բուժումը: Ստորին ծնոտի շարժումների

արձանագրումը: Լրիվ շարժական պրոթեզներ: Լրիվ շարժական պրոթեզների պատրաստումը ժամանակակից հողափոխանակիչներով:

Լրիվ անատամություն: Օրթոպեդիկ բուժումը իմպլանտներով: Կլինիկական և լաբորատոր աշխատանքները: Դիմաճնոտային պրոթեզավորում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ. 1,2,3 - Վ.Լ.Բակալյան, Օրթոպեդիկ ստոմատոլոգիա, Երևան, 2009.
2. Դիմաճնոտային արատներ-Ս.Ռ. Հովհաննիսյան, Կ.Ա. Մաշինյան, Վ.Ռ. Զոփունյան, 2010.
3. Основы несъемного протезирования- Шиллинбург Г., 2008.
4. Ортопедическое лечение несъемными протезами- Розенштилль С., Лэнд М., Фуджимото Юнхай, 2010.
5. Prosthodontic Treatment for Edentulous Patients: Complete Dentures and Implant-Supported Prosthesis, 13th Edition- George Zarb, John Hobkirk, Steven Eckert Rhonda Jacob, 2013.
6. Dental Implant Prosthetics- Carl E. Misch, 2014.
7. Craig's Restorative Dental Materials- Ronald L. Sakaguchi, John M. Powers, 2012.
8. McCracken's Removable Partial Prosthodontics- Alan B. Carr, David T. Brown, 2011.
9. Functional Occlusion: From TMJ to Smile Design- Peter Dawson, 2007.

Մանկական ստոմատոլոգիա: Ատամի կարիեսի կանխարգելումը.

Կարիեսի զարգացման վարկածները: Կանխարգելման տեսական հիմունքները: Ֆտորիդների օգտագործումը կարիեսի կանխակցելման մեջ: Ատամնամածուկներում կիրառվող ֆտորիդների տեսակները, ֆտորի քանակի հաշվարկում, ֆտորի տոքսիկ քանակություններ:

Ատամների ակոսների զմրսման մեթոդները – ինվազիվ հերմետիզացիա, ոչ ինվազիվ հերմետիզացիա: Ռեմիներալիզացնող նյութերի օգտագործումը: Խորը ֆտորացման եղանակ: Կանխարգելիչ պլումբավորում:

Կարիեսի կանխարգելում ըստ Ուլիտովսկու, Հերմետիկներ, սիլանտներ: Ընդհանուր բնութագիր, առանձնահատկություններ:

Ոչ կարիեսային ախտահարումների կանխարգելումը. Հիպոպլազիա, Ֆլյուրոզ: Ժառանգական փոխանցվող հիվանդություններ: Ատամների ախտահարումներ, որոնք առաջանում են ատամների ձկթելուց հետո:

Բերանի խոռոչի մասնագիտական հիգիենա. Մասնագիտական հիգիենայի միջոցները և մեթոդները: Ատամնանստվածքների հեռացման մեթոդները: **Բերանի խոռոչի անհատական հիգիենա.** Ատամնանստվածքների հայտնաբերման եղանակները: Ատամների մաքրման ձևերը: Բերանի խոռոչի հիգիենայի հսկողություն: Հիգիենայի հիմնական միջոցներ: Հիգիենայի օժանդակ միջոցներ:

Հիմնական ստոմատոլոգիական հիվանդությունների անտենատալ կանխարգելումը. Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելումը հղի կանանց մոտ, որպես վաղ հասակի երեխաների ստոմատոլոգիական առողջության հիմք:

Պարօդոնտի հիվանդությունների կանխարգելումը. Պարօդոնտի հիվանդությունների առաջացման ռիսկի գործոնները և դրանց չեզոքացումը: Պարօդոնտալ ցուցանիշների դերը պարօդոնտի հյուսվածքների վիճակի գնահատման մեջ:

Ատամների կարիես. Ատամների կարծր հյուսվածքների անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները:

Կարիեսի պատճառագիտությունն ու ախտածնությունը: Կարիեսի դասակարգումները: Կարիեսի կլինիկական ընթացքի առանձնահատկությունները տարբեր տարիքի երեխաների մոտ: Կարիեսի բուժումը:

Կարիոզ խոռոչների մշակման առանձնահատկությունները մանկական հասակում: Պլոմբանյութերի ընտրությունը տարբեր տարիքի երեխաներին բուժելիս: Կարիեսի բուժման սխալները և բարդությունները:

Պուլպիտներ. Պուլպայի անատոմո-ֆիզիոլոգիական կառուցվածքային առանձնահատկությունները մանկական հասակում:

Պուլպիտների պատճառագիտությունն ու ախտածնությունը: Պուլպայի կենսունակությունը գնահատող մեթոդները: Պուլպիտների դասակարգումը: Պուլպիտների կլինիկական ընթացքը տարբեր տարիքի երեխաների մոտ: Պուլպիտների բուժման կենսաբանական մեթոդներ: Պուլպիտների բուժման վիտալ մեթոդներ: Ապեքսոգենեզ, ապեքսիֆիկացիա: Պուլպիտների բուժման դևիտալ մեթոդներ: Բուժման սխալներ և բարդություններ:

Պերիոդոնտիտներ. Պերիոդոնտի կառուցվածքային առանձնահատկությունները տարբեր տարիքի երեխաների մոտ: Պերիոդոնտիտների պատճառագիտությունն ու ախտածնությունը: Պերիոդոնտիտների դասակարգումը: Պերիոդոնտիտների կլինիկական ընթացքը տարբեր տարիքի երեխաների մոտ: Պերիոդոնտիտների բուժման եղանակները: Պուլպիտների և պերիոդոնտիտների բարդությունները և դրանց կանխումը:

Ատամների կարծր հյուսվածքների ոչ կարիոզ ախտահարումները.

Ֆլյուրոզ, հիպոպլազիա: Հիպերպլազիա: Հիպերէսթեզիա:
Ժառանգական փոխանցվող հիվանդություններ: Ատամների փոփոխություններ, որոնք առաջանում են ատամների ձկթելուց հետո:

Պարոդոնտի հիվանդություններ. Պարոդոնտի կառուցվածքի անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Պարոդոնտի հիվանդությունների դասակարգումը: Գինգիվիտներ: Պարոդոնտիտներ: Ազրեսիվ պարոդոնտիտ: Պարոդոնտալ սինդրոմներ:

Բերանի խոռոչի լորձաթաղանթի հիվանդություններ. Բերանի խոռոչի լորձաթաղանթի կառուցվածքային առանձնահատկությունները: Բերանի խոռոչի լորձաթաղանթի հիվանդությունների դասակարգումները: Վիրուսային բնույթի ախտահարումներ: Մանկական ինֆեկցիաների արտացոլումը բերանի խոռոչում: Բերանի խոռոչի լորձաթաղանթի տրավմատիկ

բնույթի ախտահարումներ: Սպեցեֆիկ ինֆեկցիոն ախտահարումներ:
Ալերգիկ բնույթի ախտահարումներ:

Անզգայացումը մանկական հասակում. Տեղային անզգայացում: Ընդհանուր անզգայացումը ամբուլատոր պայմաններում: Ընդհանուր անզգայացումը ստացիոնարում: Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ: **Ատամի հեռացում.** Ատամի հեռացման ցուցումներ և հակացուցումներ: Ատամի հեռացման առանձնահատկություններ: Ատամի հեռացման հետ կապված բարդությունները: Դիմաձնոտային շրջանի վնասվածքները: Փափուկ հյուսվածքների վնասվածքներ: Ատամների վնասվածքներ: Ծնոտոսկրերի վնասվածքներ: Վնասվածքների ախտորոշումը և կլինիկական պատկերը: Բուժման սկզբունքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Ա.Բ. Ատամների հեռացումը մանկական հասակում: Երևան, 2006.
2. Ավագյան Ա.Բ. Ստոմատոլոգիական միջամտությունների անզգայացումը մանկական հասակում, Երևան, 2006.
3. Փափագյան Ա.Թ., Ստեփանյան Ռ.Մ. Վիրուսային ստոմատիտները մանկական հասակում, Երևան, 2006.
4. Փափագյան Ա.Թ., Ստեփանյան Ռ.Մ. Կարիեսի և պարոդոնտի հիվանդությունների կանխարգելման հիմունքները, կարիեսի կանխարգելումը ըստ ՈԻԿտովսկու, 2001, Երևան, 2006.
5. Մարգարյան Մ.Մ., Վարդանյան Ի.Ֆ. Լորձաթաղանթի հիվանդությունները մանկական հասակում, Երևան, 2004.
6. Ավագյան Ա.Բ. «Քունք-ստորձնոտային հողի հիվանդությունները մանկական հասակում», Երևան, 2007.
7. Pediatric Dentistry: Infancy Through Adolescence. Fourth edition. Edited by Jimmy R. Pinkham. Saunders, an imprint of Elsevier, New Delhi, 2005.
8. Dentistry for the Child and Adolescent. Seventh edition. Edited by Ralf E. McDonald, David R. Avery – Mosby, 2000.
9. Персин Л.С., Елизаров В.М., Дьякова С.В. «Стоматология детского возраста», М., Медицина, 2003.

10. Справочник по детской стоматологии/ Под ред. А.С. Cameron, R.P. Widmer; Перевод с англ. Под ред. Т.Ф. Виноградовой, Н.В. Гинали, О.З. Топольницкого. М.:Медпресс-информ, 2003.
11. Стоматология детей и подростков: Пер. С англ. / Под ред. Ральфа Е. Мак-Дональда, Дейвида Р. Эйвери; М.: 2003.
12. Курякина Н.В. «Терапевтическая стоматология детского возраста» – М.: Медицинская книга, Н. Новгород: издательство НГМА, 2004.
13. Бернадский Ю.И. «Основы челюстно-лицевой хирургии и хирургической стоматологии» – М. Медицинская литература, 2007.
14. Персин Л.С. Ортодонтия. Диагностика и лечение зубочелюстных аномалий: Руководство для врачей. М. ОАО «Изд. «Медицина», 2004.
15. Фэлэйс Д. «Экстренная помощь в стоматологии», Пер. с англ. Под ред. А.С. Артюшкевича, Е.К. Трофимовой. М.,Мед. литература, 2001.
16. Авакян А.Б., Саркисян А.Л. “Воспалительные заболевания слюнных желез”, Ереван, 2007.

Վիրաբուժական ստոմատոլոգիա. Անաֆիլակտիկ շոկ, շնչառության և սրտի կանգ: Սեպտիկ շոկ, հիպերտոնիկ կրիզ: Ընդհանուր անզգայացումը պոլիկլինիկայի պայմաններում: Տեղային անզգայացում: Տեղային անզգայացնող նյութեր բնութագիրը և դասակարգումը: Ոչ ներարկային անզգայացում: Ներարկային անզգայացում՝ ներսփռական անզգայացում: Հաղորդչական անզգայացում: Սուր և խրոնիկ օդոնտոգեն հայմոռիտ, Կոլդուել-Լյուկի վիրահատությունը, պունկցիայի կիրառման եղանակները: Խրոնիկ պերիօդոնտիտ: Վիրաբուժական բուժման մեթոդները: Ծնոտների օդոնտոգեն սուր և խրոնիկ օստեոմիելիտներ: Դեմքի և պարանոցի արքցեսներ և ֆլեզմոնաներ: Գլխի և պարանոցի լիմֆանգիտներ, սուր և խրոնիկ ոչ սպեցիֆիկ լիմֆանգիտներ, ադենոֆլեզմոնա. ԴԾՇ սպեցիֆիկ ախտահարումները: Ակտինոմիկոզ, սիֆիլիս, տուբերուլյոզ. Հակաբակտերիալ թերապիան ԴԾՇ բորբոքային հիվանդությունների ժամանակ, /հակաբիոտիկներ, սուլֆանիլամիդներ, հակասնկային դեղամիջոցներ/, նրա կիրառման տևողությունը, ընտրությունն ըստ տարիքային խմբերի, համատեղելիությունը: Իմունոշտկող բուժումը ԴԾՇ բորբոքային հիվան-

դությունների ժամանակ, ակտիվ և պասիվ իմունիզացիա, ժամանակակից դեղորայք: Թքագեղձերի հետազոտման եղանակները: Թքաքարային հիվանդություն, սուր էպիդեմիկ և ոչ էպիդեմիկ պարօտիտներ, խրոնիկ ինտերստիցիալ և պարենխիմատոզ սիալոադենիտներ, սիալոզներ՝ Գուժերո-Շեգրենի համախտանիշ, Միկուլիչի հիվանդություն:

Դեմքի և ծնոտների նյարդերի հիվանդություններ և ախտահարումներ: Եռորյակ և լեզվաըմպանային նյարդերի ներազգիա. Եռորյակ նյարդի նեյրոպաթիա, միմիկայի մկանների կաթված, դեմքի հեմիատրոֆիա: Վերականգնող վիրահատություններ և միոպլաստիկա: ՔՄԾՀ սուր և խրոնիկ ոչ սպեցիֆիկ արթրիտներ: ՔՄԾՀ արթրոզեր: ՔՄԾՀ դիսֆունկցիաներ: ՔՄԾՀ անկիլոզ: Դեմտալ իմպլանտացիա, ցուցումներն ու հակացուցումները, դասակարգումը: Իմպլանտացիայի վիրաբուժական փուլերի ճիշտ հերթականությունը: Ոսկրային օթյակի ձևավորման կանոնները: Տարբեր իմպլանտացիոն համակարգերի վիրաբուժական փուլերի առանձնահատկությունները: Անհապաղ իմպլանտացիա: Սինուս լիֆթ և ավվետյար ելունի երկարացում: Իմպլանտացիայի վիրաբուժական փուլի ընթացքում առաջացող բարդությունները, նրանց կանխարգելման և բուժման մեթոդները: Լաթային վիրահատություններ: Մակերեսային գրպանների բաց վիրահատական մաքրում: Խորը գրպանների վիրահատական կրճատում: Միջատամնային մերկացման (դենուդացիա) գործընթաց: Գագաթային տեղադրության լաթ: Շուրջատամնային գրպանի կրճատումը հյուսվածքային ռեգեներացիայի միջոցով: Ուղղորդված հյուսվածքային ռեգեներացիա հասկացողությունը կենսաբանական թաղանթների կիրառմամբ: Ոսկրափոխարինիչ նյութերը արդի իմպլանտոլոգիայում, դասակարգումը: Դեմքի ոսկրերի կոտրվածքների բուժման վիրաբուժական սկզբունքները, օսթոսինթեզի ժամանակակից բուժման մեթոդները: Ծնոտների օդոնտոգեն և օստեոգեն ուռուցքներ և ուռուցքանման գոյացություններ: Ծնոտների ոչ օդոնտոգեն և ոչ օստեոգեն

ուռուցքներ և ուռուցքանման գոյացություններ: ԴՕՇ փափուկ հյուսվածքների բարորակ և չարորակ նորագոյացություններ:

Թքագեղձերի բարորակ նորագոյացություններ. բերանի խոռոչի հատակի լորձաթաղանթի, շրթունքի կարմիր երիզի, դեմքի մաշկի նախաքաղցկեղային ախտահարում: Բերանի խոռոչի հատակի լորձաթաղանթի, լեզվի քաղցկեղ: Շրթունքի կարմիր երիզի, դեմքի մաշկի քաղցկեղ: Վերին ծնոտի քաղցկեղ. վերին ծնոտի սարկոմա: Ստորին ծնոտի քաղցկեղ. ստորին ծնոտի սարկոմա: Պլաստիկ վիրաբուժությունների հիմունքները: Պլաստիկա տեղային հյուսվածքներով, հյուսվածքների ազատ փոխպատվաստում, պլաստիկա սնուցող ոտիկով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնական

1. Վիրաբուժական ստոմատոլոգիայի պրոպեդեուտիկա: Ուս. ձեռն. Է.Կ. Ավետիսյանի խմբագրությամբ. Եր.: ԵՊԲՀ, 2011. 196 էջ.
2. Դիմաձևոտային շրջանի վնասվածքներ: Ուս. ձեռն., Յու.Մ. Պողոսյան, Ա.Յու. Պողոսյան, Ա. Յու. Պասյան, Ե. ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2010. 288 էջ.
3. Քունքստործնոտային հողի հիվանդություններ: Ուս. Ձեռնարկ, Յու.Մ. Պողոսյան, Հ.Դ. Ենոքյան, Եր.: ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2009. 160 էջ.
4. Хирургическая стоматология: Учебник, Под ред. Т.Г. Робустовой. 3-е изд., перераб. и доп. М., Медицина, 2003. 503 с.

Լրացուցիչ

1. Տեղային անզգայացումը ստոմատոլոգիայում: Ուս. Ձեռնարկ, Յու.Մ. Պողոսյան, Ա. Հ. Սեայան, Եր.: ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2009. 116 էջ.
2. Խ. Ա. Բադայան, Յու.Մ. Պողոսյան. Վիրաբուժական ստոմատոլոգիա: Դասագիրք, Եր., Լույս, 1991. 447 էջ.
3. Ю.И. Бернадский. Травматология и восстановительная хирургия челюстно-лицевой области. 3 изд., перераб. и доп. М., 1999. 456 с.
4. Ю.И. Бернадский. Основы хирургической стоматологии. Киев, “Здоров’я”, 1970, 481 с.

5. Клиническая оперативная челюстно-лицевая хирургия. /Под ред. Н.М. Александрова. 2 изд., переработ. Л.: Медицина, 1985. 448 с..
6. Vinod Kapoor. The Textbook of Oral and Maxillofacial Surgery. Second Edition. ARYA (MEDI) Publishing House. New Delhi 110002. 684 page
7. M. Miloro, G. Ghali, P. Larsen, P. Waite. Peterson's Principles of Oral and Maxillofacial Surgery. Vol. 1, Vol.2. BS Decker Inc Hamilton – London, 2004, 766 p+ 718 p.
8. James R. Hupp, Edward Ellis III, Myron R. Tucker. Contemporary Oral and Maxillofacial Surgery. 5th editon. MOSBY, Elsevier , 2008, 714 p.
9. Omar Abubaker, Kenneth Benson. Oral and Maxillofacial Surgery Secrets. HANLEY & BELFUS, INC., Philadelphia. 2006. 330 pages.

ԺԴ.00.13 - ՎՆԱՍՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՐԹՈՊԵԴԻԱ

Վնասվածքաբանություն և օրթոպեդիա առարկան. Վնասվածքաբանության և օրթոպեդիայի զարգացման պատմությունը: Վնասվածքաբանական բուժօգնության կազմակերպումը:

Տրավմատիզմ. Տեսակներն ու դասակարգումը: Կենցաղային տրավմատիզմ: Մանկական տրավմատիզմ: Սպորտային տրավմատիզմ:

Վնասվածքաբանական ծառայության կազմակերպումը Հայաստանում: Տարատեսակ օրթոպեդա-վնասվածքաբանական հիմնարկությունների կառուցվածքն ու ֆունկցիաները:

Հետազոտման եղանակները վնասվածքաբանության և օրթոպեդիայի բնագավառում: Հիվանդների կլինիկական հետազոտությունը. ա. Հարցում. բ. Ձևնում, պալպացիա և պերկուսիա, հողերում շարժումների ծավալի որոշումը, տարբեր հողերում շարժումների նորմալ ծավալը,

վերջույթների ֆունկցիաները, անթրոպոմետրիա: Քայլվածք, լրացուցիչ ճանաչողական կետեր:

Ճառագայթային հետազոտություններ. ա. Ռենտգենոլոգիական հետազոտություն - Ռենտգեն. նկարների պրոեկցիաները. նկարների վերձանում Կոնտրաստ նյութեր, ֆիստուլոգրաֆիա. Արթրոգրաֆիա (արթրոպլանմոգրաֆիա). Սթրես թեստեր: բ. ՀS հետազոտություն. գ. ՄՄՌՏ հետազոտություն. դ. Ուլտրաձայնային հետազոտություն:

Լրացուցիչ հետազոտություններ. Էլեկտրոնեյրոմիոգրաֆիա. Լաբորատոր հետազոտման մեթոդներ:

Մորֆոլոգիական և ցիտոլոգիական հետազոտություններ, բիոպսիա:

Ժամանակակից բուժման մեթոդները վնասվածքաբանությունում և օրթոպեդիայում:

Առաջին օգնության հիմնական սկզբունքները վնասվածքների ժամանակ. Շոկ և վնասվածքային շոկի առաջին օգնությունը. Էմբոլիաներ և դիսսիմինացված ներանոթային մակարդման համախտանիշ. Ցավազրկում, պունկցիաներ, արգելափակումներ. Տրանսպորտային անշարժացում: **Առաջին օգնությունը** վերքերի, սալջարդերի և հեմարթրոզների, արյունահոսությունների. Հոդախախտերի, կոտրվածքների, այրվածքների և ցրտահարությունների ժամանակ:

Փափուկ հյուսվածքների վնասվածքներ:

Ծածկույթային հյուսվածքների վնասումներ. ա. Ընդհանուր հասկացություններ, ախտորոշումը և բուժումը, սալջարդ (contusio), արյունազեղում և հեմատոմա, պատռվածք, բ. Վերքեր և վերքային վարակ, գ. մաշկի պլաստիկ, տեսակները, ցուցումները և տեխնիկան, դ. այլ վնասվածքներ (դասակարգումը, կլինիկական պատկերը, բուժումը):

Զերմային այրվածքներ, այրվածքային հիվանդություն (ընթացքը, փուլերը, բուժումը). Քիմիական այրվածքներ. Ճառագայթային այրվածքներ. Էլեկտրական հոսանքից առաջացած վնասվածքներ (էլեկտրոտրավմա).

Տրտահարություն:

Ծայրամասային նյարդերի վնասվածքներ. ա. զգայունության որոշման հատուկ թեստեր, բ. առանձին նյարդերի վնասվածքներ - ճաճանչային նյարդ, միջնակ նյարդ, ծղիկային նյարդ, նստանյարդ, ոլոքային նյարդ, նրբոլոքային նյարդ, գ. վիրահատություններ նյարդային ցողունների վրա Պերիֆերիկ նյարդային ցողունների վնասվածքների բուժման հիմնական սկզբունքները: Պերիֆերիկ նյարդերի պլաստիկա:

Զլերի, մկանների և կապանների վնասվածքներ. (բուժման հիմնական սկզբունքները). ա. Գերձգվածություն. բ. մկանների վնասվածքներ. գ. կապանների վնասվածքներ. դ. ջլերի վնասվածքներ (և ջլերի կարերի ձևերը):

Արյունատար անոթների վնասվածքներ, արյունահոսություն (կլինիկական պատկերը, արյունահոսության դադարեցում). Զարկերակային արյունահոսություն: Երակային արյունահոսություն: Մազանոթային արյունահոսություն: Պարենխիմատոզ արյունահոսություն

Փափուկ հյուսվածքների վնասվածքների բարդացած վիճակներ (պաթոգենեզ, կլինիկա, բուժում). Երկարատև ճնշման համախտանիշ: Կոմպարտմենտ համախտանիշ: Զուդեկի համախտանիշ: Ֆոլկմանի իշեմիկ կոնտրակտուրա:

Հոդախախտեր. Դասակարգում: Ախտորոշում: Բուժման ընդհանուր սկզբունքները: **Հոդախախտերի բուժման եղանակները:** Կոնսերվատիվ բուժում: Վիրահատական բուժումը:

Ոսկրը և ոսկրային հյուսվածքի ռեգեներացիայի հիմունքները:

Ոսկրի կառուցվածքը և մորֆոլոգիան. Մակրոտոպոլոգիա, միկրոարխիտեկտուրա, բիոքիմիական բնութագրություն, կմախքային շարակցական հյուսվածքի էմբրիոգենեզ:

Ոսկր, ոսկրային հյուսվածքի ռեգեներացիայի հիմունքները. ոսկրի ֆիզիոլոգիական ռեգեներացիա, ոսկրի ռեպարատիվ ռեգեներացիա,

սերտաճման խանգարումներ, սերտաճման խանգարումների բուժման հիմնական սկզբունքները:

Ոսկրերի վնասվածքներ. Ընդհանուր սկզբունքները. ա. Դասակարգում բ. Ախտորոշում. գ. Կոտրվածքների բուժման սկզբունքները:

Կոտրվածքների բուժման կոնսերվատիվ եղանակը. Անշարժացման ձևերը: Բուժումը գիպսակապերով, գիպսակապերի տեսակները: Բուժումը օրթեզներով և ֆիքսատորներով: Բուժումը փափուկ վիրակապերով:

Կոտրվածքների բուժման վիրահատական եղանակը. ա. ընկղմված օստեոսինթեզ - Ներոսկրային (ինտրամեդուլյար). Վերոսկրային (ենթավերնոսկրային). Կենսաբանական (վերվերնոսկրային). բ. արտաքին օստեոսինթեզ - ձողային ապարատներով, շյուղային ապարատներով.

գ. քիչինվազիվ (կոնսերվատիվ) օստեոսինթեզ, պտուտակներով, ձողերով, շյուղերով (փնջով, տրանսկորտիկալ, ինտրամեդուլյար, տրանսարտիկուլյար). դ. Հետվիրահատական շրջանի առանձնահատկությունները:

Հոդերի էնդոպրոտեզավորում. ա. Էնդոպրոտեզավորման ցուցումներն ու նպատակները. բ. Էնդոպրոտեզավորման առանձնահատկություններ, սխալներ, բարդություններ. գ. Էնդոպրոտեզավորման եղանակներ. Ցեմենտային, ոչ ցեմենտային, հիբրիդ. դ. Իմպլանտներին դասակարգում

ըստ բաղադրիչների. միակոմպոնենտ, երկկոմպոնենտ, բազմակոմպոնենտ, **ըստ բևեռների.** միաբևեռ, երկբևեռ, եռաբևեռ, **ըստ տեղակայման.** խոշոր հոդերի(արմատային և հեռակա հոդերի), մանր հոդերի:

Օրթոպեդովնասվածքաբանական հիվանդների վերականգնման (ռեաբիլիտացիայի) ընդհանուր հարցեր: Դեռնթոլոգիայի և բժշկական էթիկայի հարցերը օրթոպեդիայի և վնասվածքաբանության մեջ:

Բժշկաաշխատանքային փորձաքննություն:

Պոլիտրավմա. Ընդհանուր հասկացությունները: Ախտորոշում:

Համակցված խոռոչային վնասվածքներ: Ծայրահեղ վիճակներ:

Գանգուղեղային վնասվածքներ. Դասակարգում: Գլխուղեղի սալջարդ, գլխուղեղի ցնցում, սուբարախնոիդալ արյունազեղում, գլխուղեղի ճնշում: Տեղափոխման յուրահատկությունները: Բուժման յուրահատկությունները **Հրազենային վիրավորումներ.** Ընդհանուր սկզբունքները: Դասակարգումը: Ախտորոշում: Հյուսվածքների վնասման առանձնահատկությունները: Բուժման յուրահատկությունները:

Վնասվածքաբանություն. (տոպանատոմիա, վնասման մեխանիզմներ, դասակարգում, ախտորոշում, առաջին օգնություն, բուժում, ռեաբիլիտացիա):

Կրծքավանդակի և կողերի վնասվածքներ. Կողերի կտրվածքներ: Կրծոսկրի վնասվածքներ: Կրծքավանդակի սալջարդեր: Պլևրոպնևմոթորաքս և հեմոթորաքս թափանցող և խոռոչային վնասումներ:

Վերին վերջույթ: Ուսագոտու վնասվածքներ: Անրակի վնասվածքներ. Կրծոսկրային ծայրի հողախախտ: Կրծոսկրային ծայրի կտրվածք: Դիաֆիզար կտրվածքներ: Ակրոմիալ ծայրի հողախախտ: Ակրոմիալ ծայրի կտրվածք: **Թիակի վնասվածքներ:** Թիակը կայունացնող մկանների վնասվածք: Թիակի ելունների և փշի կտրվածքներ: Թիակի մարմնի կտրվածքներ: Տանձաձև փոսի կտրվածքներ:

Ուսահողի շրջանի վնասվածքներ. ա. փափուկ հյուսվածքային վնասվածքներ. պտտող մանժետի վնասվածք, տանձաձև փոսի շրթի վնասվածքներ, երկգլուխ մկանի պրոքսիմալ ջլերի վնասվածքներ, անոթանյարդային խրճի վնասվածքներ. բ. բազկոսկրի գլխի հողախախտ.

գ. բազկոսկրի պրոքսիմալ մետաէպիֆիզի կտրվածքներ. գլխի կտրվածքներ, վզիկների կտրվածքներ, թմբերի կտրվածքներ:

Բազկի շրջանի վնասվածքներ. ա. անոթների վնասվածքներ. բ. Նյարդերի վնասվածքներ. գ. մկանների վնասվածքներ. դ. բազկոսկրի դիաֆիզի վնասվածքներ:

Արմնկային հողի շրջանի վնասվածքներ. ա. փափուկ հյուսվածքային վնասվածքներ. անոթների վնասվածքներ, նյարդերի վնասվածքներ, ջլերի և կապանների վնասվածքներ. բ. արմնկային հողում հողախախտեր. գ. արմնկային հողը կազմող ոսկրերի կոտրվածքներ. ճախարակի և վերկոճի կոտրվածքներ, բազկոսկրի գլխիկի կոտրվածք, ճաճանչի գլխիկի կոտրվածք, արմունկելունի և պսակաձև ելունի կոտրվածք. դ. կոտրվածք-հողախախտեր՝ Մոնթեջիի տիպի:

Նախաբազկի շրջանի վնասվածքներ. ա. անոթների վնասվածքներ. բ. նյարդերի վնասվածքներ. գ. մկանների վնասվածքներ. դ. զույգ ոսկրերի դիաֆիզի կոտրվածքներ. ե.Գալեացիի տիպի վնասվածք (ճաճանչի դիստալ կոտրվածք և ծղիկ-ճաճանչային տարանջատում):

Ճաճանչ-դաստակային հողի շրջանի վնասվածքներ. ա. փափուկ հյուսվածքային վնասվածքներ. անոթների վնասվածքներ, նյարդերի վնասվածքներ, ջլերի և կապանների վնասվածքներ. բ. դաստակի հողախախտեր. գ. ճաճանչ-դաստակային հողը կազմող ոսկրերի կոտրվածքներ. մախաթաձև ելունների, ծղիկի գլխիկի, ճաճանչի դիստալ մետաէպիֆիզի, կիսալուսնաձև ոսկրի կոտրվածքներ, մակույկաձև ոսկրի կոտրվածքներ. դ. դաստակի պերիլունար հողախախտեր:

Ձեռնաթաթի վնասվածքներ. ա. փափուկ հյուսվածքային վնասվածքներ. անոթների վնասվածքներ, նյարդերի վնասվածքներ, ջլերի և կապանների վնասվածքներ. բ. դաստակը կազմող ոսկրերի վնասվածքներ (հողախախտեր և կոտրվածքներ). գ. նախադաստակի ոսկրերի վնասվածքներ (հողախախտեր և կոտրվածքներ). դ. մատները կազմող ոսկրերի վնասվածքներ (հողախախտեր և կոտրվածքներ):

Կոնքի վնասվածքներ. ա. փափուկ հյուսվածքային վնասվածքներ. կոնքի խոռոչի անոթների վնասվածքներ, սրբան. հյուսակի նյարդերի վնասվածքներ, վերքեր և սալքարդեր. բ. հողախախտեր. Սրբանագստային տարանջատումներ, սիմֆիզի վնասվածքներ. գ. կոնքի օղը կազմող ոսկ-

րերի կոտրվածքներ առանց օղի ամբողջականության խանգարման. զստոսկրի թևի կոտրվածքներ, ցայլոսկրի կոտրվածքներ, նստոսկրի կոտրվածքներ. դ. կոնքի օղը կազմող ոսկրերի կոտրվածքներ՝ օղի ամբողջականության խանգարմամբ. ե. կոնքի օղի հողախախտ-կոտրվածքներ:

Ստորին վերջույթ: Կոնքազդրայի հողի շրջանի վնասվածքներ. ա. Փափուկ հյուսվածքային վնասվածքներ. անոթների վնասվածքներ, նյարդերի վնասվածքներ, ջլերի և կապանների վնասվածքներ. բ. Կոնքազդրային հողում հողախախտեր. հասարակ հողախախտեր, կոտրվածք-հողախախտեր. գ. քացախափոսի կոտրվածքներ. դ. Ազդրոսկրի պրոքսիմալ ներհողային կոտրվածքներ. գլխի կոտրվածքներ, վզիկի սուբկապիտալ կոտրվածք, տրանսցերվիկալ կոտրվածքներ, բազալ կոտրվածքներ: Առաջնային էնդոպրոտեզավորման ցուցումները և եղանակները ազդրի պրոքսիմալ հատվածի կոտրվածքների դեպքում. ե. ազդրոսկրի պրոքսիմալ արտահողային կոտրվածքներ. մեծ տամբիոնի մեկուսացված կոտրվածք, միջտամբիոնային կոտրվածքներ, ենթատամբիոնային կոտրվածքներ:

Ազդրի շրջանի վնասվածքներ. Անոթների վնասվածքներ, նյարդերի վնասվածքներ, մկանների վնասվածքներ, ազդրոսկրի դիաֆիզի կոտրվածքներ:

Ծնկան հողի շրջանի վնասվածքներ. ա. փափուկ հյուսվածքային վնասվածքներ. անոթների վնասվածքներ, նյարդերի վնասվածքներ, քառագլուխ մկանի ջլի վնասվածք, ծնկոսկրի սեփական կապանի վնասվածք, ռետինակուլումների վնասվածք, կողմնային կապանների վնասվածք, խաչաձև կապանների վնասվածք, մահիկների վնասվածք. բ. ծնկոսկրի հողախախտեր. գ. սրունքի հողախախտ ծնկան հողում. դ. ծնկոսկրի կոտրվածքներ. բևեռային (եզրային), ներջլային-առանց տեղաշարժի, քառագլուխ մկանի ջլի վնասվածքով-տեղաշարժով. ե. ոլոքի թմբկության պոկում. գ. ծնկան հողը կազմող ոսկրերի կոտրվածքներ. ազդրոսկրի

դիստալ մետաէպիֆիզի կոտրվածքներ, ոլոքի պրոքսիմալ մետաէպիֆիզի կոտրվածքներ:

Սրունքի շրջանի վնասվածքներ. Անոթների վնասվածքներ, նյարդերի վնասվածքներ, մկանների վնասվածքներ, նրբուլոքի գլխիկի հոդախախտ, զույգ ոսկրերի դիաֆիզի կոտրվածքներ:

Սրունքթաթային հոդի շրջանի վնասվածքներ ա. փափուկ հյուսվածքային վնասվածքներ. անոթների վնասվածքներ, նյարդերի վնասվածքներ, ջլերի և կապանների վնասվածքներ, աքիլեսյան ջլի վնասվածքներ բ. ոտնաթաթի հոդախախտեր սրունք-թաթային հոդում. գ. սրունք-թաթային հոդը կազմող ոսկրերի կոտրվածքներ. ոլոքի դիստալ մետաէպիֆիզի կոտրվածքներ, մեդիալ պճեղի կոտրվածքներ, ոլոքի առաջային և հետին եզրերի կոտրվածքներ, լատերալ պճեղի կոտրվածքներ, վեգոսկրի կոտրվածքներ:

Ոտնաթաթի վնասվածքներ. ա. փափուկ հյուսվածքային վնասվածքներ անոթների վնասվածքներ, նյարդերի վնասվածքներ, ջլերի և կապանների վնասվածքներ. գ. գարշապարը կազմող ոսկրերի վնասվածքներ (հոդախախտեր և կոտրվածքներ). դ. կրունկոսկրի կոտրվածքներ. ե. Նախագարշապարի ոսկրերի վնասվածքներ (հոդախախտեր և կոտրվածքներ) գ. մատները կազմող ոսկրերի վնասվածքներ (հոդախախտեր և կոտրվածքներ):

Ողնաշարի վնասվածքներ. ա. ողնուղեղի վնասվածքներ. բ. կապանների վնասվածքներ. գ. միջողնային սկավառակների ճողվածքներ. դ. ողերի հոդախախտեր. ե. սպոնդիլոլիզ և սպոնդիլոպոզ. գ. կոտրվածքներ. պարանոցային հատվածի, կրծքային հատվածի, գոտկային հատվածի սրբոսկրի և պոչուկի:

Մանկական հասակի վնասվածքների առանձնահատկությունները.

Վնասվածքներով հիվանդների կլինիկական հետազոտմա առանձնահատկությունները երեխաների մոտ: Բուժման հիմնական սկզբունքները մանկա-

կան վնասվածքաբանության մեջ: Երեխաների մոտ վնասվածքային շոկի առանձնահատկությունները: Հոդախախտերի առանձնահատկությունները: Կոտրվածքների առանձնահատկությունները: Անավարտ (կանաչ ճյուղի տիպի): Էպիֆիզիոլիզներ, օսթետէպիֆիզիոլիզներ:

Ներհոդային կոտրվածքների առանձնահատկությունները երեխաների մոտ: Բազմակի, համակցված և զուգակցված կոտրվածքներ (դասակարգում, կլինիկա, բուժման սկզբունքներ): Բաց կոտրվածքները երեխաների մոտ (կլինիկա, ախտորոշում, բուժում, բարդություններ):

Հետվնասվածքային բարդությունները երեխաների մոտ: Ոչ ճիշտ սերտաճած կոտրվածքները երեխաների մոտ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Մոնթեջիի հնացած վնասվածքը երեխաների մոտ, կլինիկա:

Վնասվածքաբանություն. Վերին վերջույթ. Անրակի կոտրվածքները երեխաների մոտ, ախտորոշում, բուժման ժամանակակից եղանակներ: Բազկոսկրի պրոքսիմալ հատվածի կոտրվածքները երեխաների մոտ (օստետէպիֆիզիոլիզներ), դասակարգում, կլինիկա, ախտորոշում, բուժման ժամանակակից եղանակներ, բարդություններ:

Բազկոսկրի դիաֆիզի կոտրվածքները երեխաների մոտ, դասակարգում, կլինիկա, ախտորոշում, բուժման ժամանակակից եղանակներ, բարդություններ: Բազկոսկրի դիստալ ծայրի կոտրվածքները երեխաների մոտ, դասակարգում, կլինիկա, ախտորոշում, բուժման ժամանակակից եղանակներ, բարդություններ: Բազկոսկրի միջկոճային կոտրվածքները երեխաների մոտ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Բազկոսկրի գլխիկավոր բարձրության կոտրվածքները երեխաների մոտ, կլինիկա, ախտորոշում, բուժում: Նախաբազկի ոսկրերի հոդախախտերը երեխաների մոտ, դասակարգում, կլինիկա, ախտորոշում, բուժման ժամանակակից եղանակներ: Նախաբազկի ոսկրերի կոտրվածքները երեխաների մոտ, դասակարգում, կլինիկա, ախտորոշում, բուժման ժամանակակից եղանակներ, բարդություններ: Մոնթեջիի վնասվածքը երեխաների մոտ, կլինիկա,

ախտորոշում, բուժում: Ճաճանչոսկրի վզիկի կոտրվածքները երեխաների մոտ, կլինիկա, ախտորոշում, բուժում:

Դաստակի ոսկրերի կոտրվածքները երեխաների մոտ, դասակարգում, կլինիկա, ախտորոշում, բուժման ժամանակակից եղանակներ:

Ստորին վերջույթ. Կոնքի ոսկրերի կոտրվածքները երեխաների մոտ (կլինիկան, ախտորոշումը, բուժումը): Ազդրոսկրի պրոքսիմալ հատվածի կոտրվածքները երեխաների մոտ (օստեոէպիֆիզիոլիզ), դասակարգում, կլինիկա, ախտորոշում, բուժման ժամանակակից եղանակներ, բարդություններ: Ազդրոսկրի դիաֆիզար կոտրվածքները երեխաների մոտ, դասակարգում, կլինիկա, ախտորոշում, բուժման ժամանակակից եղանակներ, բարդություններ: Ազդրոսկրի դիաստալ ծայրի կոտրվածքները երեխաների մոտ (օստեոէպիֆիզիոլիզ), դասակարգում, կլինիկա, ախտորոշում, բուժման ժամանակակից եղանակներ, բարդություններ:

Սրունքի ոսկրերի պրոքսիմալ հատվածների կոտրվածքները երեխաների մոտ, դասակարգում, կլինիկա, ախտորոշում, բուժման ժամանակակից եղանակներ, բարդություններ: Սրունքի ոսկրերի դիաֆիզար կոտրվածքները երեխաների մոտ, դասակարգում, կլինիկա, ախտորոշում, բուժման ժամանակակից եղանակներ, բարդություններ: Ունաթաթի ոսկրերի կոտրվածքները երեխաների մոտ, դասակարգում, կլինիկա, ախտորոշում, բուժման ժամանակակից եղանակներ, բարդություններ:

Օրթոպեդիա. (էթիոլոգիա, պաթոգենեզ, դասակարգում, ախտորոշում, բուժում, ռեաբիլիտացիա): Օրթոպեդիկ հիվանդությունների կլինիկան և գործիքային հետազոտության առանձնահատկությունները:

Կմախքի դեֆորմացիաներ: Վերջույթների ընդհանուր դեֆորմացիաներ: Շարժումների խանգարումներ. Կոնտրակտուրա, անկիլոզ, սինօստոզ:

Սեզմենտների առանցքների դեֆորմացիաներ. Դիաֆիզար. Հոդային. Էպիմետաֆիզար:

Պարանոցի և իրանի դեֆորմացիաներ. Առանցքային. մեկ կամ ավելի հարթություններում դեֆորմացիաներ:

Հենաշարժիչ համակարգի հիվանդություններ:

Նյութափոխանակության խանգարումներ (մետաբոլիկ). հիպեր- և հիպովիտամինոզներ. էնդոկրին մետաբոլիզմի խանգարումներ. բիրքի-միական մետաբոլիտների և սուբ-ստրատների խանգարումներ:

Բորբոքանման հիվանդություններ. բորբոքային հիստիոցիտոզ, քսանթոմատոզ, հարիոդային և ներհոդային կայցիֆիկացիա օսիֆիկացնող միոզիտ:

Դեգեներատիվ-դիստրոֆիկ վիճակներ. ռեակտիվ արթրիտներ. դեգեներատիվ արթրիտ և օստեոարթրիտ, շերտազատող օստեոխոնդրիտ, սինովյալ խոնդրոմատոզ, օստեոխոնդրոպաթիաներ, ոսկրի ասեպտիկ նեկրոզ, ոսկրի ինֆարկտ, կմախքի համակարգային հիվանդությունները, ոսկրերի և հոդերի նեյրոպաթիկ հիվանդություններ:

Զարգացման խանգարումներ (հերեդիտար). թերի ոսկրագոյացում, ոչ լրիվ խոնդրոգենեզ. Պեջետի հիվանդություն. Նեյրոֆիբրոմատոզ. ֆիբրոզ օսթեոդիսպլազիա. խոնդրոդիստրոֆիա և դիսխոնդրոպլազիա. Մետաֆիզար և էնխոնդրալ դիսօսթոզ. բազմաթիվ էկզոստոզային հիվանդություն. բազմաթիվ դեֆորմացնող հոդային խոնդրոդիսպլազիա:

Ոսկրերի և հոդերի ինֆեկցիաներ. Օստեոմիելիտ. ոսկրային տուբերկուլյոզ և սարկոիդոզ. պարազիտար հիվանդություններ. Սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ արթրիտներ:

Նյարդամկանային հիվանդություններ. մանկական ուղեղային կաթված Պոլիոմիելիտ. մանկաբարձական կաթված. Միոպաթիաներ:

Հենաշարժիչ համակարգի բնածին և ձեռքբերովի արատներ

Վերին վերջույթների զարգացման արատներ (+ ամելիաներ և հեմիմելիաներ). ամնիոտիկ ձգաններ. բնածին ճաճանչ-ծղիկային սինսոսթոզ. արմնկային հոդում նախաբազկի կողմնային դեպի ներս և դեպի

դուրս ծովածություններ. արմունկների բնածին գերտարածում. բնածին ծռածեռություն. Մադելունգի դեֆորմացիա. ձեռնաթաթի անոմալիաներ:

Ստորին վերջույթների զարգացման արատներ (+ամելիաներ և հեմի-մելիաներ). ամնիոտիկ ձգաններ. ազդրի բնածին և զարգացող հողախախտ. ազդրի վզիկ-դիաֆիզար անկյան փոքրացում և մեծացում. ծնկոսկրի բնածին հողախախտ. բնածին բլթավոր ծնկոսկր. սրունքի բնածին հողախախտ. ծնկահողում սրունքի բնածին կողմնային դեպի ներս և դեպի դուրս ծովածություններ. ծնկահողերի բնածին գերտարածում. սրունքի ոսկրերի բնածին կեղծ հող. ծուռթաթություն. Հարթաթաթություն և խորակամար ոտնաթաթ:

Կրծքավանդակի զարգացման բնածին արատներ. թևանման թիակներ հարթ կուրծք. ձագարածև կրծքավանդակ. ողնուցածև կրծքավանդակ. անրակի բնածին կեղծ հող:

Ողնաշարի զարգացման բնածին արատներ. ագենեզիա և դիսագենեզիա. կեցվածք (տրոպիզմ) և նրա շեղումները. մկանային և ոսկրային ծուրվզություն. Կլիպպել-Ֆեյլի հիվանդություն. Շարենգելի հիվանդություն. ողերի բնածին ճեղքում. սրբոսկրային ողերի լյումբալիզացիա. գոտկային ողերի սակրալիզացիա. ողերի չսերտաճած աղեղիկներ. բնածին սպոնդիլոլիզ և սպոնդիլոլիստեզ. ողերի սինօսթոզ և սեպածև ողեր. ողնուղեղի խողովակի և ողնուղեղի զարգացման արատներ:

Ժառանգական համախտանիշներ. Էնգլմոպաթիաներ. Համախտանիշներ ոսկրային արտահայտվածությամբ. համախտանիշներ նյարդամկանային արտահայտվածությամբ. տեռատոգեն հիվանդություններ:

Հենաշարժիչ համակարգի ուռուցքներ և ուռուցքանման վիճակներ.

(Էթիոլոգիա, պաթոգենեզ, պաթանատոմիա, դասակարգում, ախտորոշում, բուժում, ռեաբիլիտացիա)

Ֆիբրոզ ծագման. Բարորակ, չարորակ: **Աճառային ծագման.** բարորակ, չարորակ: **Ոսկրային ծագման.** բարորակ, չարորակ: **Այլ ծագման և**

խառը բնույթի. Ռետիկուլոէնդոթելյալ, մկանային, էպիթելիալ և օդոնտոգեն, նեյրոէկտոդերմալ, մետաստատիկ բնույթի, ուռուցքանման գոյացություններ, պոլիմորֆոքսջային, տեռատոմաներ:

Ոսկրային դեֆեկտ և ոսկրի դեֆիցիտ. ոսկրի դեֆեկտի և դեֆիցիտի սահմանում. ոսկրի դեֆեկտի և դեֆիցիտի կոնցեպցիայի բնորոշումը.

ոսկրի դեֆեկտների և դեֆիցիտի բուժման ցուցումները և տակտիկան

Կոնսերվատիվ բուժման մեթոդներ. ա. կոնսերվատիվ բուժման սկզբունքները. բ. կոնսերվատիվ մանիպուլացիաներ փակ եղանակով

գ. բուժական օրթոպեդիկ հարմարանքներ. բանդաժ, ֆիքսատորներ, գիպսակապեր, օրթեզներ, կորսեթներ, բեռնաթափող և սահմանափակող սարքեր:

Վիրահատական բուժման մեթոդներ:

Վիրահատություններ ոսկրերի վրա. ոսկրի տրեպանացիա. Օսթեոտոմիա և ուղղիչ օսթեոտոմիա. դիստրակցիոն օստեոգենեզ. էպիֆիզիոդեզ.

ոսկրի ռեզեկցիա. ոսկրային պլաստիկա և փոխպատվաստում:

Վիրահատություններ հոդերի վրա. արթրոսկոպիա, արթրոտոմիա և պունկցիա. արթրոէրեզ և սինոդեզ. արթրոդեզ. Հոդի ռեզեկցիա. Արթրոպլաստիկա. հոդերի էնդոպրոթեզավորում:

Վիրահատություններ մկանների և ջլերի վրա. մկանների երկարության փոփոխում. մկանների և ջլերի տրանսպոզիցիա. Տենոդեզ. արիեստական և բնական ջլային պլաստիկա:

Վիրահատություններ ողնաշարի վրա կապանների և սկավառակների վրա. միջողային դիսկէկտոմիա. կապանային դեկոմպրեսիա. սպինոդեզ (ինտերսպինալ տենոդեզ):

Ոսկրերի և հոդերի վրա. լամինոտոմիա և լամինէկտոմիա. պեդիկուլոտոմիա և ֆորամինոտոմիա. կորպորատոմիա և կորպորէկտոմիա. ֆասետային արթրոդեզ. միջմարմնային և միջաղեղիկային սպոնդիլոդեզ:

Վիրահատություններ դեֆորմացիաների ժամանակ. ուղղիչ օստեոտոմիաներ. սեզմենտար սպոնդիլոտոմիաներ. դիստրակցիոն կորեկցիա:

Սերտաճման խանգարումներ և կեղծ հոդեր. (էթիոլոգիա, պաթոգենեզ, կլինիկա, բուժում). ոչ ճիշտ սերտաճող կոտրվածք. ոչ ճիշտ սերտաճած դանդաղած սերտաճում. կեղծ հոդեր:

Անդամահատումներ. Դասակարգումը, ձևերը և տեսակները. Անդամահատման մակարդակների տոպոգրաֆիան. կատարման տեխնիկա և բարդություններ. Ռեամպլուտացիաներ. ռեկոնստրուկցիա և լաթերի ձևավորում. Պրոթեզավորում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Վ.Այվազյան. «Վնասվածքաբանություն և օրթոպեդիա», ձեռնարկ, Երևան, 2011.
2. Котельников Г.П., Миронов С.П.Травматология национальное руководство. Москва 2008.
3. Миронов С.П., Котельников Г.П. Ортопедия национальное руководство. Москва 2008.
4. Charles A. Rockwood, Jr.M.D., David P., Green Robert W., Bucholz. Rockwood and green's fractures in adults. Third edition, volum 1,1991.
5. Lovell W.W.,Winter R.B., Pediatric Orthopaedics, Third Edition 1990.
6. Canale S.T., and Beaty J.H.: Operative pediatric Orthopaedics, Masby – Year book USA, 199.1
7. Herring J.A., Tachjian's Pediatric Orthopaedics 4-th edition, 2007.
8. Rockwood and Wilkins: Fractures in Children; 7-th edition, USA, 2010.
9. Агаджанян В.В. Политравма, Новосибирск, 2003.
10. Агаджанян В.В. Политравма, септические осложнения, Новосибирск, 2005.
11. Агаджанян В.В. Политравма: неотложная помощь и транспортировка, Новосибирск, 2008.
12. Thomas A.,под ред. С.П.Миронова. Неотложная травматология, Москва, 2006.
13. М.Е.Мюллер, М.Альговер, Р. Шнайдер, Х. Виллингер.Руководство по внутреннему остеосинтезу. Москва, 1996.
14. Л.Н. Соломин. Основы чрескостного остеосинтеза аппаратом Г.А. Илизарова, Санк-Петербург. 2005.

15. Шапошников Ю.Г. "Травматология и ортопедия" М. Медицина, 1997.
16. A.H. Crenshaw, Campbell's operative orthopaedics, volumes 1-5 1992.
17. Timothy D Bunker, W Angus Wallace, Shoulder arthroscopy, 1991.
18. Heshmat Shahriaree, O' Connor's Textbook of arthroscopic surgery, 1992.
19. Зацепин С.Т. Костная патология взрослых., Москва, 2001.
20. Marcove C.R. Atlas of Bone pathology: With Clinical and Radiographic Correlations, Based on Henry L. Jaffe's Philadelphia, J.B. Lippincott, USA 1992.
21. Древинг Е.Ф. Травматология (Методика занятия физической культурой); М. 2002 Khurana J.S. Bone pathology 2 edition, USA, 2009.
22. Бубновский С.М. Руководство по кинезитерапии лечение боли в спине и грыж позвоночника; Издание 2-е, дополненное. М. 2004.
23. Епифанов В.А. Лечебная физкультура/ уч. пос. для вузов; М. 2002.

ԺԴ.00.14 - ԴԵՂԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆարմակոլոգիայի հիմնական սկզբունքները. Ֆարմակոլոգիան որպես քիմիական նյութերի օգնությամբ օրգանիզմի կենսագործունեության պրոցեսների ղեկավարման մասին գիտություն: Դեղերի թերապևտիկ, ֆարմակոդինամիկ և պլացեբո- ազդեցություններն ապահովող գործոնները: Դեղերը՝ գիտական, ժողովրդական և այլ ընտրանքային բժշկության մեջ (բժշկական կուլտեր): Դեղերի ստեղծման աղբյուրները և փուլերը: Ֆարմակոկինետիկայի հիմունքները:

Դեղերի տեղաշարժը օրգանիզմում՝ ներծծում, տեղաբաշխում, արտազատում: Դեղերի տեղաշարժը կենսաբանական պատնեշներով: Փոխադրման հիմնական գործոնները: Ջրային դիֆուզիա (էպիթել, մազանոթներ, գլխուղեղ, ընկերք): Դիֆուզի ալիպիդներում՝ շարժիչ ուժը, պայմանները և սահմանափակումները, դիֆուզիայի արագությունը (Ֆիկի օրենք): Թաղանթներով փոփոխականի ոնիզացիայով նյութերի փոխադրումը (Գենդերսոն – Գասսելբախի օրենք): Փոխադրման կառավարումը: Նյութերի ակտիվ տեղափոխումը տարբեր փոխադրիչների օգնությամբ: Օր-

գանհիզմում դեղերի տեղափոխման վրա ազդող հիմնական գործոնները: Դեղերի նախահամակարգային արտազատումը (առաջին անցման էֆեկտ լյարդով): Ֆարմակոկինետիկայի բաղկացուցիչները՝ կենսամատչելիություն, տեղաբաշխում, դեղերի քլիրենս: Ֆարմակոկինետիկ մոդելներ: Դեղերի ներծծման և արտազատման քանակական օրենքները:

Ֆարմակոկինետիկ հիմնական ցուցանիշները՝տեղաբաշխման ծավալ, քլիրենս, արտազատման հաստատաուն, կիսադուրսբերման ժամանակ: Դրանց բնույթը, որոշման և քանակական արտահայտման սկզբունքները, մեծությունները, փոխկապակցվածությունը, նշանակությունը դեղերի դոզավորման ռեժիմի ղեկավարման համար:

Դեղերի դոզավորման սկզբունքները. Արյան մեջ դեղերի ներմուծումը հաստատուն արագությամբ. Արյան մեջ խտության կինետիկան, կայուն խտության հաշվարկը ըստ դեղաչափի և պրեպարատի քլիրենսի: Թերապևտիկ խտության ղեկավարումը: Դեղերի ընդհատվող դեղաչափավորում. ստացիոնար խտության և նրա տատանման սահմանների հաշվարկը, թերապևտիկ խտության ղեկավարումը: Դիսկրետ դեղաչափերի ներմուծման համապատասխան ինտերվալը:

Սկզբնական դեղաչափ. դրա օգտագործման բուժական իմաստը և հիմնավորումը, անհատական սկզբնական դեղաչափի հաշվարկը ըստ ֆարմակոկինետիկ ցուցանիշների: Սկզբնական դեղաչափերի կիրառման պայմանները և սահմանափակումները: Պահպանողական դեղաչափեր. դրանց կիրառման բուժական իմաստը և պայմանները: Պահպանողական դեղաչափերի հաշվարկը՝ արյան մեջ պրեպարատի խտության տատանումների թույլատրելի ինտերվալում դեղաչափավորման լավագույն ռեժիմը ապահովելու համար:

Դեղերի ֆարմակոկինետիկայի վրա ազդող գործոնները. Դեղերի ֆարմակոկինետիկայի անհատական, տարիքային, սեռային տարբերությունները: Տեղաբաշխման ծավալի վրա ազդող գործոնները, դրա

քանակական հաշվարկը մարմնի քաշի պակասի, ավելորդ քաշի, այտուցների, հեղուկների սեկվեստրացիայի, ջրազրկման պայմաններում անհատական դեղաչափերի շտկման ժամանակ: Քլիրենսը որպես ֆարմակոկինետիկայի հիմնական դետերմինանտ: Դեղերի կամային քլիրենս և նրա բաղադրիչները: Երիկամային քլիրենսի կախվածությունը դեղերի ֆիզիկոքիմիական հատկություններից (բևեռայնություն, իոնոգենություն, մոլեկուլյար զանգված, արյան սպիտակուցների հետ կապվելու ընդունակություն): Լյարդային քլիրենս. Նյութափոխանակային ձևափոխումը և ձերբազատումը լեղու մեջ: Նյութափոխանակային քլիրենսի կենսաբանական ուղղվածությունը: Լեղիով ձերբազատվող նյութերի հիմնական հատկությունները, լյարդային քլիրենսի դետերմինանտները և սահմանափակումները: Դեղերի էնտերոհեպատիկ շրջանառությունը:

Դեղերի քլիրենսը փոփոխող գործոնները: Դեղաչափավորման ռեժիմի ընտրությունը. Դեղերի փոխազդեցությունները տեղափոխման և քլիրենսի ուղիներում: Դեղերի նյութափոխանակության առանձնահատկությունները (գենետիկ, սեռային, տարիքային):

Դեղերի ֆարմակոկինետիկայի վրա ազդող հիվանդությունները: Դեղաբուժության շտկումը լյարդի և երիկամների հիվանդությունների ժամանակ: Ընդհանուր մոտեցումները: Դեղաչափավորման շտկումը պրեպարատի ընդհանուր քլիրենսի հսկողության տակ, նախընտրելի տարբերակները: Շտկումը՝ երիկամների մնացորդային ֆունկցիայի հսկողության տակ: Դեղաբուժության շտկումը լյարդի ախտահարումների և օրգանիզմի այլ ախտաբանական վիճակների ժամանակ:

Դեղերի կենսաձևափոխումը. Ֆարմակոկինետիկ պրոցեսներում դեղերի մետաբոլիզմի հիմնական ուղղվածությունը, կենսաբանական իմաստը, հյուսվածքային տեղակայումը և դերը: Դեղերի նյութափոխանակային ձևափոխման երկու փուլերը: Քսենոբիոտիկների նյութափոխանակության միկրոսոմալ համակարգերը՝ մոլեկուլ-լյար կառուցվածքը, ֆերմենտատիվ

խթանումը և ընկճումը: Դեղերի կենսաձևափոխման հիմնական տիպերը (P-450 կախյալ և անկախ օքսիդացում, վերականգնում, հիդրոլիզ, կոնյուգացիա): Դեղերի կենսաձևափոխումը թունավոր վերջնանյութերի առաջացմամբ: Դեղերի կենսաձևափոխման կլինիկական նշանակությունը: Քսենոբիոտիկների մետաբոլիզմի պոպուլյացիոն սփռվածությունը և գենետիկական բազմաձևությունը, դեղերի կենսաձևափոխման կախվածությունը սեռից, տարիքից, մարմնի քաշից, էկոլոգիական գործոններից, ծխելուց, խմիչքից: Դեղերի մետաբոլիկ փոխազդեցությունը: Դեղերի կենսաձևափոխման վրա ազդող հիվանդությունները:

Ֆարմակոդինամիկ պրոցեսներ. Դեղերի ազդեցության ֆիզիկոքիմիական և քիմիական մեխանիզմները: Ընկալիչային հայեցակարգը ֆարմակոլոգիայում, աղբյուրները և զարգացման ուղղությունները: Դեղերի ընկալիչների մոլեկուլար բնույթը: Դեղերի ազդեցության ազդանշանային մեխանիզմները, տրանսթաղանթնային ազդանշանների տիպերը և երկրորդային միջնորդները:

Դեղերի ազդեցությունների քանակական օրենքները: Կլարկի մոդելը և նրա արդյունքները: Խտություն – ազդեցություն ընդհանուր կախվածությունը նորմալ և լոգնորմալ կոորդինատներում: Քանակական ֆարմակոլոգիայի տերմիններն ու հասկացությունները. ազդեցություն, արդյունավետություն, աֆինիտետ, ազոնիստ (լրիվ, մասնակի), անտագոնիստ: Դեղերի փոխազդեցությունները: Անտագոնիզմ. ֆարմակոլոգիական (մրցակցային, ոչ մրցակցային), ֆիզիոլոգիական, քիմիական: Նյութի ակտիվության և արդյունավետության փոփոխությունը՝ կախված անտագոնիզմի տեսակից: Գումարային սիներգիզմ և պոտենցում:

Դեղերի ակտիվության և արդյունավետության փոփոխությունները: Ազդեցության աստիճանավորված և քվանտային գնահատականը: Դեղերի ազդեցության քանակական գնահատման ձևերը փորձարարական և կլինիկական պրակտիկայում: Դեղերի ազդեցության տարատեսակները և

փոփոխականությունը. հիպոռեակտիվություն և հիպերռեակտիվություն, տոլեռանտություն և տախիֆիլաքսիա, գերակտիվություն և գերզգայունություն, իդիոսինկրազիա: Դեղերի ազդեցությունների տարատեսակության պատճառները, ընկալիչների քանակական փոփոխությունների, հասանելիության և զգայունության փոփոխությունների մեխանիզմները: Դեղերի ազդեցության ընտրողականությունը և սպեցիֆիկությունը: Բուժական, կողմնակի և թունավոր ազդեցություններ: Դրանց բնույթը ընկալիչային հայեցակարգի տեսանկյունից: Դեղերի կողմնակի և թունավոր ազդեցությունների դեմ պայքարի բուժական ռազմավարությունը: Դեղերի անվտանգության գնահատումը: Թերապևտիկ ինդեքս և անվտանգության ստանդարտ սահմանները, դրանց փորձարարական և կլինիկական ուսումնասիրման մեթոդները: Ֆարմակոլոգիայի և թունաբանության հիմնական մեթոդները: Տարբեր տեսակների փորձարարական կենդանիներին ֆարմակոլոգիական նյութերի ներմուծման մեթոդները: Ֆարմակոլոգիական նյութերի՝ մոլեկուլյար, գենետիկ, բջջային, օրգանային և համակարգային մակարդակներով ազդեցությունների ուսումնասիրման հիմնական մոտեցումները: Ֆարմակոլոգիական նյութերի անվտանգության փորձարարական գնահատականը: **Մասնավոր ֆարմակոլոգիա.** Ծայրամասային նյարդային համակարգի վրա ազդող միջոցներ: Աֆերենտ նյարդավերջույթների վրա ազդող միջոցներ: Տեղային անզգայացնող, տոպոլ, պատոլ, ադսորբող և գրգռող միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, ակտիվության քիմիական դետերմինանտները, կիրառման ոլորտները: Վեգետատիվ նյարդային համակարգի վրա ազդող միջոցներ: Խոլիներգիկ միջոցներ: Ծայրամասային նյարդային համակարգի նյարդամիջնորդանյութերը և ընկալիչները: Խոլիներգիկ գրգռափոխանցում: Ացետիլխոլինի ձերբազատման մեխանիզմը և նրա կարգավորումը: Խոլինոընկալիչների մոլեկուլյար կառուցվածքը և հետերոգենությունը. մուսկարինային (M1, M2,

M3, M4, M5) և նիկոտինային (NM, NN) խոլինոընկալիչներ, տեղակայումը, ֆիզիոլոգիական և ֆարմակոլոգիական խթանման էֆեկտները: Արտասինապսային խոլինոընկալիչներ:

M և N խոլինոմիմետիկներ և հակախոլինեսթերազային դեղեր: Ազդեցության մեխանիզմը, ակտիվության կառուցվածքային դետերմինանտները, ֆարմակոլոգիական ազդեցությունները, կիրառումը բժշկության մեջ: Ծխելու դեմ պայքարի միջոցները: Խոլինեսթերազայի ռեակտիվատորներ, բուժումը հակախոլինեսթերազային դեղերով թունավորման ժամանակ: Ացետիլխոլինի ձերբազատումը խթանողներ:

M – խոլինոպաշարիչներ (հակամուսկարինային ազեոններ). Դասակարգումը, ակտիվության կառուցվածքային դետերմինանտները, ազդեցության մեխանիզմը, ֆարմակոլոգիական ազդեցությունները, կիրառումը բժշկության մեջ: Թունավորումը ատրոպինով և օգնության միջոցները:

Հանգուցապաշարիչներ (հականիկոտինային ազեոններ). Դասակարգումը, ակտիվության կառուցվածքային դետերմինանտները, ազդեցության մեխանիզմը, ֆարմակոլոգիական ազդեցությունները, կիրառումը բժշկության մեջ: Նյարդամկանային պաշարիչներ (միոոելաքսանտներ՝ մկանաապալարիչներ). դասակարգումը, ապաբ և եռացնող և հակաապաբլենացնող մկանաապալարիչների կառուցվածքը և ազդեցության մեխանիզմը, կիրառումը բժշկության մեջ: Կուռարեանման միջոցների անտագոնիստները:

Կենտրոնական խոլինոլիտիկներ, ֆարմակոլոգիական ազդեցությունները, կիրառումը բժշկության մեջ: Երրորդային և չորրորդային ամոնիումային միացությունների ֆարմակոկինետիկայի առանձնահատկությունները: Ադրեներգիկ միջոցներ: Սիմպատիկ նյարդային համակարգի կառուցվածքային և ֆունկցիոնալ կառուցվածքը: Նոր ադրենալինի և դոֆամինի սինթեզը, պահեստավորումը, ձերբազատումը, կենսաբանական ակտիվագերծումը: Ադրենոընկալիչների մոլեկուլյար կառուցվածքը և հետերո-

գենությունը. a_1, a_2, b_1, b_2, b_3 ադրենոլընկալիչներ. տեղակայումը, ֆիզիոլոգիական և ֆարմակոլոգիական խթանման էֆեկտները: Արտասինապային ադրենոլընկալիչներ: Ադրեներգիկ ազոնիստներ՝ կատեխոլամիններ (ադրենալին, նոր ադրենալին, դոֆամին), a - ադրենոմիմետիկներ, b – ադրենոմիմետիկներ, սիմպատոմիմետիկներ: Քիմիական կառուցվածքը, ազդեցության մեխանիզմները, ֆարմակոլոգիական ազդեցությունները, կիրառումը կլինիկական և փորձարարական բժշկության մեջ:

Ադրեներգիկ անտագոնիստներ (ադրենոպաշարիչներ). դասակարգումը և ֆարմակոլոգիական հատկությունները: Ընտրողական a և b – ադրենոմիմետիկներ: Հասկացություններ քինսիմպատոմի-մետիկ ակտիվության մասին: Ադրենոպաշարիչների կլինիկական և փորձարարական կիրառումը: Սիմպատոլիտիկներ. ազդեցության մեխանիզմները, կլինիկական և փորձարարական կիրառումը:

Կենտրոնական նյարդային համակարգի վրա ազդող միջոցներ: Դեղեր նարկոզի համար, դասակարգումը, ֆիզիոլոգիական հատկությունները, ազդեցության մեխանիզմները և ֆարմակոդինամիկական, կլինիկական կիրառումը և անվտանգությունը: Նարկոզի բարդությունների կանխարգելումը և վերակենդանացումը գերդոզավորման ժամանակ:

Տազնապամարիչներ (անքսիոլիտիկներ), դասակարգումը, անքսիոլիտիկ ազդեցության էությունը: Բենզոդիազեպիններ, ազդեցության ֆիզիոլոգիական և մոլեկուլյար մեխանիզմները, կիրառումը բժշկության մեջ, ընտելացումը և դեղորայքային կախյալությունը: Նորագույն անքսիոլիտիկներ (բուսափրոն):

Քնաբեր միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները և տարբեր սերունդի քնաբերների համեմատական բնութագիրը: Ազդեցությունը քնի կառուցվածքի վրա: Փորձարարական և կլինիկական կիրառումը: Դեղորայքային կախյալությունը, քնաբերներով սուր թունավորում և

Ֆարմակոթերապիայի սկզբունքները: Սպիրտներ. էթանոլի ֆարմակոլոգիան և թունաբանությունը: Ալկոհոլիզմի դեղաբուժությունը:

Թմրաբեր ցավազրկողներ, քիմիական կառուցվածքի հիմնական տարրերը, ազդեցության մեխանիզմները և թմրաբեր ցավազրկողների համեմատական բնութագիրը: Կլինիկական և փորձարարական կիրառումը: Թմրաբեր ցավազրկողների անտագոնիստներ: Թմրաբեր ցավազրկողներով սուր թունավորումները և դրանց ֆարմակոթերապիայի սկզբունքները: Թմրամոլությունը և բուժման մոտեցումները:

Ոչ թմրաբեր ցավազրկողներ, դասակարգումը, ցավազրկող ազդեցության առանձնահատկությունները: Ազդեցությունը ցավազգացողության ձևավորման ծայրամասային մեխանիզմների վրա: Կլինիկական և փորձարարական կիրառումը:

Հակաէպիլեպտիկ (հակացնցումային) միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները և արդյունավետությունը էպիլեպսիայի տարբեր ձևերի ժամանակ: Էպիլեպտիկ ստասուսի պաշարումը:

Հակապարկինսոնային միջոցներ, էքստրապիրամիդալ խանգարումների ֆարմակոլոգիական շտկման սկզբունքները: Դասակարգումը, ազդեցության մեխանիզմները և ժամանակակից հակապարկինսոնային միջոցների արդյունավետությունը: Կողմնակի ազդեցությունների հաղթահարման ուղիները: Հակափսիխոտիկ միջոցներ, նեյրոլեպտիկների հիմնական խմբերը և հակափսիխոտիկ ազդեցության մեխանիզմները: Դրանց համեմատական բնութագիրը: Կիրառումը բժշկության մեջ և փորձարարական ֆարմակոլոգիայում:

Հակադեպրեսանտներ և հակամանիակալ միջոցներ, հիմնական խմբերը, ազդեցության մեխանիզմները և կլինիկական կիրառումը: Լիթիում, ազդեցության մեխանիզմը և կլինիկական կիրառումը:

Հոգեխթանիչներ և անալեպտիկներ, հոգեխթանիչների ազդեցության ֆիզիոլոգիական և մոլեկուլյար մեխանիզմները: Կենտրոնական և ծայրա-

մասային ազդեցությունները: Կիրառումը բժշկության մեջ և ֆարմակոլոգիայում: Դեղորայքային կախյալություն: Անալեպտիկ ազդեցության էությունը և մեխանիզմները: Անալեպտիկների բժշկական կիրառումը:

Նոոտրոպ միջոցներ, հասկացություն նոոտրոպ ազդեցության մասին և նրա փորձարարական տեստավորման մեթոդները, նոոտրոպների կլինիկական կիրառումը:

Օրգան համակարգերի վրա ազդող միջոցներ: Շնչառական օրգանների ֆունկցիայի վրա ազդող միջոցներ: Շնչառության խթանիչներ և հակահագային միջոցներ, դասակարգումը, շնչառությունը խթանող ազդեցության մեխանիզմները, բժշկական կիրառումը: Խորխաբեր միջոցներ, ազդեցության մեխանիզմը, բժշկական կիրառումը: Բրոնխոլիտիկ միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները, կլինիկական կիրառման առանձնահատկությունները: Բրոնխեալ ասթմայի բուժման ժամանակակից սկզբունքները: Թոքերի այտուցի ժամանակ կիրառվող միջոցներ, թոքերի այտուցի բուժման սկզբունքները, հակաբորբոքային միջոցների, դեհիդրանտների, միզամուղների, սրտային գլիկոզիդների և հիպոտենզիվ պրեպարատների կիրառումը: Սրտանոթային համակարգի և երիկամների ֆունկցիայի վրա ազդող միջոցներ: Կարդիոտոնիկ միջոցներ:

Սրտային գլիկոզիդներ, ազդեցության մեխանիզմը և բուժական ազդեցությունը խրոնիկական սրտային անբավարարության ժամանակ: Պրեպարատների համեմատական բնութագիրը: Սրտային գլիկոզիդներով ինտոքսիկացիան, դրա բուժումը և կանխարգելումը:

Ոչ գլիկոզիդային բնույթի կարդիոտոնիկ միջոցներ: Հակաառիթմիկ միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները: Կլինիկական կիրառումը, վտանգները և կողմնակի ազդեցությունները: Հակահեղձուկային միջոցներ, ստենոկարդիայի առաջացման պատճառները և զարգացման մեխանիզմները: Հակահեղձուկային միջոցների հիմնական խմբերը: Նիտրատների, b-ադրենոպաշափչների, կալցիումական մղանցք-

ների պաշարիչների, անոթալայնիչների հակահեղձուկային ազդեցության մոլեկուլյար և ֆիզիոլոգիական մեխանիզմները:

Միոկարդի ինֆարկտի դեղաբուժության սկզբունքները: Հակահիպերտենզիվ միջոցներ, տարբեր խմբերի հակահիպերտենզիվ միջոցների ֆարմակոլոգիական հատկությունները և կլինիկական կիրառումը: Հիպերտոնիկ հիվանդության և հիպերտենզիվ վիճակների ժամանակակից դեղաբուժությունը: Համակցված բուժման սկզբունքները: Միզամուղներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները, համեմատական բնութագիրը: Ուրիկոզուրիկ միջոցներ: Միզամուղների կլինիկական ֆարմակոլոգիան: Հակաաթերոսկլերոտիկ միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները, կլինիկական կիրառումը:

Մարսողական օրգանների ֆունկցիաների վրա ազդող միջոցներ: Ախորժակի խթանիչներ և անոռեքսիզեններ, ազդեցության մեխանիզմը, կլինիկական կիրառումը: Ստամոքսի հյութազատությունը խթանող միջոցներ, ազդեցության մեխանիզմը, կլինիկական կիրառումը: Փոխարինող թերապիայի միջոցները, պրեպարատները, կլինիկական կիրառումը: Հակախոցային միջոցներ, անտացիդներ, հակասերետորներ, գաստրոպրոտեկտորներ, *Helicobacter pylori*-ի էռադիկացիայի միջոցներ: Փսխաբեր և հակափսխումային միջոցներ, պրեպարատները, ազդեցության մեխանիզմը, կիրառումը: Լեղամուղ միջոցներ, լեղու գոյացումը և արտազատումը խթանող միջոցների ազդեցության սկզբունքները: Կլինիկական կիրառումը: Ենթաստամոքսային գեղձի արտազատիչ ֆունկցիայի խանգարման ժամանակ կիրառվող միջոցներ, ազդեցության սկզբունքները, կլինիկական կիրառումը: Աղիների մոտորիկան ընկճող միջոցներ, դասակարգումը, կլինիկական կիրառումը: Աղիների մոտորիկան խթանող միջոցներ, լուծողականներ, դասակարգումը, կլինիկական կիրառումը:

Արզանդային միջոցներ: Ծննդաբերական պրոցեսը խթանող և արզանդային արյունահոսությունները դադարեցնող միջոցներ, ազդեցության

մեխանիզմները և կլինիկական ֆարմակոլոգիան: Ե-ադրենոմիմետիկների կիրառումը որպես տոկոլիտիկ միջոցներ:

Արյան համակարգի վրա ազդող միջոցներ: Անեմիաների ժամանակ կիրառվող միջոցներ, էլեկոպոեզը խթանողներ և ընկճողներ, ազդեցությունները և կիրառումը: Հակահեմոռագիկ և հեմոստատիկ միջոցներ, տեղային և համակարգային կոագուլյանտներ, որոնք կիրառվում են արյունահոսությունների դադարեցման, արյան մակարդեղիության խանգարումների և ակտիվացած ֆիբրինոլիզի ժամանակ: Հակակոագուլյանտներ, դասակարգումը, հեմոստազի վրա ազդեցության մեխանիզմները, կլինիկական ֆարմակոլոգիան: Հեպարինի և անուղղակի հակակոագուլյանտների անտագոնիստներ: Թրոմբոլիտիկներ, ազդեցության մեխանիզմը, կլինիկական ֆարմակոլոգիան: Հակաազդեցանտներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները, կիրառումը:

Էնդոկրին միջոցներ: Դասակարգումը: Ստացման աղբյուրները: Կենսաբանական ստանդարտիզացիայի և դեղաչափավորման սկզբունքները:

Հիպոթալամուսի և հիպոֆիզի հորմոնալ պրեպարատներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները, կլինիկական ֆարմակոլոգիան:

Թիրեոիդային և հակաթիրեոիդային միջոցներ, պրեպարատների ազդեցության մեխանիզմները, կլինիկական ֆարմակոլոգիան:

Պարաթիրեոիդային միջոցներ, ազդեցության մեխանիզմը, գործնական կիրառումը: Հակադիաբետիկ միջոցներ, մարդու և կենդանական ինսուլիններ, ռեկոմբինանտ ինսուլիններ, դեղաչափավորման սկզբունքները և կիրառումը: Պերոռալ հիպոգլիկեմիկ միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները, կիրառումը:

Կորտիկոստերոիդներ, քիմիական կառուցվածքը, գլյուկոկորտիկոիդների ֆարմակոդինամիկական և կլինիկական ֆարմակոլոգիան, կորտիկոստերոիդների սինթեզը ընկճողներ: Միներալկորտիկոիդներ:

Իզական սեռական հորմոններ, էստրոգենների և հեստագենների քիմիական կառուցվածքը և ֆիզիոլոգիական նշանակությունը: Էնտերալ և պարէնտերալ կիրառման պրեպարատներ: Հակաէստրոգենային և հակահեստագենային պրեպարատներ: Պերոռալ հակաբեղմնավորիչներ:

Անդրոգենային պրեպարատներ և անաբոլիկ ստերոիդներ, ֆիզիոլոգիական և ֆարմակոլոգիական ազդեցությունները, կլինիկական կիրառումը:

Հակաանդրոգենային պրեպարատներ, ազդեցության մեխանիզմը, կիրառումը: Ֆերմենտային պրեպարատներ: Պրոտեոլիտիկ ֆերմենտներ, պրոտեոլիզը ընկճողներ:

Պրեպարատները, կլինիկական կիրառումը: Վիտամինային պրեպարատներ: Ջրալուծ և ճարպալուծ վիտամինների պրեպարատներ, վիտամինների նյութափոխանակային նշանակությունը,

ազդեցությունը նյարդային, սրտանոթային համակարգերի, աղեստամոքսային տրակտի, արյունաստեղծման, էպիթելյար ծածկույթների վիճակի և ռեգեներացիայի պրոցեսների վրա: Բժշկական կիրառումը:

Հակաբորբոքային, հակապոդագրիկ, հակաալերգիկ և իմունոմոդուլացնող միջոցներ: Ստերոիդային հակաբորբոքային միջոցներ: Ոչ ստերոիդային հակաբորբոքային միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմը,

կլինիկական ֆարմակոլոգիան: Հակապոդագրիկ միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, կլինիկական ֆարմակոլոգիան:

Հակաալերգիկ միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, կլինիկական ֆարմակոլոգիան: Քլորոֆինի և ոսկու աղերի ֆարմակոլոգիական հատկությունները և կլինիկական կիրառումը շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդությունների ժամանակ:

Իմունոխթանիչներ և իմունոդեպրեսանտներ, դասակարգումը, հիմնական պրեպարատները, բժշկական կիրառումը: Ալկալիական և հողալկալիական մետաղների աղեր:

Զրաաղային խանգարումները և դրանց շտկման սկզբունքները նատրիումի, կալիումի, կալցիումի պրեպարատներով: Մագնեզիումի իոնների

կենսաբանական նշանակությունը և դրա պրեպարատների կիրառումը կլինիկական բժշկության մեջ: Թթվահիմնային հավասարակշռության վերականգնման սկզբունքները: Հակամիկրոբային և հակամակաբուծային միջոցներ: Քիմիոթերապևտիկ միջոցների հայտնաբերման պատմությունը (Էռլիխ, Ֆլեմինգ, Դոմակզ, Զինափոա Երմոլեվա):

Անտիբիոտիկներ: Դասակարգումը, հասկացություն հիմնական և պահեստային անտիբիոտիկների մասին: Պենիցիլիններ, ցեֆալոսպորիններ, ցեֆամիցիններ և օքսաբետտա-լակտամներ, բետտա-լակտամազի արգելակողներ: Մոնոբակտամներ, կարբապենեմներ: Մակրոլիդներ և ազալիդներ: Գլիկոպեպտիդներ, տետրացիկլիններ: Ամինոգլիկոզիդներ, լինկոզամիդներ: Քլորամ ֆենիկոլ, ֆուզիդիաթթու: Պոլիմիքսիններ:

Տարբեր խմբերի անտիբիոտիկների ազդեցության մեխանիզմները և հակաբակտերիալ ոլորտը, կիրառումը վարակների բուժման և կախարգելման համար: Անտիբիոտիկոթերապիայի բարդությունները, դրանց կանխումը: Սուլֆանիլամիդներ և տրիմետոպրիմ, կոտրիմոքսազոլ, ազդեցության մեխանիզմը, հակաբակտերիալ ոլորտը, կիրառումը:

Միզային անտիսեպտիկներ, ազդեցության մեխանիզմը, հակաբակտերիալ ոլորտը, կիրառումը: Ֆտորիսինոլոններ և մետրոնիդազոլ, ազդեցության մեխանիզմը, հակաբակտերիալ ոլորտը, կլինիկական ֆարմակոլոգիան: Հակամիկրոբակտերիալ միջոցներ, հակասպիրոխետային միջոցներ: Տուբերկուլոզի և սիֆիլիսի բուժման ժամանակակից միջոցները և սկզբունքները: Հակավիրուսային միջոցներ: Հիմնական խմբերը, ազդեցության մեխանիզմները, կլինիկական ֆարմակոլոգիան: ՁԻԱՀ-ի բուժման համար կիրառվող միջոցներ: Հակասնկային միջոցներ: Դասակարգումը, ազդեցության ոլորտը, կիրառումը: Մակերեսայի և համակարգային միկոզների բուժման համար կիրառվող միջոցներ:

Հակամակաբուծայի նմիջոցներ: Մալարիայի բուժման և կանխարգելման համար կիրառվող միջոցներ: Լյամբլիոզի, ամեոբիազի, տրիխոմոնոզի,

տոքսոպլազմոզի, լեյշմանիոզի դեմ կիրառվող միջոցներ: Ազդեցության մեխանիզմները, կլինիկական ֆարմակոլոգիան: Հակահելմինտային միջոցներ: Դասակարգումը, ազդեցության մեխանիզմները: Կիրառման հիմնական սկզբունքները: Հակաուռուցքային միջոցներ: Հիմնական խմբերը, ազդեցության մեխանիզմները, կլինիկական ֆարմակոլոգիան: Ցիտոստատիկների իմունոճնշիչ և հակապրոլիֆերատիվ հատկությունները: Անտիսեպտիկ և դեզինֆեկցող միջոցներ: Հասկացություն անտիսեպտիկայի և դեզինֆեկցիայի մասին: Դասակարգումը, տարբեր խմբերի անտիսեպտիկների հիմնական ազդեցության մեխանիզմները, կիրառման առանձնահատկությունները: Դեղերի փոխազդեցությունները: Դեղերի Ֆիզիկոքիմիական, ֆարմակոդինամիկ, ֆարմակոկինետիկ փոխազդեցությունները: Ֆարմացևտիկ և ֆարմակոլոգիականան համատեղելիություն: Ֆարմակոլոգիական նյութերով և թույներով սուր թունավորման բուժման սկզբունքները: Մարդու օրգանիզմում թույների աբսորբցիայի կանխարգելման միջոցները՝ ներմուծման տարբեր ուղիների դեպքում: Թունազերծման և թույների արտազատման արագացման մեթոդները: Ոչ սպեցիֆիկ և սպեցիֆիկ հակաթույներ, կիրառումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Белоусов Ю.Б., Моисеев В.С., Лепяхин В.К. Клиническая фармакология и фармакотерапия: М., Универсум Паблишинг, 1997.
2. Венгеровский А.И. Лекции по фармакологии для врачей и провизоров, 3-е издание, М., 2006.
3. Информация о лекарственных средствах для специалистов здравоохранения. USPD1 Русс. изд. Вып.1-6. М: РЦ , 1996, 2000.
4. Клиническая фармакология. (Под ред. В.Г. Кукеса). 2 изд. М: 1999.
5. Лекарственные препараты в России. Справочник Видаль. М., 2005.
6. Метелица В.И. Справочник по клинической фармакологии и сердечно-сосудистых средств. М., Медпрактика, 2005.
7. Харкевич Д.А. – Фармакология. М., Медицина, 2005.

8. British National Formulary (BNF), British medical Association, 2006.
9. Clinical Pharmacy and Therapeutics. Ed. By Roger Walker & Clive Edwards, 3-th ed., Churchill Livingstone, 2003.
10. Goodman & Gilman's The Pharmacological Basis of Therapeutics. Ninth Edition. Pergamon, 1996.
11. Katzung B.G. Basic and Clinical Pharmacology. Appleton & Lange, 7-8-th ed., 1997-2003.
12. Rang & Dale's Pharmacology, 7-th ed. Published by Elsevier Inc., 2012.
13. The Use of Essential Drugs. Seventh Report of the WHO Expert Committee. WHO, Geneva, 1997.

ԺԴ.00.15 – ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Ստացիոնարում վիրաբուժական օգնության կազմակերպումը: Հիվանդների անհետաձգելի և պլանային հոսպիտալիզացիայի ցուցումները: Վիրաբուժական հիվանդների հետազոտման ալգորիթմը, օբյեկտիվ հետազոտության ժամանակակից գործիքային և լաբորատոր եղանակները, հետազոտման հատուկ մեթոդներ: Վիրաբուժական միջամտություն՝ նախավիրահատական շրջան, հիվանդի նախապատրաստումը վիրահատության, վիրահատություն, հետվիրահատական շրջանի վարումը, հնարավոր բարդությունների կանխումն և բուժումը: Բժշկական էթիկան և դեոնտոլոգիան:

Անտիսեպտիկա և ասեպտիկա. Վիրաբուժական ինֆեկցիայի աղբյուրները և տարածման ուղիները, էկզոգեն և էնդոգեն ինֆեկցիա: Անտիսեպտիկայի տեսակները (մեխանիկական, քիմիական, ֆիզիկական, կենսաբանական), ժամանակակից անտիսեպտիկ միջոցների հիմնական խմբերը և նրանց օգտագործման եղանակները: Անտիսեպտիկ նյութերին առաջադրվող պահանջները: Հականեխման և ախտահանման հիմնական մեթոդները և սկզբունքները: Վարակի տեսակները, տարածման ուղիները (օդային, շփման, կաթիլային, իմպլանտացիոն), վիրաբուժական

գործիքների, վիրակապական նյութերի, վիրասրահի, սպիտակեղենի, կարանյութերի ախտահանման հիմնական մեթոդները, վիրաբույժի ձեռքերի նախապատրաստումը վիրահատության, վիրահատական դաշտի մշակումը, ստերիլության հսկողություն: Հոսպիտալային (ներհիվանդանոցային, նոզոկոմիալ) վարակ, ասեպտիկ տեխնիկան վիրահատության ընթացքում: Կենսաբանական անտիսեպտիկա և հակաբիոտիկների կիրառման սկզբունքները վիրաբուժության մեջ: Հակաբիոտիկաթերապիայի ընդհանուր սկզբունքները: Հակաբիոտիկների հիմնական խմբերը, ներմուծման ուղիները, հակաբիոտիկաթերապիայի բարդությունները, ախտորոշումը և կանխարգելումը:

Արյունահոսություն. Արյունահոսություն, դասակարգումը, մակարդելիության համակարգ, սուր և քրոնիկ սակավ-արյունություն. կլինիկան, ախտորոշումը և բուժումը: Արտաքին, ներքին և թաքնված արյունահոսությունների ախտորոշումը, հեմոպերիտոնեում, հեմոթորաքս. Կլինիկան և բուժումը: Գործոններ, որոնք որոշում են կորցրած արյան ծավալը և արյունահոսության ելքը, պրոֆուզ արյունահոսություն, հեմոռագիկ շոկ: Օրգանիզմի պաշտպանողական-հարմարողական ռեակցիաները արյան կորստի դեպքում: Արյունահոսության ժամանակավոր և վերջնական դադարեցման եղանակները: Երկրորդային արյունահոսություններ, պատճառները, դադարեցման եղանակները, կանխարգելումը:

Արյան փոխներարկում և ժամանակակից տրանսֆուզիոլոգիա.

Արյան փոխներարկում, արյան աղբյուրներ, հիմնական հեմոտրանսֆուզիոն միջավայրերը, փոխներարկված արյան ազդեցության մեխանիզմները: Արյան հակաձնային համակազերը և դրանց նշանակությունը, արյան բաղադրամասերը: Արյան խմբի և ռեզուս գործոնի որոշումը, փոխներարկման հիմնական տեսակները և մեթոդները, ցուցումները և հակացուցումները: Հիվանդի նախապատրաստումը փոխներարկման, համատեղելիության փորձերի կատարումը, փոխներարկման ծավալի որոշումը:

Փոխներարկման բարդությունները. կլինիկան, կանխումը, բուժումը, հեմոտրանսֆուզիոն շոկ: Արյան փոխարինիչ հեղուկների հիմնական խմբերը, փոխներարկման հիմնական սկզբունքները և ազդեցության մեխանիզմները, տրանսֆուզիայի ցուցումների և ծավալի որոշում, պարէնտերալ սնուցում:

Վերքեր և վերքային վարակ. Վերքի հիմնական նշանները, դասակարգումը, բարդությունները, հրազենային վերքի առանձնահատկությունները, ասեպտիկ, թարմ վարակված և թարախային վերքեր, վերքի լավացման փուլերը: Հիվանդների հետազոտության առանձնահատկությունները, վերքային վարակ, վերքի թարախակալում: Վերքերի լավացման դասական եղանակները, լավացում առաջնային ձգումով, լավացումեր կրորդային ձգումով, լավացում կեղևի տակ, ախտաբանական գրանույլացիաներ: Վերքերի բուժման սկզբունքները, առաջին օգնությունը, ասեպտիկ և թարմ վարակված վերքերի բուժումը: Առաջնային վիրաբուժական մշակման հիմնական տեսակները, կարերի տեսակները: Թարախային վերքերի բուժման սկզբունքները, երկրորդային վիրաբուժական մշակում: Վերքերի բուժումը հատուկ աբակտերիալ միջավայրում, վերքային միկրոֆլորայի որակական և քանակական բնութագիրը: Սպիի առաջացման և վերակազմավորման փուլերը, վիրակապություն:

Փակ վնասվածքների ընդհանուր հարցերը. Վնասվածքների դասակարգումը, վնասվածքով հիվանդների հետազոտման յուրահատկությունները: Ընդհանուր երևույթներ վնասվածքների դեպքում՝ տրավմատիկ (վնասվածքային) շոկ. փուլեր, աստիճաններ, ախտաֆիզիոլոգիա, կլինիկա, առաջին օգնության, բուժում, արտակարգ իրավիճակներում հիվանդների հետ ազոտությունները ծանր վնասվածքների դեպքում: Փափուկ հյուսվածքների փակ վնասվածքներ՝ սալջարդ, ճնշում, ձգում և պատռվածք: Վնասվածքային տոքսիկոզ (երկարատև ճնշման կամ Կրաչհամախտանիշ). ախտաֆիզիոլոգիա, կլինիկա, առաջին օգնություն, բուժում:

Գլխուղեղի փակ վնասվածքներ՝ ուղեղի ցնցում, սալջարդ, ճնշում, ախտաֆիզիոլոգիա, կլինիկա, առաջին օգնություն, բուժում: Որովայնի փակ վնասվածքներ՝ ներորովայնային արյունահոսություն, պերիտոնիտ: Հոդախախտ, դասակարգումը, կլինիկան, բուժումը: Ոսկրերի կոտրվածքներ, դասակարգումը, ոսկրային հյուսվածքի ռեգեներացիան (լավացումը, ոսկրիկոնսոլիդացիան), ոսկրային բեկորների սերտաճման պայմանները: Կոտրվածք ունեցող հիվանդի հետ ազոտությունը, կլինիկան, բուժումը: Բարդությունները կոտրվածքների դեպքում: Փոխադրամիջոցային (տրանսպորտային) անշարժացում: Ջերմային այրվածքներ, աստիճաններ, կլինիկան, բուժումը, այրվածքային շոկ: Քիմիական այրվածքներ, կլինիկան, բուժումը: Ճառագայթային այրվածքներ, կլինիկան, բուժումը: Ցրտահարություն, կլինիկական պատկերը, փուլերը, բուժումը:

Վիրաբուժական վարակ և թարախաբորբոքային հիվանդություններ.

Թարախային (ոչյուրահատուկ) վարակ, դասակարգումը, պատճառագիտությունը, թարախաբորբոքային հիվանդությունների հարուցիչները. Աերոբ և անաերոբ, սպոր առաջացնող և սպորչառաջացնող միկրոօրգանիզմներ, ախտածինսնկեր: Կլինիկական պատկերը և ախտորոշումը, տեղային ախտանշանները. բորբոքման դասականնշանները, ընդհանուր ախտանշանները, թարախի կուտակման ախտանշանները, ախտորոշիչ պունկցիա: Թարախային վիրաբուժական վարակի ախտորոշման և ընդհանուր բուժման էությունը և սկզբունքները՝ հակաբակտերիային բուժում, դեզինտոքսիկացիոն թերապիա, իմունաբուժում, հոմեոստազի կարգավորում: Ֆուրունկուլ՝ էթիոպաթոգենեզ, կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը, բարդությունները, դեմքի ֆուրունկուլի առանձնահատկությունները, ֆուրունկուլոզ: Կարբունկուլ, թարախակույտ, ֆլեգմոնա, հիդրադենիտ, ավշային անոթների սուր բորբոքում (լիմֆանգիտ), ավշային հանգույցների բորբոքում (լիմֆադենիտ), կարմիր քամի, մատնաշունչ, մաստիտ, թարախային ոսկրաբորբ, ընդհանուր թարախային վարակ

(սեպսիս)՝ էթիոպաթոզենեզ, կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը, բարդությունները, կանխարգելումը:

Անաերոբ վարակ. անաէրոբ գազային գանգրենա (փտախտ)՝ պատճառը, ախտածագումը, կլինիկական ձևերը և պատկերը, ախտորոշումը, կանխարգելումը և բուժումը: Քրոնիկ սպեցիֆիկ վիրաբուժական վարակի ընդհանուր հարցերը, վիրաբուժակ անտուբերկուլյոզ (պալարախտ). ոսկրերի և հողերի տուբերկուլյոզ, ողնաշարի տուբերկուլյոզ (տուբերկուլյոզային սպոնդիլիտ), տուբերկուլյոզային լիմֆադենիտ՝ կլինիկական դրսևորումները, ախտորոշումը, բուժումը: Սուր սպեցիֆիկ վարակ՝ սիբիրյան խոց (anthrax), փայտացում (պրկախտ՝ tetanus), կատաղություն. վարակման աղբյուրները, դասակարգումը, էթիոպաթոզենեզ, կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը, բարդությունները, կանխարգելումը:

Տեղային արյան շրջանառության սուր և քրոնիկական խանգարումներ
Մեռուկ (նեկրոզ), փտախտ (գանգրենա), չորևթաց տեսակներ, խոցեր, խուղակներ, պառկելախոցեր՝ էթիոպաթոզենեզ, կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միրիջանյան Մ.Մ., Բարսեղյան Հ.Ա., Ստեփանյան Ս.Ա.
2. Վիրաբուժություն, 1 հատոր. Երևան 2012.-458էջ.
3. Гостищев В.К. Общая хирургия. 4 изд. М: ГЭОТАРМедиа. 2006. 866 с

ԿՐԾՔԱՅԻՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Թոքային վիրաբուժության պատմություն. Ընհանուր թորակալ վիրաբուժության զարգացման պատմություն: Թորակալ վիրաբուժության տեխնիկական զարգացման պատմություն:

Կրծքավանդակի անատոմիան և ֆիզիոլոգիան. Կրծքավանդակի պատի անատոմիան: Արտաքին շնչառության ֆիզիոլոգիան: Վերին շնչուղիների անատոմիան և ֆիզիոլոգիան: Թոքերի անատոմիան: Գազափոխանակության ֆիզիոլոգիան: Պլևրայի անատոմիան և ֆիզիոլոգիան: Միջնորմի անատոմիան: Ստոծանու անատոմիան և ֆիզիոլոգիան:

Թորակալ վիրաբուժության մեջ հետազոտման եղանակները.

Կլինիկական հետազոտություն: Ռենտգենաբանական հետազոտություն: Համակարգչային տոմոգրաֆիա: Մագնիսական ռեզոնանսային տոմոգրաֆիա: Պոզիտրոն-էմիսիոն տոմոգրաֆիա: Արտաքին շնչառության հետազոտում: Սիրտ-անոթային համակարգի հետազոտում:

Թորակալ վիրաբուժության մեջ գործիքային գննման մեթոդները.

Ֆիբրոբրոնխոսկոպիա. Ռիզիդ բրոնխոսկոպիա. Կոմբինացված բրոնխոսկոպիա. Պունկցիոն բիոպսիա. Մեդիաստինոսկոպիա. Էզոֆագոսկոպիա Թորակոսկոպիա:

Կրծքավանդակի վիրաբուժական հիվանդների կլինիկան և բուժումը.

Վերին շնչուղիների պաթոլոգիաների կլինիկական արտահայտությունները և բուժումը: Թոքերի բակտերիալ ախտահարումների կլինիկան և բուժումը: Թոքերի էմֆիզեմայի և բուլլոզ հիվանդության կլինիկան և բուժումը: Թոքի քաղցկեղի կլինիկական պատկերը, ախտորոշումը և բուժումը: Թոքի սնկային և պարազիտային ախտահարումների կլինիկան, ախտորոշումը և բուժումը: Պլևրայի հիվանդությունների կլինիկան, ախտորոշումը և բուժումը: Միջնորմի ուռուցքային ախտահարումների կլինիկան, ախտորոշումը և բուժումը: Միջնորմի բակտերիալ ախտահարումների կլինիկան, ախտորոշումը և բուժումը: Կերակրափողի ախտահարումների կլինիկան, ախտորոշումը և բուժումը:

Կրծքավանդակի թափանցող վիրավորումների կլինիկական պատկերը, ախտորոշումը և բուժումը: Կրծքավանդակի փակ վնասվածքների կլինի-

կական պատկերը, ախտորոշումը և բուժումը: Ստոծանու պաթոլոգիաների կլինիկական պատկերը, ախտորոշումը և բուժումը:

Վիրահատական բուժման մեթոդները թորակալ վիրաբուժության մեջ.
Պլերալ խոռոչի դրենավորում. Թորակոստոմայի ձևերը. Թորակոսկոպիա. Թոքի մասնահատում. Տրախեոստոմիա. Շնչափողի մասնահատում. Կերակրափողի մասնահատում. Վիրահատություններ միջնորմի վրա. Վիրահատություններ ստոծանու վրա. Վիրահատություններ կրծքավանդակի վնասվածների դեպքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ESTS TEXTBOOK OF THORACIK SURGERY: Editor Jazostaw Kuzdizat Cracow 2014.
2. Л. Н. Биссенков, Хирургия огнестрельных ранений груди, Гиппократ 2001, Санкт-Петербург.
3. Б. А. Долинин, Операции при паннених и травмах, Медицина, 1982
4. Surgery of the TRACHEA and Brochi: Hermes C Crillo 2014, Hamilton London.
5. Thoracic surgery: F. Griffith Pearson 1995, New York.
6. Е. А. Вагнер, Хирургия повреждений груди, 1981, Москва.
7. Ю. Г. Шаломников. Диагностика и лечение ранений: 1981, Москва
8. В. Д. Паршин, В. А. Порхонов, Хирургия трахеи: Москва, 2010.
9. А. А. Вишневский, А. А. Адомен Хирургия средастения: Москва, 1977.
10. М. Е. Дебеки. Б. В. Петровский, Экстренная хирургия сердца и сосудов: Москва, 1980.
11. Е. А. Вагнер. Ошибки, опасности, осложнения в легочной хирургии: Пермь, 1977.
12. М.И. Перельман. Хирургия грудного протока: Москва,1984.

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՏՈՄԻԱ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Գլխի օպերատիվ վիրաբուժություն և տեղագրական անատոմիա.

Գլխի կառուցվածքային առանձնահատկությունները և վիրահատությունների հիմնական սկզբունքները: Գլխի բջջանքային տարածությունները և

նրանց պրակտիկ նշանակությունը: Գլխի անոթաներվային գոյացությունները և նրանց ընթացքի առանձնահատկությունները և ուրվագծումը: Գլխի երակային արյան շրջանառության առանձնահատկությունները, նրանց կլինիկական նշանակությունը, կարծրենու երակածոցերը: Դեմքի կողմնային շրջանի կառուցվածքային առանձնահատկությունները: Գլխի վերքերի մշակման առանձնահատկությունները և արյունահոսության դադարեցման եղանակները: Տրեպանացիաները, դասակարգումը, կատարման ընդհանուր սկզբունքները:

Պարանոցի օպերատիվ վիրաբուժություն և տեղագրական անատոմիա. Պարանոցի կառուցվածքային առանձնահատկությունները և փակեղա - բջջանքային կառուցվածքը: Պարանոցի խորանիստ անոթաներվային խրձերի տեղագրությունը: Պարանոցի մակերեսային երակները և ներվերը, նրանց պրակտիկ նշանակությունը, ուրվագծերը և պրակտիկ նշանակությունը: Պարանոցի ընդերային օրգանների (որկոր, շնչափող, վահանագեղձ) տեղագրությունը: Պարանոցի վերքրեի մշակման հիմնական սկզբունքները հիմնական սկզբունքները:

Տրախետտոմիա, տրախետոտոմիա:

Կրծքի օպերատիվ վիրաբուժություն և տեղագրական անատոմիա.

Կրծքի կառուցվածքային առանձնահատկությունները և վիրահատությունների հիմնական սկզբունքները: Կրծքի սեփական շերտերը տեղագրությունը և թորակոտոմիայի եղանակները: Կրծքագեղձի տեղագրությունը և նրա վրա կատարվող վիրահատությունների սկզբունքները: Կրծքի պատի սահող շերտերի տեղագրությունը և կողմնորոշիչ գծերը: Կրծքի խոռոչի տեղագրությունը:

Պլերալ և պերիկարդի խոռոչների պունկցիայի կատարման սկզբունքները: Վիրահատություններ պնևմոթորաքսների ժամանակ:

Որովայնի օպերատիվ վիրաբուժություն և տեղագրական անատոմիա.

Որովայնի պատի կառուցվածքային առանձնահատկությունները, լապարատոմային կտրվածքներ: Որովայնի առաջային պատի անոթավորման առանձնահատկությունները և նրանց պրակտիկ նշանակությունը:

Որովայնի խոռոչի օրգանների ուրվագծումը և նրանց պրակտիկ նշանակությունը: Աճուկային խողովակի և սերմնալարի տեղագրությունը: Ամորձաէջքի բիոմեխանիզմը, ամորձաջրգողության և բուժման սկզբունքները: Աճուկային ճողվածքների վիրաբուժական անատոմիան: Աճուկային ճողվածքների վիրահատությունների հիմնական սկզբունքները:

Որովայնամզի ընթացքի առանձնահատկությունները, որովայնամզային տարածությունը: Որովայնամզի խոռոչի վերին հարկի օրգանների տեղագրությունը: Աղեկարի սկզբունքները: Ստամոքսի վրա կատարվող վիրահատությունների հիմնական սկզբունքները: Լեղուղիների տեղագրությունը և նրանց վրա կատարվող վիրահատությունների հիմնական սկզբունքը: Որովայնի խոռոչի ստորին հարկի օրգանների տեղագրական առանձնահատկությունները, վիրահատությունների հիմնական սկզբունքները, աղիքային խողովակներ, ապենդեկտոմիա:

Հետորովայնամզային տարածության և կոնքի օպերատիվ վիրաբուժության և տեղագրական անատոմիա. Հետորովայնամզային տարածության փակեղաբջջանքային տարածությունները և նրանց պրակտիկ կարևորությունը: Մուտքերը դեպի հետորովայնամզային տարածության, օրգանները: Կոնքի հարկերը, փակեղաբջջանքային տարածությունները և նրանց կլինիկական նշանակությունը: Կոնքի օրգանների տեղագրությունը, մուտքերը դեպի կոնքի բջջանքային տարածությունները և կոնքի օրգանները:

Վերին վերջույթի օպերատիվ վիրաբուժության և տեղագրական անատոմիա. Պիրոգովի ուսմունքը վերջույթների պատյանային կառուցվածքի մասին: Վերին վերջույթի ներվանոթային խրճերի ընթացքը, ուրվագծումը: Ուսագոտու և բազկի շրջանի կառուցվածքային առանձնահատկություն-

ները: Արմնկային և նախաբազկի շրջանների տեղագրաանատոմիական առանձնահատկությունները:

Ձեռքի թաթի բջջանքային տարածությունները, անոթավորման և ներվավորման առանձնահատկությունները:

Վերին վերջույթի բորբոքային պրոցեսների տարածման հնարավորությունները և վիրաբուժական միջամտության հիմնական սկզբունքները:

Կտրվածքներ վերին վերջույթի թարախային պրոցեսների ժամանակ:

Անոթակարի և ջլակարի սկզբունքները:

Կողատերալ արյան շրջանառության առանձնահատկությունները վերին վերջույթում: Արյունահոսության դադարեցման առանձնահատկությունները, զարկերակների մերկացման և կապման հիմնական սկզբունքները:

Վերին վերջույթի ենթամաշկային ճարպաբջջանքի կառուցվածքային

առանձնահատկությունները, մակերեսային երակները, ներվերը և նրանց ուրվագծումը: Վերին վերջույթի ակոսները, բջջանքային տարածությունները, փոսերը, խողովակները և նրանց պրակտիկ կարգավորումները:

Վերին վերջույթի ենթամաշկային ճարպաբջջանքի կառուցվածքային առանձնահատկությունները, մակերեսային երակները, ներվերը և նրանց պրակտիկ կարգավորումները:

Ստորին վերջույթի օպերատիվ վիրաբուժություն և տեղագրական անատոմիա. Ստորին վերջույթի փակեղաբջջանքային տարածությունների տեղագրությունը, ոսկրափակեղային և միջփակեղային տարածությունները: Ստորին վերջույթի ներվանոթային խրճերի ընթացքը, ուրվագծումը:

Ենթաաճուկային շրջանի տեղագրությունը, ազդրային խողովակ: Ազդրային ճողվածքներ: Ազդրային ճողվածքի վիրաբուժական անատոմիան, ազդրային ճողվածքների վիրահատական բուժման առանձնահատկությունները:

Նստային և ազդրային շրջանների տեղագրությունը, բջջանքների հաղորդակցությունը:

Ծնկան, սրունքի և ոտնաթաթի շրջանների առանձնահատկությունները: Ամպուտացիաների դասակարգումը և հիմնական սկզբունքները:

Կտրվածքներ ստորին վերջույթի թարախային պրոցեսների ժամանակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ.Մ. Միրիջանյան և հեղ. Վիրաբուժություն, 1-ին հ. Ս.Լ. Օրդույան, Գլուխ II, Օպերատիվ վիրաբուժություն:
2. Ռ.Ս. Շամոյան, Վերջույթների վիրաբուժական անատոմիան, ուս. ձեռնարկ:
3. Ֆ.Նետտեր «Մարդու անատոմիայի ատլաս»:
4. В.В. Кованов "Оперативная хирургия и топографическая анатомия".
5. Ю.Л. Золотко "Атлас топографической анатомии человека", том 1-2, М. 1964.

ՆՅԱՐԴԱՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Նյարդավիրաբուժության պատմություն. Նյարդավիրաբուժության զարգացման պատմությունը:

Կենտրոնական նյարդային համակարգի անատոմիա և ֆիզիոլոգիա.

Գիտակցության կարգավորման անատոմիական և ֆիզիոլոգիական հիմունքները: Գիտակցության խանգարման տեսակները, դասակարգումը:

Բարձրագույն կեղևային ֆունկցիաներ և դրանց խանգարման տեսակները: Գլխուղեղի կեղևի կառուցվածքը, ֆունկցիաները: Խաչաձև համախտանիշները միջին ուղեղի վնասման դեպքում: Խաչաձև համախտանիշները գլխուղեղի կամրջի վնասման դեպքում: Խաչաձև համախտանիշները երկարավուն ուղեղի վնասման դեպքում:

Վեգետատիվ վիճակ, գլխուղեղի մահ, բնորոշումները, ախտորոշման չափորոշիչները: Բուլբար և պսևդոբուլբար համախտանիշներ:

Մկանային տոնուսի խանգարման տեսակները, դրանց կլինիկական նշանակությունը: Ներքին պատիճ, վնասման ախտանիշները: Հոտառական համակարգ: Տեսողական նյարդ և տեսողական համակարգ, ախտահարման նշանները տարբեր մակարդակներում:

Բբային ռեֆլեքս, տեսակները և անիզոկորիայի պատճառները: Ակնաշարժ համակարգ, ախտահարման նշանները: Միջային երկայնաձիգ խուրձ, միջկորիզային օֆթալմոպլեգիա, հայացքի պարեզներ:

Եռորյակ նյարդ, ախտանշաբանությունը: Դիմային նյարդի ախտահարման տեսակները, ախտանիշները: Լսողության և հավասարակշռության համակարգերը: Գանգուղեղային նյարդերի կառույալ խումբ, վնասման ախտանիշները: Ենթալեզվային նյարդի ախտահարման նշանները:

Գլխուղեղի և ողնուղեղի արյան մատակարարումը, առանձին զարկերակների ավազանները: Գլխուղեղի և ողնուղեղի թաղանթների անատոմիան և ֆիզիոլոգիան:

Մակերեսային և խորանիստ ռեֆլեքսներ, հիմնական ախտաբանական ախտանիշները: Ուղեղ-ողնուղեղային հեղուկ, նշանակությունը, արտադրությունը, շրջանառությունը և ներծծումը: Գլխուղեղի փորոքային համակարգի անատոմիան:

Պիրամիդալ ուղու կառուցվածքը, ֆունկցիոնալ անատոմիան: Շարժումների կորդիկնացիա, հավասարակշռություն: Միզապարկի ֆունկցիայի կամային կարգավորումը: Գլխուղեղի պերֆուզիոն ճնշում, արյան շրջանառության ինքնակարգավորում (աուտոռեգուլյացիա): Հեմատոէնցեֆալիկ պատնեշ, նշանակությունը: Գլխուղեղի այտուցի տարատեսակները: Գլխուղեղի կոլլատերալ արյան շրջանառություն:

Կենտրոնական նյարդային համակարգի հիվանդությունների հետազոտման եղանակները. Ակնահատակի հետազոտման դերը նյարդավիրաբուժությունում: Ուղեղ-ողնուղեղային հեղուկի կազմությունը նորմալում: Ուղեղ-ողնուղեղային հեղուկի փոփոխությունը տարբեր պաթոլոգիաների դեպքում: Գոտկային պունկցիա, ցուցումները, հակացուցումները, տեխնիկան: Ներգանգային ճնշման չափման մեթոդները:

Լիկվորոդինամիկ փորձեր, կլինիկական նշանակությունը: Լաբորատոր հետազոտությունների դերը գլխուղեղի հիվանդությունների ախտորոշման մեջ: Տեսադաշտերի հետազոտության դերը գլխուղեղի հիվանդությունների ախտորոշման մեջ: Նեյրոտոքսիկոլոգիա: Նեյրոպաթոլոգիա, հիմնական սկզբունքները:

Կենտրոնական նյարդային համակարգի հիվանդությունների գործիքային զննումը. Ռենտգեն հետազոտություն, նշանակությունը նյարդավիրաբուժության մեջ: Գլխուղեղի ԿՏ հետազոտություն: Գլխուղեղի ՄՌՏ հետազոտություն:

Ախտորոշիչ ցերեբրալ անզիոգրաֆիա, ցուցումները: Էլեկտրոէնցեֆալոգրաֆիա, կլինիկական կիրառությունը նյարդավիրաբուժությունում:

Էլեկտրոնեյրոմիոգրաֆիա, կլինիկական կիրառությունը նյարդավիրաբուժությունում: Գլխուղեղի հարուցված պոտենցիալներ: Միելոգրաֆիա, ցուցումները, տեխնիկան: Նեյրոսոնոգրաֆիա, ներվիրահատական կիրառությունը: Նեյրոնավիզացիայի սկզբունքները:

Կենտրոնական նյարդային համակարգի հիվանդությունների կլինիկան. Ճակատային, քունքային, գագաթային և ծոծրակային բլթերի ախտահարման համախտանիշները: Պիրամիդալ ուղու վնասման ախտանիշները տարբեր մակարդակներում: Գլխուղեղի դիսլոկացիոն համախտանիշներ, կլինիկական դրսևորումները:

Ներգանգային հիպերտենզիոն համախտանիշ, բուժման սկզբունքները: Մենինգեալ համախտանիշ, տարբերակիչ ախտորոշումը:

Նեյրոգեն միզապարկ, տեսակները, կլինիկական դրսևորումները:

Ողնուղեղի լայնական ախտահարման ախտանիշները տարբեր մակարդակներում: Ողնուղեղի նյարդարմատիկային համախտանիշները պարանոցային և կրծքային հատվածներում: Ողնուղեղի նյարդարմատիկային համախտանիշները գոտկասրբանային հատվածում: Գլխացավերի տարբերակիչ ախտորոշումը: Էպիլեպսիայի և էպիլեպտիկ նոպաների դասակարգումը: Տրիգեմինալ նևրալգիա: Գլխուղեղի արյան շրջանառության անցողիկ խանգարումներ: Հեմոռագիկ կաթված, դասակարգումը, ախտորոշումը, բուժման սկզբունքները: Իշեմիկ կաթված, դասակարգումը, ախտորոշումը, բուժման սկզբունքները: Իշեմիկ կաթված, բուժման

առանձնահատկությունները վաղ ներկայացման դեպքում: Կաթվածների երկրորդային կանխարգելումը: Երակային և սինուս-թրոմբոզներ:

Սուբարախնոհղալ արյունազեղում, էթիոլոգիան, կլինիկական պատկերը, ախտորոշումը, բուժումը և կանխարգելումը: Գլխուղեղի անոթների անևրիզմաներ, ախտորոշումը և բուժման մեթոդի ընտրության սկզբունքները: Գլխուղեղի անոթային համակարգի բնածին հիվանդություններ, դասակարգումը, բուժման սկզբունքները: Գանգուղեղային վնասվածների դասակարգումը: Ներգանգային վնասվածքային հեմատոմաներ: Գլխուղեղի սալջարդ, դասակարգումը, վարումը: Գանգաթաղի կոտրվածքներ, դասակարգումը, վիրահատական բուժման ցուցումները:

Գանգի հիմի կոտրվածքներ, հնարավոր բարդությունները: Դիֆուզ աքսոնալ վնասում, ախտորոշումը, վարումը: Գանգուղեղային վնասվածքների բարդությունները և հետևանքները:

Ներգանգային ճնշման հսկողությունը և շտկումը: Հետվնասվածքային էպիլեպսիա, դասակարգումը, բուժումը: Ուղեղ-ողնուղեղային հեղուկի խողակներ, տեսակները, ախտորոշումը և բուժումը:

Հիդրոցեֆալիա, դասակարգումը, կլինիկական պատկերը, բուժումը:

Ուղեղ-ողնուղեղային հեղուկի դրենավորման և շունտավորման մեթոդները, ցուցումները, տեխնիկան, բարդությունները:

Ողնաշար-ողնուղեղային վնասվածքները պարանոցային հատվածում:

Ողնաշար-ողնուղեղային վնասվածքները կրծքագոտկային հատվածում:

Ճաճանչային, ծղիկային, միջնակ նյարդի նեյրոպաթիաներ:

Առաջնային և երկրորդային թարախային մենինգիտներ, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկական պատկերը, բուժումը:

Շճային մենինգիտներ, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկական պատկերը, բուժումը: Գլխուղեղի և թաղանթների թարախաբորբոքային հիվանդություններ: Գլխուղեղի նորագոյացություններ, դասակարգումը, կլինի-

կական պատկերը, ախտորոշումը, բուժումը: Խիազմա-սեյար շրջանի նորագոյացություններ: Հետին գանգափոսի նորագոյացություններ:

Մենինգոթելիալ ծագման նորագոյացություններ: Նեյրոէպիթելիալ ծագման նորագոյացություններ: Վեստիբուլյար շվանոմա: Էքստրա- և ինտրամեդուլյար նորագոյացություններ:

Նյարդավիրաբուժական վիրահատությունների անզգայացման առանձնահատկությունները, դիրքավորման դերը, դեղորայքային ազդեցությունները: Գանգի հիմի նյարդավիրաբուժության հիմունքները, մուտքեր դեպի առաջային, միջին և հետին գանգափոսեր:

Հակաբիոտիկային բուժումը և կանխարգելումը նյարդավիրաբուժությունում: Ստերեոտաքսիկ և ֆունկցիոնալ նյարդավիրաբուժության հիմունքները: Նյարդավիրաբուժական հիվանդների նախավիրահատական պատրաստումը և հետվիրահատական վարումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Duus' Topical Diagnosis in Neurology, Mathias Baehr, Michael Frotscher, 5th edition, 2012, Thieme.
2. Functional Neuroanatomy, Adel Afifi, Ronald A. Bergman, 2nd Edition, 2005, McGraw-Hill Professional.
3. Handbook of Neurosurgery, Mark S.Greenberg, 8th edition, 2016, Thieme.
4. Youmans and Winn, Neurological Surgery, Richard H. Winn, 4-Volume Set, 6th Edition, 2011, Elsevier.
5. Клиническая неврология. В 3 т. Том 3 (часть1, 2). Основы нейрохирургии, А.С.Никифоров, А.Н.Коновалов, Е.И.Гусев, 2004, Медицина.

ԱՆՈԹԱՅԻՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Անոթային հիվանդությունների դիագնոստիկա. Ուլտրաձայնային դուպլեքս սկանավորում. Կոնտրաստային անգիոգրաֆիա. Համակարգչային տոմոգրաֆիա: Մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիա:

Հենդդինամիկան անոթային հիվանդությունների ժամանակ. Նորմալ արյան հոսք. Զարկերակային ստենոզներ. Շրջանցող շունտավորում:

Սիրտ-թոքային ֆունկցիայի գնահատումը ռեկոնստրուկտիվ անոթային վիրահատությունների ժամանակ. Սրտային գործունեության նախավիրահատական գնահատում:

Թոքերի ֆունկցիայի նախավիրահատական գնահատում:

Անոթային և էնդովասկուլյար տեխնիկայի հիմունքները. Անոթակարեր և բերանակցումներ. Պլաստիկ կարկատանով. Էնդարտերէկտոմիա. Բալունային անգիոպլաստիկա և ստենտավորում. Թրոմբոլիտիկ թերապիա: **Վիրաբուժական մուտք դեպի անոթներ.** Մուտք դեպի քնային զարկերակներ և վերտեբրո-բազիլյար համակարգ:

Տրանսստերնալ մուտք դեպի աորտայի աղեղի մագիստրալ անոթներ:

Վերին վերջույթ: Ներորովայնամզային մուտք դեպի որովայնային աորտան և զստային զարկերակները: Հետորովայնամզային մուտք դեպի աորտայի որովայնային հատված: Ստորին վերջույթ:

Սուր զարկերակային անանցանելիություն. Զարկերակային էմբոլիա. Զարկերակային թրոմբոզ. Անոթների վնասվածք. Ֆասցիոտոմիա:

Ստորին վերջույթների զարկերակների քրոնիկական խցանում.

Օբլիտերացնող թրոմբանգիիտ. Ոչ սպեցիֆիկ աորտո-արտերիիտ Աթերոսկլերոզ. Աորտա-զստա-ազդրային սեզմենտի վիրահատական բուժում: Ազդր-ծնկափոս-ոլոքային սեզմենտի վիրահատական բուժում:

Գոտկային սիմպատէկտոմիա և լրացուցիչ մեթոդիկաներ: Հետվիրահատական հսկողություն:

Աորտային և ծայրամասային զարկերակների անևրիզմաներ. Կրծքային աորտայի անևրիզմաներ: Աորտայի թորակոաբդոմինալ անևրիզմաներ: Որովայնային աորտայի անևրիզմաներ: Ծայրամասային զարկերակների անևրիզմաներ:

Ցերեբրովասկուլյար անբավարարություն. Կարոտիդային էնդարտերեկտոմիա: Վերտեբրո-բազիլյար անբավարարության վիրահատական բուժում: **Ընդերային օրգանների անոթային պաթոլոգիա.** Միջընդերային իշեմիա. Վազոռենալ հիպերտենզիա. Ընդերային զարկերակների անևրիզմաներ:

Վերին վերջույթների պաթոլոգիա. Անգիոտրոֆոններոզ: Վերին վերջույթների զարկերակների վիրահատություններ: Լրացուցիչ միջամտություններ (I կողի ռեզեկցիա, կրծքային սիմպաթեկտոմիա):

Զարկերակ-երակային մալֆորմացիաներ. Դիագնոստիկա. Վիրաբուժական բուժում: **Երակային համակարգի վիրաբուժություն.** Վարիկոզ հիվանդություն. Ենթամաշկային երակների թրոմբոֆլեբիտ. Խորանիստ երակների սուր թրոմբոզ. Հետթրոմբոտիկ հիվանդություն. Կավաֆիլտրացիա: **Լիմֆեդեմայի ախտորոշում և բուժում:**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Клиническая ангиология: Руководство. В 2т. Т. 1. Под ред. Покровского А.В., Изд.: Медицина, 2004г., 808стр.
2. Клиническая ангиология: Руководство. В 2т. Т. 2. Под ред. Покровского А.В., Изд.: Медицина, 2004г., 888 стр.
3. Руководство по сосудистой хирургии с атласом оперативной техники. Под ред. Белова Ю.В., Изд.: МИА, Моква, 2014г., 464стр.
4. Сосудистая хирургия по Хаймовичу Руководство. В 2 т. Т. 1. В переводе Э.Ашера, Изд.: Бином, 2010г., 644стр.
5. Сосудистая хирургия по Хаймовичу Руководство. В 2 т. Т. 2. В переводе Э.Ашера, Изд.: Бином, 2010г., 534стр.
6. Савельев В.С., Гологорский В.А., Кириенко А.И. Флебология: Руководство для врачей, Под ред. В.С. Савельева. М.: 2001. 641 с.
7. Jack L. Cronenwett, K. Wayne Johnston. RUTHERFORD'S VASCULAR SURGERY. Vol 1, Saunders, Philadelphia, 2010, p.1352.
8. Jack L. Cronenwett, K. Wayne Johnston. RUTHERFORD'S VASCULAR SURGERY. Vol 2, Saunders, Philadelphia, 2010, p.1314.

ՄՐՏԱՅԻՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր դրույթներ. Սրտի վիրաբուժական անատոմիա: Վիրահատական մուտքերը սրտային վիրաբուժության մեջ: Արյան արհեստական շրջանառություն: Խոր և չափավոր հիպոթերմիա, արհեստական շրջանառության լրիվ կամ մասնակի կանգ: Կարդիոպրոտեկցիա: Արյան արհեստական շրջանառության առանձնահատկությունները մանկակական սրտային վիրաբուժության մեջ: Կորոնարոգրաֆիա, կորոնար անատոմիա: Հետվիրահատական ինֆեկցիոն կոնտրոլ: Զարկերակային և երակային կաթետերիզացիա պունկցիոն և կտրվածքային եղանակներով: Պլերալ և պերիկարդիալ խոռոչների պունկցիա և դրենավորում: Առաջնային միջնորմի հեմոստազ և կրծքավանդակի ամբողջականության վերականգնում մետաղալարերի միջոցով: Վաղ հետվիրահատական շրջանում արյունահոսության վարումը և կրծքավանդակի վերաբացման ցուցումները:

Սրտի իշեմիկ հիվանդություն. Աորտո-կորոնար շունտավորում: Զարկերակային և երակային շունտեր: Ձախ փորոքի անևրիզմալի վիրահատական բուժման ցուցումները: Հետինֆարկտային միջփորոքային միջնապատի դեֆեկտի վիրահատական բուժումը: Իշեմիկ միտրալ անբավարարության վիրահատական բուժումը:

Սրտի փականային հիվանդություն. Մեխանիկական փականներ: Կենսաբանական փականներ: Միտրալ փականի անբավարարություն և ստենոզ: Միտրալ փականի ինֆեկցիոն էնդոկարդիտ: Միտրալ փականի պլաստիկայի տեսակները: Տրիկուսպիդ փականի անբավարարություն և ստենոզ: Տրիկուսպիդ փականի ինֆեկցիոն էնդոկարդիտ: Աորտալ փականի ստենոզ և անբավարարություն: Աորտալ փական պահպանող վիրահատություններ: Աորտալ փականի ինֆեկցիոն էնդոկարդիտ: Բենտալլ Դե Բոնոյի վիրահատություն, մոդիֆիկացիաներ: Ռոսսի վիրահատական

տություն, մոդիֆիկացիաներ, ցուցումներ: Աորտայի փականի հիվանդությունների բուժման վիրահատական մոտեցումները փոքր արմատի պարագայում: Նիքսի պրոցեդուրա: Մանուկյան պրոցեդուրա: Կոմբինացված փականային արատներ, վիրահատական բուժումը:

Աորտայի սուր համաժտանիչ. Աորտայի սուր շերտազատում:

Կրծքային աորտայի հիվանդություններ: Վերել աորտայի անևրիզմայի վիրահատական բուժումը: Սինուս Վալսալվայի անևրիզմա:

Մանկական սրտային վիրաբուժություն. Միջնախասրտային միջնապատի դեֆեկտ, վիրահատական բուժումը: Թոքային երակներ մասնակի անոմալ դրենաժ, վիրահատական բուժումը: Թոքային երակներ տոտալ անոմալ դրենաժ, վիրահատական բուժումը: Կոռ տրիատրիում, վիրահատական բուժումը: Նախասիրտ-փորոքային լրիվ հաղորդականություն, վիրահատական բուժումը: Նախասիրտ-փորոքային մասնակի հաղորդականություն, վիրահատական բուժումը: Միջփորոքային միջնապատի դեֆեկտ, վիրահատական բուժումը: Բաց զարկերակային ծորան, վիրահատական բուժումը: Աորտայի կոարկտացիա, վիրահատական բուժումը: Աորտայի ընդհատվող աղեղ, վիրահատական բուժումը: Ֆալլոյի տետրադա, վիրահատական բուժում: Մանկական սրտային վիրաբուժության մեջ փական պարունակող կոնդուիտների գործածումը, սահմանափակումները և ապագան: Թոքային զարկերակի բանդաժավորում՝ բանդաժի խստության չափը կախված արատի տեսակից: Թոքային զարկերակի աթերոզիա՝ ինտակտ միջփորոքային սեպտումով, վիրահատական բուժումը: Թոքային զարկերակի աթերոզիա՝ միջփորոքային միջնապատի դեֆեկտով, վիրահատական բուժումը: Թոքային զարկերակի ստենոզ, վիրահատական բուժումը: Միակ փորոք, վիրահատական բուժումը: Հիպոպլաստիկ ձախ փորոք: Նորվուզ պրոցեդուրա: Էքշտեյն անոմալիա, վիրահատական բուժումը: Ընդհանուր զարկերակային ցողուն, վիրահատական բուժումը: Աորտոթոքային պատուհան, վիրահատական բուժումը: Բնածին

աորտալ ստենոզ, վիրահատական բուժումը: Տրանսպոզիցիա խոշոր անոթների՝ ինտակտ սեպտումով, վիրահատական բուժումը: Տրանսպոզիցիա խոշոր անոթների՝ միջփորոքային միջնապատի դեֆեկտով, վիրահատական բուժումը: Երկելք աջ փորոք, վիրահատական բուժումը: Սեննիգի վիրահատություն: Բլելոկ Թաուսինգի շունտավորում: Ռաստելիի վիրահատություն: Հեմիֆոնտան վիրահատություն: Ֆոնտան վիրահատություն: Կոր տրանսպոզիցիա, վիրահատական բուժում: Մաստարդի վիրահատության վիրահատական տեխնիկան: Վարդեն պրոցեդուրա: Ժատենիեի վիրահատություն:

Այլ. Թոքային զարկերակի մասիվ էմբոլիզմ և վիրահատական բուժումը: Շողացող առիթմիայի վիրահատական բուժումը: Սրտի արհեստական ժամանակավոր և մշտական ուղղմավար: Միքսոմայի վիրահատական բուժումը: Ներանոթային բալունային կոնտրապուլսատոր: Էքստրակորպորալ թաղանթային օքսիգենացիա: Սրտի վնասվածքներ: Օբստրուկտիվ պերիկարդիտներ, վիրահատական բուժումը: Պոլիատիվ և ռադիկալ վիրահատություններ: Հետվիրահատական մեդիաստենիտ, վիրաբուժական մոտեցումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Kirklin/Barratt-Boyes Cardiac Surgery 2013.
2. CARDIAC SURGERY IN THE ADULT Fourth Edition Lawrence H. Cohn, MD.
3. Сердечно-сосудистая хирургия Бураковский В.И. Бокерия Л.А. 1989.
4. Park's Pediatric Cardiology.

ՊԼԱՍՏԻԿ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ

Պլաստիկ վիրաբուժության ընդհանուր սկզբունքները:

Վերքեր, բուժման սկզբունքները և միջոցները. Վերքեր, վերքային պրոցեսի ֆիզիոլոգիան, բիոքիմիան, իմունոլոգիան և պաթոլոգիան: Վերքե-

րի դասակարգումը, լավացման փուլերը, ազդող գործոնները, առողջացում առաջնային և երկրորդային ձգումով, դեղորայքային բուժման սկզբունքները: Վերքերի ԱՎՄ և ԵՎՄ: Վերքային ինֆեկցիա, կանխարգելումը, բուժման սկզբունքները, հակաբակտերիալ բուժում: Վիրահատական կտրվածք, վերքի կար, կարանյութի տեսակները: Դեսմուրգիա, վերջույթների անշարժացում: Թարախակույտ, ֆլեգմոնա, լիմֆանգիտ, նեկրոտիկ ֆասցեիտ, անաէրոբ ինֆեկցիա, փտախտ: Խոցեր, առաջացման պատճառները, բուժման եղանակները:

Վնասվածքներ, բուժման սկզբունքները. Վնասվածքների դասակարգումը. Պոլիտրավմա, բուժական տակտիկան: Վնասվածքային և հեմոռագիկ շոկ, ինտեսիվ թերապիա. Վեջույթների մագիստրալ անոթ -ների սուր վնասվածքներ, բուժական տակտիկան. Սուր արյունապակասություն, բուժման սկզբունքները. Հետվնասվածքային վիճակներ, արատավոր ծայրատներ, վեջույթների պրոթեզավորում:

Հրազենային և պայթյունային վնասվածքներ, բուժման սկզբունքները:

Հյուսվածքային դեֆեկտներ, լրացման եղանակները. Հյուսվածքային դեֆեկտների ծագումնաբանությունը, լրացման սկզբունքները: Դեֆեկտների տեղային հյուսվածքներով լրացման եղանակները:

Z-պլաստիկայի սկզբունքները, բազմակի Z-պլաստիկա: Փեղեքված և լիաշերտ մաշկային տրանսպլանտատներ: Հյուսվածքային լայնիչներ /էքսպանդր/, կիրառման ցուցումները: Ծածկույթային հյուսվածքների սնուցման առանձնահատկությունները, լաթեր, դասակարգումը:

Տրանսպլանտատներ իմպլանտներ, բիոմատերիալներ. Տրանսպլանտատների դասակարգումը: Աուտոտրանսպլանտատների դասակարգումը: Օրգանների և հյուսվածքների փոխպատվաստում:

Աուտոտրանսպլանտատների սնուցման առանձնահատկությունները, կղզյակային և ազատ միկրոփիրաբուժական տրանսպլանտատներ:

Տողունային բջիջներ, հյուսվածքների և օրգանների կլոնավորում:

Իմպլանտների դասակարգումը, բիոտեխնիկական պահանջները, բիոհամատեղելիություն, օգտագործման ոլորտները:

Օրգանիզմի պատասխան ռեակցիան օտար մարմնի նկատմամբ:

Միկրոցիրկուլյացիա. Միկրոցիրկուլյատոր հուն, կառուցվածքը, դերը, ֆիզիոլոգիական կարգավորումը: Միկրոցիրկուլյացիայի առանձնահատկությունները ըստ հյուսվածքների և օրգանների, պաթոֆիզիոլոգիան: Անթթային տոնուս, կարգավորման մեխանիզմները, ֆիզիոլոգիան և պաթոֆիզիոլոգիան: Ֆիլտրացիա, աբսորբցիա, լիմֆոդրենաթ, լիմֆոստագ: Ինտեստիցիալ այտուց, առաջացման պատճառները: Իշեմիա, ռեպերֆուզիա: **Պլաստիկ վիրաբուժության մասնավոր սկզբունքները:**

Իրավական և բարոյահոգեբանական սկզբունքները:

Անամնեստիկ տվյալների, հիվանդության պատմության լրացումը, բուժման եղանակի ընտրության և վիրահատության հիմնավորման ձևակերպումը, նախա- և հետվիրահատական լուսանկարահանում:

Վերականգնողական և էսթետիկ վիրահատություններին դիմելու ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական դրդապատճառները:

Վիրահատության մասին հիվանդի/պացիենտի տեղեկացվածության և համաձայնության անհրաժեշտությունը, կյանքի որակի գնահատումը:

Անզգայացում, ցավազրկում և ինտենսիվ թերապիա. Հիվանդի/պացիենտի նախավիրահատական զննում, հետազոտում, վիրահատական միջամտության/անզգայացման ռիսկի գնահատում:

Ընդհանուր անզգայացում, տեսակները, հիմնական սկզբունքները:

Ռեգիոնար անզգայացման սկզբունքները և տարատեսակները՝ նեյրոաքսիալ, հյուսակային և պերիֆերիկ նյարդային պաշարումներ, կատարման տեխնիկան, բարդությունները: Տեղային անզգայացում, եթերների և ամիդների ազդեցության մեխանիզմը, տևողությունը, կատարման տեխնիկան, բարդությունները: Ցավազրկող դեղանյութեր, հետվիրահատական ցավազրկում: Վիրաբուժական սեպսիս:

Ֆարմակոլոգիա, դեղորայքների կիրառման ցուցումները. Ցավագրկողներ, տեսակները, կողմնակի ազդեցությունները: Հակաբիոտիկներ, խմբերը, նշանակման ցուցումները և սխեմաները: Դեզագրեզանտներ և անգիոպրոտեկտորներ, ցուցումները: Հակամակարդիչներ, տեսակները, ցուցումները, բարդությունները:

Ժամանակակից գործիքային հետազոտություններ, ցուցումները.

Դոպլերոգրաֆիա, դուպլեքս սկանավորում. Էլեկտրոնեյրոմիոգրաֆիա Կոնտրաստային անգիոգրաֆիա. Համակարգչային տոմոգրաֆիա. Մագնիտ-ռեզոնանսային տոմոգրաֆիա. Մամոգրաֆիա, սցինտիգրաֆիա

Միկրովիրաբուժություն: Սարքեր, գործիքներ, կարանյութ, միկրովիրաբուժական կար. Օպտիկական սարքեր, միկրովիրաբուժական գործիքներ: Կարանյութ, անոթային բերանակցման և ներվի կարի տեխնիկան:

Վերջույթների վերապատվաստում. Տրավմատիկ անդահամատման դասակարգումը, առաջին օգնությունը, սեզմենտի կոնսերվացումը: Վերապատվաստման ցուցումները և հակացուցումները: Վերապատվաստման փուլերը, հետվիրահատական ընթացքը: Բարդությունները և նրանց կանխարգելումը: Վերապատվաստված վերջույթի ռեաբիլիտացիան:

Անոթավորված հյուսվածքների փոխապատվաստում. Անոթավորված աուտոտրանսպլանտատների դասակարգումը: Մնուցվող աուտոտրանսպլանտատների անոթավորման առանձնահատկությունները, ընտրության չափանիշները: Դոնոր շրջանի ընտրության չափանիշները: Անոթավորված աուտոտրանսպլանտատների ռեվասկուլյարիզացիա, ռեիներվացիա: Անոթային թրոմբոզ, առաջացման պատճառները և կանխարգելումը: Անոթավորված աուտոտրանսպլանտացիայի հետվիրահատական վարումը, մոնիթորինգ: Վիրաբուժական տակտիկան անոթավորված աուտոտրանսպլանտատների մասնակի և լրիվ կորստից հետո:

Մաշկափակեղային աուտոտրանսպլանտատներ, սնուցման տեսակները

Մկանային և մաշկամկանային աուտոտրանսպլանտատներ, սնուցման տեսակները: Ոսկրային աուտոտրանսպլանտատներ, սնուցման տեսակները: Մատների և հողերի փոխպատվաստում, ցուցումները:

Մեծ ճարպոնի փոխպատվաստում, ցուցումները:

Պերիֆերիկ նեյրովիրաբուժություն. Պերիֆերիկ նյարդերի անատոմիան, ֆիզիոլոգիան: Պերիֆերիկ նյարդերի վնասվածքների դասակարգումը: Նյարդերի վնասվածքների ախտորոշման ֆիզիկական և գործիքային քննության եղանակները, արդյունքների մեկնաբանումը: Պերիֆերիկ նյարդերի առաջնային կար, պլաստիկա, ներուլիզ, ցուցումները և կատարման տեխնիկան: Նյարդերի սեղմման համախտանիշներ, ախտորոշումը, բուժումը: Դեներվացիոն համախտանիշ, պերիֆերիկ նյարդերի ռեգեներացիա: Պերիֆերիկ նյարդերի ուռուցքային ախտահարումներ

Վերին վերջույթի վիրաբուժություն. Վերին վերջույթի անատոմիան, ֆիզիոլոգիան, էմբրիոլոգիան. Վերին վերջույթի բիոմեխանիկան:

Դաստակի վիրաբուժություն. Դաստակը որպես օրգան: Դաստակի վիրաբուժական անատոմիան: Դաստակի արյունամատակարարումը և ներվավորումը: Դաստակի պաթոլոգիայով հիվանդի ֆիզիկական և գործիքային քննության եղանակները: Անզգայացման հնարավոր եղանակները դաստակի վիրահատությունների ժամանակ, հաղորդչական անզգայացման տեխնիկան: Դաստակի վնասվածքների ԱՎՄ առանձնահատկությունները, ճիշտ կտրվածքների տեղակայումը: Դաստակի ծալիչ ջլերի վնասվածքներ, ախտորոշումը, վերականգնումը, առաջնային կար, պլաստիկա, դաստակի և մատների անշարժացման սկզբունքները: Դաստակի տարածիչ ջլերի վնասվածքներ, ախտորոշումը, վերականգնումը, առաջնային կար, պլաստիկա, դաստակի և մատների անշարժացման սկզբունքները: Դաստակի ոսկրերի բաց և փակ վնասվածքներ, օսթոսինիթեզի առանձնահատկությունները, անշարժացման

սկզբունքները: Դաստակի սպեցիֆիկ և ոչսպեցիֆիկ բորբոքային հիվանդություններ, ախտորոշումը, բուժումը:

Դեներվացիոն համախտանիշներ, նեյրոգեն դեֆորմացիաներ, իշեմիկ կոնտրակտուրաներ, առաջացման պատճառները, բուժումը: Դաստակի մաշկի դեֆեկտների լրացումը տեղային հյուսվածքներով: Դաստակի մաշկային դեֆեկտների լրացումը կղզյակային լաթերով:

Դյուպրուիտրենի հիվանդություն: Առաջին մատի վերականգնման եղանակները: Կարպալ խողովակի համախտանիշ: Նեղացնող լիգամենտիտներ: Ռևմատոիդ դաստակ: Ֆոլկմանի իշեմիկ կոնտրակտուրա:

Դաստակի ուռուցքային հիվանդություններ:

Վերին վերջույթի բնածին արատներ և նրանց բուժումը. Սինդակտիլիա, պոլիդակտիլիա: Բրախիոդակտիլիա, առաջին մատի տրիֆալանգիա: Դաստակի կենտրոնական ապաճում՝ փեղեքված դաստակ: Հիպոպլաստիկ դաստակ և մատներ: Նախաբազկի ճաճանչային և ծղիկային ապաճում: Փոլանդի համախտանիշ:

Բազկային հյուսակի վիրաբուժություն. Բազկային հյուսակի վիրաբուժական անատոմիան: Բազկային հյուսակի բաց և փակ վնասվածքներ, բուժման տակտիկան: Մանկաբարձական պարալիչ, վիրահատական բուժումը, ռեաբիլիտացիան: Օրթոպեդիկ վիրահատությունները բազկային հյուսակի հնացած վնասվածքների ժամանակ:

Վերին վերջույթը որպես դոնոր շրջան. Դելտայաձև, բազկի միջային և դրսային մաշկափակեղային լաթերը: Նախաբազկի ճաճանչային, ծղիկային և հետին միջոսկրային լաթերը: Դաստակի կղզյակային մաշկալաթեր:

Ստորին վերջույթի վիրաբուժություն. Անատոմիա, Ֆիզիոլոգիա, Էմբրիոլոգիա: Քայլվածքի բիոմեխանիկան, առանձին մկանախմբերի դերը: Օրթոպեդիայի դերը ստորին վերջույթի վիրաբուժություն մեջ: Գոտկային

և սակրալ հյուսակներ: Ստորին վերջույթի հյուսվածքային դեֆեկտների լրացման առանձնահատկությունները:

Ստորին վերջույթը որպես դոնոր շրջան. Ջստոսկրի կատարը շրջանցող զարկերեկների վրա ձևավորվող լաթեր: Ազդրի մաշկափակեղային լաթեր: Ազդրի մկանային և մաշկամկանային լաթեր: Ազդրի խորանիստ զարկերակի ավազանի լաթեր: Սրունքի մաշկափակեղային լաթեր: Սրունքի մկանային և մաշկամկանային լաթեր:

Ոտնաթաթի մաշկափակեղային, մկանային և մաշկամկանային լաթեր: Ստորին վերջույթի անոթավորված ոսկրային աուտոտրանսպլանտատներ Նրբոլուքը որպես անոթավորված աուտոտրանսպլանտատ:

Կրծքավանդակի և իրանի վիրաբուժություն. Կրծքավանդակի պատերի անատոմիան: Կրծքագեղձի անատոմիան, նախաուռուցքային հիվանդություններ: Կրծքագեղձի բարորակ և չարորակ նորագոյացություններ, բուժումը: Կրծքագեղձի բնածին և ձեռքբերովի հիվանդություններ, բուժումը: Կրծքագեղձի, պտուկի և արեուլայի վերականգման եղանակները: Պառկելախոցեր, կոնսերվատիվ և վիրահատական բուժումը:

Կրծքավանդակը և իրանը որպես դոնոր շրջաններ.

Կրծքավանդակի և իրանի մաշկափակեղային լաթեր: Կրծքավանդակի և իրանի մկանային և մաշկամկանային լաթեր: TRAM և VRAM լաթեր:

Դեմքի վերականգնողական վիրաբուժություն. Դեմքի վիրաբուժական անատոմիան: Դիմային ներվի անատոմիան, վնասվածքները, բուժումը: Միմիկայի մկաններ, առանձնահատկությունները: Դեմքի զարգացման արատներ շտկման եղանակները: Պարալիտիկ և ատրոֆիկ դեմք, բուժումը: Ականջախեցու վերականգնումը: Դեմքի հյուսվածքային դեֆեկտներ, լրացումը տեղային, կղզյակային և ազատ լաթերով:

Դեմքի էսթետիկ վիրաբուժություն. Քթի անատոմիան և ֆիզիոլոգիան: Սեպտոպլաստիկա, ենթալորձաթաղանթային մասնահատում, քթի ներքին փական: Քթի պլաստիկայի էսթետիկ և ֆունկցիոնալ ասպեկտ-

ները: Քթի պլաստիկայի բաց և փակ եղանակները, կատարման տեխնիկան: Առաջնային և երկրորդային ռինոպլաստիկա: Աճառային տրանսպլանտատների կիռառումը ռինոպլաստիկայում: Կոպերի պտոզ, վերին և ստորին բլեֆարոպլաստիկա: Արտաքին ականջի պլաստիկա:

Դեմքի վերին, միջին և ստորին հատվածների լիֆթինգ, ցուցումները, կատարման տեխնիկան, բարդությունները և դրանց կանխարգելումը:

Դեմքի տոտալ լիֆթինգի ցուցումները, կատարման տեխնիկան, բարդությունները և դրանց կանխարգելումը: Մազաթափության պատճառները, բուժումը, ֆոլիկուլյար փոխպատվաստման տեխնիկան:

Կրծքագեղձերի էսթետիկ վիրաբուժություն. Ռեդուկցիոն մամոպլաստիկա, եղանակները, կատարման տեխնիկան:

Մաստոպտոզ, ձևերը, շտկման եղանակները: Մաստոպեքսիա, եղանակները, կատարման տեխնիկան: Կրծքագեղձի ծավալի ավելացման եղանակները, հակացուցումները, կատարման տեխնիկան: Կրծքագեղձի իմպլանտներ, տեսակները, իմպլանտացիայի մոտակա և հեռավոր բարդությունները և դրանց կանխարգելումը: Կրծքագեղձի իմպլանտների ընտրության չափանիշները, տեղադրման տեխնիկան:

Լիպէկտոմիա, դերմոլիպէկտոմիա. Աբդոմինոպլաստիկա, ցուցումները, կատարման տեխնիկան, բարդությունները և դրանց կանխարգելումը: Լիպոսակցիայի տեսակները, անզգայացման եղանակի ընտրությունը: Լիպոսակցիայի ցուցումները, եղանակները, կատարման տեխնիկան, բարդությունները և դրանց կանխարգելումը: Ազդրերի և բազուկների դերմոլիպէկտոմիայի ցուցումները, կատարման տեխնիկան, բարդությունները և դրանց կանխարգելումը: Հետբարիատրիկ վիրաբուժություն:

Ուռոգենիտալ շրջանի պլաստիկ վիրահատություններ.

Նեոֆալոպլաստիկա և նեովագինոպլաստիկա, ցուցումները, եղանակները, կատարման տեխնիկան: Տրանսսեքսուալիզմ, սոցիալական, բարոյահոգեբանական և բժշկական ռեաբիլիտացիան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Белоусов А.Е, Пластическая, реконструктивная и эстетическая хирургия . - Практическое руководство
2. Пшениснов К. П. , Курс пластической хирургии.
3. А. Волкова, Хирургия кисти.
4. Пейпла А. Д., Пластическая и реконструктивная хирургия лица

ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որովայնի ճողվածքներ. Որովայնի ճողվածքներ, սահմանումը, ընդհանուր հասկացություն, ճողվածքների դասակարգումը, ճողվածքի բաղկացուցիչ մասերը: Ճողվածքների պատճառագիտությունը, կլինիկան, ընթացքը, ախտորոշումը, բուժումը: Աճուկային ճողվածքներ: Աճուկային թեք ճողվածք, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը: Աճուկային ուղիղ ճողվածք, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը: Ազդրային ճողվածք, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:

Պորտային ճողվածք, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:

Սպիտակ գծի ճողվածքներ, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:

Հետվիրահատական ճողվածքներ, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:

Որովայնային ճողվածքների հազվադեպ տեսակներ: Որովայնի արտաքին ճողվածքների բարդությունները, օղակում, տեսակները, կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Որովայնի արտաքին ճողվածքների բարդությունները, ճողվածքի բորբոքում, կոպրոստագ, վնասվածք էթիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:

Ապենդիցիտ. Որդանման ելուն, անատոմիան, ֆիզիոլոգիան:

Սուր ապենդիցիտ, էթիոլոգիան, պաթոգենեզը, դասակարգումը, ախտաբանական անատոմիան: Սուր ապենդիցիտ, կլինիկան, ախտորոշումը:

Սուր ապենդիցիտի ընթացքի առանձնահատկությունները (ռետրոցեկալ, կոնքային և ձախակողմյան դասավորություններ): Սուր ապենդիցիտը երեխաների մոտ: Սուր ապենդիցիտը տարեց և ծերունական հասակի անձանց մոտ: Սուր ապենդիցիտը հղիների մոտ: Սուր ապենդիցիտի տարբերակիչ ախտորոշումը: Սուր ապենդիցիտի բարդությունները և նրանց բուժումը: Սուր ապենդիցիտի բուժումը, ապենդեկտոմիայի տեսակները: Ապենդեկտոմիայից հետո առաջացած բարդությունները և դրանց բուժումը: Խրոնիկական ապենդիցիտ:

Լեղապարկ և լեղուղիներ. Լեղապարկի և լեղուղիների անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտման մեթոդները: Լեղաձորանների զարգացման անոմալիաներ: Լեղուղիների վնասվածքներ: Լեղաքարային հիվանդություն, քարերի առաջացման պատճառները, լեղային (յարդային) խիթ: Խրոնիկական քարային խոլեցիստիտ, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը: Խրոնիկական քարային խոլեցիստիտի բարդությունները՝ խոլեդոխոլիթիազ, խոլեցիստոպանկրեատիտ, խոլանգիտ, դուոդենալ մեծ պտկիկի ստենոզ, բիլիոդիգեստիվ խուլակ, լեղապարկի ջրգողություն, էմպիեմա:

Սուր խոլեցիստիտ, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:

Լեղաքարային հիվանդության ախտորոշումը, մինչ-, ներ- և հետվիրահատական հետազոտության եղանակները, բուժումը:

Ոչ քարային խոլեցիստիտ, էթիոլոգիան, պաթոգենեզը, կլինիկան, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը: Խոլեցիստեկտոմիայի եղանակները, խոլեդոխոտոմիա:

Հետխոլեցիստեկտոմիկ համախտանիշ: Ֆատերյան պտկիկի քաղցկեղ:

Մեխանիկական դեղնուկ: Աղիքային անանցանելիություն: Աղիքային անանցանելիություն, դասակարգումը, էթիոլոգիան: Աղիքային անանցանելիության պաթոգենեզը: Աղիքային անանցանելիություն, կլինիկան, ախտորոշումը: Աղիքային օբտուրացիոն անանցանելիություն:

Ստրանգուլյացիոն անանցանելիություն, ոլորում և հանգուցագոյացում, էթիոլոգիան, պաթոգենեզը, բուժումը: Մեխանիկական անանցանելիության խառը ձևերը: Դինամիկ աղիքային անանցանելիություն:

Հաստ աղիք: Ոչ սպեցիֆիկ կոլիտներ: Հիշարունգի հիվանդություն: Հաստ աղու դիվերտիկուլյոզ: Հաստ աղու պոլիպոզ: Հաստ աղու բարորակ ուռուցքներ: Խթաղու քաղցկեղ, ձևերը, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:

Սուր որովայն, պերիտոնիտ. Սուր որովայն, սուր որովայնի տարբերակիչ ախտորոշումը: Պերիտոնիտ, դասակարգումը, էթիոլոգիան, պաթոգենեզը: Տարածուն թարախային պերիտոնիտ, կլինիկան, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը: Որովայնի խոռոչի թարախակույտեր, կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Որովայնի փակ և բաց վնասվածքներ: Ստամոքս-աղիքային արյունահոսություններ:

Փայծաղ. Փայծաղ, անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտության մեթոդները: Փայծաղի վնասվածքներ, կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Փայծաղի հիվանդություններ, փայծաղի ինֆարկտ, թարախակույտ, էթիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Փայծաղի հիվանդություններ, փայծաղի բշտեր, ուռուցքներ, էթիոլոգիան, կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Սպլենոմեգալիա, հիպերսպլենիզմ:

Արյունաստեղծ համակարգի վիրաբուժական բուժում պահանջող հիվանդություններ՝ հեմոլիտիկ միկրոսֆերոցիտար անեմիա, մեծ թալասեմիա, ձեռքբերովի հեմոլիտիկ անեմիա: Արյունաստեղծ համակարգի վիրաբուժական բուժում պահանջող հիվանդություններ՝ Վերլոհֆի հիվանդություն, Գոշեի հիվանդություն, լիմֆոգրանուլեմատոզ, խրոնիկական լեյկոզ:

Լյարդ. Լյարդ, անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտության մեթոդները: Լյարդի բաց և փակ վնասվածքներ: Լյարդի թարախակույտեր: Լյարդի էխինոկոկոզ, վարակման ուղիները, կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Լյարդի էխինոկոկոզի բարդությունները: Լյարդի ավետկոկոզ: Լյարդի ոչ մակաբուժային կիստաներ:

Ստամոքս և տասներկուամատնյա աղի. Ստամոքսի և 12 մատնյա աղու անատոմիան, ֆիզիոլոգիան և հետազոտության մեթոդները: Ստամոքսի և 12 մատնյա աղու խոցային հիվանդության էթիոլոգիան, պաթոգենեզը, ախտաբանական անատոմիան: Ստամոքսի և 12 մատնյա աղու խոցային հիվանդության կլինիկան, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը: Ստամոքսի և 12 մատնյա աղու խոցային հիվանդության վիրաբուժական բուժումը, վիրահատության եղանակները: Վագոտոմիա, եղանակները: Ստամոքսի և 12 մատնյա աղու խոցային հիվանդության բարդությունները՝ թափածակում: Ստամոքսի և 12 մատնյա աղու խոցային հիվանդության բարդությունները՝ արյունահոսություն: Ստամոքսի և 12 մատնյա աղու խոցային հիվանդության բարդությունները՝ պիլորոդուոդենալ նեղացում: Ստամոքսի և 12 մատնյա աղու խոցային հիվանդության բարդությունները՝ խոցի պենետրացիա: Սուր խոցեր: Ուլցերոզեն էնդոկրին հիվանդություններ: Վիրահատված ստամոքսի հիվանդություններ՝ դեմպինգ համախտանիշ: Վիրահատված ստամոքսի հիվանդություններ՝ բերող գալարի համախտանիշ: Վիրահատված ստամոքսի հիվանդություններ՝ ռեցիդիվ պեպտիկ խոցեր, ռեֆլյուքս գաստրիտ: Վիրահատված ստամոքսի հիվանդություններ՝ խրոնիկ հետմասնահատումային պանկրեատիտ, խոլելիթիզ, դիսֆագիա, գաստրոստագ, դիարեա, սակավարյունություն: Ստամոքսի քաղցկեղ, կլինիկան, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը: Ստամոքսի քաղցկեղի բուժման մեթոդները:

Ենթաստամոքսային գեղծ. Ենթաստամոքսային գեղծ, անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտության մեթոդները: Սուր պանկրեատիտ, դասա-

կարգումը, կլինիկան, ախտորոշումը: Սուր պանկրեատիտ, տարբերակիչ ախտորոշումը, բարդությունները, բուժումը: Խրոնիկական պանկրեատիտ: Ենթաստամոքսային գեղձի կիստաներ, խուղակներ: Ենթաստամոքսային գեղձի քաղցկեղ: **Բարակ աղի**. Բարակ աղու անատոմիան, ֆիզիոլոգիան: Բարակ աղու զարգացման արատները, դիվերտիկուլներ: Կրոնի հիվանդություն: Աղիքային խուղակներ: **Ստոծանի**. Ստոծանու անատոմիան, ֆիզիոլոգիան: Ստոծանու վնասվածքներ: Ստոծանու ճողվածքներ և ռելաքսացիա: Ստոծանու որկորային բացվածքի ճողվածքներ: **Վահանագեղձ**. Վահանագեղձ, անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտման մեթոդները: Դիֆուզ տոքսիկ խափա, կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Տոքսիկ ադենոմա: Բազմահանգուցավոր խափա: Էնդեմիկ խափա, սպորադիկ խափա: Թիրեոիդիտներ: Վահանագեղձի ուռուցքներ: **Կրծքագեղձ**. Կրծքագեղձ, անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտման մեթոդները: Ոչ սպեցիֆիկ բորբոքային հիվանդություններ (մաստիտներ), կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Մաստոպաթիա, կլինիկական պատկերը, բուժումը: Կրծքագեղձի բարորակ ուռուցքներ: Կրծքագեղձի քաղցկեղ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Վիրաբուժական հիվանդություններ» դասագիրք, Վ.Թ. Ափոյանի խմբագրությամբ, 2 հատոր:
2. "Хирургические болезни" учебник. Под редакцией М.И.Кузина.

ՄԱՆԿԱԿԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Մանկական կրծքային վիրաբուժություն. Կերակրափողի աթրեզիա: Ստոծանիական բնածին ճողվածք: Բնածին բլթային էմֆիզեմա: Դեստրուկտիվ թոքաբորբ, Ներկծքային լարվածության համախտանիշ, կրծքավանդակի դեֆորմացիաներ, թոքերի զարգացման արատներ:

Աղիքային խողովակի զարգացման արատներ. Բնածին պիլորոստենոզ; Աղիների աթրեզիաներ, ստենոզներ և երկատումներ: Լեդդի համախտանիշ:

Որովայնի խոռոչի սուր պրոցեսներ. Սուր ապենդիցիտ, առանձնահատկությունները մինչև 3 տարեկան երեխաների շրջանում: Մեկոնիումային անանցանելիություն և պերիտոնիտ: Մեռուկացնող էնտերոկոլիտ:

Երեխաների ձեռքբերովի աղիքային անանցանելիություն. Աղիների ինվազիոնացիոն, դինամիկ և կպումային անանցանելիություններ:

Անոռեկտալ արատներ: Լեդուղիների զարգացման արատներ. Ուղիղ աղու և հետանցքի զարգացման արատներ, լեդուղիների ատրեզիա:

Մեզակոլոն, Որովայնի առաջային պատի ճողվածքներ երեխաների շրջանում. Հիրշպրունգի հիվանդություն: Դեղնուցածորանի և ուրախուսի զարգացման արատներ: Սաղմնային, վենտրալ, պորտային և վերպորտային ճողվածքներ:

Ամորձաէջքի հետ կապված անկանոնություններ. Չխցանված բունոցային էլունի հետ կապված հիվանդություններ, Կրիպտորխիզմ: Վարիկոցելե:

Վերին միզուղիների զարգացման արատներ. Երիկամների և միզածորանների զարգացման արատներ: Հիդրոնեֆրոզ; Միզապարկ-միզածորանային ռեֆլյուքս:

Ստորին միզուղիների զարգացման արատներ. Միզապարկի էքստրոֆիա; Էպիսպադիա: Հիպոսպադիա, Հետին միզուկի կափույր:

Թարախասեպտիկ վիրաբուժություն. Սեպտիկ վիճակներ: Երեխաների թարախաբորբոքային հիվանդությունները: Նորածինների մեռուկային ֆլեգմոնա: Սուր մաստիտ: Սուր հեմատոզեն օստեոմիելիտ: Թարախային օմֆալիտ: Օստեոմիելիտի ատիպիկ ձևերը: Երեխաների թարախասեպտիկ վիճակների բուժման սկզբունքները:

Այտուցային փոշտի համախտանիշ: Թլիպի հիվանդություններ.

Օրխիտ, էպիդիդիմիտ: Ամորձու ոլորք: Մորզանյան հիդատիդի ոլորք:

Փոշտի ակերգիկ այտուց: Ֆիմոզ, պարաֆիմոզ, սինեխիաներ:

Շոշափվող գոյացության համախտանիշը երեխաների շրջանում.

Որովայնում ծավալային գոյացության շոշափման ախտանիշ, հնարավոր հաճախ հանդիպող հիվանդությունները և զարգացման արատներ, վերջիններիս ախտորոշումը, վարումը և բուժումը:

Ինֆուզիոն թերապիայի առանձնահատկությունները մանկական վիրաբուժությունում. Ինֆուզիոն թերապիայի ցուցումները, հեղուկների ընտրությունը, ծավալային հաշվարկները տարբեր վիրաբուժական ատաբանությունների դեպքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Детская Хирургия национальное руководство/ под ред. Ю.Ф. Исакова – М. : ГЭОТАР-Медиа, 2009. – 1168 с.
2. Ashcraft's pediatric surgery; fifth edition, 2010
3. Pediatric Surgery. Manual for Medical Students. YSMU Department of Pediatric Surgery, 2006

ԴԻՄԱԾՆՈՏԱՅԻՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Դիմաձևտային վիրաբուժության ընդհանուր հարցեր և անզգայացում Ասեպտիկա և հակասեպտիկա. Վիրաբույժի ձեռքերի և վիրահատական դաշտի մշակում: Վիրաբուժական գործիքների և վիրակապական նյութերի ախտահանում և մանրեազերծում:

Անզգայացում. Տեղային անզգայացման կիրառման ցուցումները և հակացուցումները: Բարդ եթերների և ամիդների խմբի տեղային անզգայացնող դեղանյութեր: Արտիակլինի հիմքի վրա V սերնդի դեղանյութեր: Տարբեր խմբի հիվանդների համար անզգայացնող դեղանյութ ընտրելու սկզբունքները: Տեղային անզգայացնող դեղանյութերի ազդեցության մեխանիզմները և դեղաշարքը(ֆարմակոդինամիկա): Ներսփռական, ենթավերնոսկրային, ներոսկրային, ինտրալիգամենտար և ներկակղանային անզգայա-

ցում: Եռվորյակ նյարդի երկրորդ և երրորդ ճյուղերի միաժամանակյա անզգայացում գանգի հիմիմ շրջանում: Եռվորյակ նյարդի երկրորդ և երրորդ ճյուղերի անզգայացումը ըստ Ա.Ն. Վայսբլատի: Վերծնոտային նյարդի ճյուղերի նյարդավորման գոտիների հաղորդչական անզգայացում (ստորակնակապճային, քթաքմային, մեծ քմային անզգայացում): Ստործնոտային նյարդի ճյուղերի հաղորդչական անզգայացում (մանդիբուլյար, տորուսալ, կզակային, թշային, լեզվային): Տեղային անզգայացման տեղային ընդհանուր բարդությունները: Պրեմեդիկացիայի հիմնավորումը դիմաձնոտային վիրաբուժության մեջ: Պրեմեդիկացիայի նպատակով առավել հաճախ օգտագործվող դեղանյութեր: Ընդհանուր անզգայացում: Առանձնահատկությունները դիմաձնոտային շրջանի վիրահատությունների ժամանակ: Նեյրոլեպտանալգեզիան, աթառալգեզիան ամբուլատոր ստոմատոլոգիայում: Աթառակտիկներ (սեդատիվ միջոցներ), անալգետիկներ: Տերմինալ վիճակներ: Սիրտ-թոքային և ցերեքալ վերակենդանացման սկզբունքները: Դեղորայքային անաֆիլակտիկ շոկ: Առաջին բժշկական օգնությունը: Դիմա-ձնոտային շրջանի հիվանդություններով հիվանդների վիրաբուժական օգնության կազմակերպումը պոլիկլինիկայում և ստացիոնարում:

Մասնավոր բաժին. Ատամի հեռացման վիրահատության ցուցումները և հակացուցումները: Ատամի հեռացման համար նախատեսված գործիքները և մեթոդները: Ատամի բարդ հեռացման վիրահատություն: Ատամի ձկթման հիվանդություններ: Ատամի հեռացման ժամանակ և հետո առաջացող տեղային ընդհանուր բարդությունները: Սոմատիկ պաթոլոգիաներով հիվանդների մոտ ատամի հեռացման վիրահատության և անզգայացման յուրահատկությունները: Ատամի հեռացման վիրահատության ժամանակ ատամի ասպիրացիայի, ստորին ձնոտի կոտրվածքի և հոդախախտի կանխարգելումը: Ապիկալ պերիոդոնտիտներ: Ապիկալ պերիոդոնտիտների վիրաբուժական բուժման եղանակները: Պարոդոնտի հիվանդու-

թյուններ: Մուկոզինգիվալ խնդիրների շտկման եղանակները (ֆրենուլոտոմիա, վեստիբուլոպլաստիկա, ռեցեսիաների վերացման եղանակները): Ծնոտների սուր և քրոնիկական պերիոստիտներ: Ծնոտների պերիոստիտների բուժումը: Ծնոտների սուր ատամնաձին օստեոմիելիտ: Քրոնիկ ատամնաձին օստեոմիելիտ: Դիմաձնոտային շրջանի սուր օդոնտոգեն լիմֆադենիտներ: Դիմաձնոտային շրջանի քրոնիկական օդոնտոգեն լիմֆադենիտներ: Ստորին ծնոտի շրջանի հարձնոտային հյուսվածքների մակերեսային թարախակույտեր և ֆլեգմոնաներ: Ստորին ծնոտի շրջանի հարձնոտային հյուսվածքների խորանիստ թարախակույտեր և ֆլեգմոնաներ: Վերին ծնոտի շրջանի հարձնոտային հյուսվածքների մակերեսային թարախակույտեր և ֆլեգմոնաներ: Վերին ծնոտի շրջանի հարձնոտային հյուսվածքների խորանիստ թարախակույտեր և ֆլեգմոնաներ: Բերանի հատակի թարախանեկրոտիկ ֆլեգմոնի, Ժենսուլ-Լուդվիգի անգինա: Դենքի ֆուրունկուլ և կարբունկուլ: Դիմաձնոտային շրջանի թարախա-բորբոքային հիվանդությունների բարդությունները: Թարախա-բորբոքային հիվանդություններով հիվանդների բուժման սկզբունքները: Դիմաձնոտային շրջանի նոմա երեխաների և մեծահասակների մոտ: ՁԻԱՀ –վարակ: Դիմաձնոտային շրջանի, բերանի խոռոչի և պարանոցի սպեցիֆիկ բորբոքա-յին հիվանդություններ: Սիբիրյան խոց, կարմիր քամի, նոմա, ակտինոմիկոզ: Տուլարեմիա: Վերին ծնոտային ծոցի սուր ատամնաձին սինուսիտներ: Քրոնիկական ատամնաձին սինուսիտներ: Վերին ծնոտային ծոցի հատակի թափածակումներ և խուղակներ: Թքագեղձերի սուր և քրոնիկական բորբոքային հիվանդություններ: Սիալոգներ: Թքաքարային հիվանդություն: Դիմաձնոտային շրջանի փափուկ հյուսվածքների վնասվածքներ: Ատամների տեղախախտեր և կոտրվածքներ, ատամնաքնային ելունների կոտրվածքներ: Ստորին ծնոտի ոչ հրազենային կոտրվածքներ: Այտային աղեղի և այտոսկրի, քթոսկրերի կոտրվածքներ: Դիմաձնոտային շրջանի համակցված և կոմբինացված

վնասվածքներ: Դեմքի հրազենային վիրավորումների և վնասվածքների կլինիկական պատկերը: Դեմքի հրազենային վիրավորումների և վնասվածքների վիրաբուժական մշակման և բուժման առանձնահատկությունները: Դեմքի փափուկ հյուսվածքների հրազենային վնասվածքներ: Դիմային ոսկրերի հրազենային վնասվածքների հաճախականությունը, կլինիկական պատկերը, առանձնահատկությունները: Օգնության կազմակերպումը տարահանման փուլերում: Դեմքի և ծնոտների հետվնասվածքային բարդություններ: Կանխարգելումը և բուժումը: Դիմային գանագի վնասվածքների վաղ և ուշ շրջանի տեղային բարդություններ: Դիմային գանագի վնասվածքների ժամանակ առաջին բժշկական, որակավորված և նեղ մասնագիտացված բուժօգնության կազմակերպումը: ՔՄԾ-հոդի արթրիտներ (սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ): ՔՄԾ-հոդի ներքին խանգարումներ: ՔՄԾ-հոդի օսթեոարթրոզ, անկիլոզ, բնածին անոմալիաներ: ՔՄԾ-հոդի ոչ արտիկուլյար հիվանդություններ (բրուսիզմ, ծամոդական մկանների կոնտրակտուրա, ցավային դիսֆունկցիա): Եռվորյակ նյարդի ներիտ ներալգիա: Դիմային և այլ նյարդերի պարալիչ (լուծանք): Աուրիկուլոտեմպորալ համախտանիշ: Դեմքի ցավային համախտանիշներով հիվանդների առաջին բժշկական և որակավորված բուժօգնության կազմակերպումը: Բերանի խոռոչի նախապրոթեզային վիրաբուժություն: Ծնոտների ատամնածին բուշտեր: Ծնոտների ոչ ատամնածին բուշտեր: Դիմա-ծնոտային շրջանի փափուկ հյուսվածքների բարորոկ նորագոյացություններ: Պապիլոմա, ֆիբրոմա, ֆիբրոմատոզ, լիպոմա, միոմա, անոթային ուռուցքներ: Դեմքի ոսկրերի մեզենխիմալ բարորակ նորագոյացություններ (մեզենխիմոմա, օստեոմա, օստեոիդ-օստեոմա, խոնդրոմա, օստեոբլաստոկլաստոմա, միքսոմա, դեսմոպլաստիկ ֆիբրոմա, օսիֆիկացվող ֆիբրոմա, հեմանգիոմա, շվանոմա): Դեմքի ոսկրերի էկտոդերմալ մեզենխիմալ բարորակ ուռուցքներ (օդոնտոմա, ցեմենտոմա, ամելոբլաստոմա, կալցիֆիկացնող օդոնտոգեն բուշտ, օդոնտոգեն ֆիբրոմա, ամելո-

բլաստիկ ֆիբրոնա, ադենոմատոիդ օդոնտոգեն ուռուցք): Դիմային կմախքի ուռուցքանման և դիսպլաստիկ ախտահարումներ (մոնոսուպ ֆիբրոզ դիսպլազիա, պոլիսուպ ֆիբրոզ դիսպլազիա, Օլբրայթի համախտանիշ, խերովիզմ, էոզինոֆիլ գրանուլոմա, էկզոստոզային խոնդրոդիսպլազիա): Դիմաձևոտային շրջանի անոթային ուռուցքներ: Դեմքի և պարանոցի բնածին բուշտեր և խուլակներ: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Դեմքի մաշկի և բերանի խոռոչի լորձաթաղանթի նախաուռուցքային հիվանդություններ: Վիրահատական բուժման եղանակներ: Թքագեղձերի բարորակ նորագոյացություններ: Թքագեղձերի չարորակ նորագոյացություններ: Դեմքի մաշկի և ստորին շրթունքի չարորակ նորագոյացություններ: Բերանի խոռոչի լորձաթաղանթի և լեզվի չարորակ նորագոյացություններ: Գլխի և պարանոցի չարորակ ուռուցքներ: Պարանոցի ավշային համակարգի վրա կատարվող վիրահատություններ: Ատամնային իմպլանտացիա: Դիմաձևատային շրջանի վերականգնողական վիրահատություններ: Դիմաձևոտային շրջանի դեֆեկտներ և ձևախախտումներ: Միկրովիրաբուժական վիրահատություններ: Դիմաձևոտային շրջանի դեֆեկտների և ձևախախտումներ Դեմքի միջին հատվածի զարգացման անոմալիաներ և ձևախախտումներ: Դիմաձևոտային շրջանում, բնածին անոմալիաներ: Շրթունքների և քիմքի բնածին արատների դասակարգումը: Խեյլոպլաստիկա, գծային պլաստիկայ, շրթունքային ադգեզիա, լաթային պլաստիկայի եղանակները. երկկոխմանի Խեյլոպլաստիկա: Ուրանոպլաստիկա(եղանակները), քմա-ըմպանային անբավարարություն, վիրահատության եղանակները: Կրանիոֆացիալ դեֆորմացիաներ: Դեմքի և պարանոցի շրջանում պլաստիկ վիրահատություններ: Դեմքի միջին զոնայի արատներ և սպիական ձևախախտումներ: Ստորին ծնոտի ոսկրային պլաստիկա, աուտոտրանսպլանտատով և ալլոտրանսպլանտատով: Ծնոտների անոմալիաներ և դեֆորմացիաներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бельченко В.А. Черепно-лицевая хирургия. 2006. 340 стр
2. Пейпл А.Д. Пластическая и реконструктивная хирургия лица. 2007г. Безруков М.В., Робустова Т.Г. Руководство по хирургической стоматологии и челюстно-лицевой хирургии 2 тома 2000г.
3. Պողոսյան Յու.Մ., Ենոքյան Հ.Դ. Քունքստորձնոտային հողի հիվանդություններ/ Երևան, 2009. 158 էջ
4. J. Langton, Operative oral and maxillo-facial surgery. 2010.

ԺԴ.00.16 - ՀԱՄԱՃԱՐԱԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Համաճարակաբանության առարկան և մեթոդները, ժամանակակից համաճարակաբանության հիմնական խնդիրները:

Վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական դասակարգում: Համաճարակային պրոցես, նրա արտահայտման ձևերը, վարակիչ հիվանդությունների սեզոնայնություն, պարբերականություն:

Համաճարակային պրոցեսի շարժիչ ուժերը՝ վարակի աղբյուր, փոխանցման մեխանիզմ, ընկալ օրգանիզմ:

Ջրի, հողի և սննդամթերքի համաճարակաբանական նշանակությունը որպես փոխանցման գործոն և դրանց միջոցով վարակի փոխանցման կանխարգելումը:

Կենդանի փոխանցողների (մոծակներ, լվեր, տզեր, մլակներ, ոջիլներ) կենսաբանական, էկոլոգիական և համաճարակաբանական նշանակությունը և դերը մի շարք վարակիչ հիվանդությունների փոխանցման գործում:

Հասկացություն համաճարակային օջախի մասին, նրա առանձնահատկությունները տարբեր փոխանցման մեխանիզմ ունեցող հիվանդությունների դեպքում, հակահամաճարակային միջոցառումների իրականացումը համաճարակային օջախում:

Ախտահանման տեսակները, մեթոդները, ժամանակակից ախտահանման նյութերը, կիրառման ոլորտը, արդյունավետության որոշումը: Մանրէագերծում, մեթոդները: Էսցիկային ախտահանում:

Դեզինսեկցիա, պայքար միջատների դեմ, մեթոդները (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական), քիմիական դեզինսեկցիոն միջատասպան նյութերի օգտագործումը և կիրառման ոլորտները:

Դեռատիզացիա, նրա դերը և նշանակությունը զոոնոզ վարակների հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման ժամանակ: Դեռատիզացիայի մեթոդները, կանխարգելման և ոչնչացման միջոցառումները (մեխանիկական, քիմիական, կենսաբանական), քիմիական դեռատիզացիոն նյութեր:

Հատուկ վտանգավոր վարակներ: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը հատուկ վտանգավոր վարակների դեպքում (կարանտին, օբսերվացիա, հիվանդների և կոնտակտավորների հաշվառում և դուրս գրում):

Իմունականխարգելման հիմնական դրույթները կառավարվող վարակների ժամանակ: ՀՀ իմունիզացիայի ազգային ծրագիրը, օրացույցը, իմունականխարգելման գործընթացի արդյունավետության գնահատման չափորոշիչները: Պատվաստումների հակացուցումներ, հետպատվաստումային անբարեհաջող դեպքեր: Սառցե շղթա: Պատվաստումներ տուբերկուլյոզի և հեպատիտ B-ի դեմ: Մասնակցություն պատվաստմանը, տեխնիկային, անվտանգ պատվաստման իրականացում:

Կենսաբանական պատրաստուկների տեսակները, պատրաստման մեթոդները, արդյունավետությունը, կիրառման ոլորտները:

Ներհիվանդանոցային (նոզոկոմիա) վարակների համաճարակաբանական առանձնահատկությունները:

Ներհիվանդանոցային վարակը ծննդատներում: Նորածնի և ծննդաբերի ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանական առանձնա-

հատկությունները, ներարգանդային և ներհի-վանդանոցային վարակների տարբերակում: Ծանոթացում տեղում իրականացվող կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներին: Համաճարակային շղթա, դրա ընդհատման առավել արդյունավետ ուղղությունները:

Տարբեր պրոֆիլի ստացիոնարներում ներհիվանդանոցային վարակների դերը: Ներհիվանդանոցային շտամների առաջացման պատճառները և նրանց շրջանառությունը: Անտիբիոտիկների հանդեպ միկրոօրգանիզմների կայունության առաջացման մեխանիզմները (պլազմիդների դերը): Անտիբիոտիկակայունության որոշման մեթոդների հետ ծանոթացում:

Բուժանձնակազմի մասնագիտական հիվանդություններ, նախնական և պարբերական բժշկական զննություններ, դրա կազմակերպումը և անցկացումը: Ծանոթացում գործող օրենսդրությանը: Համաճարակաբանական վերահսկողություն, միջոցառումներ բուժանձնակազմի պատահական վնասման դեպքում:

Դիսբակտերիոզ, օրգանիզմի տարբեր բիոտոպերում բնական բիոցենոզների նշանակությունը, կազմը: Դիսբակտերիոզի առաջացման պատճառները, կանխարգելումն ու բուժումը: Արհեստական, մշտական և ժամանակավոր բիոցենոզների դերը դիսբակտերիոզի կանխարգելման գործում:

Ֆեկալ-օռալ մեխանիզմով փոխանցվող աղիքային վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական առանձնահատկությունները:

Վիրուսային հեպատիտներ A և E համաճարակաբանական առանձնահատկությունները և կանխարգելումը, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում, համաճարակաբանական ցուցումով պատվաստումներ հեպատիտ A-ի դեմ:

Որովայնային տիֆի, պարատիֆեր A և B-ի, շիգելյոզների համաճարակաբանությունը: Վարակակրության տեսակները, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում և կանխարգելումը: Դիզեն-

թերիա, համաճարակաբանությունը: Ջրային, սննդային և կոնտակտ-կենցաղային փոխանցման ուղիների առանձնահատկությունները:

Խոլերա, համաճարակաբանական առանձնահատկությունները: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում և կանխարգելումը:

Պոլիոմիելիտի համաճարակաբանական առանձնահատկությունները: Հակահամաճարակային միջոցառումները օջախում: Համաճարակաբանական վերահսկողության և մոնիտորինգի կազմակերպում: Պատվաստումներ պոլիոմիելիտի դեմ: Պոլիոմիելիտի վերացման խնդրի արդի համաճարակաբանական իրավիճակը աշխարհում և Հայաստանում:

Էնտերովիրուսային վարակների համաճարակաբանական առանձնահատկությունները: Ռոտավիրուսային գաստրոէնտերիտներ, Կոկսակի վիրուսներ և այլն: Էշերիխիոզներ, Իերսինիոզներ հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը և կանխարգելումը:

Աղիքային զոոնոզներ: Բրուցելոզի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Սանիտարա-անասնաբուժական համատեղ աշխատանքների կազմակերպումը, մասնագիտական խմբերի իմունականխարգելումը: Տեսաֆիլմի դիտում, քննարկում: Ամեռքիազի և լեպտոսպիրոզի հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում և կանխարգելումը:

Տարբեր միկրոօրգանիզմներից առաջացած սննդային տոքսիկոլարակների համաճարակաբանությունը:

Սալմոնելոզների համաճարակաբանությունը: Սննդային տոքսիկոինֆեկցիաներ, որոնք առաջանում են պայմանական ախտածին և անաէրոբ միկրոօրգանիզմներից: Բոտուլիզմ, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում և կանխարգելումը:

Օդակաթիլային մեխանիզմով փոխանցվող (շնչառական ուղիների) անթրոպոնոզ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական առանձնահատկությունները, կանխարգելման հիմնական ուղղությունները:

Կարմրուկի, կարմրախտի, համաճարակային պարոտիտի, համաճարակաբանական առանձնահատկությունները: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում: Պատվաստումներ կարմրուկի, կարմրախտի, համաճարակային պարոտիտի դեմ՝ համաձայն ՀՀ ազգային օրացույցի:

Գրիպի, թռչնագրիպի, ատիպիկ թոքաբորբի և այլն համաճարակաբանությունը և կանխարգելման հիմնական ուղղությունները: Գրիպի համաճարակները և պանդեմիաները, նրա սոցիալ-տնտեսական նշանակությունը:

Քուրեշի և մենինգոկոկային վարակների համաճարակաբանական առանձնահատկությունները, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում և կանխարգելումը: Ծանոթացում բակտերիոլոգիական լաբորատորիայի աշխատանքների հետ: Աշխատանք լաբորատորիայում՝ վերին շնչուղիներից քսուկների նմուշառում, ցանքերի կատարում համապատասխան միջավայրերի վրա:

Բնական ծաղիկ, ջրծաղիկ, համաճարակաբանությունը, կանխարգելումը, հակահամաճարակային միջոցառումները բնական ծաղիկի օջախում (կարանտին, օբսերվացիա, հիվանդների և կոնտակտավորների հաշվառում և դուրս գրում):

Դիֆթերիայի, ՀԻԲ վարակների և կապույտ հազի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Ձեռնարկվող հակահամաճարակային համալիր միջոցառումները: Պատվաստումներ դիֆտերիայի և կապույտ հազի դեմ՝ համաձայն ՀՀ ազգային օրացույցի:

Տրանսմիսիվ փոխանցման մեխանիզմով արյունային վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական առանձնահատկությունները:

Մալարիայի համաճարակաբանական առանձնահատկությունները և արդի իրավիճակը Հայաստանում: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը մալարիայի օջախում (միջոցառումներ վարակի աղբյուրի, կենդանի փոխանցողների նկատմամբ), քիմիոպրոֆիլակտիկա: Համաճարակաբանական մոնիթորինգ և հսկողություն:

Բժավոր տիֆի և ոջլային հետադարձ տիֆի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Հագուստի, գլխի և ցայքի ոջիլների համաճարակաբանական նշանակությունը: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում՝ վարակի աղբյուրի, փոխանցողների և ընկալ օրգանիզմի նկատմամբ: Կոնտակտավորների սանիտարական մշակում միջատասպան նյութերով:

Ուսմունք բնական օջախային վարակների մասին: Էպիզոոտիկ պրոցեսում հարուցիչի փոխանցման մեխանիզմի տեսակները՝ տրանսմիսիվ և ոչ տրանսմիսիվ զոոնոզներ:

Տուլարեմիայի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Կրծողների համաճարակաբանական նշանակությունը, վարակի փոխանցման մեխանիզմը և ուղիները, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում, իմունապրոֆիլակտիկա: Համաճարակաբանական մոնիթորինգ և հսկողություն:

Ժանտախտի համաճարակաբանական առանձնահատկությունները, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում և կանխարգելումը (կարանտին, օբսերվացիա, հիվանդների և կոնտակտավորների հաշվառում և դուրս գրում):

Տզային հետադարձ տիֆի և մլակային տենդի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում: Կոնտակտային մեխանիզմով փոխանցվող արտաքին ծածկույթների վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական առանձնահատկությունները:

Վիրուսային հեպատիտներ B, C, D-ի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Վիրուսակրության տեսակները, ռիսկի խմբերը, պատվաստումներ հեպատիտ B-ի դեմ: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում: Համաճարակաբանական մոնիթորինգ և հսկողություն:

ՁԻԱՀ-ի, ՄԻԱՎ-ի համաճարակաբանական առանձնահատկությունները և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը: Համաճարակաբանական մոնիթորինգ և հսկողություն:

Սիբիրյան խոցի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը օջախում: Համաճարակաբանական մոնիթորինգ և հսկողություն զոոնոզ վարակների կանխարգելման հարցում:

Լեյշմանիոզների համաճարակաբանական առանձնահատկությունները և արդի իրավիճակը Հայաստանում: Մաշկային և ընդերային լեյշմանիոզների համաճարակաբանությունը և պայքարի միջոցառումները:

Կատաղություն, համաճարակաբանությունը, վայրի և տնային կենդանիների, թափառող շների համաճարակաբանական նշանակությունը: Համաճարակաբանական հսկողության կազմակերպումը: Պատվաստումներ կատաղության դեմ: Ցուցումներ հակակատաղության պատվաստանյութի և գամմա գլոբուլինի կատարման համար:

Փայտացման և գազային գանգրենայի համաճարակաբանությունը և կանխարգելումը: Վարակի աղբյուր, փոխանցման մեխանիզմ: Կանխարգելիչ պատվաստումների կատարումը փայտացման դեմ, հակափայտացման շիճուկի օգտագործումը պասիվ անընկալության և բուժման նպատակով: Հատուկ վտանգավոր վիրուսային հեմոռագիկ տենդերի համաճարակաբանություն և էկոլոգիա: Հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը:

Ոչ վարակիչ համաճարակաբանության ներածություն, համաճարակաբանական սկզբունքները, առանցքային հասկացողությունները, սահմանումները համաճարակաբանության մեջ:

Դեպքերի սահմանումներ, ստանդարտ դեպքի սահմանման կառուցվածքը, հասկացության զգայունության և սպեցիֆիկության մասին, դեպքերի եռաստիճան սահմանում (կասկածելի, հավանական, հաստատված):

Համաճարակաբանական հետազոտության կազմակերպումը, կառուցվածքը՝ նկարագրական և վերլուծական համաճարակաբանական հետազոտություններ (խաչաձև, կոհորտային, դեպք-հսկողություն հետազոտություններ): Հարցաթերթիկների նախագծում, գնահատում, հավաքվող փոփոխականները, փորձարկումը, խնդիրները: Աղետների բժշկություն:

Սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների համաճարակաբանական առանձնահատկությունները, ռիսկի խմբերը, գործոնները, հիվանդացություն, մահացություն, կանխարգելման հիմնական ուղղությունները:

Ուռուցքային հիվանդությունների, շաքարային դիաբետի և ճարպակալման համաճարակաբանական առանձնահատկությունները, ռիսկի խմբերը, գործոնները, հիվանդացություն, մահացություն, կանխարգելման հիմնական ուղղությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնական

1. Ա.Ձ. Համբարձումյան, Հ.Ս. Հովհաննիսյան, Մ.Մ. Տեր-Ստեփանյան «Ընդհանուր համաճարակաբանություն», Ընդհանուր բժշկության ֆակուլտետի բակալավրիատի ուսումնական ձեռնարկ, Ե. 2013, 150 էջ:
2. Կ.Մ. Դեղձունյան, Ա.Ձ. Համբարձումյան «Համաճարակաբանություն», Երևան, 1999, էջ 366:
3. Б.Л.Черкасский. "Общая эпидемиология", Москва, 2002.
4. Б.Л.Черкасский. "Частная эпидемиология", т.1, Москва, 2002.
5. Б.Л.Черкасский. "Частная эпидемиология", т.2, Москва, 2002.

6. В.И.Покровский, С.Г.Пак, Н.И.Брико, Б.К.Данилкин "Инфекционные болезни и эпидемиология", Москва, 2004.
7. С.С.Бондарчук "Основы практической биостатистики", изд. Томс. Пед. Университета, 2009.
8. Oleckno, William Anton." Essential epidemiology: principles and applications", 2002.

Լրացուցիչ

1. В.В.Власов "Эпидемиология" уч. Пособие ГЭОТАР-МЕД 2004.
2. Л.Ч.Зуева , Ч.И. Сухомлина "Эпидемиология ", 2005.
3. Armenian, Haroutune K." The case-control method: design and applications", 2009.

ԺԴ.00.17 - ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հանրային առողջությունը որպես գիտություն, նրա մեթոդաբանական հիմունքները: Հանրային առողջության տեղը և դերը բժշկական և հասարակական գիտությունների մեջ: Սոցիալ-հիգիենիկ հետազոտությունների մեթոդները: Առողջության հասկացողությունը, անհատի և հանրության առողջությունը, առողջության հասկացության նոր գաղափարախոսությունը: Համակարգային մոտեցման կիրառումն առողջապահության մեջ: Համայնքային մոտեցումը հանրային առողջության մեջ:

Հանրային առողջության զարգացման հիմնական փուլերը: Առողջության և հիվանդության կենսաբանական և սոցիալական ասպեկտները: Բնակչության առողջության սոցիալական և կենսաբանական օրինաչափությունները: Սոցիալական պայմաններ և սոցիալական գործոններ: Սոցիալական գործոնների և ապրելակերպի ազդեցությունը մարդկանց առողջության վրա: Ուրբանիզացիան որպես սոցիալական

հիմնախնդիր: Աշխատանքը որպես սոցիալ-հիգիենիկ խնդիր և մարդու կենսական պահանջ: Հանգիստը, կենցաղը և սննուղը որպես սոցիալ-հիգիենիկ հիմնախնդիր: Առողջապահության կազմակերպումը տարբեր երկրներում: Առողջապահության կազմակերպման հիմնական սկզբունքները ԱՊՀ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում: Առողջապահության կազմակերպման առանձնահատկությունները զարգացած երկրներում: Առողջապահության կազմակերպումը զարգացող երկրներում: Միջազգային համագործակցություն առողջապահության ոլորտում: Առողջապահության Համաշխարհային Կազմակերպություն (ԱՀԿ), կառուցվածքը, գործառույթները, նշանակությունը:

ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վիճակագրությունը որպես գիտություն: Բժշկականսաբանական վիճակագրություն՝ խնդիրները և հիմնական ճյուղերը (առողջապահության, բժշկական, սանիտարական վիճակագրություն):

Վիճակագրական հետազոտությունների կազմակերպում, հիմնական փուլերը: Վիճակագրական գործիքների հնարավորությունները, նշանակությունը, դրանց առանձնահատկությունները և ընտրության սկզբունքները: Հետազոտությունների կառուցվածք (դիզայն)՝ դիտական և փորձարարական հետազոտություններ: Դիտական հետազոտություններ՝ դեպքի/դեպքերի սերիայի նկարագիր, դեպք-ստուգիչ, հատույթային (լայնակի), կոհորտային (երկայնակի) հետազոտություններ: Փորձարարական հետազոտություններ՝ առանց ստուգիչ խմբի, արտաքին ստուգիչ խմբով, ստուգիչ խմբի հետագա դիտումով, զուգահեռ ստուգիչ խմբով:

Հավանականության տեսության հիմունքները, հիմնական օրենքները, հավաստի և անհավանական պատահույթ, համատեղելի և անհամատեղելի պատահույթներ, անկախություն և անհամատեղելիություն:

Նկարագրական վիճակագրություն՝ փոփոխականների տեսակներ, չափման սանդղակներ՝ նոմինալների, կարգային, միջակայքների և հարաբե-

րությունների սանդղակներ: Փոփոխականների բաշխման տեսակները՝ այլընտրանքային, սիմետրիկ, ասիմետրիկ բաշխում, բինոմալ, Պուասոնի բաշխում:

Հարաբերական մեծություններ: Հարաբերական դիսկի և շանսերի հարաբերության վստահելիության սահմաններ: Ցուցանիշների ստանդարտացում՝ ուղղակի և անուղղակի մեթոդներ: Դինամիկ շարքի վերլուծություն՝ բացարձակ աճ, աճի տեմպ, բացարձակ աճի տեմպ, հարթեցում, սողացող միջին, միջակայքի փոփոխում: Ախտորոշիչ թեստեր, վիճակագրական բնութագրեր (զգայնություն, յուրահատկություն, դրական/բացասական կանխատեսական նշանակություն): Կապա-վիճականի:

Միջին մեծություններ՝ վարիացիոն վիճակագրություն, կենտրոնական սահմանային թեորեմ: Հիմնական վիճակագրական մեծությունների (միջին թվաբանական, ստանդարտ շեղում, դիսպերսիա, ցուցանիշ, ստանդարտ սխալ) հաշվարկ: Վիճակագրական վերլուծություն՝ z-, t-, F-թեստեր, միակողմանի, երկկողմանի կախյալ և անկախ ընտրանքների համար t-թեստ:

Ընտրանքի ծավալի որոշում մեկ և երկու խմբերի համար քանակական և որակական փոփոխականների դեպքում: Զուգորդման աղյուսակներ. Հարաբերական դիսկեր, շանսերի հարաբերություններ, կոնտինգենցիայի, Յուլի, Զուպրովի գործակիցներ: Բազմակի համեմատություններ, դիսպերսիոն վերլուծություն: Դիսպերսիոն վերլուծության անհրաժեշտ պայմանները: Բոնֆերոնիի ուղղում, Դանետի, Տյուկիի մեթոդների կիրառումը բազմակի համեմատությունների դեպքում: Դիսպերսիոն վերլուծություն դիսպերսիաների, խմբերի անհավասարության դեպքում՝ Ուելչի, Բրաուն-Ֆորսայթի չափանիշները: Ոչ պարամետրիկ թեստեր՝ Ֆիշերի, Մակ-Նիմարի, Մանն-Ուիտնիի, Ուիլքոքսոնի: Պիրսոնի համապատասխանության գործակից: Յեթսի ուղղում: Ոչ պարամետրիկ թեստեր երկուսից ավելի խմբերի համեմատության համար՝ Կրուսկալ-Ուոլիսի,

Ֆրիդմանի: Կորեյացիա՝ Սպիրմենի և Պիրսոնի եղանակներ: Բազմակի կորեյացիա, մասնակի կորեյացիա: Ռեգրեսիոն վերլուծություն: Լոգիստիկ ռեգրեսիա: Ապրելունակություն, Կապլան-Մեյերի ապրելունակության թեստ, ապրելունակության երկու կորերի համեմատություն: Վիճակագրական թեստերի ընտրությունը՝ խնդիրներին, փոփոխականների բնույթին և հետազոտության կառուցվածքին համապատասխան:

ԲՆԱԿՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ. Բնակչության առողջության վիճակի հետազոտություն՝ տեղեկատվության աղբյուրները, ուսումնասիրության մեթոդները: Բնակչության առողջությունը բնութագրող ցուցանիշների հաշվարկի մեթոդները:

Ժողովրդագրություն. Ժողովրդագրության բժշկասոցիալական ասպեկտները: Բնակչության ստատիկա (թվաքանակ, խտություն, կառուցվածք) և դինամիկա (բնական և մեխանիկական շարժում): Բնակչության միգրացիայով պայմանավորված առողջապահական խնդիրները: Ժողովրդագրության գործընթացների հիմնական միտումները ՀՀ-ում ներկա ժամանակաշրջանում: Բնակչության ծերացում՝ դրա հիմնական շարժիչ ուժերը և բժշկասոցիալական հետևանքները: Բնակչության բնական և մեխանիկական շարժման ուսումնասիրության մեթոդիկան: Քաղաքացիական կացության փաստաթղթերի գրանցման ձևերը:

Ծնելիության և մահացության ցուցանիշները, հաշվարկի մեթոդները և գնահատումը: Ծնելիության մակարդակի վրա ազդող հիմնական գործոնները: Պտղաբերություն, ցուցանիշների հաշվում և գնահատում: Բնակչության վերարտադրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները: Մանկական մահացության ցուցանիշների հաշվում և գնահատում, մանկական մահացության պատճառները և ազդող գործոնները: Մանկական մահացության իջեցման սոցիալ-հիգիենիկ ասպեկտները:

Մայրական մահացություն՝ պատճառական կառուցվածքը, ցուցանիշների հաշվում և գնահատում: Մահացության աղյուսակներ, սպասվող կյանքի միջին տևողությունը և դրա հաշվարկի մեթոդները:

Հղիության արհեստական ընդհատումը որպես սոցիալ-հիգիենիկ հիմնախնդիր՝ տարածվածություն, պատճառներ, բժշկական և ժողովրդագրական հետևանքներ:

Բնակչության բնական աճ, ժողովրդագրական ցիկլ: Արդյունավետ ժողովրդագրական քաղաքականության անցկացման խնդիրները ՀՀ ազգաբնակչության բնական շարժի հետագա բարելավման նպատակով:

Հիվանդացություն. Հիվանդացության ուսումնասիրության դերը բնակչության առողջության վիճակի գնահատման գործում: Հիվանդությունների միջազգային դասակարգումը, պատմությունը, կառուցվածքը, նշանակությունը: Բնակչության հիվանդացության ուսումնասիրության հիմնական աղբյուրներն ու մեթոդները: Հիվանդացության ցուցանիշները, դրանց հաշվումն ու գնահատումը: Հիվանդացության ուսումնասիրությունն ըստ դիմելիության՝ ամբուլատոր-պոլիկլինիկական, հոսպիտալացված, վարակիչ, կարևոր ոչ վարակիչ հիվանդություններով: Ժամանակավոր անաշխատունակությամբ ուղեկցվող հիվանդացություն: Ախտաբանական ախտահարվածություն: Կանխարգելիչ բժշկական զննումների տեսակները: Հիվանդացության ուսումնասիրությունը մահվան պատճառների տվյալներով:

Առողջների առողջություն, ուսումնասիրությունը: Չհիվանդացողների կոնտինգենտ, նրանց կյանքի պայմանների ուսումնասիրությունը:

Կարևորագույն հիվանդությունների բժշկասոցիալական ասպեկտները: Սրտանոթային համակարգի հիվանդությունները որպես բժշկասոցիալական հիմնախնդիր: Չարորակ նորագոյացությունները որպես բժշկասոցիալական հիմնախնդիր: Շաքարային դիաբետը որպես բժշկասոցիալական հիմնախնդիր: Տրավմատիզմը որպես բժշկասոցիալական հիմնա-

խնդիր: Նյարդահոգեկան հիվանդությունները որպես բժշկասոցիալական հիմնախնդիր: Տուբերկուլոզը որպես բժշկասոցիալական հիմնախնդիր: ՄԻԱՎ/ՁԻԱՀ որպես բժշկասոցիալական հիմնախնդիր: Վարքային խանգարումները (ծխախոտամոլություն, թմրամոլություն, ալկոհոլիզմ) որպես բժշկասոցիալական հիմնախնդիր:

Բնակչության ֆիզիկական զարգացում: Ֆիզիկական զարգացման ուսումնասիրության նշանակությունը, դիտարկման համակարգը: Ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշները և դրանց ուսումնասիրության մեթոդները:

Առողջապահության վիճակագրություն. Պետական վիճակագրական ծառայության կազմակերպման ընդհանուր սկզբունքները: Բժշկական հաշվառման և հաշվետվության ձևերը: Առողջապահության համակարգում հաշվետվության հիմնական փաստաթղթերը: Բուժ-կանխարգելիչ հիմնարկությունների գործունեության վերլուծությունը (պոլիկլինիկա, ստացիոնար, ծննդատուն, կանանց կոնսուլտացիա, մանկական պոլիկլինիկա և հիվանդանոց, շտապ բժշկական օգնության ծառայություն, առողջապահական պետական տեսչություն):

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՈՒԺ-ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ. Առողջապահության մասին օրենսդրությունը: Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու մասին ՀՀ օրենքը: Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների իրավունքներն ու պարտականությունները: Բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվողների իրավունքները: Առողջապահության բնագավառի աշխատողների որակավորման բարձրացման իրավական հարցերը, մասնագիտացում և վերապատրաստում: Արտահիվանդանոցային և հիվանդանոցային բուժօգնության կազմակերպումը ՀՀ-ում: Պոլիկլինիկայի առաջատար դերը բժշկական սպասարկման համակարգում, կառուցվածքը, աշխատանքի կազմակերպումը: Պոլիկլինիկական սպասարկման տեղամասային սկզբունքը:

Ընտանեկան բժիշկի/տեղամասային թերապևտի աշխատանքի բովանդակությունը և կազմակերպումը:

Մասնագիտացված բուժօգնության կազմակերպումը պոլիկլինիկայում: Նեղ մասնագետների, ընտանեկան բժիշկների/տեղամասային թերապևտների ինտեգրումը հիվանդների բուժման և դիտարկման գործում:

Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության բարեփոխումները ՀՀ-ում: Առաջնային բուժօգնության բնութագիրը: Ընտանեկան բժշկի ինստիտուտ, դրա դերն առողջության առաջնային պահպանման համակարգում, աշխատանքի կազմակերպման հիմնական մոդելները և առանձնահատկությունները: Քաղաքային բնակչության շտապ և անհետաձգելի բժշկական օգնության կազմակերպումը ՀՀ-ում: Ստացիոնար: Հիվանդների ընդունման և դուրս գրման կարգը: Ընդունարանի կառուցվածքը և գործունեությունը: Բժշկի և միջին բուժանձնակազմի աշխատանքի կազմակերպումը: Հիվանդանոցի մասնագիտացված բաժանմունքներ, դրանց կազմակերպման սկզբունքները, կառուցվածքը, գործունեությունը: Հիվանդանոցներում և պոլիկլինիկաներում առողջության խթանման և քարոզչության աշխատանքի կազմակերպումը, խնդիրները, բովանդակությունը, մեթոդները և միջոցները:

Ստոմատոլոգիական ծառայության կազմակերպումը ՀՀ-ում:

Դիսպանսերային մեթոդ. Դիսպանսերային մեթոդի էությունը: Բնակչության դիսպանսերային սպասարկումը որպես բուժական և կանխարգելիչ բժշկության սինթետիկ դրսևորում:

Բնակչության առանձին խմբերի դիսպանսերիզացիա, հատուկ դիսպանսերների տեսակները, դրանց կառուցվածքը, աշխատանքի մեթոդները: Դիսպանսերիզացիայի որակի և արդյունավետության ցուցանիշներ:

Մայրության և մանկության պահպանման պետական համակարգ.

ՀՀ օրենսդրությունը մայրության և մանկության պահպանման վերաբերյալ: Կառավարության հիմնական որոշումները մայրության և մանկության

պահպանման ուղղությամբ: Մոր և մանկան առողջության պահպանման կազմակերպման հիմնական ուղղություններն ու խնդիրները:

Մոր և մանկան պահպանման համակարգի բժշկական հիմնարկությունները և դրանց փոխկապվածությունը: Մանկաբարձագինեկոլոգիական արտահիվանդանոցային և հիվանդանոցային բուժօգնության կազմակերպումը ՀՀ-ում: Կանանց կոնսուլտացիա: Աշխատանքի ձևերը և մեթոդները, հիմնական գործառույթները: Գինեկոլոգիական հիվանդների օգնության կազմակերպում: Պայքար հղիության արհեստական ընդհատման դեմ: Կանխարգելիչ զննումներ: Առողջ կանանց սպասարկման գործում կանանց կոնսուլտացիայի խնդիրները: Կանանց կոնսուլտացիայի կապը ծննդատան և մանկական պոլիկլինիկայի հետ: Ծննդատուն՝ կառուցվածքը և գործառույթները: Մանկական և նորածնային մահացության կանխարգելման միջոցները: Գինեկոլոգիական հիվանդների ստացիոնար օգնության կազմակերպումը: Մանկական բնակչության արտահիվանդանոցային և հիվանդանոցային բուժօգնության կազմակերպում: Մանկական պոլիկլինիկա, կառուցվածքը, խնդիրները: Առողջ և հիվանդ երեխաների սպասարկման առանձնահատկությունները: Երեխաների պոլիկլինիկական բժշկական օգնության տեղամասային սկզբունքը և դիսպանսերային մեթոդը: Վաղ մանկական տարիքի երեխաների բժշկական սպասարկման ձևերը և մեթոդները: Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների բուժ-կանխարգելիչ օգնության կազմակերպումը: Ժամանակակից պայմաններում երեխաների ստացիոնար բուժօգնության կազմակերպումը: Մանկական հիվանդանոց, կառուցվածքը, խնդիրները: Մանկական բնակչության կարևորագույն հիվանդություններն ու դրանց բժշկասոցիալական նշանակությունը:

Գյուղական բնակչության բժշկական սպասարկում. Գյուղական բնակչության առողջության պահպանման հիմնական սկզբունքները: Գյուղական բնակչության բժշկական սպասարկման առանձնահատկու-

թյունները և փուլերը: Առողջության գյուղական կենտրոն՝ խնդիրները և կազմակերպչական կառուցվածքը: Մարզային և տարածաշրջանային հիվանդանոցներ՝ խնդիրները, կառուցվածքը և գործառույթները: Գյուղական բնակավայրում մանկաբուժական և մանկաբարձ-գինեկոլոգիական օգնության կազմակերպման առանձնահատկությունները: Գյուղական բնակչության շտապ և անհետաձգելի բժշկական օգնության կազմակերպումը:

Հանրապետական հիվանդանոց՝ կառուցվածքը և խնդիրները:

Հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության կազմակերպում.

Հիգիենիկ-հակահամաճարակային հսկողության կազմակերպումը ՀՀ-ում: Առողջապահական պետական տեսչություն՝ կառուցվածքը, գործունեությունը, դերը բնակչության առողջության պահպանման և հիվանդությունների կանխարգելման գործում: Սանիտարահիգիենիկ գործունեության ուղղությունները ըստ ոլորտների: Սանիտարական բժշկի աշխատանքի մեթոդները, նրա իրավունքները և պարտականությունները: Նախագգուշական և ընթացիկ սանիտարական հսկողություն:

Հակահամաճարակային աշխատանք: Առողջապահական պետական տեսչության դերը վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի գործում: Բժիշկ համաճարակաբանի գործունեությունը և դերը:

Առողջապահական պետական տեսչության դերը շրջակա միջավայրի պահպանման գործում: Առողջապահական պետական տեսչության կապը բուժ-կանխարգելիչ հիմնարկությունների և պետական մարմինների հետ: Սանիտարա-լուսավորչական աշխատանքները Առողջապահական պետական տեսչության գործունեության մեջ:

Առողջության ամրապնդում և խթանում. Առողջության լրատվության ներածություն: Առողջության, առողջության խթանման և առողջության վերաբերյալ հաղորդակցության սահմանումները: Հաղորդակցության դերը առողջության համար: Հաղորդակցության գործընթացի բաղադրիչ-

ներ, դրանց առանձնահատկությունները: Մասնակիցներ, խողովակներ, ուղերձ, հետադարձ կապ:

Առողջության վերաբերյալ տեղեկությունների աղբյուրներ, դրանց նույնականացումը, հուսալիության ու արժանահավատության գնահատման սկզբունքները: Լրատվության էլեկտրոնային աղբյուրներ: E-health՝ էլեկտրոնային առողջություն: Առողջության ամրապնդում տարբեր իրավիճակներում: Առողջության ամրապնդում և հանրային շարժումների նոր տեսություն: Հանրության լիազորությունների ընդլայնում: Ուժի, իշխանության ու լիազորությունների տրանսֆորմացիա:

Իշխանության տրանսֆորմացիա և առողջության ամրապնդման պրակտիկա: Իշխանություն զրոյական և ոչ զրոյական գումարով: Իշխանության 3 կողմեր: Հանրության լիազորությունների ընդլայնում և առողջության ամրապնդման պրակտիկա: Լիազորությունների ընդլայնման երեք մակարդակներ: Առողջության ամրապնդման ծրագրերի հակասություններ և դրանց հաղթահարումը: «Վերից վար» և «վարից վեր» ուղղված առողջության ամրապնդման ծրագրեր՝ առավելություններ ու թերություններ: Սոցիալական մարքեթինգի հիմունքներ: Սոցիալական մարքեթինգի և վարքի փոփոխություն:

Քարոզարշավներ հանրային առողջության խնդիրների լուծման համար: Քարոզարշավի բնութագիրը, շահագրգիռ կողմերը: Քարոզարշավի կազմակերպում, տեսաձայնագրած նյութերի օգտագործում, զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Առողջապահության համակարգեր՝ բաղադրիչները, խնդիրները: Առողջապահության համակարգերի մոդելները՝ համեմատական գնահատականը: Պետական առողջապահության համակարգի բնութագիրը՝ հիմնական առավելություններն ու թերությունները:

Մասնավոր-սեփականատիրական առողջապահության համակարգի բնութագիրը՝ հիմնական առավելություններն ու թերությունները:

Սոցիալական (պարտադիր) ապահովագրական առողջապահության համակարգի բնութագիրը՝ հիմնական առավելություններն ու թերությունները: Պարտադիր և կամավոր բժշկական ապահովագրության փորձը զարգացած երկրներում:

Առողջապահության ղեկավար մարմինները ՀՀ-ում: Առողջապահության նախարարության գործառույթները: Պետական առողջապահական գործակալություն (ՊԱԳ)՝ նշանակությունը, գործառույթները: Բժշկական ապահովագրության հիմնախնդիրը ՀՀ-ում:

ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ: ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական ապահովագրության և ապահովման սկզբունքները, նշանակությունը, կառուցվածքը և գործունեությունը:

Սոցիալական ապահովագրության և ապահովման բյուջեն, դրա կառուցվածքը: Սոցիալական ապահովագրության և ապահովման նպաստների, թոշակների և այլ վճարումների տեսակները:

Առողջապահական մարմինների և բժիշկների դերը սոցիալական ապահովագրության և ապահովման գործում:

Աշխատունակության բժշկական փորձաքննություն.

Ժամանակավոր անաշխատունակություն: Ժամանակավոր անաշխատունակության փորձաքննության կազմակերպումը ամբուլատոր-պոլիկլինիկական և ստացիոնար հիմնարկություններում: Ժամանակավոր անաշխատունակության թերթիկ՝ նշանակությունը, լրացման կանոնները:

Ժամանակավոր անաշխատունակությամբ ուղեկցվող հիվանդացության ուսումնասիրությունը: Կայուն անաշխատունակության փորձաքննություն:

ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն՝ կառուցվածքը, գործառույթները: Հաշմանդամության խմբեր և դրանց որոշման

սկզբունքները: Հաշմանդամների վերականգնումը, բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հասկացություն մեթեջմենթի մասին: Մենեջմենթի զարգացման պատմությունը: Մենեջմենթի գործընթացի էությունը՝ բովանդակությունը, հատկությունները, սկզբունքները, արդյունավետ կառավարման պայմանները:

Կառավարման ցիկլը՝ փուլերը, դրանց բնութագրերը, ներկայացվող պահանջները, կիրառվող մեթոդները: Կառավարումը լոգիստիկական մոտեցման դիրքերից: Ռիսկի պայմաններում կառավարչական որոշման ընդունման տեխնոլոգիան: Կառավարման ուղիղ, խառը, հետադարձ, օժանդակ գործառույթներ: Կառավարման կազմակերպա-կարգադրական, տնտեսագիտական, սոցիալ-հոգեբանական, իրավական մեթոդները: Կառավարում շուկայական պայմաններում՝ մենեջմենթն առողջապահությունում, մարքեթինգը որպես ներֆիրմային կառավարման գործառույթ: Առողջապահության կազմակերպություններում կառավարման համակարգերի ձևավորումը՝ կառավարման կառուցվածքների ձևավորման ձևերն ու սկզբունքները, մենեջմենթի աշխատանքային գործընթացների դասակարգումը, կառավարման տարբերակված խմբերի առանձնացումը: Կազմակերպություններ: Հիմնական մոտեցումներ կազմակերպությունների ուսումնասիրության նկատմամբ: Ժամանակակից կազմակերպությունների էությունը և բնույթը: Բախում հասկացությունը: Բախումները կազմակերպություններում: Բախումների կարգավորում: Առաջատարություն և թիմային աշխատանք: Առողջապահական ծրագրերի կառավարում, արդյունավետության գնահատում:

Բժշկական անձնակազմի կառավարում՝ կադրային քաղաքականության մշակում: Անձնակազմի կառավարման ռազմավարության մշակում: Կազմակերպության անձնակազմի հետ աշխատանքի պլանավորում: Բժշկական անձնակազմի կառավարման տեխնոլոգիայի մշակումն ու

իրականացումը՝ կադրային ծառայության կազմակերպումն ու նրա գործունեության կանոնակարգումը: Կադրերի կառավարման համակարգի գնահատումն ու կատարելագործումը: Բուժկանխարգելիչ կազմակերպությունների ֆինանսական միջոցներն ու դրանց կառավարումը, ֆինանսական ռիսկի իջեցման մեխանիզմները առողջապահությունում:

Բուժօգնության որակի կառավարում. Բուժօգնության որակը, որակի ապահովման համակարգը: Ա. Դոնաբեդյանի որակի գնահատման եռկոմպոնենտային մոդելը: Բժկական օգնության որակի գնահատման մասնակիցները: Բժշկական օգնության որակի կառավարման հիմունքները՝ հիմնական հասկացությունները և եզրույթները: Բժշկական ստանդարտներ՝ նշանակությունը և ձևերը: Որակի կառավարման համակարգի կառուցման սկզբունքները ISO ստանդարտներում: Որակի վերահսկման տեխնոլոգիաներ: Հիվանդների ախտորոշման և բուժման որակի վերահսկման ձևերը և մեթոդները:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ. Առողջապահության տնտեսագիտություն.

Առողջապահության դերն ու նշանակությունը ժողովրդական տնտեսության զարգացման մեջ: Առողջապահության տնտեսագիտություն՝ նպատակները, հիմնախնդիրները, առանձնահատկությունները: Առողջապահության զարգացման տնտեսագիտական հիմունքները: Շուկայական հարաբերությունները առողջապահության ոլորտում: Արդյունավետության ձևերը առողջապահության մեջ՝ բժշկական, սոցիալական, տնտեսական: Առողջապահության տնտեսական արդյունավետության հասկացությունը: Հիվանդություններից առաջացած տնտեսական վնասը (ուղղակի, անուղղակի): Կանխված վնասը, բժշկական ծրագրերի տնտեսական արդյունավետությունը: Առողջապահության նյութատեխնիկական բազան, հիմնական տարրերը: Առողջապահության նյութատեխնիկական բազայի ընդլայնման և ամրապնդման խնդիրները: Առողջապահական համա-

կարգի գործունեության տնտեսագիտական վերլուծության իմաստն ու խնդիրները: Առողջապահական հիմնարկություններում աշխատանքի նորմավորումը և վարձատրման հիմնական մեթոդները: Առողջապահական հիմնարկությունների տնտեսական գործունեության հաշվառում և վերլուծություն, վերլուծության մեթոդներ:

Առողջապահության ֆինանսավորում. Առողջապահության ֆինանսավորման հիմունքները, ֆինանսավորման աղբյուրները ՀՀ-ում: Բժշկական ծառայությունների վճարման ձևերը՝ բյուջետային, ռետրոսպեկտիվ, պրոսպեկտիվ: Բժշկական ծառայությունների գնագոյացման սկզբունքները, մեխանիզմները, տեսակները: **Առողջապահության պլանավորում.** Պլանավորում՝ նշանակությունը, սկզբունքները, տեսական հիմունքները: Պլանավորման հիմնական մեթոդները շուկայական տնտեսավարման պայմաններում: Առողջապահության պլանավորման ձևերն ու մեթոդները: Առողջապահության զարգացման ընթացիկ և նպատակային պլաններ: Տարածքա-ճյուղային պլաններ: Առողջապահության զարգացման կարևորագույն ցուցանիշները: Ամբուլատոր-պոլիկլինիկական և ստացիոնարային բժշկական օգնության պլանավորումը:

Գիտահետազոտական աշխատանքների պլանավորումը ՀՀ-ում: Ժամանակակից տնտեսա-մաթեմատիկական մեթոդների, հաշվողական տեխնիկայի կիրառումը առողջապահության պլանավորման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Зайцев В.М., Лифляндский В.Г., Маринкин В.И. "Прикладная медицинская статистика". Санкт-Петербург, 2006.
2. Կենսաբանական վիճակագրության հիմունքները. Ուսումնական ձեռնարկ պրոֆ. Ա.Կ. Հայրապետյանի խմբ. ԵՊԲՀ, Երևան, 2010թ.:
3. Хачатрян Т.С., Лепян М.К., Тоноян Т.З., Андриасян Л.В. Управление, экономика и финансирование здравоохранения в условиях рыночных отношений. Учебное пособие. Ереван, 2002.

4. Тоноян Т.З., Лепян М.К., Арутюнян Г.К. Экономика здравоохранения. Учебник. Ереван, 2004.
5. Технология управления учреждениями здравоохранения. Руководство для профессионального образования. Под редакцией Гусевой Н.К. Нижний Новгород, 2009.
6. Лисицын Ю. П. Общественное здоровье и здравоохранение. Москва, "ГЭОТАР-Медиа", 2007.
7. Лукашев А.М., Прохоров Б.Б., Шиленко Ю.В. "Общественное здоровье и управление здравоохранением", М., "Оверлей", 2005.392 с.
8. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), 27.11.2005թ.:
9. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբան. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի. Ե. Իրավունք, 2010, 1086 էջ:
10. ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, ՀՕ-124-Ն, 09.11.2004թ.:
11. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, 05.05.1998թ.:
12. ՀՀ Քրեական օրենսգիրք, ՀՕ-528, 18.04.2003թ.:
13. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 06.12.1985թ.:
14. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-42, 04.03.1996թ.:
15. «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-43, 12.12.1992թ.:
16. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-193, 30.05.2001թ.:
17. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-474-Ն, 11.12.2002թ.:
18. «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-80-Ն, 25.05.2004թ.:
19. «Մարդուն օրգաններ և/կամ հյուսվածքներ փոխապատվաստելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-324, 16.04.2002թ.:
20. Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագիր, 1789թ.:
21. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ.:
22. Մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, 1966թ.:
23. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, 1950թ.:

24. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիր, 1966թ.:
25. Պացիենտի իրավունքների մասին լիսաբոնյան հռչակագիր, 1981թ.
26. Եվրոպայում պացիենտի իրավունքների ապահովման քաղաքականության մասին դեկլարացիա, 1994թ.:
27. Եվրոպական սոցիալական խարտիա, 1961թ.:
28. Лаверак Г. Укрепление здоровья и расширение возможностей. Бишкек, 2011, 204 с.
29. Theory at a glance. A guide for health promotion practice. Second edition. US Department of Health and Human Services. National Institute of Health.
30. What is Social Marketing? NHS, Department of Health.
31. Rayner M. Social marketing: how might this contribute to tackling obesity? Obesity reviews. (2007) 8 (Suppl. 1), 195–199.

ԺԴ.00.18 - ՔԹԻ, ԿՈԿՈՐԴԻ ԵՎ ԱԿԱՆՋԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օտոռինոլարինգոլոգիայի ընդհանուր դրույթները. Օտոռինոլարինգոլոգիայի կապը այլ բնագավառների հետ: ԼՕՌ հետազոտությունների խնդիրները և մեթոդները: Շտապ բուժօգնությունը ԼՕՌ օրգանների հիվանդությունների ժամանակ: ԼՕՌ օրգանների ուռուցքային հիվանդությունների ախտորոշումը և բուժումը: Անեսթեզիան և վերակենդանացումը օտոռինոլարինգոլոգիայում: Օտոնևրոլոգիա: Հիվանդների օտոնևրոլոգիական զննման մեթոդները: Արյան և արյան փոխարինողների կիրառումը օտոռինոլարինգոլոգիայում, վտանգները և բարդությունները: Ֆիզիոթերապիան օտոռինոլարինգոլոգիայում, ցուցումները, բուժման տեսակները:

Մասնավոր օտոռինոլարինգոլոգիա (տեսական գիտելիքներ):

Լսողական օրգան:

Անատոմիա. Ականջի տոպոգրաֆիկ փոխհարաբերությունները գանգի խոռոչի հետ: Երակածոցեր: Արտաքին, միջին, ներքին ականջների կլինակական անատոմիան: Դիմային նյարդի տոպոգրաֆիան:

Լսողական անալիզատորի կենտրոնական հատվածը:

Ականջի ֆիզիոլոգիա. Լսողության ֆիզիոլոգիա: Ձայն հաղորդող և ձայն ընկալող բաժիններ: Լսողության տեսություն: Վեստիբուլյար անալիզատոր, ռեցեպտորները, հաղորդչական ուղիները: Վեստիբուլյար անալիզատորի կապը այլ օրգան-համակարգերի հետ:

Վեստիբուլյար և օտոլիտային ապարատների ֆիզիոլոգիա:

Կիսաբլոր խողովակների և օտոլիտային ապարատի ռեֆլեքսները:

Լսողական և վեստիբուլյար ապարատների հետազոտության մեթոդները. Օտոսկոպիայի և օտոմիկրոսկոպիայի առանձնահատկությունները երեխաների և մեծահասակների մոտ: Ակումետրիա, կամերտոնային փորձեր և դիֆերենցիալ դիագնոստիկ նշանակությունը:

Տոնալ շեմքային աուդիոմետրիա, կատարման տեխնիկան: Աուդիոգրամմաների տիպերը: Վերշեմքային աուդիոմետրիա: SiSi, Լյուշերի թեստերը, նրանց նշանակությունը դիֆերենցիալ դիագնոստիկայում:

Խոսքային աուդիոմետրիա, իրականացման մեթոդը: Խոսքային աուդիոգրամմաների վերլուծումը: Իմպեդանսային աուդիոմետրիա, տիմպանոմետրիա, նշանակությունը դիֆերենցիալ դիագնոստիկայում:

Լսողության հետազոտության օբյեկտիվ մեթոդները (ԿԼՀՊԳ):

Վեստիբուլյար անալիզատորի հետազոտության մեթոդները: Էլեկտրոնիստագմոգրաֆիա: Օտոլիտային անալիզատորի հետազոտության մեթոդները: Ականջի R-գրաֆիկ հետազոտություն: Ականջի ՀS և ՄՌS հետազոտություններ, տվյալների վերլուծում:

Ականջի հիվանդություններ. Արտաքին և միջին ականջի բնածին արատների բուժման տակտիկան: Ականջի վնասվածքներ, այրվածքներ: Արտաքին ականջի հիվանդություններ: Արտաքին ականջի բարորակ և չարորակ նորագոյացություններ: Միջին ականջի սուր բորբոքային հիվանդություններ, առանձնահատկությունները ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ, դիմային նյարդի ախտահարման մակարդակները:

Սուր մաստոիդիտ, հատուկ ձևեր, ընթացքի առանձնահատկությունները երեխաների մոտ: Միջին ականջի խրոնիկ թարախային բորբոքում, դասակարգումը, բարդությունները, բուժման մեթոդների ընտրությունը: Միջին ականջի ոչ թարախային հիվանդություններ: Ադիեզիվ միջին օտիտ: Օտոսկլերոզ: Տիմպանոսկլերոզ: Ախտորոշումը, կլինիկան, բուժումը: Ներքին ականջի ոչ բորբոքային հիվանդություններ: Սենտոնևրալ ծանրալսություն, տեսակները, ախտորոշումը, բուժումը: Մենյերի հիվանդություն, ախտորոշումը, կլինիկան, բուժումը: Ներքին ականջի բորբոքային հիվանդություններ: Ինֆեկցիայի ներթափանցման ուղիները:

Լաբիրինթիտներ, տեսակները, պատճառները, բուժումը: Օտոզեն ներզանգային բարդություններ, ինֆեկցիայի ներթափանցման ուղիները գանգի խոռոչ, տեսակները, ախտանշանները, բուժումը, կանխատեսումը, պրոֆիլակտիկան:

Ականջի վիրահատություններ. Անտրոտոմիա: Մաստոիդոտոմիա: Պարացենտեզ, թմբկախորշի շունտավորում, ցուցումները:

Լսողությունը պահպանող ականջի արմատական և վերականգնող վիրահատություններ: Տիմպանոպլաստիկա, ցուցումները, տեսակները, հիվանդների նախապատրաստումը վիրահատության, հետվիրահատական շրջանի ընթացքը: Ստապեդոպլաստիկա, ցուցումները, տեսակները, հետվիրահատական շրջանի առանձնահատկությունները, աշխատունակությունը: Մենյերի հիվանդության բուժման վիրահատական մեթոդները: Վիրահատական միջամտությունների առանձնահատկությունները օտոզեն ներզանգային բարդությունների ժամանակ: Իմպլանտավորվող լսողական համակարգերի (BAHA, կոխլեար իմպլանտ) կիրառման ցուցումները: Ականջի պլաստիկ վիրահատություններ: Ականջախեցու պլաստիկա, միրինգոպլաստիկա, ցուցումները, մեթոդները:

Քիթ և հարքթային խոռոչներ:

Կլինիկական անատոմիա. Քթի խոռոչի կառուցվածքի անատոմիական առանձնահատկությունները, քթի կառուցվածքը: Հարքթային խոռոչների կլինիկական անատոմիա, տարիքային առանձնահատկությունները:

Թևաքմային փոսի կլինիկական անատոմիա: Արտաքին քթի, քթի խոռոչի, հարքթային խոռոչների անոթավորումը և նյարդավորումը:

Հոտառական վերլուծիչի կլինիկական անատոմիա, ռեցեպտորները, հաղորդչական ուղիները, կենտրոնական հատվածը:

Հարքթային խոռոչների զարգացման անոմալիաները:

Քթի և հարքթային խոռոչների ֆիզիոլոգիա. Շնչառական և հոտառական ֆունկցիա: Մուկոցիլիար կոմպլեքս: Անոթափապարային, նեյրոհումորալ կոմպլեքս և աէրոդինամիկ կոմպլեքսները: Հոտառական օրգանի ֆիզիոլոգիա, հոտառության տեսություն: Հոտավետ նյութերի դասակարգումը: Քթի և հավելյալ խոռոչների, հոտառական օրգանի հետազոտության մեթոդները. Քթի շնչառական ֆունկցիայի հետազոտության մեթոդները: Ռինոմանոմետրիա: Քթի հոտառական ֆունկցիայի հետազոտության մեթոդները: Օլֆակտոմետրիա: Քթի և հարքթային խոռոչների էնդոսկոպիայի օպտիկական մեթոդներ: Քթի և հարքթային խոռոչների R-գրաֆիկ հետազոտություն: Քթի հարակից խոռոչների ՀՏ:

Քթի և հարքթային խոռոչների հիվանդություններ.

Արտաքին քթի և նախադրան հատվածի հիվանդություններ:

Քթի հիվանդություններ՝ սուր և քրոնիկ ռինիտներ: Տեսակները, դասակարգումը, կլինիկական, բուժումը: Քթի միջնապատի հիվանդություններ: Հեմատոմա: Աբսցես: Բուժման մոտեցումը: Քթային արյունահոսություններ, տեսակները, դադարեցման եղանակները: ՏՆՄ համախտանիշ:

Վազոմոտոր ռինիտ, ալերգիկ ձևը, ախտորոշումը, կլինիկական, բուժումը:

Քրոնիկական սպեցիֆիկ ռինիտներ: Տուբերկուլոզ: Սիֆիլիս: Վեգետերի գրանուլեմատոզ: Քթի բնածին և ձեռքբերովի արատներ: Քթի հարակից

խոռոչների սուր բորբոքային հիվանդություններ: Քթի հարակից խոռոչների քրոնիկ բորբոքային հիվանդություններ: Մուկոցել:

Ռինոզեն ներզանգային բարդություններ, կանխատեսումը:

Ռինոզեն ակնակապճային բարդություններ: Ակնակապճի ֆլեգմոնա:

Ռետրոբուլբար ներիտ: Օպտիկո-խիազմալ արախնոիդիտ: Ախտանշանները, կլինիկան, բուժումը: Քթի և հարքթային խոռոչների վնասվածքներ, օտար մարմիններ: Քթի և հարքթային խոռոչների բարորակ և չարորակ նորագոյացություններ:

Քթի և հարքթային խոռոչների վիրաբուժական միջամտություններ.

Հայմորյան խոռոչի պոնկցիա, կատարման տեխնիկան, ցուցումները:

Հայմորյան խոռոչի արմատական վիրահատություն Կադվել-Լյուկի մեթոդով: Ցուցումները, կատարման տեխնիկան, մոտեցումները:

Ճակատային խոռոչի վիրահատությունների ժամանակ արտաքին մոտեցումները: Քթի հարակից խոռոչների էնդոնազալ միջամտությունների կատարման տեխնիկան, ցուցումները:

Ռինոպլաստիկա: Սեպտոպլաստիկա: Ցուցումները, տեսակները, կատարման տեխնիկան:

Ըմպան. Ըմպանի կլինիկո-անատոմիական առանձնահատկությունները.

Հարըմպանային տարածության տոպոգրաֆիա: Լիմֆադենոիդ օղի կառուցվածքային առանձնահատկությունները: Ըմպանի անոթավորումը և նյարդավորումը: **Ըմպանի ֆիզիոլոգիա.** Ըմպանի ֆունկցիաները:

Իմունոբիոլոգիական կոմպլեքս: **Ըմպանի հետազոտության մեթոդները**

Բերանի խոռոչի դիտում, ֆարինգոսկոպիա, անուղղակի կամ հայելային էպիֆարինգոսկոպիա: Քթըմպանի վիդեոֆիբրոէնդոսկոպիա:

Ըմպանի հիվանդություններ. Ըմպանի բորբոքային հիվանդություններ:

Անզինաների դասակարգումը, բարդությունները:

Քրոնիկական տոնզիլիտ, դասակարգումը, բուժման մոտեցումները: Տոնզիլոզեն հիվանդություններ: Սուր և քրոնիկական ֆարինգիտներ, բուժու-

մը: Ադենտիդ հյուսվածքի գերած: Ախտանշանները, կլինիկան, բարդությունները: Հարըմպանային և հետըմպահային արսցես: Ախտանշանները, բուժման մոտեցումները, բարդությունները: Ըմպանի արտաքին և ներքին վնասվածքներ: Ըմպանի սպեցիֆիկ հիվանդություններ: Ախտորոշումը, կլինիկան, բուժումը: Ըմպանի սնկային ախտահարումներ, բուժման մոտեցումը: Ըմպանի զարգացման արատներ: Խոսանների ատրեզիա: Ըմպանի այրվածքներ: Սպիական ստենոզներ, բուժման մոտեցումը: Ըմպանի բարորակ և չարորակ նորագոյացություններ: Ախտորոշումը, կլինիկան, բուժումը:

Ըմպանի վիրահատություններ. Ադենոտոմիա, ցուցումները, հակացուցումները, կատարման տեխնիկան: Տոնզիլէկտոմիա, ցուցումները, հակացուցումները, հետվիրահատական ընթացքը:

Կոկորդ. Կոկորդի կլինիկական անատոմիա. Կոկորդի տոպոգրաֆիա, կլինիկական անատոմիա: Պարանոցի անատոմիական հատվածները, միջֆասցիալ տարածությունները: Կոկորդի նյարդամկանային ապարատ: Կոկորդի անոթավորումը:

Կոկորդի ֆիզիոլոգիա. Կոկորդի շնչառական, պաշտպանական, ճայնագոյացնող ֆունկցիաները: Արտաքին շնչառության խանգարում և կապը վերին շնչուղիների ախտաբանական վիճակների հետ:

Կոկորդի հետազոտության մեթոդները. Կոկորդի ակտիվ և պասիվ շարժունակության որոշում: Ուղղակի և անուղղակի լարինգոսկոպիա: Վիդեոմիկրոլարինգոսկոպիա: Ֆիբրոլարինգոսկոպիա:

Կոկորդի ֆունկցիոնալ հետազոտության մեթոդներ: Ստրոբոսկոպիա: Վիբրոմետրիա: Կոկորդի R-գրաֆիա, R-սկոպիա, ՈՒՁՀ, ՀՏ, ՄՌԾ, տվյալների վերլուծություն: Կոկորդի նորագոյացությունների բիոպսիա:

Կոկորդի հիվանդություններ. Սուր ոչ սպեցիֆիկ լարինգիտներ: Էթիոլոգիա, պաթոգենեզ: Կոկորդի ալերգիկ այտուց, պատճառները, բուժումը: Ստենոզացնող լարինգոտրախեիտ: Սուր լարինգիտը երեխաների մոտ:

Ախտորոշումը, կլինիկան, բուժումը: Սուր ինֆեկցիոն լարինգիտներ: Կոկորդի դիֆթերիա: Կոկորդի այտուց: Բորբոքային և ոչ բորբոքային այտուցների տարբերակիչ ախտորոշումը: Քրոնիկական լարինգիտ: Կոկորդի ստենոզ: Էթիոլոգիա, պաթոգենեզ: Կլինիկան, բուժումը: Կոկորդի նյարդամկանային դիսֆունցիա: Կոկորդի պարեզներ, պարալիչներ: Ախտորոշումը, բուժումը: Շնչառական ուղիների օտար մարմիններ, հեռացման եղանակները: Քրոնիկական սպեցիֆիկ լարինգիտներ: Տուբերկուլոզ: Սիֆիլիս: Սկլերոմա: Ախտորոշումը, բուժումը: Կոկորդի աբսցես: Ֆլեգմոնա: Խոնդրոպերիխոնդրիտ: Ախտորոշումը, բուժումը: Վերին շնչառական ուղիների սնկային ախտահարումներ: Ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: Կոկորդի բարորակ նորագոյացություններ: Ֆիբրոմա: Կոկորդի կիստաներ: Կոկորդի պապիլոմատոզ: Անոթային ուռուցքներ: Կոկորդի չարորակ նորագոյացություններ: Քաղցկեղ: Սարկոմա: Դասակարգումը: Վիրահատական բուժման տակտիկան: Կոկորդի արտաքին և ներքին վնասվածքներ:

Վիրահատական բուժման մեթոդներ. Տրախեոտոմիա, տեսակները, ցուցումները, կատարման տեխնիկան: Լարինգէկտոմիա, ցուցումները, տեսակները: Կերակրափող. Կերակրափողի կլինիկո-անատոմիական առանձնահատկությունները. Ֆիզիոլոգիական նեղացումները:

Կերակրափողի ֆիզիոլոգիա: Կերակրափողի հետազոտության մեթոդները: Էզոֆագոսկոպիա տ/ա և ը/ա տակ:

Կերակրափողի հիվանդություններ. Էզոֆագոսպազմ: Դիվերտիկուլներ: Էզոֆագիտ: Ախտորոշումը, բուժումը: Կերակրափողի օտար մարմիններ, ախտորոշումը, հեռացման եղանակները, բարդությունները: Կերակրափողի այրվածքներ: Սպիական նեղացումներ, բուժումը, կանխարգելումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Болезни уха, горла и носа - В.Ф. Ундриц, К.Л. Хилов, Н.Н. Лозанов, 273

- В.К. Супрунов 1960г.
2. Секреты оториноларингологии. Перевод с английского Брюс У. Джафек, Энн. К. Старк 2001г.
 3. Оториноларингология. Под редакцией И.Б. Солдатова - Санкт-Петербург, 2000г.
 4. Руководство по оториноларингологии, Том 1,2- В.И. Бабияк, М.И. Говорун, Я.А. Накатис 2009г.
 5. Оториноларингология. - учебник В.Т. Пальчун, М.М. Магомедов, Л.А. Лучихин 2016г.
 6. Քիթ-կոկորդ-ականջաբանություն - Շուքրյան Ա.Կ., Հարությունյան Ա.Գ., Սարգսյան Ս.Ա. Երևան 2014թ.

ԺԴ.00.19 - ԱԶՔԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ակնաբուժության պատմություն. Ակնաբուժությունը և նրա դերը բժշկական առարկաների շարքում: Համառոտ պատմական ակնարկ՝ ակնաբուժության զարգացումը: Հայրենական ակնաբուժության պատմությունը: Առաջին ակնաբույժները և առաջին աչքի հիվանդանոցը Հայաստանում: Առաջին աչքի կլինիկաները: Հայկական ակնաբուժության հիմնադիրները: Հայրենական ակնաբուժության ձեռքբերումները: Հայրենական ակնաբուժության դպրոցները և առաջատար կլինիկաները: Հայկական ակնաբուժության նշանավոր գործիչները ու դրանց հիմնական աշխատությունները: **Տեսողական օրգանի անատոմիա և ֆիզիոլոգիա:**

Տեսողական օրգանի էվոլյուցիա. Լուսաընկալիչ ապարատի զարգացումը ֆիլոգենեզում: Ցանցաթաղանթի կոնվերտային և ինվերտային տեսակներ: Մարդու աչքի զարգացումն օնտոգենեզում:

Տեսողական օրգանի ընդհանուր կառուցվածքը. Ակնագունդ: Տեսանցուղիներ: Տեսանյարդ: Խիազմա: Տեսողական տրակտ: Արտաքին

ծնկածն մարմին: Ենթակեղևային ուղիներ: Կեղևի բարձրագույն տեսողական կենտրոն: Արտաքին թաղանթ՝ եղջերաթաղանթ և սպիտապատյան: Աչքի միջին թաղանթ՝ ծիածանաթաղանթ, ցիլիար կամ թարթչային մարմին, բուն անոթաթաղանթ կամ խորիոիդեա: Աչքի ներքին թաղանթ՝ ցանցաթաղանթ: Աչքի խցիկներ: Ներակնային հեղուկ: Ոսպնյակ: Ապակենման մարմին:

